




~~1199~~

16

~~179~~

A  
1  
50045

2



111)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՁԱՌԱՆՈՅԻ

809.138.1

# ԳՐԱԲԱՐԻ

## ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ

A 50045  
II

Կ Ա Ջ Մ Ե Ց

Ս Տ . Մ Ա Լ Խ Ա Ս Ե Ա Ն Ց



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, Տ. № 1; 2.

1892

Дозволено Цензурою, 4 Октября 1891 г. Тифлисъ.



Типографія И. Мартиросіанца, Орбел. ул., д. № 1, 2.



Այս գրքոյկը կազմում է երկրորդ մասն «Գրաբարի Հոլովումը, Խոնարհումը և Նախդիրները» ձեռնարկին, որ հերու տպագրեցինք, և պատրաստուած է յատկապէս մեր աշակերտների անհրաժեշտ պիտոյքը փոքր ի շատէ լրացնելու համար: Թէպէտ այս գրքոյկն համեմատաբար աւելի ընդարձակ է քան սորա առաջին մասը՝ բայց և այնպէս համաձայնութեան տարրական սկզբունքներն աւանդելու շրջանից դուրս չենք եկել սորա մէջ ևս:

Քերականական նիւթը մշակելիս՝ մենք աշխատել ենք—ի նկատի ունենալով գրքի ճաւալը և աշակերտների հասկացողութեան աստիճանը—բացատրել քերականական երևոյթները, այն չափով, որ աշակերտները գիտակցաբար սովորին և ըմբռնեն առարկան, և ոչ թէ անգիր անեն անգիտակցաբար: Օրինակները քաղել ենք գլխաւորապէս Եզնիկի «Եղծ աղանդոց» գրքից, իբրև այնպիսի աղբիւրից, որի ամեն մի բառը և ամեն մի նախադասութիւնը (շատ հազուադիւտ բացառութիւններով) առանց կասկածանքի կարող ենք ընդունել իբրև բուն հայկաբանութիւն, և ամբողջ գրուածքը՝ իբրև տիպար ընտիր հայկաբանութեան: Իսկ երկրորդապէս օրինակներ առել ենք Ս. Գրքի ընտրելագոյն մասերից, որ թէպէտ հարազատ թարգմանութիւն է օտար լեզուից՝ սակայն ընդհանրապէս հայկաբան և երբեմն վսեմ հայկաբան լեզու ունի և նոյնպէս համարում է տիպար հայկաբանութեան: Բացառութիւնները և բազմաթիւ գիտելիքները մեծ մասամբ դուրս են թողուած այս ձեռնարկից, նախ՝ որպէս զի չշփոթուի աշակերտի յստակ ըմբռնողութիւնը բազմաթիւ, միմեանց հակասող կանոններով, և երկրորդ՝ որովհետև բացառութիւնների մեծ մասն ընտիր հայկաբանութեան չեն պատկանում, կամ արդիւնք են օտարաբանութեան. մանաւանդ որ աշակերտն երբ ըմբռնել է գլխաւոր կանոնները՝ նոցա դէմ պատահած խոտորումներն ինքնին կնկատէ և կընդունէ իբրև բացառութիւններ: Այս տեսակ բացառութիւններն ու գիտելիքները, մեր կարծիքով՝ աւելի դասարանում բերանացի բացատրելու նիւթ են կազմում, քան դասագրքի մէջ զետեղելու: Նոյնպէս զանց ենք արել անուանուած «ձևաւոր» շարադրութեան երե-

ւոյթները, որոնք ոչ միայն սովորելու և հետեւելու կանոններ չեն, այլ մեծ մասամբ խոտելի բացառութիւններ, և աւելի ոճաբանական երեւոյթներ են, քան քերականական:

Այս գրքոյկը կազմելիս աչքի առաջ ունեցել ենք այլ և այլ գիտական գրուածքներ (Հիւբշմանի, Այտընեանի, Պատկանեանի), հին և նոր լեզուների քերականութիւններ, ի միջի - այլոց Հ. Այտընեանի աշխատասիրած Հ. Վ. Չալըխեանի «Հայկազնեան լեզուի քերականութիւնը», որ մեր կարծիքով բոլոր եղաձևերի մէջ լաւագոյնն է իբրև դասագիրք, թէպէտ անյարմար մեզ Ռուսահայերիս համար իւր արեւմտեան բարբառով և օրինակների տաճկերէն թարգմանութեամբ:

ՍՏ. Մ.



## Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հայերէն լեզուն պատկանում է Հնդիկ-եւրոպական լեզուախմբին, ինչպէս և Սանսկրիտ, Պարսկերէն, Սլաւոներէն, Գերմաներէն, Յունարէն, Լատիներէն և այլ լեզուները: Այս լեզուներին հետ Հայերէնը աւելի կամ պակաս նմանութիւն ունի բառերի և քերականական ձևերի կողմից: Բացի բազմաթիւ բառերից, որոնք նախ-գրականական և զրականական ժամանակներում Հայերէնը փոխ է առել սահմանակից ազգերի լեզուներից (ժամաւանդ պարսկերէնից, յունարէնից և ասորերէնից), փոխ չառնուած բուն Հայերէն բառերի մեծ մասն էլ Հնդիկ-եւրոպական ծագումն ունին, այսինքն այդ բառերն ընդհանուր են ինչպէս Հայերէնին, նոյնպէս և Հնդիկ-եւրոպական ուրիշ լեզուներին, բայց այլ և այլ լեզուներում նոքա ձևի կողմից կրել են դանազան փոփոխութիւններ, որոց պատճառով այժմ ոչ-մասնազէտը դժուարութեամբ կարող է նկատել նոցա նոյնութիւնը: Այսպէս միւսնոյն Հնդիկ-եւրոպական արմատները pitar, mâtar տուել են

լատիներէն	pater, mâter, պարսկերէն	pèder, mâder,
իտալերէն	padre, madre, (նախն. Հայերէն Հատր, մատր),	
հին ֆրանսերէն	paire, maire <sup>1)</sup> ), հին Հայերէն	Հայր, մայր,
նոր ֆրանսերէն	père, mère, նոր Հայերէն	հէր, մէր:

Այսպէս Հնդիկ-եւրոպական bhratar բառը տուել է այլ և այլ լեզուներում—լատիներէն frater, ֆրանսերէն \*fraire, frère, զանդիկ brâtar, ռուսերէն братъ, պարսկերէն biruder,

<sup>1)</sup> Sks E. Littré, Dictionnaire de la langue française, բառս Mère.

Հայերէն եղբայր (=բրատըր=բրայր=բբայր<sup>1</sup>)=ե+րբայր<sup>2</sup>)  
 =ե+ղբայր), կամ \*ա+ղբայր, աղբէր, ախպէր, ափէր. աղբար,  
 ախպար, ափար, ափա:

Այսպէս Հնդկ-եւրոպական penke արժատը տուել է այլ  
 և այլ լեզուներում—սանսկրիտ pantecha, պարսկերէն pentch,  
 յունարէն πέντε, լատիններէն quinque, սլաւոներէն ПЕНТИ,  
 ռուսերէն ПЯТЬ, Հայերէն Հինգ: Եւ այսպէս շատ Հարիւրաւոր  
 բառեր:

Նոյնպէս քերականական ձևերի կողմից Հնդկ-եւրոպական  
 լեզուները և Հայերէնը շատ նմանութիւններ ունին. գլխաւոր  
 նմանութիւնն այն է, որ նոքա բոլորը Հոլովական և խոնար-  
 Հական ձևերը կազմելու համար արժատին վրայ աւելցնում  
 են մասնիկներ սկզբից և վերջից. օր.

Սանսկր.	Յուն.	Լատ.	Սլաւ.	Հայ.
gatâ	χώρα	terra	рыба	արքայ
gatâ-m	χώρα-ν	terra-m	рыб-ан	(դ) արքայ
gatâ-yaî	χώρα	terra-e	рыб-ѣ	արքայ-ի
gata-yâ	—	—	рыбо-ю	արքայ-իւ
gatâ-s	χώρα-ι	terra-e	рыбы	արքայ-ք
gatâ-s	χώρα-ς	terra-s	рыбы	(դ) արքայ-ս
gatâ-bhyas	χώρα-ις	terr-is	рыба-мъ	արքայ-ից
gatâ-bhis	—	—	рыба-ми	արքայ-իւք

Սանսկր.	Լատին.	Սլաւ.	Հայ.
bhar-âmi	am-o	бер-ом	բեր-եմ
bhar-asi	am-as	бер-еши	բեր-ես

1) Բ ձայնը շատ անգամ տեղափոխուում դրուում է նախընթաց  
 բաղաձայնից առաջ. համեմատել սուրբ (subhra), աշխարհ (khsha thra)  
 սորվիլ (=սովորել=սովորել), մերդ, կերսար, մրկատ (=մեղր, կերսար,  
 մկրատ). գգիր, սեռ. գրգի (=գրի) և այլն:

2) Ո՛ր և ը դրերով սկսուած բառերն Հայերէնում առնում են ա-  
 ռաջից ա, ե, ու ձայնաւորները դիւրին արտասանելու համար. օր.  
 ե+րանգ (ռէնգ), ե+րախ (ռէխ), ա+րագ, Ա+րիստակէս, Ու+ռում,  
 և այլն:

bhar-ati	am-at	бер-еть	բեր-է <sup>1)</sup>
bhar-amas	am-amus	бер-емъ	բեր-եմք
bhar-ata	am-atis	бер-ете	բեր-էք <sup>2)</sup>
bhar-anti	am-ant	бер-оутъ	բեր-ին

Հնդիկ-եւրոպական լեզուներով խօսող ազգերի նախնիները, ինչպէս ենթադրում են Համեմատական լեզուագիտութիւնն և ազգագրութիւնը՝ բնակելիս են եղել միասին ամենաՀին ժամանակներում և խօսելիս են եղել միևնոյն լեզուով, որ այժմ կորել է: Այս Հնդիկ-եւրոպական նախալեզուն, Հարկաւ, դեռ շատ զարգացած չէ եղել. որովհետև լեզուի զարգացումը հետևանք է ժողովրդի զարգացման մտաւորապէս և տնտեսապէս, մինչդեռ այդ լեզուով խօսող ժողովուրդը երևի պարապելիս է եղել խաշնարածութեամբ և երկրագործութեամբ և հաւանօրէն չէ հասել բարձր զարգացման: Այս ժողովուրդն այլ և այլ ժամանակներում, բայց դեռ նախապատմական դարերում, գաղթել է այլ և այլ կողմեր, մանաւանդ դէպի արևմուտք (Եւրոպայի այժմեան տեղերը) և նոր հասարակական կազմակերպութիւն ընդունելով՝ ապրել է առանձին ցեղերով և ազգերով (Յունները, Լատինները հարաւային Եւրոպայում, Կելտերը միջին Եւրոպայում, Սլաւոնները արևելեան Եւրոպայում, Արիները Պարսկաստանում, Հայերը Փոքր Ասիայում և այլն), և այսպէս առանձնացած այդ նոր ազգերը, որոնք սկզբից նոյն լեզուով էին խօսում՝ ժամանակի ընթացքում ինքնուրոյն զարգանալով՝ նոցա լեզուներն ևս սկսան ինքնուրոյն զարգանալ, միմեանցից անկախ, օր. նոր բառեր հնարելիս, քերականական նոր ձևեր կազմելիս: Միևնոյն ժամանակ այն բառերն ու քերականական ձևերը, որոնք կային նոցա նախալեզուի մէջ՝ ժամանակի ընթացքում ենթարկուեցան ձայնական փոփոխութիւնների, և ամեն մի ազգի մօտ առանձին եղանակով, նայելով իւրաքանչիւր ժողովրդի պարապմունքին, սովորութիւններին, կազմու-

<sup>1)</sup> Փոխանակ բերետ, տես. Գր. հոլով. § 28:

<sup>2)</sup> Փոխանակ բերետք, տ. անդ:

ածքին, կլիմային և այլն.<sup>1)</sup> բացի սորանից այդ բառերից և ձևերից մի քանին գործածութիւնից դուրս եկան մի ժողովրդի մէջ, իսկ միւսները ուրիշի մէջ<sup>2)</sup>: Այս կերպով մի նախալեզուն ժամանակի ընթացքում այլ և այլ ճիւղեր արձակեց, ինքը դարձաւ մայր լեզու, իսկ նորա ճիւղերը դարձան նորա դստրերը և քոյրեր միմեանց մէջ: Այս քոյր-լեզուները սկզբում, երբ նոցա մէջ տարբերութիւնը դեռ շատ չէր, և նոցանից մինով խօսողը կարող էր հասկանալ միւսով խօսողին՝ իսկապէս բարբառներ էին մայր լեզուի և միմեանց վերաբերութեամբ: Իսկ երբ ժամանակ անցնելով նոքա առանձին զարգանալով բառերի և քերականական ձևերի կողմից՝ միմեանցից շատ հեռացան, այնպէս որ նոցա մէջ արտաքին հայեացքով նմանութիւն չէր կարելի գտնել՝ նոքա կոչուեցան առանձին լեզուներ:

Այս լեզուներից մէկն է և հայերէնը, որ առաջ է եկել Հնդկ-եւրոպական մայր լեզուից և քոյր է յունարէնին, հին պարսկերէնին, կեղտերէնին, սլաւոներէնին և այլն:

Լեզուն որչափ շատ է գործածուում, կամ այլապէս՝ որչափ հին է՝ այնքան աւելի է զարգանում: Զարգացում ասելով լեզուի մէջ պէտք է հասկանանք նորա սղուիլը, կրճատուիլը, կոկուիլը բառերի և ձևերի կողմից, նոյնպէս և հին քերականական ձևերի կորչիլը և փոխարինուիլը նորերով: Ինչպէս որ ջուրը իւր հունով անցնելով շարունակ զարկւում է հունին և ասիերին, տանում է իւր հետ թեթև նիւթերը, հալում է կակուղները և յղկում է կարծր քարերը՝ նոյնպէս և գործածու-

<sup>1)</sup> Այսպէս, օրինակ, նախալեզուի mātār ձևը հայերէնում կրճատուելով դարձաւ մայր-մէր (ինչպէս և ֆրանսերէնում), իսկ սլաւոներէն դարձաւ мати և матери. tchatwar նախնական ձևն սլաւոներէն դարձաւ четьре, պարսկերէն tchahar, հայերէն չոր-ք և այլն:

<sup>2)</sup> Օրինակ՝ սլաւոներէնի մէջ անհետացել է նախալեզուի pitar (հայր) բառը, որ միւս լեզուներին մէջ մնացել է. ընդհակառակն նախալեզուի суну բառը անհետացել է հայերէնի մէջ, իսկ մնացել է սլաւոներէնում (сынъ, կոչ. сын), կեղտերէնում (Sohn) և այլն:

Թիւնը մաշում է լեզուն, դուրս է ձգում շատ բառեր ու ձևեր, որոնք ժամանակին Համապատասխան չեն, Հարթում սղում է բառեր և քերականական ձևեր: Այս տեսակէտից նայելով Հայերէնը Հնդիկ-եւրոպական լեզուների շարքում ամենաՀին և ամենազարգացած լեզուներից մէկն է: Բառերի սղման և ձայների փոփոխման կողմից, Համաձայն խօսող ժողովրդի և նորա երկրի պայմաններին՝ նա Հասել է վերին աստիճանի զարգացման, զրեթէ այժմեան Ֆրանսերէնին հօւստար, այնպէս որ անկործ աչքը դժուարութեամբ կարող է նկատել նմանութիւն Հայերէն բառի և նորա նախատիպ Հնդիկ-եւրոպական ձևի մէջ. օր. *pitav* նախնական ձևն սկզբի յ-ն Հայերէնում փոխել է հ-ի, միջին ե-ն կորցրել է և դորա պատճառով երկարել է *a* ձայնաւորը և դարձել այ, այնպէս որ երկու վանկից կազմուած նախաձևը Հայերէն դարձել է մի վանկ—Հայր, որ դարձեալ սղուել է գաւառական բարբառներում—Հէր, Հար: *Avôqarena* Հնգավանկ բառը, որ զանդիկ լեզուով նշանակում է անասունների խմելու տեղ՝ Հայերէն կրճատուել դարձել է երկու-վանկանի «խ»: Քերականական ձևերի մէջ Հայերէնը կորցրել է սեռերը գոյականների, ածականների և դերանունների մէջ, (Թէպէտ Հետքերը տեղ տեղ երևում են) որ միւս Հնդիկ-եւրոպական լեզուներն ունին, բացի մի-երկուսից, որոնք Հայերէնի նման նոյնպէս կորցրել են. կորցրել է երկակի թիւը գոյականների, դերանունների և բայերի մէջ, որ պահել են սանսկրիտ, զանդիկ, սլաւեան և յոյն լեզուները. կորցրել է ածականների բաղդատական և գերադրական աստիճանների նախնական ձևերը, որոնք փոխարինել է նոր կազմութեամբ. կորցրել է նախնական յարալստարը, որ կազմում էր արմատի կրկնութեամբ (մնացել է միայն ար-արի բայը), որի փոխանակ կազմել է նոր բաղադրեալ յարակատար և այլն: Հոլովների մէջ կորցրել է եղակի ուղղականի և Հայցականի վերջաւորութիւնները և ներգոյականը, որ սկզբում յատուկ վերջաւորութիւն ունէր. բայց և

այնպէս հորովներն հայերէնում աւելի լաւ են պահպանուել, քան յունարէնում, լատիներէնում, հին և նոր պարսկերէնում. և այլն:

Այս հնութեան կամ զարգացման պատճառով է, որ հայերէնում բառերն ու քերականական ձևերն աւելի են հեռացել նախնական ձևերից և իրանց յատուկ, ազգային կերպարանքն են ստացել. մինչդեռ ուրիշ լեզուները, ինչպէս զանդիկը և սլաւոներէնը շատ աւելի մօտ են սկզբնական լեզուային ձևերին, ուրեմն համեմատաբար քիչ են զարգացել:

Ինչպէս հնդկ-եւրոպական լեզուներն սկզբում բարբառներ էին կազմում նախալեզուի վերաբերութեամբ՝ այնպէս էլ նոքա առանձին լեզուներ դառնալով՝ իրանք եղան մայր լեզու և տուին իրանց ճիւղերը կամ բարբառները: Հայերէնն ևս նախապատմական ժամանակում անշուշտ ունեցել է այլ և այլ բարբառներ, որոց մասին յիշատակութիւն չունինք, որովհետև այդ հին ժամանակից ոչ արձանագրութիւններ կան մնացած և ոչ պատմութիւն: Այդ բարբառների գոյութիւնը մենք հետևեցնում ենք լեզուների ընդհանուր օրէնքով—չկայ լեզու, որ չունենայ իւր բարբառները,—և Հայաստանի աշխարհագրական դիրքով. որովհետև երկիրը դժուարանցանելի լեռներով ու գետերով առանձին գաւառների բաժանուած լինելով՝ արտադրեց ինչպէս քաղաքականապէս կէս-անկախ նախարարութիւններ՝ նոյնպէս և լեզուի կողմից: միմեանցից բաւական տարբերուող բարբառներ, որովհետև հզօր իշխանութիւն գոյութիւն չունենալով, որ բոլոր երկրի կառավարութիւնը կենտրոնացնէր, չլինելով զիր և գրականութիւն, որ մի լեզու ընդհանրացնէր ամեն հայի համար՝ իւրաքանչիւր նահանգ և գաւառ ապրում էր իւր առանձին կեանքով, զարգանում էր ինքնուրոյն պայմանների մէջ, ուրեմն և իւրաքանչիւրի լեզուն առանձին անկախ ուղղութեամբ պիտի զարգանար: Աերջապէս լաւագոյն ապացոյց, թէ հայերէնն ունէր բարբառներ նախ-մատենագրական դարերում՝ Յոհան Երզնկացու վկայութիւնն է, որ իւր ժամանակ (ժԿ դա-

րում) լիշում է բացի միջերկրեայ կամ ոստանիկ լեզուից (Այրա-  
բատեան լեզուն) ուրիշ եօթն բարբառներ—կորճէից, Տայոց,  
Խուժաց, Գ. Հայոց, Սպերի, Սիւնեաց և Արցախի, որոնք, հաս-  
կանալի է, Երզնկացուց շատ առաջ էլ պիտի եղած լինէին:  
Նոյն իսկ մեր հինգերորդ, ոսկեղինիկ դարի մատենագիրների  
մէջ յաճախ պատահում են բառեր և քերականական դարձու-  
ածքներ, որոնք օտար են նոցա ընդհանուր—գրաբար լեզուին  
և յատուկ են այն ժամանակի բարբառներին, ինչպէս հաւա-  
տարմացնում են այս աւուր բարբառները<sup>1)</sup>:

Երբ Ե. դարի սկզբում Ս. Մեսրոպը հնարեց Հայոց այբու-  
բենը և Ս. Սահակի հետ ձեռք զարկին Ս. Գիրքն և եկեղեցա-  
կան հայրերի գրուածքները հայերէն թարգմանելու՝ այդ նպա-  
տակի համար նոքա պէտք է ընտրէին գոյութիւն ունեցող  
բարբառներից մէկը: Նախնական հայերէնը, որից այդ բարբառ-  
ները ծագել էին՝ հաւանօրէն գոյութիւն չունէր Ե. դարում.  
սա ապացուցուում է թէ՛ լեզուարանական հետազօտութիւններով  
և թէ՛ այսպիսի տրամաբանական դատողութեամբ, որ եթէ Ե.  
դարում գոյութիւն ունեցող բարբառը (գրաբարը) հազար տա-  
րի էլ գոյութիւն չունեցաւ իբրև բնական, կենդանի լեզու՝  
սորանից կարելի է մակաբերել, որ նորա մայր լեզուն էլ (ըս-  
կզբնական հայերէնը) դժուարաւ կարող էր 2—3 հազար տա-  
րի գոյութիւն ունենալ անփոփոխ կերպով. այլ թէ նա այդ  
առնուազն 2—3 հազար տարուայ ընթացքում ենթարկուել էր  
ճայնագիտական և քերականական բազմաթիւ փոփոխութիւն-  
ների և այլևայլ բարբառներ առաջ բերելով՝ ինքը մեռել էր:  
Ուրեմն այն լեզուն, որով Սս. Սահակ և Մեսրոպը թարգմանեցին  
Ս. Գիրքը՝ Հայաստանում գոյութիւն ունեցող բարբառներից  
մէկն էր լինելու, հաւանօրէն Այրարատեան բարբառը, իբրև

<sup>1)</sup> Աշխարհաբար լեզուի ծագումը և պատմութիւնը դարերի ըն-  
թացքում՝ առաջին անգամ ուսումնասիրեց Ֆ. Արս. Այտրնեան իւր հրմ-  
տալից Արդի հայերէն լեզուի Քննական քերականութեան մէջ, Նա-  
խաշաւիդ, Եր. 42—86.

Հայաստանի ընդարձակագոյն և կենտրոնական նահանգի լեզուն, որ ամենից շատ խօսողներ ունէր, ուրեմն և աւելի ընդհանրացած էր, և բացի դորանից իբրև լեզու տիրող իշխանութեան, որ նստում էր նոյն նահանգում, և այդ իշխանութիւնը շրջապատող ազնուականների՝ աւելի կոկուած, մշակուած և հարուստ պէտք է լինէր, քան միւս հայերէն բարբառները: Մի հանգամանք ևս հաւանական է դարձնում, թէ այդ բարբառը Այրարատեանը պէտք է լինի, այն է, որ մեր գրականութեան հիմնադիրները—Սահակ, Մեսրոպը, իրանց կեանքն անց են կացրել այդ նահանգում, գլխաւորապէս Վաղարշապատ մայրաքաղաքում և արքունիքում. (Ս. Սահակ հէնց ծննդեամբ էլ այրարատցի էր). ուստի և բնական է, որ այդ բարբառը նոցա մայրենի լեզուն լինէր, որով բնականաբար նոքա խօսում էին և թարգմանում: Նոյն իսկ առաջին և երկրորդ թարգմանիչների լեզուից նկատուում է, որ Այրարատեան դաշտից և նահանգից եղածների լեզուն աւելի քսիւն, ազատ է, քան օտար նահանգների որդոցը. Ղազար Փարպեցու լեզուից աւելի ազատ և բնական չկայ մեր ամբողջ մատենագրութեան մէջ և ոչ Եզնիկի լեզուին նման կանոնաւոր և մաքուր—սոքա երկուքն էլ բուն Այրարատեան դաշտեցի են:

Գրականութեան կամ գրոյ լեզու միանգամ դառնալուց չետոյ՝ այս բարբառն առանձին կարևորութիւն ստացաւ իբրև եկեղեցական լեզու. մինչդեռ առաջ խօսուում և հասկացուում էր միայն մի նահանգում՝ այնուհետև սկսաւ կարդացուիլ և լրսուիլ բոլոր Հայաստանում. բոլոր եկեղեցական պաշտօնեաները պարտաւորապէս պէտք է գիտնային այս լեզուն, որով կատարուում էին եկեղեցական պաշտամունքները, ջերմեռանդ կրօնաւորները հոգեշահ գրքեր կարդալիս և անդիւր սովորելիս՝ անզգալապէս սովորում էին և լեզուն. բացի սորանից՝ ուրիշ մատենագրական երկասիրութիւններ ևս սկսան գրուիլ այս լեզուով, որ միանգամ արդէն դարձել էր գրոյ լեզու: Մատենագրութեան համար գործածուելով՝ այս լեզուն սկսաւ հարստանալ բառե-



րով, դարձուածներով և համաձայնական ձևերով, աւելի փափկացաւ և իւր քոյր բարբառների վերաբերութեամբ բարձր նշանակութիւն ստացաւ: Մինչդեռ միւս բարբառները մնացին աղքատ, անմշակ և շարունակ ռամկի բերանում սկսան մաշուիլ ու սղուլի՝ այս գրոց լեզուն մագաղաթի վրայ արձանագրուելով՝ իւր հնչական և քերականական ձևերն անփոփոխ պահեց, որովհետև գիրը լեզուի ձևերի ամենահաւատարիմ պահապանն է և նորա անալլայութեան միակ միջոցը: Դարերի ընթացքում նոյն իսկ Այրարատեան կենդանի բարբառը, որ Ե. դարում գրի առնուած էր՝ փոխուեցաւ և անհետացաւ, իսկ գրի առնուած լեզուն այլ ևս չկորաւ և մնաց անփոփոխ. նա օրինակելի լեզու դարձաւ ապագայ մատենագիրներին համար, որոնք աշխատում էին նոյն լեզուով շարագրել, բայց հին մատենագիրներէց այս տարբերութեամբ, որ հները այն լեզուով գրում էին, ինչպէս իրանց խօսած լեզուով—նոքա ազատ և բնական կերպով էին գրում, լեզուն թեքում էին իրանց կամքին պէս, հնարում էին չեղած բառերը—մէկ խօսքով նոքա տիրում էին լեզուին. մինչդեռ նորերը պէտք է սովորէին այդ լեզուն և գրէին այդ սովորած լեզուով. նոքա ստրկապէս պիտի հպատակէին հների լեզուին, աշխատելով հնար եղածին չափ հետևել նոցա. նոքա այլևս չունէին նոյն ազատութիւնը լեզուի մէջ. իրանց նոր կազմած բառերն էլ հների ոգով չեն կազմուած. բառերը թէև հայերէն բառեր են՝ բայց նոցա կազմութեան ձևն ու նշանակութիւնը արդէն նոր են. գոնէ հին մատենագիրներն այդ նոր բառերը չէին հասկանայ այն նշանակութեամբ, որով գործածում են նոր մատենագիրները: Ուրեմն այս նոր մատենագիրների գործածած զբաբարն արդէն բնական բուն զբաբարը չէ, այլ արուեստական լեզու, որ քիչ կամ շատ մօտենում է բուն զբաբարին, նայելով թէ մատենագիրը շատ թէ քիչ է ուսումնասիրել նախնեաց ընտիր զրուածները, շատ թէ քիչ ընդունակութիւն է ունեցել հին աշխարհահայեցութեամբ մտածելու և գրելու:

Քայց նոյն իսկ Ե. դարի ոսկեդիմիկ մատենագիրները լեզուն ևս զերծ չէ պակասութիւններից: Այս մատենագիրները բոլորն էլ հայերէնի հետ և շատ անգամ հայերէնի չափ զիտէին և յունարէն լեզուն, որ իւր համաձայնութեամբ և ոգով բաւական հեռու է հայերէնից. ուստի բնական է, որ նոքա հայերէն գրելիս՝ կամայ կամ ակամայ յունաբանութիւններ անէին. և այս մանաւանդ անխուսափելի կլինէր՝ երբ նոքա յունարէնից հայերէն թարգմանէին, այսինքն մի մշակուած և իրանց լաւ ծանօթ լեզուից՝ չմշակուած լեզուի: Եթէ ամենափորձ թարգմանիչների լեզուին մէջ ևս նկատուում են օտարաբանութիւններ՝ հարկաւ օտարաբանութիւններն աւելի շատ և զգալի կլինէին անհմուտ թարգմանիչ գրուածքներին մէջ, մանաւանդ եթէ կատարելապէս մշակուած չէ այն լեզուն, որով թարգմանում են: Ինչպէս մեր օրերում, երբ մեր մատենագրողները ռուսերէն լեզուն գիտեն և այդ լեզուով կրթութիւն են առել, նոցա թէ ինքնագիր և թէ մանաւանդ թարգմանական գրուածքների մէջ յաճախակի պատահում են ռուսաբանութիւններ՝ նոյն երևոյթը պէտք է տեղի ունենար և յիբաւի ունեցաւ Ե. դարում, երբ մեր ոսկեդիմիկ մատենագիրները Յունաստանում սովորած և յունական ոգով տոգորուած՝ սկսան հայերէն գրել և թարգմանել: Մի կողմ թողնելով ծայրայեղութիւններն, ինչպէս են Անյաղթի և Խորենացու լեզուները, որոնք յունամոլութեան և յունասիրութեան օրինակներ կարող են համարուել՝ մեր նոյն իսկ Բան Կայսրէան գրուածքների մէջ նկատուում են յունաբանութիւններ—աւելի նուազ Ս. Իրքի գերազանց թարգմանութեան մէջ<sup>1)</sup> և աւելի յաճախ Ռսկեբերանի, Սեբերիա-

<sup>1)</sup> Օր. „Նկեղեցուդ Աստուծոյ, որ է ի Կորնթոս՝ նուիրելոց է Քրիստոս Յիսուս, Իչեցելոց որքոց... Գոհանամ զԱստուծոյ իմոց... վասն ձեր է վերոյ շնորհացն, որ տուեալ են ձեզ է Քրիստոս Յիսուս“ (Ա. Կորնթ. Ա. 2—4): “Շտուռն պատասխանի չէրէլ, թէ ուստի իցէ (Ղուկ. Ի, 7) և այլն:

նոսի ճառերի և Եւսեբիոսի փամանակադրութեան թարգմանութեան մէջ, որոնք նոյնպէս օրինաւոր հայկաբանութիւն են համարուած<sup>2)</sup>։

Նոյն իսկ Ե. դարի ամենականոնաւոր ու մաքուր զրուածքի, Եղնիկի մէջ տեղ տեղ պատահում են դարձուածներ, որոնք օտար են նորա սովորական ոճին և համարուելու են օտարաբանութիւն և իսկապէս յունաբանութիւն<sup>3)</sup>։

Քացի օտար և յատկապէս յունական լեզուի ազդեցութիւնից զրաբարի վերայ՝ այս լեզուն մի ուրիշ պակասութիւն էլ ունի—այն է որ կատարելապէս կազմակերպուած չէ։ Ամեն բարբառ, որ զրականական լեզու կդառնայ՝ պէտք ունի երկար ժամանակ գործածուելու, ընտիր ճաշակի և հմուտ ձեռքի տակ մշակուելու, որպէս զի իւր վերջնական կատարելութիւնն և լրդկումն ստանայ (ինչպէս այսօր Ֆրանսերէնը, գերմաներէնը)։ Իսկ զրաբար Ե. դարում մի քանի ականաւոր մատենագիրներ ընծայելով, որոնք փոքր իշատէ մշակեցին այդ լեզուն՝ այնուհետև, Զ. և յաջորդ դարերում, աչքի ընկնող մատենագիրներ չընծայեց, որոնք շարունակէին այդ մշակութեան գործը. իսկ աւելի ուշ թէև գտնուեցան հանճարաւոր և ճաշակաւոր մատենագիրներ (Նարեկացի, Ջնորհալի, Լամբրոնացի և այլն), բայց նոցա ժամանակ զրաբարն արդէն դադարել էր կենդանի

<sup>2)</sup> Օր. «Վասն այնորիկ ոչ իւրովի վայրապար ցուցանէ քեզ զՅիսուս երբեք յանապատն. (=ցուցանէ, թէ ոչ իւրովի վայրապար գնաց Յիսուս յանապատն).» «Եթէ զէշտայր, եթէ զէրեւմ մտերիմ, եթէ զիւր... զիւրեւ (սատանայի) իսօսեցի ինչ որ մեզ չիցէ պատշաճ». (=զկերպարանս կամ ի կերպարանս չեղբօր, բարեկամի, կնոջ)։ Ոսկ. Մեկն. Մատթ. Առա. Ժգ. — «Փիղիոսի Արիւսոյ վեցերորդոմ հոտելոյ ոմի բախարաբան... Անտիգոնոս նախ թագաւորեաց ասիացւոց... և մեռանէր ի Փռիւզացւոց աշխարհին, ոմեայն զորոց ուսկին ի վերայ նորա դիմելոց». (=Իբրև եհաս Փիղիպպոս... քանզի ամենայն զօրք աշխարհին ի վերայ նորա դիմեցին)։ Եւս. Ժամանակագր. Տես Քաղուածոցք ի թարգմ. նախնեաց, եր. 101, 123, 461։

<sup>3)</sup> Տես այս գրքում, §§ 40, 58 և այլն։

խօսակցութեան լեզու լինելուց, և նոյնպէս ուսանելի արուեստական լեզու էր, գրեթէ ինչպէս այժմ. ուստի այս մատենագիրներ լեզուի մշակութիւնն արդէն գրաբարի ոգով չէր, այլ մինչև իսկ նորա ոգուն հակառակ. սոցա գրաբարն արդէն անկման դարի գրաբար է, և շատ հազիւ է պատահում, որ բառերի ընտրութեան ու նշանակութեան և համաձայնական կանոնների գործածութեան մէջ հասնեն նոքա Ե. դարի ընտրելագոյն մատենագիրներին:

Այս պատճառով ընտիր գրաբարն ուսումնասիրելու և նորա քերականական կանոնները դուրս բերելու համար՝ պէտք է վերցնել Ե. դարի ընտրելագոյն մատենագիրները և մանաւանդ ինքնագիր գրուածքները, որովհետև թարգմանութիւնները, գոնէ ոճի, բառերի դասաւորութեան և նախադասութիւնների կապակցութեան կողմից՝ շատ անգամ հետևում են բնագիրներին, ուրեմն և չեն կարող ծառայել իբրև օրինակ զուտ հայկաբանութեան: Այս նպատակին համար միակ օրինակելի համարելու է Եզնիկի Եղծ աղանդոց գիրքը, որ թէպէտ, ինչպէս նորագոյն հետազօտութիւններից երևում է <sup>1)</sup>, մեծ մասամբ ինքնուրոյն գործ չէ, բայց վստահ կարելի է ասել, որ բառացի թարգմանութիւն ևս չէ, այլ ազատ հետևողութիւն, ուրեմն նորա լեզուն չէր կարող ենթարկուել բնագրի (յունարէնի) ազդեցութեան: Եղիշէ և Փարպեցի, որոնք ժամանակով կրտսեր են Եզնիկից և առաջին թարգմանիչներից՝ նոյնքան ընտիր լեզու չունին. բացի սորանից առաջինի մէջ յաջախ նկատուում են պարսկաբանութիւններ, իսկ երկրորդը լիքն է գաւառաբանութիւններով:

<sup>1)</sup> Տես Հ. Բ. Սարգսեանի «Ազգաբանագեղոս և իւր բազմադարեան գաղտնիքն», եր. 318: Հանդ. ամսօրեայ., 1891, օգոստ., եր. 249:

## ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

§ 1. Վեղուի բառերն առանձին առնուած՝ իւրաքանչիւրն իւր նշանակութիւնը ունի. եթէ այդ բառերն անխտիր միմեանց մօտ դասուին՝ ոչ մի իմաստ չեն տայ, այլ խառն ի խուռն նշանակութիւններ, որոնք միմեանց հետ կապ չունին. օր. եթէ վերցնենք հետևեալ եօթն բառերը—արարիչ, արարած, երկիր, Յովսէփ, ամենայն, արդար, թաղել—կտեսնենք, որ բացի ամեն մի բառի նշանակութիւնից՝ մենք ուրիշ ոչինչ չենք հասկանում նոցանից: Որպէս զի բառերը խօսք կամ նախադասութիւն կազմեն, կամ այլապէս ասելով՝ միմեանց հետ իմաստ արտայայտեն՝ պէտք է մեանց հետ որոշ հոգակցութիւն ունենան, այսինքն բայը որոշ ձևով դրուի, գոյականներն և ածականները որոշ թուով ու հոլովով, և ամեն մի բառ իւր որոշ տեղը բռնէ: Եթէ վերոյիշեալ եօթն բառերը որոշ ձևով ու դիրքով շարելու լինինք՝ կտտանանք. «Արարիչն ամենայն արարածոց թաղեցաւ յերկրի ի Յովսէփայ արդարոյն» (Ա), որ իմաստ է արտայայտում և կանոնաւոր նախադասութիւն է: Քննելով այս նախադասութիւնը՝ տեսնում ենք, որ բայը դրուած է կրաւորականի կատարեալ եզ. գ. դէմքով—թաղեցաւ. արարիչ բառը պատասխանում է ո՞վ հարցմունքին (ո՞վ թաղեցաւ) և դրուած է եզակի ուղղական հոլովով. արարածոց բառը պատկանում է արարիչ բառին և պատասխանում է ո՞րո՞յ հարցմունքին (արարիչ որո՞յ) և դրուած է սեռական հոլովով. յերկրի բառը պատկանում է թաղեցաւ բային և պատասխանում է ո՞ւր հարցմունքին (ո՞ւր թաղեցաւ) և դրուած է նախդիր

տրական հոլովով. ի Յովսեփայ բառը պատկանում է նոյնպէս թաղեցաւ բային և պատասխանում է յո՛հնէ՞ հարցմունքին և դրուած է բացառական հոլովով. ամենայն բառը պատկանում է արարածք բառին և պատասխանում է ո՞ր հարցմունքին և դրուած է արարածք բառի առաջ՝ եզակի ուղղական հոլովով. նոյնպէս արդարոյն բառը պատկանում է Յովսէփ բառին և պատասխանում է ո՞ր հարցմունքին և դրուած է Յովսէփ բառից յետոյ՝ բացառական հոլովով առանց նախդրի: Ուրեմն տեսնում ենք, որ այս նախադասութեան մէջ *ի՛նչպիսիքն է Բայը*, որի շուրջը խմբուել են միւս բոլոր բառերը և նորանից կախումն ունին ուղղակի կամ անուղղակի, և ամեն մի բառ որոշ հարցմունքի է պատասխանում և դորան համաձայն որոշ ձևով է դրուած: *Թաղեցաւ. ո՞վ թաղեցաւ—արարիչն. արարիչն ո՞րոյ—արարածոյ. ո՞ր արարածոց—ամենայն. ո՞ւր թաղեցաւ—յերիքի. յո՛հնէ՞ թաղեցաւ—ի Յովսէփոյ. յոյ՛հնէ՞ Յովսեփայ—ի Յովսեփայ արարոյն: Արարիչն, յերկրի, ի Յովսեփայ բառերն անմիջապէս կախումն ունին թաղեցաւ բայից. արարածոց բառը՝ արարիչ բառից. ամենայն բառը՝ արարածոց բառից. արդարոյն բառը՝ ի Յովսեփայ բառից:*

Նոյն բառերը պահելով, բայց նոցա միջի կապակցութիւնները փոխելով՝ կարող ենք ստանալ նոր իմաստներ, այսպէս.

Բ. «Յովսէփ արդարն թաղեաց յերկրի զարարիչն ամենայն արարածոց»: Այստեղ գործողութիւն ցոյց տուող բայը դրուած է ներգործական սեռով. գործողութիւնը կատարողը, որ պատասխանում է ո՞վ հարցմունքին՝ դարձաւ Յովսէփ, որ դրուեցաւ այժմ ուղղական հոլովով. արարիչ բառը դրուեցաւ հայցական հոլովով և այժմ պատասխանում է զո՞ հարցմունքին—զո՞ թաղեաց Յովսէփ—զարարիչն:

Գ. «Յովսէփ արդարն թաղեցաւ յերկրի յարարչէն ամենայն արարածոց»: Ա. ձևին հետ համեմատելով տեսնում ենք, որ այստեղ Յովսէփ և արարիչ բառերը փոխել են հոլովները, դորանից յառաջ է գալիս այս տարբերութիւնը, որ այս օրինա-

կում թաղուողն Յովսէփն է, իսկ թաղողը՝ արարիչը. մինչդեռ Ա. օրինակում ընդհակառակն Յովսէփը թաղողն էր, իսկ թաղուողը՝ արարիչն: Երկրորդ օրինակին Հետ Համեմատելով տեսնում ենք, որ բայը փոխել է սեռը, և արարիչ բառը՝ իւր հոլովը. և այս փոփոխութեան պատճառով Բ. օրինակում Յովսէփ թաղում է արարչին, իսկ Գ. օրինակում՝ արարիչը թաղում է Յովսէփին:

Գ. «Յովսէփ արդարն յամենայն արարածս երկրի թաղեաց զարարիչն»: Այստեղ երկրի բառը պատկանում է ոչ թէ բային և ոչ թէ պատասխանում է ո՛ր հարցմունքին, այլ պատկանում է արարած բառին և պատասխանում է որո՞յ հարցմունքին — արարածք որո՞յ — երկրի: Արարած բառը չէ պատկանում արարիչ բառին և չէ պատասխանում որո՞յ հարցմունքին, այլ արդար բառին և պատասխանում է ի՞նչ հարցմունքին: Այս փոփոխութիւններից առաջ եկաւ և իմաստի այս փոփոխութիւնը, թէ Յովսէփ, աշխարհի բոլոր արարածներն մէջ արդարը՝ թաղեց արարչին:

Ե. «Արարիչն երկրի, արարածոց, Յովսեփայ, արդարոց (և) ամենայնի թաղեցաւ»: Այստեղ երկրի, արարածոց, Յովսեփայ, արդարոց, ամենայնի բառերը բոլորը պատկանում են արարիչն բառին և պատասխանում են որո՞յ հարցմունքին: Այս փոփոխութեան համաձայն փոխուել է և նախադասութեան իմաստը, թէ երկրի, արարածներն, Յովսէփի, արդարների (և) բոլորն արարիչը թաղուեցաւ: Եւ այլն:

Այս օրինակներից երևում է, թէ լոկ բառերը չեն, որ իմաստ են տալիս նախադասութեան մէջ, այլ բառերի յարաբերութիւնը միմեանց Հետ, նոցա որոշ կանոններով դասուելը, որ մէկը միւսից որոշ կախում ունենայ: Քերականութեան այն մասը, որ աւանդում է բառերի կանոնաւոր դասաւորութիւնը խօսքի մէջ և նոցա յարաբերութիւնը միմեանց Հետ՝ կոչուում է հարապայտութիւն:

## ՀԱՄԱՉՈՅՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԵՐԸ

§ 2. Որչափ անհուն են նախադասութիւնները՝ բայց նոցա բոլորին մէջ այս նմանութիւնը կայ, որ ամեն մի նախադասութեան մէջ մի բան ստուգուած է, և ամեն մի նախադասութեան մէջ կայ մի ստուգուած, որի մասին որ և է բան ասուում է: Առանց այս երկու տարրերին նախադասութիւն լինել կարող չէ: Օր. այս նախադասութեան մէջ— «Ես խտացուցից զսիրտն Փարաւոնի»— ասուում է խտացուած մասին. իսկ առարկան, որի մասին խոսուում է՝ ես՝ դերանունն է: «Եթէ որչափ վնասս արգելու Աստուած ի մարդկանէ՝ այն ոչ ամենեցուն յայտնի է» — այս երկու նախադասութիւններից առաջինում ասուում է, թէ արգելու է, իսկ առարկան, որի մասին ասուում է՝ Աստուած է. երկրորդ նախադասութեան մէջ ասուում է՝ թէ յայտնի է, իսկ առարկան, որի մասին ասուում է՝ է այն դերանունը: Ինչ որ ասուում է նախադասութեան մէջ՝ կոչուում է ստուգուած. իսկ այն առարկան, որի մասին ասուում է՝ կոչուում է նախադասութեան մէջ ասացուածն է խտացուածն է խտացուածն է, երկրորդ օրինակին մէջ ասացուածներն են արգելու և յայտնի է, իսկ ենթականերն են՝ Աստուած և այն: Ենթական միշտ պատասխանում է ո՞վ, զինչ (ուղղ.) Հարցմունքներին— ո՞վ խտացուցէ, ո՞վ արգելու, զինչ է յայտնի: Ասացուածը և ենթական իւրաքանչիւր նախադասութեան կարևոր անդամներն են, որոնցից կախումն ունին նախադասութեան մնացած անդամները:

§ 3. Ասացուածը գործողութիւն լինելով պահանջում է բառեր, որոնք այդ գործողութեան պարագաները բացատրէին, կամ լրացնէին նորա իմաստը: Այսպիսի լրացուցիչ բառերը կոչուում են խնդիր: Առաջին օրինակին մէջ խտացուածին միտքը լրանում է զայն բառով. երկրորդ օրինակին մէջ առաջին նախադասութեան ասացուածի միտքը լրացնում են վնաս և ի մարդկանէ բառերը. իսկ երկրորդ նախադասութեան ասացուածի միտքը լրացնում է «նշան» բառը: Խնդիրն եթէ



մի որոշ սեռով ասացուածի մօտ դրոււմ է միշտ մի որոշ հո-  
լովով կոչոււմ է «է-ի խնդիր»։ Ինչպէս վերոյիշեալ օրինակնե-  
րում խոսողացից և ուրիշներու ներգործական բայերի մօտ դրուած  
են խնդիրներ հայցական հոլովով— շինի, քան, որոնք կոչ-  
ոււմ են ալք բայերի սեռի խնդիրներ։ Իսկ եթէ խնդիրը դըր-  
ոււմ է այլ և այլ հոլովներով, նայելով բայի իմաստին, բայց  
նորա սեռից անկախ՝ կոչոււմ է բնութան խնդիր. (օր. արգելու  
է հարգանք, յայտնի է ամենեցուն)։

§ 4. Ասացուածն ունենում է նաև իւր այլ և այլ պար-  
գաները արտայայտող բառեր, որոնք ցոյց են տալիս, թէ գործո-  
ղութիւնը ինչպէս, երբ, ինչո՞ւ համար է կատարոււմ, հաստա-  
տոււմ են կամ ժխտոււմ են գործողութիւնը։ Սոքա ընդհանրա-  
պէս անփոփոխ բառեր են և մասնաւորապէս մակբայներ, և  
կոչոււմ են՝ ասացուածի պարագայանքներ օր. «Իտէ Ատ-  
ուած հանգստեան»։ «Կարճէ երբէք և զվնասս վնասա-  
կարացն»։ «Չե՞րբ իցեն թշնամիք միմեանց Որմիզդն և Արհմնն»։  
«Նա զսա ծանեաւ, և սա զնա ոչ ծանեաւ»։ Առաջին երկու  
օրինակներում հանգստեան և երբէք՝ ասացուածի ժամանակական  
պարագաներն են, երրորդ օրինակում՝ չե՞րբ՝ եղանակի պա-  
րագան է։ Վերջին օրինակում՝ ոչ բացասական պարագան է։

§ 5. Ենթական և խնդիրները նախադասութեան մէջ  
ունենում են այլ և այլ որոշիչ բառեր. ոմանք բացատրոււմ են  
թէ առարկան որինն է և կոչոււմ են յարկացից, որ միշտ պա-  
տասխանոււմ է որո՞յ հարցմունքին. օր. «Ես խստացուցից զսիրտն  
Փարսանի»։ «Արարիչն որործոյ թաղեցաւ յերկրի»։ ոմանք (ածա-  
կան անունները) բացատրոււմ են առարկայի որպիսութիւնը և  
թիւը և կոչոււմ են որո՞չ. օր. «Որչո՞ք վնասս արգելու Ատ-  
ուած. » Արհմնն արար զզազանս չորս և զթռչունս պիղծ» և  
զօձս և զկարիճս և շամբայն քանակոր ճճիս»։ «Իբրև զկառս ին  
լծեալ ի չորից երկվարաց զաշխարհս տեսանեմք»։ Սոքա պա-  
տասխանոււմ են քանի, որ և որպիսի հարցմունքներին։ Ոմանք  
բազմատեսակ առարկաներից յատկապէս որոշոււմ են մի տեսակը

և կոչոււմ են Բայայայիչ: Օր. „Գաւառ, որի Սողոմոն ի Հօրն աթոռ նստաւ“: Գայ Զաքարիա Կարգարէ“: Սոքա պատասխանում են որ Հարցմունքին—որ Սողոմոն—որդին. Գաւթայ, որ Զաքարիա—մարդարէն:

§ 6. Ուրեմն նախադասութեան անդամները կազմում են 1) ասացուած, 2) ենթակայ, 3) սեռի խնդիր, 4) բնութեան խնդիր, 5) պարագայական բառեր - որոնք կախումն ունին և վերաբերում են ասացուածին. 6) յատկացուցիչ, 7) որոշիչ, 8) բացայայտիչ, որոնք վերաբերում են նախադասութեան ուրիշ անդամներին, օր. ենթակային, խնդիրներին և այլն:

Սոցա ամենի վերայ առանձին կիսուինք:

### ԱՍՏՅՈՒԱԾԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

§ 7. Խօսքի մէջ ասացուած լինում են բայերը, նույնպէս և ածականները, գոյականները և թուականները ե՛հ կամ կա՛ն բայի Հետ միասին: Օր. „Այլ Հրեշտակք և դեւք ոչ յաւելուած ծնընդեամբ աւնուան, և ոչ պակասութիւն մահուամբ. այլ որպէս Կասարտեյանն՝ նույնպէս և նովին թուով կան“. ասացուածներն են՝ աւնուան, Կասարտեյանն, կան բայերը: «Մարմնաւոր էին արդեօք դիքն, թէ անմարմն է“: „ԶԱղեքսանդրէ խաբէին դեւք, թէ կենդանի էայնէ“—որտեղ ասացուածներն են Կարմաւոր, անմարմն, կենդանի ածականները՝ էին, էայն բայերի Հետ: „Զխմրդ որ ինքն գրաստ է՝ զայլ գրաստ վարիցէ“: „Միոյ արարչի գործ է ամենայն ինչ“—որտեղ ասացուածներն են գրաստ, գործ գոյականներն՝ էական բայով: «Մէ է Տէր և Տէ Հաւատ և Տէ մկրտութիւն և Տէ Աստուած“, որտեղ ասացուածն է Տէ թուականը էական բայով:

§ 8. Բայ-ասացուածները լինում են. 1) դիմաւոր, երբ բայը ունի բոլոր երեք դէմքերն էլ. ինչպէս վերը բերուած օրինակներում Կասարտեյան, աւնուան, կան ասացուածները, որոնք ունին ա. և բ. դէմք ևս, Հաստատեցաք, Հաստատեցայք. առնումք,

առնուք, կամք, կայք, և այսպէս բոլոր ժամանակներում և եղանակներում:

2) Լինում են դիմադրողքի, այսինքն այնպիսի բայեր, որոնք ունին միայն եզակի երրորդ դէմք ամեն ժամանակում և եղանակում: Օր. Մարդոյ ոչ է հար փոխել ի կերպարանս ինչ: Ի շար է կայ կայ ասել ումք ի կայս». որտեղ հնար է, ի զուր է բայերը չունին առաջին և երկրորդ դէմքեր, այլ միայն եզակի երրորդ դէմք: Այսպէս են նաև՝ հարկ է, պիտոյ է, վայել է, պարտ է, բարի է, բարւոք է, արժան է և այլն:

ԾԱՆ. Դիմագուրկ բայերն իսկապէս կազմուած են գոյական, ածական անուններից և էական բայից. հարկ է բային մէջ՝ հար գոյական անուն է, որ միացել է է բային հետ. հարկ է նշանակում է իսկապէս՝ հարկաւորութիւն կայ, պիտոյ է—պէտք կայ և այլն: Բայց այս գոյականներն և ածականները այնքան սերտ կապակցուած են էական բային հետ և այնքան յաճախ են գործածուում նորա հետ, որ համարուել են իբրև մի բառ—դիմագուրկ բայ, թէպէտ առանձին են գրուում:

§ 9. Դիմաւոր բայերը շատ անգամ փոխանակ պարզ ձևով արտայայտուելու՝ մեր դասական մատենագիրների մօտ արտայայտուում են բաղադրեալ ձևով: Այս բաղադրեալ ձևը կազմուում է կամ բայի ոչ և իչ վերջաւորութեամբ դիրբայները էական բայի հետ գործածելով, կամ բայի արմատը՝ լինել, ստանալ, ստանալ, ելանել և այլ բայերի հետ գործածելով: Օր. „Նլեալ յորովայնէ անտի՝ հար ոչ զերկինս և զերկիր առնել“ (փոխանակ՝ կարաց): «Սատանայ չէ օդոյն փոփելիչ», (փոխանակ՝ ոչ փոփոխէ զօդ): Այսպէս նաև հետևեալ բայերը—հնազանդ լինել, ապրտամբ լինել, հակառակ կալ, յայց ելանել, չու առնել, երանի տալ, կոխան արկանել, յամօթ առնել, հակառակ կալ, սկիզբն առնել, սկիզբն լինել և այլն, փոխանակ՝ հնազանդել, ապրտամբել, հակառակել, այցելել, չուել, երանել, կոխել, ամաչեցուցանել, սկսանել: Բաղադրեալ ձևերն աւելի ազդու և վայելուչ են, քան նոցա համապատասխան պարզ ձևերը:

ԵՂԱՆՈՎՆԵՐԻ ԵՒ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

§ 10. Ասացուածը, նայելով խօսքի իմաստին՝ գործ է ածուում բոլոր եղանակներով ու ժամանակներով:

§ 11. Սահմանափակ եղանակը գործ է ածուում՝ երբ գործողութիւնը իրական է, այսինքն իրապէս կատարուում է կամ չէ կատարուում, կատարուել է կամ չէ կատարուել, պիտի կատարուի կամ չպիտի կատարուի: Օր. «Յայնժամ «իսկ» Որմիզդ և Արհմնն առնել արարածս. և ամենայն ինչ, զոր Որմիզդն «ուր» բարի էր և «ուր», և զոր ինչ Արհմնն գործէր՝ չար էր և լիւր»: Այստեղ բոլոր ասացուածները—սկսան, առնէր, բարի էր, ուղիղ էր, գործէր, չար էր, թիւր էր—գրական իրական գործողութիւններ են նշանակուում, թէ յիրաւի նոքա սկսեցին մի գործ. Որմիզդն էլ ստեղծուում էր, Արհմնն էլ ստեղծուում էր, մէկի ստեղծածները լաւ էին, միւսինը վատ էին: «Քնաւ չէր դէ»: «Մեք գայն ոչ առի»: «Եւ նա սաստէր և ոչ պարթոյլ խօսել նոցա»: Այստեղ էլ ասացուածները—չիք, ոչ ասեմք, ոչ տայր—ժխտական իրական գործողութիւններ են նշանակուում, թէ յիրաւի դէ չկայ, մենք չենք ասուում, թոյլ չէր տալիս:

§ 12. Սահմանափակ եղանակը գործ է ածուում՝ երբ գործողութիւնը թէական կամ պայմանական է, որի կատարուելուց կամ չկատարուելուց կախուում ունի մի ուրիշ գործողութիւն, կամ որի կատարուելը կամ չկատարուելը կախուումն ունի ուրիշ գործողութիւնից: Այս պատճառով ստորադասական եղանակ է գործածուում լէ, ելէ, յրթա՛մ, «ր (թէ որ, ով որ) բառերի հետ, որոնք պայմանաւորութիւն են ցոյց տալիս: Օր. «Եւ ոմն մերկանայ զհանդերձս ընկերին, և լէ ընդդէմ Գործարարի՝ յարևէ և սարկանէ»: Այստեղ դառնալու գործողութիւնը իրական չէ, թէ կողոպտուողը դէմ է դառնուում կամ չէ դառնուում, այլ պայմանական է—ելէ Գործարարի՝ աւաղակը նրան կեանքից կզրկէ: Կեանքից զրկելու գործողութիւնը պայմանաւորուում է դէմ դառնալու գործողութեամբ, որը այս պատճառով դրուած է ստո-

բաղասական եղանակով: «Յորժամ զաներևութէն և զնորին զմըշտնջնաւոր զորութենէն ճառիչէ ոք՝... պարտի զմիտս յստակի... նաև որ ընդ ճառագայթս արեգականն Հայել իմիջի՝ պարտի զպղտորութիւն աչացն... ի բաց պարզել»: Այս օրինակներում էլ՝ Աներևոյթի մասին ճառելու և արեգակի ճառագայթներին նայելու գործողութիւնները պայմանաւորում են միտքը և աչքերը մաքրելու նախընթաց գործողութիւններով: Այս գործողութիւններն իրական չեն, թէ մէկը ճառում է կամ չէ ճառում, կամենում է կամ չէ կամենում նայել, այլ թէական—եթէ ճառելու լինի, ով որ նայել կամենայ. սորա համար այդ ասացուածները դրուած են ստորագասական եղանակով:

§ 13. Ստորագասական եղանակ գործ է ածուած երբ գործողութիւնը ոչ կայ և ոչ կարող է լինել, այլ լոկ Կնիւրիւն, երեւոյթիւն է: Օր. «Այդէս Բէ (Աստուած) զկէսն իւր լինքեան ունիչի, և զկէսն իւր ի սողունսն և ի ճճիս Կնիւրիչի»: Այստեղ գործողութիւնները, թէ Աստուած իւր կէսն իւր մէջ չիւն պահելիս և միւս կէսը Կնիւրիչի չիւն սողունների և ճճիների մէջ—ոչ եղելութիւն են և ոչ կարող են լինել, այլ լոկ երևակայական ենթադրութիւններ են. ուստի այդ գործողութիւնները դրուած են ստորագասական եղանակով:

§ 14. Ստորագասական եղանակը գործ է ածուած նաև՝ երբ Հեղինակը գործողութեան մասին կատարածանք, երկմտութիւն ու տարակուսանք է կամենում յայտնել: Այս պատճառով ստորագասական եղանակ է գործածուած Բերեւոյ, Գոյնի շաղկապներից յետոյ, և ճարտասանական ձևով գործածուած Հարցական խօսքերում, (երբ Հարցմունք լինում է ոչ թէ պատասխան ստանալու, այլ տարակուսանք յայտնելու կամ խօսքին աւելի ուժգնութիւն տալու համար): Օր. «Եւ եթէ, որպէս դանդաչենն, բազում աստուածք ի միոջէ Աստուծոյն էլեւ իչեն, ընդէր ոչ բազում աշխարհք իչեն»: Այստեղ ելեալ իցեն ասացուածը դրուած է ստորագասական եղանակով՝ որովհետև գործողութիւնն երևակայական է. իսկ իչեն ասացուածը, չնայելով

որ իրական է Հեղինակի տեսակէտից — (շատ աշխարհներ չկան), բայց ստորագրասականով է դրուած՝ որպէս զի նախագասութիւնը տարակուսական և կասկածելի դառնայ: Նոյնպէս և՛ «Պատարկք աստուածքն ո՛ւմ պլտոյ էյէն»: Հեղինակը զիտէ, որ ոչ ոքի պէտք չեն դատարկ աստուածները. իսկ ստորագրասականով է գործածել ասացուածը՝ աւելի տարակուսական դարձնելու համար դատարկ աստուածների պիտանաւորութիւնը, ճարտասանական-հարցական նախագասութեան մէջ: Նոյնպէս հետեւեալ խօսքում. «Խաւարս որ լինի՛ ուստի իցէ: Ասեն, յերկրիս ստուերէ լի՛նի»: Լի՛նի այստեղ Հեղինակը դրել է ստորագրասականով, որպէս զի ցոյց տայ իւր կասկածը այս նախագասութեան մասին, որի ճշմարտութիւնն ինքը չէ ընդունում: (Ասում են, ի՛բր թէ երկրիս ստուերից լի՛նի լի՛նի):

Ստորագրասական եղանակ գործ է ածուում նոյնպէս փոխանակ հրամայականի և արգելականի: (Տես §§ 16, 19):

ԾԱՆ. 1. Որովհետեւ ստորագրասական եղանակը գրաբարում երկու ժամանակու միայն է մնացել — ներկայում և անցեալ կատարեալում՝ ուստի միւս ժամանակներում գործ է ածուում միայն սահմանական եղանակ, թէպէտ և խօսքի իմաստը պահանջէր ստորագրասական. — Ստորին հայկաբանութեան դարերում ունիտորները, լատիներէնի հետեւողութեամբ, հնարեցին անկատարի և գերակատարի ստորագրասականներ — գործիցէի, գործեալ իցէի — որոնք հարազատ հայկաբանութիւնը մերժելով մերժում է: Այսպէս Եզնիկը գրում է «Թէ երկինք և երկիր և որ ի նոսայն՝ չէն, ո՛ւր ուր իցաշտն կամ իւ՛»: Այստեղ էն, ուր ասացուածները գրուած են սահմանական եղանակով, թէպէտ և իմաստով նոքա ստորագրասական են. (եթէ նոյն նախագասութեան մէջ ժամանակը փոխելու լինէինք՝ կունենայինք ստորագրասականով — «Թէ երկինք և երկիր և որ ի նոսայն՝ չէն, ո՛ւր ուր իցաշտն և իւ»). մինչդեռ լեզուի անկման ժամանակ լատինամոլ և հայերէնի տգէտ գրչակները կգրէին. թէ երկինք և երկիր... չէն, ո՛ւր ուր իցաշտն:

ԾԱՆ. 2. Գիտնալու է, որ ստորագրասական եղանակի ձևը գրաբարի մէջ առհասարակ խախտուած է եղել նոյն իսկ Ծ. դարում. (ինչպէս այդ, նոյնպէս և ապագայ դարերի մատենագիրների մէջ նկատում ենք, որ այդ ձևերի գործածութիւնն հետզհետէ պակասում է. իսկ այժմեան գաւառական բոլոր բարբառների մէջ տեսնում ենք, որ

այդ ձևերն անհետացել են և փոխարինուել են նոր ձևերով: Ուստի ամենընտիր մատենագիրներն իսկ ստորագասականի այդ ձևերը գործածելու մէջ չեն միաբանում միմեանց, և ստորագասականի հին ձևերի խանգարումն ուրեմն նկատոււմ է նոյն իսկ օրինակելի մատենագիրների մօտ: Օր. Աւետարանում (Մատթ. Ե. 3) գրուած է. «Երանի (է) աղքատաց հոգւով», որ բոլորովին ուղիղ է. միևնոյն. նախադասութիւնը Ոսկեբերանի Մատթէոսի մեկնութեան թարգմանութեան մէջ գրուած է. «Երանի էջ աղքատաց հոգւով». մինչդեռ յոյն բնագիրը սահմանական եղանակ է գործածոււմ երկու տեղում ևս: Նոյնպէս Եզնիկի մէջ երկու անգամ կարդոււմ ենք. «Իւրոյ արարչին յառաջագոյն պատուիրեալ էր նմա, թէ յորում աւուր «-րէ» ի պտոյ ճառոյն՝ ի նմին աւուր «ե-անի». և թշնամին յետոյ եկեալ ասէր՝ ոչ «ե-անի», այ իբրև զԱստուածս լինի»: Մինչդեռ նոյն խօսքում Աստուածաշունչի թարգմանութեան մէջ ստորագասական է գործածոււմ փոխանակ նօտրագրուած ասացուածներին. «Ի ճառոյն գիտութեան բարոյ և չարի մի «-րէջէ», զի յորում աւուր «-րէջէ» ի նմանէ՝ մահու «ե-անիէջէ... ոչ եթէ մահու «ե-անիէջէ... Բանայեն աչք ձեր և լինիէ իբրև զաստուածս», որ ուղիղ է, իսկ Եզնիկի գործածութիւնն ուղիղ չէ: Նոյն իսկ միևնոյն մատենագիրը ստորագասականի գործածութեան մէջ շատ անգամ հակասոււմ է ինքն իրան. մինչև իսկ Եզնիկը, որ ստորագասականի գործածութեան կողմից ևս օրինակելի մատենագիր է՝ նա ևս այսպիսի անհետևողութիւններ ունի. «Զի ոչ է մարթ ումեք սկիզբն առնուլ լինելոյ, եթէ ոչ յալմէ առնուցու զլինելն. և Աստուած միայն իւրոյ էջ առնել յոչնչէ ինչ, որպէս և կամի»: որտեղ իւրոյ էջ ստորագասականը (փոխանակ սահմանականի—կարող է) բոլորովին անտեղի է և չէ արդարանում ոչ մի հանգամանքով: Ընդհակառակն հետեւեալ օրինակում «Եւ թէ ոչ Աստուած և ոչ խնամակալութիւն է, որ վարիցէ զաշխարհս»՝ ասացուածը դրել է սահմանական եղանակով, մինչդեռ իմաստը պահանջում էր այստեղ ստորագասական եղանակ—էջէ: Նոյնպէս «Կամ զօդ, որ մերթ ք-չէջ վարազացեալ՝ հրամանաւ, և մերթ «-րէ ի գոչելոյն՝ սաստիւ»: Այստեղ ք-չէջ և «-րէ ասացուածները միևնոյն տեսակ դիրք և պաշտօն ունին, ուրեմն սպասելու էր միևնոյն եղանակով գործածութիւն, սակայն մատենագիրը մէկը դրել է ստորագասական եղանակով, իսկ միւսը սահմանականով:

ՄԸՆ. 3. Նոյն պատճառով ստորագասական եղանակն և սահմանականի ապաւնին շատ անգամ միմեանց տեղ են գործածոււմ լաւագոյն մատենագիրների մօտ: «Ո՞վ ործէ էջ սիրտ սուրբ ունել, կամ ո՞վ հ-ուրոյնէջ՝ եթէ սուրբ իցէ ի մեղաց»: «Ի վախճանի իբրև զօճահար

«...տէրէ», և իբրև իժի՛ թոյնք «...տէրէ»։ Նոյնպէս Եզնիկն ունի. «Ջանայ սատանայ, զի զամենայն ոք ի բարևք ակնկալութենէ և բարեպաշտութենէ և ի սնտոյ յոյս և զպէտք»։ (որտեղ վերջին երկու ասացուածները թէպէտ միևնոյն պաշտօնն են կատարում և պէտք է ստորադասական դրուել չին՝ սակայն առաջինը դրուած է սահմ. ապառնիով)։ Իսկ նուազ ընտիր մատենագիրները մէջ ստորադասականի և ապառնիի այս փոփոխանակութիւնն այնքան յաճախ է պատահում, որ միայն նոցա վերայ հիմնուելով չէ կարելի ոչ մի կանոն հանել ստորադասականի և ապառնիի գործածութեան մասին։

§ 15. Հրահանգները եղանակը գործ է ածուում՝ երբ ասացուածը հրաման և պատուէր է պարունակում իւր մէջ, որի համար գործածուում են ինչպէս բուն հրամայականը՝ նոյնպէս և երկրորդական ձևը ջիւ վերջաւորութեամբ։ Օր «Տոբ գրեգ ի ձեռս իմ, զի սպանից և հեղից զարիւն քո»։ «Հարհիւր տեառն զերդմունս քո»։

§ 16. Ա. և Գ. դէմքերին համար, որոնք հրամայականի յատուկ ձև չունին, նոյնպէս և հրամանը աւելի մեղմ կերպով արտայայտելու համար գործ է ածուում սահմ. ապառնի և ստորադասական եղանակ։ Օր. «Յայժմ ես վասն քոյ յաշտ փունէի, յայսմ հետէ դու վասն իմ «...տէրէ»»։ (իոխանակ արն, ինչպէս գործածում է մի ուրիշ մատենագիրը միևնոյն նախադասութեան մէջ)։ «Տրտմութեամբ և երկոյս» զնա զամենայն աւուրս կենաց քոց. փուշ և տատասկ բարեպաշտութեան քեզ»։

§ 17. Անցեալ ժամանակում հրաման ցոյց տալու համար գործ է ածուում ասացուածը անցեալ անկատարի ձևով ընդ հրամայականի հետ։ Օր. «Թող ինքն նախ երևայր և արարչը զթագաւորութիւնն»։

§ 18. Արդէնքները եղանակը գործ է ածուում երբ ասացուածը արգելում կամ զգուշացնում է մի բանից։ Օր. «Մի արհամարհէք զմի ի փոքրկանց»։ Մի եղիցին քեզ այլ աստուածք բաց լինէն»։

§ 19. Ա. և Գ. դէմքերին համար, որոնք արգելականի յատուկ ձև չունին, նոյնպէս և Բ. դէմքում, երբ արգելքն աւելի մեղմ



մօրէն պէտք է արտայայտուի՝ արդեւականի փոխանակ դորձ է ածուում սահմանական ապառնի և ստորադասական: Օր. «Անդ ասէ, յի՛ երբնոյցս սուտ... և աստ ասէ. ամենևին յի՛ երբնոյցս»: «Մի՛ սուսյէ թշնամին, թէ չաղթեցի նմա»:

§ 20. Սահմ. ներկայ ժամանակը նշանակուում է ներկայումս շարունակուող գործողութիւն. ուստի գործ է ածուում՝

ա) Երբ գործողութիւնը կատարուում է ներկայումս: Օր. «Մեք ոչ անարգէ՛ս գնոսա, (զհուր, զջուր և այլն) և ոչ պաշտօն հարստացանէ՛ս նոցա»: «Տեսնե՛մ զմարդիկս, որ շրջն՝ իբրև զծառս»:

բ) Երբ գործողութիւնը միշտ և շարունակ կատարուում է: Օր. «Արեգակն մերթ էրևոյ զօրէ իբրև զարհուրեալ, և ուր ուր ի սաւարին լնուլ զմիջոց ի մեծի տանս. և ընդ ժամանակս ժամանակս ի խաւար դուռնայ»:

գ) Երբ հեղինակը կամենում է կենդանի ներկայացնել մի անցեալ գործողութիւն՝ այդ գործողութիւնը դնում է ներկայ ժամանակով: Օր. «Գոն ի Բեթսայիդայ, և Թէն առաջի նորա կոյր մի»: «Եւ իբրև Կեանէ, թէ ոչ ոք պարտէ զնա՝ բարկացեալ արար զնոսա մահկանացուս»:

դ) Առանձին կերպով գործ է ածուում ներկայ ժամանակում անէլ բայը, թէպէտ ասելու գործողութիւնը վաղուց եղած և կատարուած է: Օր. «Պատասխանի ետ և Կէ»: «Ջբարսմունսըն, զոր ի ձեռին ունէր՝ ցորդին իւր ցՈրմիզդ ետ և Կէ»:

ԵՄՆ. Ստորին մատենագիրները գործ են ածում ներկայ ժամանակ փոխանակ ստորադասականի և սահմ. ապառնիի, աշխարհաբարի նման, որ գրաբարում խոտելի է:

§ 21. Սահմ. անցեալ անկատարը ցօյց է տալիս անցեալում շարունակուող գործողութիւն. ուստի գործ է ածուում՝

ա) Երբ գործողութիւնը պատահել է անցեալում, բայց կատարուելը կամ չկատարուելը չէ նշանակուում: Օր. «Ահիւ և դողութեամբ ընկանային» (կանայքն) պատմել աշակերտացն, թէ յարեալ (Քրիստոս): «Իաւիթ ի Հոգուոյն սրբոյ ուսեալ՝ հարստացանէր աղօթս»:

բ) Երբ գործողութիւնը շարունակ կատարուելիս է եղել անցեալում: Օր. «Որ լաւ ոք եկեալ յաշխարհ Բաներ՝ վասն յիշատակի քաջութեանն զպատկերն երանգօք ի նկարու հանէին, և անտի ուսեալ տխմարաց՝ տակաւ ի պաշտօն «անոյն»:

գ) Խօսքը կենդանի անելու համար՝ պատմական ոճի մէջ գործ է ածուում փոխանակ կատարեալի: Օր. «Իջեալ ի դրախտն առ Ադամ՝ տոնաձայն իբրև զմարդ աներ: Եւ եկեալ Որդւոյ առ Աբրահամ՝ արժանի աներ ճաշ ի վրանի նորա ուտելոյ և... զերկուս պատանիս իւր, զհրեշտակս մարդակերպեալս՝ ի Սողոմ... առ Ղովտ արչներ»:

դ) Որովհետև անց. անկատարն և ասպառնին ստորադասականի յատուկ ձև չունին՝ ուստի այս ժամանակներում ստորադասական գործածուելու փոխանակ գործ է ածուում սահմ. անց. անկատար: Օր. «Նաև զպաշտօնեայսն իսկ իւրեանց (դիւաց), եթէ ոչ Աստուծոյ սաստ արհեր՝ ազգի ազգի խեղութեամբք իեղին և անհնարին մահուամբք «անանէին»: «Եւ զմիսն (գազանաց) եթէ սիրտ ուրուք անայր և աներ՝ ոչ փախէր»: (Համեմատել աշխարհաբարի հետ. — եթէ Աստուած չարհեր՝ կեղին ու անանէին. եթէ մէկի սիրտը աներ և աներ՝ չէր փախ, որտեղ ասացուածներն այս աւուր լեզուով ստորադասականի անցեալ անկատար են, իսկ առաջ եղել են սահմ. անց. անկատար):

§ 22. Անցեալ կատարեալը նշանակում է վերջնական գործողութիւն (չշարունակուող). ուստի գործ է ածուում՝

ա) Երբ գործողութիւնը հէնց նոր է վերջանում այն ժամանակին վերաբերութեամբ՝ երբ հեղինակը խօսում է այդ գործողութեան մասին: Օր. «Չէ աստ, այլ յարհ... ահա արայի ձեզ»:

բ) Երբ գործողութիւնը մի անգամ է պատահել և վերջացել է, սուանց ի նկատի առնելու ժամանակը: Օր. «Օրինացն աստուած արեղծ գնա և փչեայ ի նա ոզի, և եղև Ադամ ի շունչ կենդանի, և վասն այնորիկ անանէր» Ադամ զի ի կաւոյն «արարա»:

§ 23. Յարակատար ժամանակը նույնպէս նշանակում է

վերջացած, բայց շարունակուող գործողութիւն, այսինքն այնպիսի գործողութիւն, որ կատարուել է (առաջուց կամ հէնց նոր) և այժմ էլ կայ նորա հետևանքը, կամ թէ տևում է մինչև այսօր: Այս կերպով չարակատարը մասամբ ներկային է նման և մասամբ կատարեալին և պարունակում է իւր մէջ միանգամայն երկուսի էլ նշանակութիւնը. ուստի և շատ անգամ փոխանակում է նոցանով: Օր. «խորհուրդս զիտել զԱստուած, և գործովք իւրեանց ուրախեալ են ի նմանէ»: (Ուրացել են և այդ ուրացութիւնը շարունակում է): «Այլոց ի զբոց պատճառս առեալ, ասեն ի նոցն իսկ զիրս գրեալ է, թէ եդ գնոսա ի Հաստատութեան երկնից. ուստի յայտ է, թէ Բեհեմոտ էն, և ոչ զնայունք»: (Գրուած է, և կայ մինչև այսօր. բեհեմոած են, և կան մինչև այսօր): Այս օրինակներից երևում է, որ անց չարակատարը մի գործողութիւն է, որ կատարուած է ներկայ գործողութիւնից առաջ, սակայն նորա ազդեցութիւնը շարունակում է մինչև ներկան: (Այժմ խորհուրդս են, բայց աւելի առաջ ուրախել են. այժմ ասում են, թէ գրեալ է. այժմ յայտնի է, թէ Բեհեմոած էն):

§ 24. Գերակատար ժամանակը նշանակում է նոյնպէս վերջացած գործողութիւն. բայց այդ գործողութիւնը վաղուց է կատարուել և նորանից յետոյ մի ուրիշ անցեալ գործողութիւն տեղի է ունեցել: Օր. «(Սատանայ) յօժարեցոյց զկէսն՝ լուսաւորաց երկիր պազանել, և զայլս՝ օդոյ և հրոյ, երկրի և ջրոյ... զի միայն զնախանձն, զոր ի մտի երեալ էր զուալոյ ընդ մարդոցն կատարեսցէ»: «Մինչ չև երեալ էր յարգանդէ՝ արբեյն զքեզ»: (Յօժարեցնելու և սրբելու գործողութիւնները կատարուած են. բայց դոցանից առաջ տեղի են ունեցել միտքը դնելու և չծրնուելու գործողութիւնները, որոնք դրուած են գերակատար ժամանակով):

§ 25. Որովհետև գերակատար ժամանակն ստորագասական եղանակ չունի՝ ուստի այն դէպքերում, երբ խօսքի իմաստը պահանջում է ստորագասական եղանակ՝ գործ է ածւում սակ-

մանականի գերակատարը: Օր. «Եթէ ասա լեալ էիր՝ եղբայրն իմ չէր հետեալ»: «Թէ չէր Աստուծոյ արարածս արարեալ՝ և գիտէր իսկ ոք ոչ թէ բնաւ իցէ Աստուած»:

§ 25. Ապառնի ժամանակն երեք ձև ունի. պարզ և երկու բաղադրեալ, լոյ և չի վերջաւորութիւններով—գործեցից, գործելոց եմ, գործելի է: Պարզ ապառնին բուն նշանակութեամբ գործ է ածուում՝ երբ գործողութիւնը կատարուելու է ապագայում: Օր. «Նախ զայն արարեալ, թէ բնաւ գուցեն ինչ արարածք բանաւորք քան զհրեշտակս և զմարդիկ, և ապա եհեալ յարար ի քնին»: (Նախ կտեսնենք, յետոյ կգանք քննելու):

Բացի բուն նշանակութիւնից՝ պարզ ապառնին գործ է ածուում ինչպէս մեղմ հրամայական և արգելական (տ. § 16, 19) և փոխանակում է ստորագասականի հետ (ա. § 14, ծան. 3):

§ 26. Լոյ վերջաւորութեամբ բաղադրեալ ապառնին ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որ անշուշտ պիտի կատարուի: Օր. «Մոլորութիւնն դիւաց խաբեաց զդիւցապաշտս Հայոց, եթէ ոմն Արտաւազդ... ելանելոյ է և անելոյ զաշխարհս... որպէս և Հրեայք... ի զուր ակնկալութեան կապեալ կան, եթէ Դաւիթ 4-րդ է շինել զԵրուսաղէմ»: (Հայերը կարծում էին, թէ Արտաւազդ անշուշտ պիտի դուրս գայ և աշխարհը բռնէ, Հրեաները հաւատում էին, թէ Դաւիթ անշուշտ պիտի գայ Երուսաղէմ շինելու):

§ 27. Երկրորդ բաղադրեալ ապառնին, չի վերջաւորութեամբ՝ նշանակում է՝ պէտք է, կարելի է: Օր. «Ըստ նմին օրինակի և Պաւղոսի զերրորդ երկինսն ասել իմանալի է»: Ընտրելագոյն մատենագիրների մօտ այս ձևը յաճախ գործածական չէ. այլ նորա տեղ պատահում են ուրիշ դարձուածներ, է, հարկ է, պարտ է, արժան է, և այլն: Օր. «Ի՛ և զայս իմանալ»: (փոխանակ՝ իմանալի է և զայս):

ԱՍՏՅՈՒԱԾ ԵՒ ԵՆԹԱԿԱՅ

§ 28. Ենթական որովհետև այն ~~առարկան է~~, որի մասին խօսուում է նախադասութեան մէջ՝ ուստի ենթակայ լինում են սովորաբար առարկայ ցոյց տուող բառերն, այսինքն գոյականները: Քացի գոյականներից ենթակայ լինում են ածականները՝ եթէ նոցա տակ զօրութեամբ հասկացուում է մի գոյական. դերանունները, որոնք դրուում են գոյականի տեղ. անորոշ և անցեալ դերբայները, որոնք գոյականի նման հոլովուում են. վերջապէս բոլոր մասնբանիներն, եթէ նոքա վերցուում են ինչպէս առարկայ, մինչև իսկ ամբողջ նախադասութիւններ: Օր. «Եւ զի դիւաց զիւտ է ~~էստացառութիւն~~՝ վկայէ Դսէի, թէ ամենայն ~~առարկան~~ հեթանոսաց դէք են»: «Եթէ արարին հազիւ չէյչէ, ~~ամբարշտն~~ և ~~ճշարտն~~ ո՛ւր գտանիցին»: «Եւ տեսեալ զնա Զրուանայ՝ ոչ գիտաց եթէ ո՛ր է իցէ. և հարցանէր, եթէ ո՞վ ես դու: Եւ նա ասէ. էս եմ որդին քո: Ասէ ցնա Զրուան. իմ որդին անուշահոտ և լուսաւոր է, և դու խաւարին և ժանդահոտ ես»: «Ի զուր է կալ կալ ~~սեղն~~ ոմանց ի կալս»: «Զի մի վաղն առնելով՝ ~~չէյչէ~~ վնասիցին»:

§ 29. Իմաւոր ասացուածի ենթական դրուում է ուղղական հոլովով և նորա հետ համաձայնում է թուով և դէմքով: Օր. «Յայժմ էս վասն քո յաշտ ~~անէի~~, յայսմհետէ դու վասն իմ ~~անիցէ~~»: «Թէպէտ և նոքա աստուածական օրինացն ոչ հասան, ~~ճէ~~ յուղղորդ պատասխանոյ զմեր ընտանիս մի զսէսցոտի»: ԾԱՆ. 1. Այս ~~այդ~~, ~~այն~~ դերանունները յոգնակի առարկայի տեղ գործածուելիս՝ սովորաբար եզակի են դրուում. այս դէպքում նոցա ասացուածը զօրութեամբ հասկացուած գոյականին համաձայնելով յոգնակի է դրուում: Օր. «Այ թէ ի կալս ջորիք և ուղտք երևիցին՝ դիւաց կերպարանք են ~~այն~~ և ոչ վիշապաց»: «Յաւք են ~~այն~~, և մեք դարմանովք կարեմք բժշկել»:

ԾԱՆ. 2. Իւրօրինակ միջակ անուան մօտ ասացուածը կարող է դրուել թէ եզակի և թէ յոգնակի, ինչպէս երևում է այս օրինակից. «Եւ քանի անթիւ բիւրուց կախարդաց են յերկրի. եթէ ~~իւրօրինակ~~ ոչ

ի նոցանէ իջուցանել իւրեզ զնա (զլուսին), ոչ երբէք «յի» նմա ելանել յերկինս», Այս բառը երեք դէմքի համար էլ կարող է գործածուիլ, և ըստ այսմ ասացուածն էլ կարող է նորա մօտ դրուիլ ամեն մէկ դէմքով, նայելով իմաստին:

§ 30. Գոյական անունները համարուում են երրորդ դէմքի, ուստի նոցա հետ ասացուածը գործ է ածուում երրորդ դէմքով: Օր. «Զի Աստուած մահուան չէ պարտաւ՝ վէպէսչէ ամենարուեստ իմաստունն»: Երրորդ դէմքով կգործածուի ասացուածն և այն դէպքում, երբ ենթակայի վրայ դրուած են «, ր դիմորոշ յօգերը՝ այ», «յր նշանակութեամբ: Օր. «Մոլախինտո (այդ մոլախինտը)... ի յայտնի ժամանակի «դոնոշ է»: «Ասա բանիւ, և քօշիէսչի յանուի» իմ:

ԾԱՆ. Որ յարաբերականը որովհետև դէմքերի համար առանձին ձևեր չունի և յարաբերում է բոլոր դէմքերն ևս՝ ուստի նորա մօտ ասացուածը դրուում է բոլոր դէմքերով ևս, համաձայն յարաբերեալի դէմքին: Օր. «Զիմորդ պաշտիցեմք շրէիւն», «ը մերթ իւրի իբրև զճառայ առ ի սպասն... հասանելոյ»: «Որ ուրէն՝ ոչ պարտի անգոննել շիւր իբրև զտկար, որ ոչդ հարտ ուտել զամենայն ինչ իբրև զսուրբ»: «Ե» եմ, «ը հիւր զքեզ յերկրէն Եգիպտացուց»:

Որ յարաբերականը յոգնակի գոյական յարաբերելիս ընդհանրապէս յոգնակի է դրուում. բայց շատ յաճախ ընտրելագոյն մատենագիրների մէջ պատահում է եզակի գործածուած, բայց այս դէպքում ասացուածն անշուշտ յոգնակի է դրուում, համաձայն յարաբերեալի թուին. Եզնիկն ևս անխտիր գործ է ածում յոգնակի և եզակի յարաբերական: Օր. «Էէին ի միջի շատարի, որ զթիւ աւուրց և ամսոց և տարեաց իրէիս»: Եւ դեռնիս, «ը ի ջուրսն ի ներքս է», ի չորից հիւթոցն յօդեալ են»:

§ 31. Երբ մի քանի եզակի թուով ենթականեր վերաբերում են մի ասացուածի՝ ասացուածը յոգնակի է դրուում: Օր. «Յայնժամ «իսն Որիդդ և Արհմն առնել արարածս»: «Յուցանէր, թէ հարտ և օր և երկիւր ինտունիս ինչ իյէն և Ռեանիյն»:

§ 32. Այս կանոնի դէմ խոտորումներ են պատահում. երբ մատենագիրն ասացուածը առաջին եզակի ենթակային հետ համաձայնեցնելով՝ երկրորդի մօտ կրկնում է զօրութեամբ, որ մանուաւնդ պատահում է՝ երբ ենթակաները « շաղկապով կամ ոչ

բացասական մակրայով են դրուած: Օր. «Որով երևի, թէ արե-  
գին արարչ- յետս, և ոչ երբն»: (Զորութեամբ հասկացում է՝  
և ոչ երկինք արարչն): Նորա է երկիր, և ջուրք և օդք: (Զօ-  
րութեամբ հասկացում է—նորա են ջուրք, նորա են օդք):

ԾԱՆ. Իբրև բացառութիւն պէտք է նկատել, որ մի քանի եզա-  
կի ենթակաների ասացուածն, եթէ է՛հական բայն է՝ երբեմն եզակի  
է դրոււմ: Այսպէս Եզնիկի մօտ պատահում են. «Եւ ոչ ամենայն լու-  
նաւ և ցարեւ մարդկան ի դիւէ է»: «Եւ առ օրինակ ի մարդոցն, որոց ի  
վերայ հոբ և հո է»:

§ 33. Անեզական անունների ասացուածն յոգնակի է  
դրոււմ: Օր. «Եւ ոչ երբն շրջն, զորմէ ասեն արտաքին իմաս-  
տունքն, թէ մերթ ի շրջնն ծածկն զլուսաւորսն և մերթ  
յայտնէն»: «Աստուածատուր Գիրք հաստատութիւն հոգն գերկինս»:

ԾԱՆ. Նորագոյն մատենագիրները յաճախ անեզական անունների  
ասացուածն եզակի են դնում, որ բացատրոււմ է սորանով, որ այդ  
անունները, որոնք հին ժամանակներում պարզ յոգնակի էին (գիրք  
նշանակում էր գրեր, գրուածներ, երկինք՝ երկնային գաւառներ, կա-  
մարներ և այլն), ժամանակի ընթացքում եզակի դարձան. Ինչպէս  
այժմ տեսնում ենք, որ երկինք, գիրք, ձեռք, ոտք և այլն, որոնք  
հին ժամանակներում յոգնակի էին՝ այսօր պարզ եզակի են և ունին  
որ յոգնակի ձեւեր—երկնքներ, գրքեր, ձեռքեր, ոտքեր և այլն:

§ 34. Երբ լինում են այլ և այլ դէմքերով եզակի կամ  
յոգնակի ենթականեր՝ ասացուածը դրոււմ է յոգնակի և առա-  
ջին դէմքով՝ եթէ առաջին դէմքով ենթակայ կայ, իսկ եթէ  
չկայ՝ երկրորդ դէմքով: Օր. «Եւ և որ և ամենայն բարեբան  
արարչութեանս աստուածային գրոց» (Եղիշէ): «Եթէ մեղիցէ քեզ  
եղբայր քո՝ յանդիմանեա զնա, յորժամ որ և նա միայն է է»:

§ 35. Երբ ենթական յոգնակի է և ասացուածը գոյական  
կամ ածական անուն, է՛հ, հո՛հ բայերով՝ այս բայերն յոգնակի են  
դրոււմ, իսկ գոյականը կամ ածականը թէ՛ եզակի և թէ՛ յոգ-  
նակի, առանց որոշ կանոնի: Օր. «Ղաւ համարի (մարտուսոյցն)  
թէ վասն անուան բարիք մեռանիցին (արարչութեան), քան թէ  
էնտանի ի սոյն և մարտան լինիցին», որտեղ ասացուածների ածա-  
կաններն եզակի են դրուած: Մարտան է՛հ սուրբութեան, թէ

անհարմար», որտեղ ասացուած — ածականները դրուած են յոգ-  
նակի: «կամի (Ստուուած), զի և իւր բանաւոր արարածն յան-  
խոյոյ բարեաց և գործօնեայ արդարութեան շինիցն»: «Երկինք  
եպեշտու է և լուսաւորքն գոյուսն», որտեղ ասացուածներից մէկը  
եզակի է դրուած, միւսը յոգնակի:

§ 36. Ինչպէս յայտնի է՝ անցեալ դերբայները միևնույն  
ձևով ունին թէ նշրգործականի և թէ կրաւորականի նշանա-  
կութիւն. տեսեալ — նշանակում է միանգամայն արած և տես-  
նուած, տեսեալ է — նշանակում է արեւ է և տեսնուել է: (Տես  
Գր. Հոլ, § 114): Ուրեմն նախադասութեան մէջ անցեալ դեր-  
բայն ասացուած դառնալիս՝ իմաստը կարող էր շփոթուել. օր.  
«տեսեալ են չարագործք» խօսքը կարող էր նշանակել թէ «չա-  
րագործները տեսել են», և թէ «չարագործները տեսնուել են»:  
Այսպիսի երկիմաստութիւնից խոյս տալու համար լեզուն ար-  
տադրել է կանոն —

Ներգործական անցեալ դերբայի և անցեալ դերբայով բա-  
ղադրեալ ձևերի ենթական դրում է սեռական հոլովով; եզա-  
կի կամ յոգնակի. և այս դէպքում ասացուածն անփոփոխ մնում  
է եզակի երրորդ դէմքով: Օր. «Թողեալ է Աստուծոյ զատանայ  
իբրև ի հրահանգս կռուանոցաց յաշխարհի»: «Եթէ այնպիսի  
արարեալ էր զնա (զատանայ) Աստուծոյ՝ պատիժս ի նմանէ չէր  
պարտ պահանջել»: «Եթէ որչափ իւրոյ սուր ատեալ ի վերայ խա-  
ղայցէ՝ մի լիցի նմա մեղադիր»:

§ 37. Այս կանոնն, ի հարկէ, այն դէպքերի համար է, երբ  
բայը ներգործական լինելով՝ կարող է երկիմաստութիւն պատճա-  
ռել: Իսկ երբ ասացուածը չէզոքական կամ կրաւորական սեռի է՝  
հարկ չէ մնում սեռական ենթակայի. այս դէպքերում ասացուա-  
ծի և ենթակայի համաձայնութիւնը լինում է ինչպէս նշանակ-  
ուած է § 29-ում: Օր. «Ոչ ընդ վայր ասայեալ է բան իմաստնոյն»,  
(ասուած է խօսքը): «Մարդն այնչափ հարստացեալ է՝ մինչ ըստ  
Աստուծոյ երկիւղին սահմանս արտաքոյ ելեալ անսաստէ»: «Յորմէ  
արարչէ երկիւ շէալ է՝ ի նմանէ և գործնին արարեալ են»:



ԾԱՆ. Այս երկու կանոններից խոտորումներ պատահում են ընտիր մատենագիրների մօտ ևս, և երևի առաջ են եկել մատենագիրների անուշադրութիւնից: Գոնէ մենք նոցա մէջ նկատելով հարիւրաւոր և հազարաւոր օրինակներ վերոյիշեալ կանոններին համաձայն՝ մի երկու բացառութիւնները՝ անուշադրութեան արդիւնք պէտք է համարենք կամ արտագրողների սխալմունք: Բայց այս խոտորումներն այն ժամանակ են պատահում, երբ երկիմաստութիւն չեն պատճառում—այնքան պարզ է խօսքի իմաստը, և սորանից է, որ այդ մատենագիրներն արել են խոտորում իրանց ընդհանուր կանոնից: Օր. Եզնիկի մօտ կարգում ենք. «Եւ Գրչն յարմարէ զմիւսն սպանանիցէ» (փոխանակ՝ մինն): «Որպէս և դայն, զոր ՅԷՆ Էրեւ է» (փոխանակ Յորայ) և այլն: Այս խոտորումներն հետևելու արժանի չեն:

— § 38. Անորոշ դերբայի ենթական դրում է (սեռական և տրական հոլովներով): (Սեռական դրում է՝ երբ անորոշ դերբայը զոյականաբար դործ է ածուած, հոլովուած է (մանաւանդ նախդրով հայցական հոլովով) և պարադայական խնդիր է ուրիշ դիմաւոր բայի. այս դէպքում սեռական ենթական թէ՛ ձևով և թէ՛ նշանակութեամբ բոլորովին նման է յատկացուցչի): Օր. «Եւ յէրանէն ար» ի տաճարէ անտի՝ ասէ ցնա մի յաշակերտացն նորա»: «Յելանել դիւն խօսեցաւ համին»: «Ոչ կամի զմահ մեղաւորին, այլ զդառնայն ար» և զկեալ»: «Եկեաց Սէթ յետ ծնանելոյ ար» զԵնոպս՝ ամս եւթն հարիւր և եւթն»: «Զսպասաւորութիւնն... անդադար մատուցանեն, վարելով ար, որ կազմեացն զնոսա»:

— § 39. Ենթական տրական է դրում՝ երբ անորոշ դերբայը բայի նշանակութեամբ է դործ ածուած և դրուած է ուղղական (երբեմն նաև սեռական և տրական հոլովներով) և մանաւանդ՝ իմէլ, լինէլ բայերի և Գնչն մակբայի հետ դտնուելիս: Օր. «Գաւիթ գալոց է շինել զԵրուսաղէմ և ժողովել զհրեայս և անդ Բագարէլ ար» նոցա»: «Անուշադրութիւն և ստուծոյ չար է»: Ոչ կամիմք Բագարէլ ար ի վերայ մեր»:

Այս տրականներն էլ ընութեան խնդրի են նման, մանաւանդ կամել և լինել բայերի մօտ գտնուածները, որոնք կարող են նոյնչափ վերաբերիլ անորոշ դերբային իբրև

ենթակայ: որչափ և այդ դիմաւոր բայերին իրրև ընութեան խնդիր:

§ 40. Յունական ոճով՝ անորոշ դերբայի հետ պատահում է հայցական հոլովով ենթակայ ևս, մանաւանդ յունաբան մատենագիրներին մօտ, (Խորենացի, Գաւիթ Անյաղթ և այլն): Այս հայցական ենթական հետեւեալ դէպքում է տեղի ունենում: Դիմաւոր ներգործական բայի մօտ (մանաւանդ կամել, ասել բայերի մօտ) լինում է անորոշ դերբայ, որ իսկապէս պէտք է լինէր դիմաւոր բայի հայցական սեռի խնդիրը. անորոշ դերբայն ունենում է իւր ենթական, որ պէտք է լինէր սեռական կամ տրական հոլովով. բայց յունական ոճով ենթական զրոււմ է դերբայի հոլովովը (հայցական). իսկ դերբայը մնում է ուղղական հոլովով. այսպէս՝ «կամիմ շէշէլ թագաւոր» խօսքը (կամենում եմ քո թագաւոր լինելը) դառնում է յունական ոճով՝ «կամիմ շէշէլ լինէլ թագաւոր»: Այս յունաբանութիւնից ընտրելագոյն մատենագիրները թարգմանութեան մէջ խօյս են տալիս. օր. գրում են. «Ոչ կամիմ եթէ տգէտք իցէք, եղբարք», (Ս. Կորնթ. Ժ. 1), մինչդեռ յունարէնն ունի. «Ոչ կամիմ շէշէլ տգէտս լինէլ, եղբարք»: Նոյնպէս՝ «Ձո՞ ոք ասեն զինէն ժողովուրդքն, թէ՛ իցեմ... Գուք զո՞ ոք ասէք զինէն, թէ՛ իցեմ», (Ղուկ. Թ. 18—20), որի յունարէն բնագիրն ունի. «Ձո՞ ասեն յի՞ ժողովուրդքն լինէլ... իսկ դուք զո՞վ դի՞ ասէք լինէլ»: Եզնիկըն ևս շատ անգամ, երբ առիթ է լինում այսպիսի հայցական ենթակայ գործածել՝ խօսքի ձևը շրջում է և հայկաբան ձևով է արտայայտում: Օր. նա գրում է. «Ի միոջն, ասեն, բնակեալ է օտարն, և յերկրորդումն օրինացն աստուած և յերրորդումն զօրք նորա», որը յունաբան մատենագիրները կդրէին. «Ի միոջն ասեն բնակել զօտարն և յերկրորդումն զօրինացն աստուած և յերրորդումն զգօրս նորա»: («Կախարդք» դիւի նմանել լուսնի բարբանջեն», որ յունաբանութեամբ կլինէր «Կախարդք՝ շէշէլ» դիւի նմանել բարբանջեն):

Այս օրինակներից երևում է, որ հայցական ենթակայ կոչ-

ուած ձևը չունարանութիւն է, խորթ է Հայերէնի ողուն, ուստի և խոտելի է նորա գործածութիւնը<sup>1)</sup>:

§ 41. Յայտնի է, որ նախադասութիւնն առանց ենթակայի չէ կարող լինել: Բայց խիստ շատ անգամ ենթակական նախադասութեան մէջ դրուած չէ լինում, այլ Հասկացում է զօրութեամբ: Այս պատահում է այն ժամանակ, երբ մի սլարբութեան (որ կաղմուած է մի քանի նախադասութիւններէր) բոլոր ասացուածների ենթակական միւսնոյն բառն է. այս բառը սկիզբը մէկ անգամ դրուելով յաջորդ ասացուածների մօտ այլ ևս չէ կրկնուում, որ մեծ տաղտկութիւն կպատճառէր լսողին: Օր. «Բայց Աստուծոյ թէպէտ ունէր իշխանութիւն զիւրոց արարածոցն զՀանդէսն տեսանել, այլ ոչ ինչն Դրբեայ զնոսա անկանել ընդ միմեանս: Իբրև եպէս զսատանայ նախանձու բորբոքեալ՝ Բայլ եպ անձնիշխանին ընդ անձնիշխանին ողորել. քանզի գիտէր, թէ ոչ ինչ տկարագոյն է սորա անձնիշխանութիւնս քան զնորայն»: Այս խօսքի մէջ Աստուած ենթակական մէկ անգամ միայն դրուած է ունէր ասացուածի մօտ, Դրբեայ ասացուածի մօտ դրուած է դերանուն, իսկ միւս երեքի մօտ — ետես, թոյլ ետ, զիտէր՝ զօրութեամբ է Հասկացում:

§ 42. Ենթական սովորաբար զեղջուում է՝ եթէ ցուցական դերանուն է և իմաստի շեշտ չունի: Երովհետև զիմաւոր ասացուածն արդէն ցոյց է տալիս դէմքերը, ուստի այսպիսի դէպքերում դերանուն ենթակայի դրուելը ոչինչ նոր իմաստ չտալով՝ միայն աւելորդ կրկնութիւն կլինէր: Օր. «ՁԱղբքսանդրէ խաբէին դւք, թէ Կենդանի Կայէ»: «Թէ զՀօրն խորհուրդ ծանեաւ Որմիզդ, զեղբօրն չարաճճոյ զխորհուրդ ընդէր ոչ զիւսաց, թէ ծախէ զօրովայնն և էլանէ և յառուջ երևայ աստու զթագաւորութիւնն»: Առաջի օրինակում Կենդանի Կայէ ասացուածը,

<sup>1)</sup> Սակայն Եզնիկն ևս երբեմն գործ է ածում այսպիսի չունարանութիւն: Օր. «ՁԱստուած արարիչ ասել այնպիսի իրաց՝ անպատշաճ է», փոխանակ գրելու՝ անպատշաճ է ասել, թէ Աստուած արարիչ իցէ այնպիսի իրաց:

և երկրորդում՝ էլանէ, էրլայ, աւան ասացուածները բոլորն առանց ենթակայի են, որ պէտք է լինէր նա ցուցական դերանունը, որ ինքն ըստ ինքեան հասկացում է այդ բայերի երրորդ դէմքերից:

§ 43. Լինում են խօսքի այնպիսի դարձուածքներ, երբ ուշադրութիւնը դարձւում է լոկ գործողութեան վերայ, առանց նկատի առնելու առարկան, որի մասին խօսւում է, այսինքն ենթական, ինչպէս՝ ասի, ասացաւ, ասեն, թուի թէ, մարթ է և այլ բայերի մօտ: Այս դէպքերում ենթական «անոր է:» Օր. «Այլ կախարդք, աւան, յղեն դևս և հանեն զդևս». (Քայց առանձն, թէ կախարդները դևեր են զրկում, դևերն հանում են): Հեղինակն ուշադրութիւն չէ դարձնում, թէ ով է ասում. նորա համար կարևորն այն է, որ ասում են:

§ 44. Դիմագուրկ բայերի ենթական լինում է սովորաբար անորոշ դերբայը, որ իւր կողմից ենթակայ առնում է այս դէպքում տրական հոլովով: Օր. «Միթէ պատճառ չարեաց զտէրըն պարս իյէ իմաւալ»: «Բարս է յեղ աստ լինել». (որտեղ լինել ենթակայ է բարս է ասացուածին, յեղ ենթակայ է լինելին):

### ԱՍՈՅՈՒԱԾ ԵՒ ՍԵՌԻ ԽՆԴԻՐ

§ 45. Բայերի երեք սեռերից՝ չէզոքականը նշանակում է այնպիսի գործողութիւն, որ ոչ ենթակայից է՝ փոխադրւում ուրիշ առարկայի վրայ և ոչ ուրիշ առարկայից ենթակայի վերայ: Միևս երկու սեռերը փոխադրուող գործողութիւն են նշանակում. յատկապէս ներգործական սեռը նշանակում է այնպիսի գործողութիւն, որ ենթակայից փոխադրւում է մի ուրիշ առարկայի վերայ (այսինքն ենթական ներգործում է ուրիշ առարկայի վերայ): Իսկ կրաւորականը նշանակում է այնպիսի գոր-

<sup>1)</sup> Ուրիշ լեզուների մէջ այս դէպքում ենթական կամ ամենևին չէ դրւում, կամ դրւում է անորոշ դերանուն. ինչպէս ГОВОРИТЬ, КАЗЕТСЯ; on dit, il semble; man sagt, es scheint և այլն.

ծողութիւն, որ ուրիշ առարկայից փոխադրուած է ենթակայի վերայ (այսինքն ենթական հրահանք է ուրիշ առարկայից): Օրինակ այս խօսքում հայր սիրէ զորդի—հայրը սիրում է որդուն— սիրելու գործողութիւնը ենթակայից (հօրից) անցնում է որդու վերայ: Նոյն խօսքում եթէ բայի սեռը փոխենք և ասենք՝ հայր էիք յորդույ՝ ենթական (հայրը) ոչ միայն ինքը չէ ներգործում, այլ և կրում է մի գործողութիւն ուրիշ առարկայից (որդուց): Ներգործական սեռի բայն ունի մի նպատակակէտ, որին դիմում է. կրաւորական սեռի բայն ունի մի սկզբնակէտ, որից սկսում է:

§ 46. Այն բառերը, որոնք ներգործական սեռի բայերի նպատակակէտն են կազմում, և որոնք կրաւորական սեռի բայերի սկզբնակէտն են կազմում՝ կոչւում են «է-ի խնդիր», այսինքն այնպիսի խնդիր կամ լրացուցիչ, որ բայը պահանջում է իւր «է-ի պատճառով»: «Հայր սիրէ զորդի» խօսքին մէջ՝ զորդի սեռի խնդիր է «է-ի ներգործական ասացուածին»: «Հայր սիրի յորդույ» խօսքին մէջ՝ յորդույ սեռի խնդիր է «ի-ի կրաւորական ասացուածին»:

— § 47. Ներգործական բայի սեռի խնդիրը դրւում է հայրահան հոլովով և պատասխանում է զո՞վ, զի՞նչ (հայց.) հարցմունքին. (որովհետև այս հոլովն է, որ ցոյց է տալիս շարժում, դիմում դէպի մի բան): Օր. «Ձեռքս սիրեցի և շնորհքս ատեցի»: «Տուր զքեզ ի ձեռքս իմ, զի սպանից և հեղից զարեանքս»: «Եւ արար (հիւզն) ինչպէս բազումս և... ելից նոքօք զարեանքս»:

§ 48. Զգեցուցանել, ուսուցանել, հարցանել ներգործական բայերը իրանց նշանակութեան համաձայն կարող են երկու սեռի խնդիր առնել. մէկը անձ նշանակող (զո՞ զգեցուցանել, ուսուցանել, հարցանել), միւսն առարկայ նշանակող (զի՞նչ զգեցուցանել, ուսուցանել, հարցանել). այսպէս գտնւում են օրինակներ. «Որ զգեցուցանէր զքեզ ինքեզ»: «Հարցից և ես զքեզ բան մի»: «Ուսուցանէր զքեզ առակօք բարեմ ինչ»: Այս դարձուածքը յունաբանութիւն է: Հայկաբանօրէն՝ այս բայերի մօտ մի բառը

կղերուի հայցական իբրև սեռի խնդիր, իսկ միևսը ուրիշ հոլովով, իբրև բնութեան խնդիր. այսպէս զգեցուցանել «-Տէ՛ գինչ, ուսուցանել «-Տէ՛ գինչ, հարցանել գինչ յ«-Տէ՛է. կամ՝ զգեցուցանել զոք յնչ, ուսուցանել զոք իՏէ՛, հարցանել զոք վասն իբրիք: Օր. «Տէրն արարածոց... զգեցոյց Ռուխ աշխարհին իբրոմ»:  
«Զօրութիւն զգեցոյց նոյ»:  
«Ուստ մեղ յաղօթս կալ, որպէս Յովհաննէս ուսոյց աշխարհայ իբրոյ»:  
«Հարցանէին ի նմանէ բարոմ ինչ»:

§ 49. Չատ ներգործական բայեր առնում են երկու հայցական խնդիր, մէկը բուն սեռի խնդիրը, իսկ միևսը ցոյց է տալիս թէ այդ սեռի խնդիրն ինչ է դառնում. բուն սեռի խնդիրը դրուում է այս դէպքում որոշեալ հայցականով, իսկ երկրորդ սեռի խնդիրը՝ անշուշտ անորոշ հայցականով: Այս բայերն են՝ անուանել, կոչել, առնել, դնել, կարգել, կացուցանել, կազմել, ընտրել, սահմանել, ունել, կարծել, ասել, համարել, իմանալ, և այլն: Օր. «Զաստատածէն շունն ընդէր և նա (Պղատոն) փոփոխելի... համարէր»:  
«Յայտ առնէ (Պիլթագորաս), թէ զայն տեսնայն աստատած կարծէր»:  
«Աստատ զմիտ սահմանեցին»:  
«Նորին հրամանն ունի և շերտին աշարթս և եպէղախլ»:  
«Զտեղ իսկ երկրորդ բարեկ կազմեաց յօրինիչն»:  
Այս օրինակներում բուն սեռի խնդիրներն են զշունչսն, զայն ամենայն, զմիտս, զերկոսին, զքեզ բառերը. երկրորդ սեռի խնդիրներն են՝ փոփոխելիս, աստուածս, աստուած, անշարթս, ետեղակալս և արարիչ բառերը: Օրինակներէց երևում է, որ այս երկու հայցականներն ընդհանրապէս թուով համաձայնում են միմեանց հետ: Բայց բուն սեռի խնդիրը անեզական բառ լինելիս՝ երկրորդ սեռի խնդիրը դրուում է եզակի. (Աստուած գմիտս սահմանեցին):

§ 50. Կան մի քանի բայեր, որոնք այժմ ներգործականի նշանակութիւն ունին, բայց խօսքի մէջ այն առարկան, որի վերայ ընկնում է նոցա գործողութիւնը՝ դրուում է ոչ թէ հայցական հոլովով, ինչպէս սպասելու էր, այլ տրական հոլովով: Այս բայերն են՝ յաղթել, սիրել, պաշտօնել: Օր. «Որք... յաղթեցին բարոյն և բարոյ նորա»:  
«Տղայոյն անմեղաց ընդէր տիրի-

ցին դեքն»: «Պաշտպանեաց Իւրայելի ծառայի իւրում»: Իսկ սպան-  
գանել բայը սեռի խնդիր առնում է թէ հայցական և թէ  
տրական հոլովներով: Օր. «Ջմին լսէ և շինան ստունգանէ»: «Սա-  
տանայ չար զստունգանելն մարդոյն Աստուծոյ իմացաւ»:

§ 51. Կրաւորական բայի սեռի խնդիրը գրւում է բացա-  
ռական հոլովով և պատասխանում է յումմէ հարցմունքին.  
(որովհետև այս հոլովն է, որ նշանակում է մի տեղից սկսուիլ,  
առաջ գալ): Օր: «Իրք հաւաստիք պատմին ի նոյանէ»: «Այնպի-  
սւոյ բարւոյ աստուծոյ որդի ի չարէն որդոյն սատակեցաւ»:

§ 52. Իւրաքանչիւր ներգործական բայ իւր սեռի խն-  
դրով կարելի է կրաւորականի վերածել, և հակադարձաբար՝  
իւրաքանչիւր կրաւորական բայ իւր սեռի խնդրով՝ ներգործա-  
կանի—հետևեալ կերպով. բայի սեռը փոխուելիս՝ նորա ենթա-  
կան դառնում է սեռի խնդիր, իսկ սեռի խնդիրը՝ ենթակայ,  
և բայը համաձայնում է այս նոր ենթակային հետ: Օր. «Հիւ-  
ղըն արար կուռս բազումս»—կրաւորաձև դառնալով կլինի. «Կուռք  
բազումք արարան ի հիւղայն»: Իսկ՝ «Իրք հաւաստիք պատմին  
ի նոցանէ» խօսքը ներգործակերպ դառնալով կլինի. «Իրս հա-  
ւաստիս պատմեն նոքա»:

Այս կանոնին համաձայն կրկին սեռի խնդիր ունեցող բայ-  
երն երբ կրաւորակերպ դառնան՝ երկու սեռի խնդիրն էլ ուղ-  
ղական հոլովով կգրուին: Այսպէս § 49-ում բերուած օրինա-  
կում ասացուածը կրաւորակերպ դարձնելով՝ կունենանք. «Աս-  
տուածեղէն շունչն փոփոխելիս համարէին ի Պիլթագորայ»:

§ 53. Յաճախ պատահում է, որ սեռի խնդիրները խօս-  
քի մէջ չեն գրւում, այլ հասկացում են զօրութեամբ: Օր.  
«Նաև ինքն իսկ (Յիսուս) եթէ խրատիչ գիտէր զնոսա (զղևս)...  
ոչ աշակերտացն իւրոց հրամայէր հալածիլ՝ որոց իւրն հրաման  
տուեալ էր մտանել ի մարդիկ», որտեղ հալածել բայի սեռի  
խնդիրը պէտք է զօրութեամբ հասկանալ զայնուսի. (աշակերտ-  
ներին չէր հրամայի հալածել նրանց, որոնց ինքը հրաման էր  
տուել մարդոց մէջ մտնելու): «Յովսեփայ և Դանիէլի մեծամեծ

իրաց տեսիլք յայտնեցան»։ (պէտք է զօրութեամբ հասկանալ՝ յԱստուծոյ)։

ԾԱՆ. Կինում է որ այսպիսի դէպքում, երբ սեռի խնդիրը զօրութեամբ է հասկացուում՝ խօսքի մէջ գտնուում է մի ուրիշ բառ նոյն հոլովով, որ հոլովով պէտք է դրուած լինէր սեռի խնդիրը. ուստի և անուշադիր կարգացողը կարող է սխալուիլ և այդ բառն ընդունել սեռի խնդիր. ինչպէս այս խօսքը. «Վասն այնորիկ անուանեցաւ Ադամ, զի է օրոյն արար», որտեղ կրաւորական սեռի ասացուածին մօտ գրտնուում է բացառական հոլովով մի բառ, որ սակայն սեռի խնդիր չէ. որովհետեւ բաց. սեռի խնդիրը նշանակում է սկզբնակէտը, որտեղից գործողութիւնն առաջ է գալիս. մինչդեռ ի կաւոյն այդ նշանակութիւնը չունի. և չէ կարելի այդ խօսքը ներգործակերպ դարձնել, համաձայն կանոնին, և ասել, թէ «Կաւն արար զԱդամ», որ իմաստ չունի. Այստեղ սեռի խնդիրը զօրութեամբ պէտք է հասկանալ—յԱստուծոյ. իսկ ի կաւոյն՝ բնութեան խնդիր է, որ անփոփոխ է մնում, եթէ բայը ներգործական էլ դարձնենք— «Աստուած արար զԱդամ ի կաւոյն»։ Նոյնպէս եթէ ասենք. «Յիսուս պահեաց յանապատին գբառասուն տիւ և գբառասուն գիշեր»՝ գտիւ և զգիշեր հալցական հոլովները սեռի խնդիր չեն պահել բային.— նորա սեռի խնդիրը զօրութեամբ է հասկացուում—պահս։

### ԱՍՏՅՈՒԱԾ ԵՒ ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

§ 54. Բնութեան խնդիր կոչուում են այն լրացուցիչները, որոնք ասացուածը պահանջում է իւր նշանակութեան, իւր բնութեան համաձայն։ Այս խնդիրները լինում են այլ և այլ հոլովներով, նայելով բայի նշանակութեան։ «Նա ետ է՛ց իշխանութիւն և ինքն եկան զայն յինէն» խօսքում «ուլ բայը, համաձայն իւր նշանակութեան՝ բնութեան խնդիր առել է՝ տրական հոլովով, իսկ հանել բայը՝ բացառական հոլովով։ Թէ ինչ հոլովներով պէտք է դրուին բնութեան խնդիրներն այլ և այլ բայերի մօտ—ընդհանրապէս հասկացուում է ուղիղ տրամաբանութեամբ. մի որոշ նշանակութեամբ բայերը որոշ հոլովով բնութեան խնդիր են առնում ինչպէս գրաբարում, նոյնպէս և աշխարհաբարում և նոյն իսկ բոլոր լեզուներում։ Այստեղ մէջ



են բերուած աւելի գործածական բայերի խնդրառութիւնը և այն առանձնայատկութիւնները, որ գրաբարն ունի, աշխարհաբարից տարբեր:

§ 55. Ուղղական Հոլովով բնութեան խնդիր առնում են § 49-ում նշանակուած բայերը կրաւորական ձևով գործածուելիս: Այս դէպքում բուն սեռի խնդիրը դառնում է ենթակայ, իսկ երկրորդ սեռի խնդիրը՝ բնութեան խնդիր (առանց դիմորոշ տառերի) և ցոյց է տալիս ենթակայի ո՛վ կամ ինչպիսի դառնալը: Օր. «Յիրաւի ասին մարդիկ ~~արբէշ~~ չարեաց»: «Եւ կոչեցաւ անուն նորա Յիսուս»: «Նա թէ և (զազանք) ի չարէ ինչ էին չար արարեալք՝ ոչ ինչ ի նոցանէ օգտակար գտանէր»: Օրինակներից երևում է, որ երբ ենթական յոգնակի է՝ ուղղական բնութեան խնդիրն էլ յոգնակի է դրւում:

§ 56. Սեռական Հոլովով բնութեան խնդիր գործ է ածւում Ա) Երբ հարկ է լինում ցոյց տալ ժամանակի կրկնութիւն. և այս դէպքում ժամանակ ցոյց տուող բառն ինքն ևս կրկնւում է: Օր. «Լուսին ~~ահայ~~ ~~ահայ~~ հիւճանի» (ամսէ ամիս նուազում է): «Եթէ զամենայն օր շրջիցին (երկինք) զիմրդ զարևն ~~արար~~ ~~արար~~ ի նոյն արևելս ածիցեն և զլուսին հազիւ յամսեան»: Նոյնպէս ասւում է՝ ամի ամի, զիշերի զիշերի և այլն:

Բ) Վաճառել, գնել, գնահատել ցոյց տուող բայերի մօտ սեռական Հոլովով դրւում է զին կամ արժէք ցոյց տուող բառը (համաձայն յունարէնի): Օր. «Գնոց գնեալ եմք մեք»: «Երկու ճնճղուկք ~~դասգի~~ ~~դասգի~~ վաճառին»:

Բաց ցոյց գործ է ածւում և գործիական Հոլովով. ինչպէս միւլենոյն նախադասութիւնը Եզնիկ ուրիշ տեղ գրում է. «Ստարին ~~գնի~~ ~~գնի~~ գնեալ է զմեզ ի տեառնէն արարածոց»: «Ո՛րպէս կամ է՝ գնեալ իցէ՝ զայն ոչ ամենեքին զիտեն»:

(Այսպէս էլ աշխարհաբարում— ~~գնի~~ ~~գնի~~ կամ ~~գնի~~ ~~գնի~~ առար— ~~այսպէս~~ ~~այսպէս~~):

Գ) Հասակ ցոյց տուող բառերը դրւում են սեռական Հոլովով: Օր. «Եւ ինքն Յիսուս էր ~~ահայ~~ իբրև երեսնայ»: «Իր նոյ

«Մայ հինգ հարիւրից»։ «Աախճանեցաւ Յովսէփ «Մայ հինգիս երեսնայ»։

§ 57. Զ նախդրով սեռական խնդիր են առնում հարչանել, զարչանել բայերն այն բառը, որին զարկուում է. (մի բանի խփել)։ Օր. «Մի հարցես զհարի գոտն քո»։ «Երանի որ կալաւ զմանկունս քո և հար զհարի»։ «Յետս յետս չոգան և զարկան զգէրն»։

Այսպէս նաև ասուում է՝ զահլի, զամօթի, զգողանի հարկանիլ։

§ 58. Հայցական հոլովը իբրև բնութեան խնդիր յաճախ է գործածուում և բազմաթիւ նշանակութիւններով։

Ա. Հայց. բն. խնդիր կլինին այն բառերը, որոնք ցոյց են տալիս ժամանակի շարունակութիւն, որի ընթացքում տևում է գործողութիւնը։ Օր. «Զոր յերէկ ընդ բերան ամիցէ մարդն՝ ի նոյն... և ի քունն զբաղնուն միտքն»։ «Զհողար «մ յաշտ արար»։ «Եղև Յունան ի վոր ձկանն զէրիս արիս և զէրիս գիշեր»։ Որոշեալ Հայցական գործ է անում այն դէպքում երբ ժամանակ ցոյց տուող բառին նախադաս թուական անուն կայ (զհողար ամ, զէրիս տիւս). իսկ եթէ թուական անուն չկայ, նոյնպէս երբ թուական անունը դրուած է գոյականից յետադաս՝ գործ է անում անխտիր որոշեալ կամ անորոշ Հայցական։

§ 59. Բ. Հայցական բնութեան խնդիր առնում են բայերն այնպիսի գոյականներ, որոնք նոյն բայի արմատիցն են, կամ նոյն բայի նշանակութիւնն ունին։ Օր. «Եւ երկեան երկիւղ մեծ»։ «Զայն ոչ զիտեն, եթէ էրիս «մ հո սպանանեն (զանասունսն)»։ «Իսրայէլ փրկելոց է զփրկութիւն յաւիտենից»։ Այս դարձուածքը յունաբանութիւն է, որ սակայն պատահում է ընտրելագոյն մատենադիրների մօտ ևս, որի հայկաբան ձևն է՝ գործիական հոլովով դնել արմատ գոյականը. ինչպէս անում Եղնիկ ուրիշ տեղեր «Ազգի ազգի իեղո-լեամբէ խեղէին և անհնարին «մ հո սպանանէին»։ «Երեքեան ջուկքս այսոքիկ... նովին իսկ «մ հո սպանանէին»։

§ 60. Գ. Նոյնպիսի ձևով Հայցական հոլովով գործածուում է բային հետ նոյն օրինակ, զնոյն օրինակ կամ զնոյն չափ օրինակի

դարձուածքը, փոխանակ գործիականի: Օր. «Եւ սոքա (զանդիկք) նոյն օշիւնս՝ զնոյն իմանան»։ (Սոքա էլ նոյն բանը միևնոյն կերպով են հասկանում):

§ 61. Գ. Անորոշ հայցական հոլովով դրուում են ածականները մակբայների նշանակութեամբ, (փոխանակ այդ ածականներից առաջ, օրին վերջաւորութիւններով մակբայ կազմելու) և պատասխանում են սրպէս հարցմունքին: Օր. «Ոչ եթէ բնածին բարք են, այլ է՛նհոնար»: «Անարար և անխոստար պահէ զեալորն»: «Թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, և ականջօք իւրեանց ծանունս լուան»: «Վառէ գեղեցիկ զմարդիկ»:

§ 62. Աւելի յաճախ գործածական է հայցական հոլովն այլևայլ նախդիրներով:

Անի, հոն, այն, այնպէս և այլնով հայցական բնութեան խնդիր առնում են այն բառը, որին դարձուած է խօսքը կամ հարցմունքը: Օր. «Ասէ յիստարարայծն»: «Հարցցուք և մեք յիստար»:

ԾԱՆ. Բաց այս երկու բայն էլ ուրիշ հոլովներով ևս առնում են խնդիր. ասել բայը (մանաւանդ պատմելու նշանակութեամբ) տրական խնդիր է առնում. օր. «Ասաց և առակ մի նոյն»: «Ասեմքէ» (միշտ):

Իսկ հարցանել բայը՝ հայցական (սեռի խնդիր), նոյն իսկ բացառական հոլովով: Օր. «Աշակերտքն հարցին ճէր վասն կուրին»: «Հարցցուք զիստար»: «Հարցանէր է նոյնէ, թէ ո՞ր ծնանիցի Քրիստոսն»:

§ 63. Ի նախդրով հայցականը ցոյց է տալիս ուղղութիւն: Ուստի ի նախդրով հայցական բնութեան խնդիր են առնում բոլոր այն բայերը, որոնք նշանակում են շարժում, տեղափոխութիւն, ինչպէս՝ առաքել, չղել, գնալ, դիմել, ընթանալ, մերձենալ, մատչել, արշաւել, դալ, կոչել, դառնալ, փոխել, միտել, յօժարել, ապաւինել, թարգմանել և այլն, թէ իրանց բուն և թէ փոխաբերական նշանակութեամբ: Օր. «Զորդին իւր իբրև զմարդ յաշխարհ առաքեսցէ»: «Չեմք բաւական մերձենալ յամենայնայ ոտարձանս»: «(Արեգակն) ընդ ժամանակս ժամանակս ի խոտար դառնայ»: «Յորժամ դայ (մարդ) է չափ հասակի՝ յայնժամ միտի ի չարի»: «Եթող ոմն զԱստուած... և ի կոտարիս ապաւինեցաւ»: «Եթէ կարճիչք յանցանաց էին դեք՝ ոչ երբեք

զմարդիկ ի հասարակական յօժարեցուցանէին»: «Այս կառք զարմանալիք... ոչ ի մի միայն հոշին ի հանդէպ երեսացն. և եթ արշաւին, այլ յամենայն հոշինս վարգին»: «Եւթանասնիցն թարգմանեալ ի յոյն լեզու»:

§ 64. Ի նախդրով Հայցականը, յոգնակի թուով և անորոշ դերբայի հետ ունի ի նախդրով տրականի իմաստ և ս<sup>1</sup>): Ռոտի ի նախդրով անորոշ դերբայը և յոգնակի թուով գոյականը գործ են ածուծ ի նախդրով տրականի տեղ. (տես §§ 80, 81): Օր. «Իբր ոչ եթէ յՈրմզկի կամ ի յաղէն էլ զօրութիւնն, այլ ի գասպանսն». (որտեղ յազել դերբայը և գաւազան բառն յոգնակի թուով գործ են ածուծ Հայցական հոլովով, իսկ Որմիզկ բառը, նոյն պաշտօնը կատարելիս՝ դրուած է տրական): «Թէ երկինք շրջէին՝ ոչ ի նոյն շառիշ, յոր ցայգն տեսանէաք, ի նոյն և զցերեկն գտանէին», (որ եթէ եզակի ձևով ասելու լինէինք՝ կուներնայինք. Թէ երկինք շրջէին՝ ոչ ի նոյն շառի, յոր ցայգն տեսանէաք, ի նոյն և զցերեկն գտանէին»):

§ 65. Ի նախդրով Հայցականը գործ է ածուծ ցոյց տալու Համար այն նպատակը, որի Համար գործողութիւնը կատարուած է: Եւ այս դէպքում, բացի ի նախդրից, գործածուած է երբեմն նաև առ նախդիրը: Օր. «Յարիոք է արեզակին... և մեզ և ամենայն արարածոց... յօգուս և ի դարման»: «Զկէսսն (յանասնոց) ի իրելի» և զկէսսն ի զբօսանս ընտելացուցեալ Համբուրեցուցանէ»: «(Ղուսաւորքն) վասն լուսատու լինելոյ միայն արարան և ի նշանս և ի ժամանակս և յաւուրս և ի դարբնս»: «Աստուած... եկն յամենչ զարարածս»: «(Արեզակն) ընդ ժամանակս ժամանակս ի խաւար դառնայ սոս ի յանդիմանութիւն և յամեն իւրոցն պաշտօնէից»:

§ 66. Ի նախդրով Հայցականը գործ է ածուծ նշանակելու Համար մի առարկայի տեղը բռնող, նրան փոխանակող, որ այլապէս արտայայտուած է փոխանակ նախադրութեամբ: Օր. «Եղէց ձեզ ի հոյր, և դուք եղիջիք ինձ յաստերս և ի դասերս»:

<sup>1</sup>) Տես Գր. Հոլ. § 127, Բ, 2, ծան. 1 և 2.

«Յղիցին (լուսաւորքն) է նշանս և է ժամանակն և յաւուրս և է արեւն»:

§ 67. Ի նախդրով հայցական գործ է ածուում երբեմն գործիականի իմաստով, ցոյց տալու համար, թէ ինչ եղանակով կատարուում է գործողութիւնը: Օր. «Աղաղակեաց է յայն բարձր»: «խօսել է լեզուս լեզուս»: «Աւաքեաց զորդի իւր... առնուլ զնմանութիւն ծառայի և լինել է ներդաստանս մարդոց»:

§ 68. Հասարակ բայը, երբ նշանակուում է դաւանել, նույնպէս և էրդեւո՛ւ՝ բնութեան խնդիր են պահանջում ի նախդրով հայցականով: Օր. «Ընդէր որք ոչն հաւատան է արեւ Յիսուս՝ որդիք չարին կոչէին»: «Եւ բազումք հաւատացին ի նա»: «Յիս երդնուցուս, որ կենդանի եմ, և մի է նախնս, որ ոչ են կենդանիք»: «Յանուս կռոցն երդնուին»:

Բայց երբ հասարակ նշանակուում է մէկի խօսքին հաւատ ընծայել՝ բնութեան խնդիր առնում է տրական հոլովով: Օր. «Հանապաղ մարդն սարսախէ հաւատայր և ոչ Աստուծոյ»: (Փարդը սատանայի ասածին էր հաւատում և ոչ Աստուծոյ խօսքին):

§ 69. Սրտի զգացմունքներ, վիշտ, ուրախութիւն, զարմանք արտայայտող բայերն, ինչպէս են ուրախանալ, խնդալ, տրտմել, նախանձել, զարմանալ, հիանալ, սքանչանալ և այլն՝ ընդ նախդրով հայցական բնութեան խնդիր առնում են այն բառը, որ այդ զգացմունքները պատճառում է: Օր. «Աստուած... ոչ խընդայ ընդ նորսոս մարդկան»: «Որ առողջ միտս ունին.. ոչ ընդ արեւնեակնս, այլ ընդ վարին պարտին զարմանալ, ոչ ընդ գնայունսն, այլ ընդ գնայոյնն»: «Մի նախանձիր ընդ շարս և մի ընդ այնոսի»: ոչ գործեն զանօրէնութիւն»: «Սքանչանային ընդ տեսիլն»: Եւն. Սակայն որտէ լինէ բայը նոյն մտքով բնութեան խնդիր առնում է ի նախդրով տրականով: Օր. «Ուրախ լինէին ի նա, իբրև յորդ զասարակաց»: «Երկրքին ուրախ լինէին ի նա»:

§ 70. Ունել բայը, երբ ցոյց է տալիս ընդունել մի բանի փոխանակ՝ առնում է բնութեան խնդիր սո՛ւ նախդրով յոգնակի հայցականով: Օր. «(Յեսու) սո սարսախէս ունի զօրինացն սստուած»: «Ջկանայս սո սահմայս ունել»:

§ 71. Ընդ նախդրով հայցականը ցոյց է տալիս ծաւալում,

սիւռում առարկայի մէջ և վերայ. այս պատճառով ընդ նախ-  
դրով Հայցականը յաճախ գործ է ածուում փոխանակ ի նախ-  
դրով Հայցականի՝ շարժում, ծաւալում ցոյց տուող բայերի մօտ  
(տես § 63), ինչպէս պարզ երևում է այս օրինակից. «Այս կառք  
զարմանալիք... ոչ է թէ միայն հողմն, է հանրէր երեսացն և եթ  
արշաւին, այլ յամենայն հողմն» վարզին և ընդ հանուր արշաւին  
և ընդ Բնու սլանան. յորժամ ընդ որեւէ ընթանան՝ չէ ինչ  
արգել թէ ընդ որեւէ ոչ արշաւիցին... զի ձեռն կառավարին  
բաւական է յամենայն հողմն» դիմեցուցանել և ընդ չորս «նիւն»  
տիեզերաց արշաւեցուցանել», որտեղ միւսնոյն բայերը փոփոխակի  
առել են է և ընդ նախդրով Հայցական բնութեան խնդիրները: «Ընդ  
երկի և ի վերայ երկրի են ջուրք»: (Երկրի մէջ ծաւալած):

§ 72. Բայց ընդ նախդրով Հայցականը գործ է ածուում  
նաև անխտիր ի նախդրով Հայցականի տեղ, առանց իմաստի  
զգալի տարբերութեան, մանաւանդ ժամանակ ցոյց տուող բա-  
ռերի հետ, նոյնպէս և հայել, նայել բայերի մօտ: Օր. «Ընդ ժ-  
մանակն ժամանակն ի խաւար դառնայ (արեգակն)»: (Որ նոյնպէս  
կարելի էր ասել ի ժամանակս ժամանակս): «Հայեցեալ ընդ նոս»  
փառաւորեմք զկարգիչն նոցա»: (Կարելի էր ասել և ի նոսա):  
Այսպէս անխտիր գործ է ածուում ընդ աւուրսն ընդ այնոսիկ  
և Յաւուրսն յայնոսիկ. Հայել ընդ նա և Հայել ի նա:

§ 73. Տրական Հոլովը իւր բուն նշանակութեամբ գործ  
է ածուում այն ժամանակ, երբ գործողութիւնը կատարուում է  
յօգուր կամ է նոս մի առարկայի, (որ և դրուում է տրական Հո-  
լովով). ուրեմն տրական Հոլով գործ է ածուում տալ, ընծայել,  
խոստանալ, թողլ տալ, տեղի տալ, արգել լինել բայերի հետ:  
Օր. «Զթագաւորութիւնն որդոյն ետ, թե՛մ զինն Հազարամեան,  
և թե՛մ զանսպառականն»: «Պարտ էր խոստանալ զթագա-  
ւորութիւնն... այն միայն, վասն որոյ զյաշտն առնէր»: «Ոչ ետ  
թողլ և ոչ թե՛մ ի նոցանէ»: «(Արեգակն) տեղի տայ իսպառիս»  
լնուլ զմիջոց ի մեծի տանս»: «Ոչ եղև արգել (Որմիզդ) յերկու-  
ական ծնորդանն»:

Այս պատճառով ասուած է. «Մատուցին նա՞ պատարագս». (Մատթ. Բ. 11—յօզուտ ենթակային կատարուած գործողութիւն), բայց՝ «Մատուցին ո՞ւ ն՞ դիւահարս բազումս» (Մատթ. Ը. 6—որտեղ օգտի կամ վնասի գաղափար չկայ):

§ 74. Սակայն որքա՞ն բայի բնութեան խնդիրը բացի տրականից՝ շատ սովորական է նաև ց նախդրով հայցականով դնել, առանց իմաստի տարբերութեան: Օր. Աւետարանի մէջ (Մարկ. Զ. 28) պատահում ենք. «Եւ երբը զզլուխն նորա (Յովհաննու մկրտչի) սկտեղը և ետ յաղջիքն, և աղջիկն տարաւ ետ յօր լւրում», որտեղ միւսնոյն բայը, նոյն նշանակութեամբ տարբեր հոլովներով խնդիր է առել<sup>1)</sup>: Նոյնպէս Եզնիկ մի տեղում ունի. «Զբարսմունսն ետ նա՞», իսկ ուրիշ տեղում՝ «Զբարսմունսն... ետ յորմեդ»:

§ 75. Տրական հոլովով բնութեան խնդիր են առնում, ինչպէս և աշխարհաբարում, այն բայերը, որոնք նշանակում են հրամայել, հնազանդել, հակառակել, նմանել, կարօտել, յայտնել, պատմել, երևել և այլն—որոց բոլորին մօտ կարելի է դնել «-՛մ հարցմունքը (տրական): Օր. «Պատուիրէր նա՞ (Զրուան) վասն իւր յաշտ առնել»: «Բարկացաւ տէրն արարածոց, զի թողին զնա և անսացին հիւսէ՞յն»: «Նիւթն ոչ եթէ ինքեան հակառակ էր, այլ ընկերն»: «Նմանեցաւ արքայութիւնն երկնից ուն տանուտեառն»: «(Նիւթն) կարօտէր Աստուծոյ որոտեալիս»: «Ծանուցեալ Որմզդի զխորհուրդս հօրն՝ յայտնեաց Արհմեհն»:

§ 76. Տրական հոլովով բնութեան խնդիր են առնում դիմագուրկ բայերը: Օր. «Ձէր մարթ Ռո՛ւս որդեանդի զչարեացն գործօնեայ և զբարեացն արարիչ ընդունել»: Զինչ պիտոյ էր նա՞ բարսմունս ունել և յաշտ առնել»: «Յաւեսց նա՞ վասն անկելոցն ի հուր»:

ԾԱՆ. Այս տրական հոլովները ոմանք համարում են ենթակայ անորոշ դերբայներին, որոնք գործ են ածուում դիմագուրկ բայերին հետ:

<sup>1)</sup> Յունարէնում այստեղ երկու բառն էլ տրական են:

§ 77. Տրական Հօլովով բնութեան խնդիր են առնում երանի, վնշ, վնյ, աւնդ, եղնկ միջարկութիւնները, որոնք կարելի է նոյնպէս նկատել իբրև դիմազուրկ բայեր՝ կրճատուած կամ գորութեամբ հասկացուած էական բայով: Օր. «Երանի աշխարհ Հոգով... երանի աշխարհ»: «Վնյ չեղ, դպրաց և փարիսեցոց կեղծաւորաց»:

ԾԱՆ. Ո՛վ (գարմացական) միջարկութեան հետ Եզնիկ ընդհանրապէս գործ է ածում ուղղական Հօլով և ոչ ինչպէս ուրիշ մատենագիրները՝ տրական. Օր. «Ո՛վ մորոտութիւն». «Ո՛վ բանաբաղ Մարկիոն»: «Ո՛ հրաման տկար, և անգոր սահման»:

§ 78. Նկատելու է նոյնպէս, որ տրական Հօլովով բնութեան խնդիր է լինում որ յարաբերականը «նու» էր բային, յունարէնի համաձայն, փոխանակ սեռականի: Օր. «Էր ինչ ընդ նմա, որո՛՛հ հիւզն անուն էր»: Այսպէս և Աւետարանի մէջ (Ղուկ. Ա. 26—27) «Առաքեցաւ Քարբիէլ Հրեշտակ Աստուծոյ ի քաղաք մի Քալիլեացոց, որո՛՛հ անուն էր Նազարէթ, առկոյս խօսեցեալ առն, որո՛՛հ անուն էր Յովսէփ»<sup>1)</sup>:

§ 79. Ի նախդրով տրական Հօլովով բնութեան խնդիր են լինում ժամանակ ցոյց տուող բառերն, երբ նշանակում են, թէ որչափ ժամանակում կատարում է գործողութիւնը: Օր. «Նա (լուսինն) յերեւոն աւուր կատարէ զընթացսն, և արեգակն ի արեւոյ»: «Յարաբար Քալիլեալեանսն հազար... եհար Հրեշտակ Աստուծոյ... յարաբար Յեսովայ... Հրեշտակ ասէր ցբանսարկուն»: (Համեմատել Հայցական բնութեան խնդիրն հետ, § 58, որ ցոյց է տալիս տևողութիւն և պատասխանում է որչափ ժամանակ հարցմունքին):

§ 80. Իսկ ընդհանրապէս ի նախդրով տրականը գործ է ածուում դադարում ցոյց տուող բայերի մօտ, (ինչպէս ի նախդրով Հայցականը շարժում, ուղղութիւն ցոյց տուող բայերի մօտ): Բայց պէտք է զիտնալ, որ դադարում ցոյց տուող բայերի բնութեան խնդիրն եթէ յոգնակի է՝ կգրուի ի նախդրով Հայ-

<sup>1)</sup> Յունարէնն ունի... ի քաղաք մի Քալիլեայ, որո՛՛հ անուն Նազարէթ, առկոյս խօսեցեալ առն, որո՛՛հ անուն Յովսէփ»:



ցական Հոլովով: (տես § 67 և Գր. Հոլ. § 127, բ, 2, ծան. 2): Օր. «Եզ զնոսա ի հասարակութեան երկնից»: «Եթէ կացեալ էր (Ոգամ) ի պարտիքնն՝ պահէր զնա կենդանարարն կենդանի»: «Օգս... ունի զաշխարհս ի հասարակութի»: «Եթէ ի իւր ջորիք և ուղտք երեւցին՝ դիւաց կերպարանք են այն»: «Յորժամ (բասելիկոս) ի ջրհրդ գտանիցի, ճրագ առեալ իջանեն ի ներքս ըմբռնել»:

Այս պատճառով ասուով է՝ «Ելանել, Հանել ի իւր» (շարժում), բայց՝ «բեռեւել, սպանանել ի իւր» (դադարում):

§ 81. Յայտնի է, (տես Գր. Հոլ. § 127, բ, 1, ծան. 1), որ շատ բառեր, որոնք « կամ » Հոլովիչ ունին՝ փոխանակ ի նախդրով տրականի՝ գործածուում են ի նախդրով Հայցականով, սակայն նոքա տրականի իմաստ ունին. այսպէս ասուում է, Բնակել ի տան, ի տեղուջ, բայց՝ բնակել յԱստուած, ի լոյս. նստել ի յաւանակի, բայց՝ նստել յաթուռ, ի սուգ. Հեծանել ի ջորուջ, բայց՝ Հեծանել ի ձի և այլն:

§ 82. Բացառական Հոլովը նշանակուում է սկզբնաւորութիւն, ծագում, այսինքն շարժում սկզբնական կէտից: Ուստի բացառական Հոլովով բնութեան խնդիր առնում են այն բայերը, որոնք շարժում են ցոյց տալիս. (§ 63.— սոցա մօտ բացառական Հոլովը ցոյց է տալիս այն տեղը՝ որտեղից սկսում է շարժումը, իսկ ի նախդրով Հայցականը այն տեղը՝ ուր դիմում է): Օր. «(Աստուած) յանարդուութենէն և յանհերերութենէն դարձոյց ի զարդ և ի կերպարանս»: «Հանէ զամպս ի ծագոյ ելիքէ... Հանէ զՀողմս յարմարանոց իւրոց»: «Ամենայն իսկ գունդքն դիւաց ի պահոյ և յաջօրից փախստական գնան»: «Իջուք ի տարապարտ հոսարդութենէ»:

§ 83. Բացառական Հոլովով բնութեան խնդիր են առնում շատ բայեր՝ ցոյց տալու Համար այն սկզբնապատճառը, կամ շարժառիթը, որով մի բան լինում է: Օր. «Հեւլէնք կոչին Յոյնք յանէ միջէ, որում Հեղինոս անուն էր»: «Եթէ ի կարի նեշելոյ մարդկան զնոսա (զսողունս) մեղանչիցեն՝ այն մարդկան

վնաս է, և ոչ նոցա»: «Որպէս է Դարձու-Բէնէ դպիր կոչի, և է ճար-  
Կարու-Բէնէ ճարտար և ի Բժշկու-Բէնէ բժիշկ...նոյնպէս և չարիքն  
է Դեպոյն առնուն զանուանումն»: «Յնի՞ծի մտին ցաւք յաշ-  
խարհ»:

§ 84. Բացառական հոլովով բնութեան խնդիր են առ-  
նում ուրիշ շատ բայեր, որոնք նշանակում են մի բանից զգու-  
շանալ և ընտրութիւն անել. ինչպէս են հեռանալ, պահել,  
ծածկել, ժուժկալել, զրկել, հրաժարել, դադարել, ուրանալ, ա-  
մաչել, երկնչել, փրկել, ազատել, հանել, բառնալ, ընտրել,  
առնուլ, լծել և այլն: Օր. «Մահն Քրիստոսի ընկենոյր (զսա-  
տանայ) յիշխանութենէ»: «Խոստանան գիտել զԱտուած, և գոր-  
ծովք իւրեանց ուրացեալ են է նմանէ»: «Որդի է հօրէ առնուին  
կարգաւ զթագաւորութիւնն»: Կէսք հրաժարեցին բնաւ է ին-  
Դրեւոյ: «Ամենայն կառք է հասողգէսոյ երկնայ լծին, բայց մի-  
այն յայտց կառաց, որ է չհասողգէսոյ լծեալ են»: «Փրկեա զմեզ  
է չորէ»:

ԾԱՆ. Բայց ուրանալ բայը նոյն մտքով առնում է և հայցական  
սեռի խնդիր: Օր. «Որ ուրասցի շն առաջի մարդկան»:

§ 85. Զ նախդրով բացառականը նշանակում է առար-  
կայի մասին կամ վերայ. ուստի այս հոլովով բնութեան խն-  
դիր են առնում այն բայերը, որոնք նշանակում են խօսակցու-  
թիւն կամ դատողութիւն մէկի վերայ, ինչպէս ասել, խօսել,  
պատմել, ճառել, բամբասել, չարախօսել, գոհանալ, քրթմնջել,  
տրտնջել, կարծել և այլն: Օր. «Զհիշեալն ասեն, թէ անճակ  
և անարդ և չար էր»: «Այլք այլազգ կարծեցին զաստուայէ, թէ  
Ատուած իսկ զնա չար արար»: «Ատիցեն դէնջ զամենայն բան  
չար սուտ»: «Եւ չարախօսէին զնմանէ»: Գոհանամ դէն, հայր»:

§ 86. Զ նախդրով բացառական բնութեան խնդիր են  
առնում կախել, կապել, բուռն հարկանել, ունել, առնել (բռնել)  
բայերն այն բառերը, որոց վերայից կամ մակերևոյթից կախ-  
ւում է, կապւում է, բռնւում է: Օր. «Կախեալ կայր զէջերոյն»:  
«Զայոյ երկուց Կարու-Իրանայ կախեալ կան օրէնք և մարգարէք»:

«Տեսանէր... դէրեյոնայ պահայ կապեալ անօթ ինչ»: «Յուռն  
Հարկանիցէ անը դէրեյօրէ իւրմէ կամ շնորհայ Հօր իւրոյ»: «Կալաւ  
դէրեյօնէ նորա»: ԶՅեւանէ առեալ նորա մուծին ի քաղաքն»:

ԾԱՆ. Այս խնդիրներն աշխարհաբար դրոււմ են բացառական  
Հոլովով. — եղջիւրներից կախել, չորս ծալրից կապել, ձեռքից բռնել.  
բաց՝ եղբօրը բռնել, կամ եղբօր օձիքից բռնել, Բաց կախել, կապել,  
ուռնել գրաբարում ուրիշ Հոլովներով էլ խնդիր են առնում, տարբեր  
նշանակութեամբ. Օր. «Կախել ի դուրս» նշանակում է պարսպից ցած  
կախել (բաց ոչ թէ պարսպի վերայից): «Կապել զձեռս և զոտս» նշա-  
նակում է ձեռքն ու ոտքը կապել, կաշկանդել, (բաց ոչ թէ մի բա-  
նի վերայ կապել պնդել): «Կալան զնա» նշանակում է բռնեցին, կալա-  
նաւորեցին նրան, (բաց ոչ թէ նորա որևէ տեղից ձեռք խփեցին,  
բռնեցին):

§ 87. Գործիական Հոլովը նշանակում այն գործիքը, որով  
կամ որի միջնորդութեամբ կատարուում է գործողութիւնը, և  
պատասխանում է ի՞նչ հարցմունքին: Աստի գործիական Հոլով-  
վով բնութեան խնդիր առնում են բայերն այն բառերը, որոնք  
ցոյց են տալիս գործիչ, մեջոյ, ստիլ, որոնցով նոքա կատարուում  
են: Օր. «(Աստուած) իւրովս պահուիս վառէ գեղեցիկ զմար-  
դիկ՝ առ ի պսակելոյ զյաղթողն»: «Թագաւորն զիւրոց օրինաց  
վրէժս պահանջէ և պահանջէ վրիժուցն զվնասն կարճէ»: «Ընդէր  
երկմտեաց (Ջրուան) և եղև երկհոռութեամբս պատճառ  
ծննդեան Արհմենի»: «Յայտ առնէ երկիր շարժելոյն և օղքն գլխ-  
դէլոյն քաղաքիս և ծով ստորեւնէս յալեացն սոսանայեօք»: «(Աստուած)  
ազգ արար կանխագոյն յարգարեիս, թէ յառնելոց  
է ի նոցանէ թագաւոր»:

ԾԱՆ. Բաց անձի անունը, որի միջնորդութեամբ կատարուում է  
գործողութիւնը՝ դրուում է ոչ միայն գործիական Հոլովով, այլ և սե-  
ռականով, ի յետն նախադրութեամբ. Օր. „Զի լցցի բանն, որ ասացաւ  
ի յետն յարգարեիս“: «Օրէնքն ի յետն Մովսէսի տուան, շնորհք և ճշմար-  
տութիւն ի յետն Յիսուսի Քրիստոսի եղեն»:

§ 88. Գործիական Հոլովով բնութեան խնդիր գործ է ած-  
ուում՝ ցոյց տալու համար, թէ ինչ կերպով կամ եղանակով կա-  
տարուում է գործողութիւնը: Այս գործիական Հոլովները, որոնք

պատասխանում են որդիք և որով եղանակաւ Հարցմունքներին՝ մակըայի նշանակութիւն ունին: Օր. «Ոչ էրա՞նք... յօժարեցաւ (կինն) ի չարն, այլ Բնականաբար բռնադատեցաւ»: «Զայս ամենայն աստիճան հայնալեանս»:

ԾԱՆ. Այսպիսի գործիական հոլովներ եղել են առաջ՝ որպէս, որդիք, Բնական, իբրև, ազգական, հարկու, որդիք, էրա՞նք, որպէս և ուրիշ շատ բառեր, որոնք այսօր դարձել են անփոփոխ մասնաբանիներ:

§ 89. Ածական ասացուածների, ածական արմատներից կազմուած բայերի և լոկ ածականների մօտ գործիական հոլովով բնութեան խնդիր է դրուում առարկայի այն մասը կամ յատկութիւնը, որոնք կազմում են այդ առարկայի յատկանիշը: Օր. «Թէ չար ոք էր Բնականաբար Արհման՝ ոչ Հնարագիւտ լուսոյ լինէր»: «Աբրահամ մեծացաւ հայրս»: «Արդար եմ իրականաբար զքեզ»:

§ 90. Գործիական հոլովով բնութեան խնդիր առնում են բայերը իրանց անորոշ դերբայները, որոնք գործողութեան աւելի հաստատութիւն կամ ազդուութիւն են տալիս: Այս կերպով այս դերբայները նմանում են այն բայարմատներին, որոնք հայցական հոլովով կրկնուում են նոյն արմատից կազմուած բայերին մօտ՝ նոցա նշանակութիւնն աւելի սաստկացնելու համար (տես § 59): Օր. «Բնականաբար զգալակ քո»: «Լեւոր լուիջիք և մի իմասջիք, և որպէս լու տեսջիք և մի տեսջիք»:

ԾԱՆ. Այժմեան լեզուով այս գործիականներն հայց. հոլովով են դրուում. բայց գաւառական բարբառներում պատահում է և գործիականի գործածութիւնը—որպէս կասեմ, գուշ կգամ, (կամ որպէս կասեմ, գուշ կգամ):

§ 91. Զ նախդրով գործիական խնդիր դրուում է շարժում և դադարում նշանակող բայերի մօտ՝ ցոյց տալու համար այն առարկան կամ տեղը, որի շուրջը, մօտերը կամ վերայ կատարուում է գործողութիւնը: Օր. «Նստէին զարարանս»: «Տեղադրութիւն ածեն (կամ արկանեն) շարժումը»: «Ոչ ինքեանք զիմանալի ինչ զարարան կարացին ածել»:

§ 92. Զ նախդրով գործիական հոլովով գործ են ած-  
 ւում ժամանակ ցոյց տուող բառերը, երբ ժամանակը ոչ թէ  
 ճիշտ, այլ մօտաւորապէս է որոշուում: Օր. «Ելեալ շէրբորդ ժամա-  
 ետես այլս, զի կային դատարկ ի հրապարակս... և դարձեալ  
 ելեալ զՔն ժամա- և զԿն ժամա-՝ արար նոյնպէս. և զԿրտսո-  
 ներբորդ ժամա- ելեալ՝ եզիտ այրս»: Այսպէս ասուում է. Զայնու-  
 ժամանակաւ, զմիջօրէիւ, զկէս գիշերաւ և այլն:

§ 93. Զ նախդրով գործիական բնութեան խնդիր են  
 առնում անցանել, զանո առնել, ճիշտապէս շարտորդ. «Արարածք  
 զառնանիս եզելօք նոցա ոչ անցանեն»: «(Առախն) յորժամ ան-  
 ցանէ շարտարմէ՝ սկսանի տակաւ նուաղել»: «Քնակեալն յեր-  
 կինս՝ ծիծաղեսցի զսոսոս»:

ԻՈՎՈՆ ԲՈՅ—ԱՍՈՅՈՒԱԾ

§ 94. Իական բայը երկու գլխաւոր նշանակութիւն ունի:  
 Առաջինն է իւր բուն նշանակութիւնը, (եմ, էի, եղայ), որ  
 աշխարհաբար ևս թարգմանուում է նոյն էական բայով: Օր.  
 «Արդասիքն ոչ նոյնպիսի մնացին, որպէս և էի»: (Ինչպէս որ  
 էին առաջ): «Իշխեսցէն ասել, թէ չարեացն պատճառ Աստուած  
 է»: (Չարեքների պատճառն Աստուած է): Երկրորդ նշանակու-  
 թիւնն է՝ իսկ, գոյութիւն ունենալ, և այս նշանակութեամբ՝ նա-  
 խադասութեան մէջ իմաստի շեշտը կրում է իւր վերայ<sup>1)</sup>: Օր.  
 «Է՛ ձուկն, յորմէ արիւն այնչափ ելանէ, որչափ յոչխարէ ոչ  
 ելանէ»: (Ձուկ իսկ, որից այնչափ արիւն է ելնում...): «Էր ժա-  
 մանակ, յորժամ հիւզն իսկ չէր ի միջի»: (Կոր ժամանակ, որ  
 հէնց հիւլէն էլ մէջ տեղում չէր, գոյութիւն չուներ): Այս եր-  
 կրորդ նշանակութեամբ էական բայի փոխանակ գործ են ած-  
 ւում և գո՛մ, իս՛ չէգոք բայերը, իսկ սահմ. ներկայի եզ. գ.  
 բոլորում, բացասական մակբայի հետ՝ նաև չի բայաձևը: Օր.  
 «Ոչ գոյ ի ժամանակի յայսմիկ իշխան կամ մարգարէ»: «Գոյ

<sup>1)</sup> Տես Գրաբ. հոլ. § 11, գ.

Աստուած»: «Զի է՞, իմ և քո»: «Զի՞ ինչ այլաբանութիւն ի միջի»: —

§ 95. Իսկան բայն, իբրև օժանդակ՝ կազմում է յարակատար, գերակատար և ստորագասականի անցեալ ժամանակները, բայի անցեալ դերբային հետ, և բաղադրեալ ապառնի՝ բայի ապառնի դերբային հետ<sup>2)</sup>: Օր. «(Ղուսաւորքն) ոչ յերկինս բեւեւեալ էն»: «Որմիզդն մինչ չև ծնեալ էր՝ թերակատար էր»: «Ուստի բան հրամանացն ընդ աշխարհ արածեալ իյէ»: «Մինչդեռ առիւծն, ասեն, յաստեղատանն իցէ, և ծնանիցի ոք՝ թագաւոր լինելոյ է, և մինչդեռ՝ եզն է և ծնանիցի ոք՝ հզօր և բարենշան գաւոր է»: «Նոյնպէս զԱստուծոյն պատիւ իմանայի է»: — Սոցա մասին տես §§ 36, 37:

§ 96. Իսկան բայը, գործածուելով շատ գոյական և ածական արմատների հետ՝ կազմում է դիմազուրկ բայեր, նոյնպէս և բաղադրեալ ասացուածներ, ինչպէս՝ պարտ է, արժան է, վայել է, մարթ է, հարկ է, պիտոյ է հնար է, նման է, բարի է, զարմանք են, մեղք են, յայտնի լինել, մոռացումն լինել, վրէժխնդիր լինել և այլն, որոց մասին տես §§ 7, 8, 44:

§ 97. Բացի այս բաղադրեալ ձևերը կազմելուց՝ էական բայը, (մանաւանդ սահմ. ներկայ և անցեալ անկատար ժամանակներում) գործածուելով անորոշ դերբայի հետ՝ նշանակում է չարէլի է, պէտք է (համաձայն յունարէնի), որ աշխարհաբարում արտայայտուում է՝ անորոշ դերբայի սեռական հոլովով և էական բայով: Օր. «Ի Յորայ փորձանացն է՝ սեռանել թէ չէ սատանայ բռնաւոր կամ կանխազէտ»: «Յայտ է, թէ ուրեք ծածկի ցայդ (արեգակն), որպէս և ի մտիցն է պէտքնել»: «Զինչ ինչ ստանել էր այգւոյ իմում, և ես ոչ արարի»:

§ 98. Իսկան բայի գործածութիւններից նկատելու է այս դէպքը, երբ նա կրկնուում է որ յարբերականով, իսկ ենթական զօրութեամբ է հասկացուում: Խօսքի այս ձևը աշխարհաբար թարգմանուում է՝ «կայ որ... կայ որ», կամ «ոմանք... ոմանք» ձևով: Օր. «Սողոմոն զխօշիւն միայն զմարդոյն առեալ՝

<sup>2)</sup> Տես Գրաբ. հոլ. §§ 113, 114:

է որ ի ծակս, է որ ի սորս, է որ ընդ փապարս երկրի մտեալ զօղենն: (Փոխանակ ասելով է ոմն ինոցանէ, որ ի ծակս, է ոմն, որ ի սորս... մտեալ զօղենն): «Եւ այլն անկաւ յերկիր բարի; և տայր պտուղ, էր որ հարիւրաւոր, և էր որ վաթսնաւոր, և էր որ երեսնաւոր»:

Նոյն գործածութիւնը պատահում է երբեմն և առանց կրկնուելու: Օր. «Էր որ անկաւ առ ճանապարհաւ... և այն անկաւ յապառափի», (որ մի ուրիշ աւետարանիչ զրում է. «Եւ անկաւ առ ճանապարհաւ»):

§ 99. Յարակատար ժամանակում էական բայը յաճախ զեղջուում է՝ երբ առանձին հանդիսաւորութիւն ունի խօսքը և պարունակում է խոստումի, պարգևի, հրամանի իմաստ: Այս տեսակ յարակատարը ներկայի նշանակութիւն ունի: Օր. «Տո՛ւտա՛ք քիզ ընդ այնք վրիժու՛ զամենեսեան... տանել յո՛ և կամիցիս»: «Երբո՛ւտա՛ք յարևն Փարաւոնի, ոչ ելանէք աստի»:

Բայց պատահում է նոյն զեղջումը և առանց հանդիսաւորութեան կամ խոստման պարագայի, մանաւանդ Մ. խորենացու մօտ, որ բացատրւում է հեղինակի չափազանց համառօտասիրութեամբ և հետևելու արժանի չէ:

ԾԱՆ. Ինչպէս վերի օրինակներից երևում է՝ բաղադրեալ ժամանակների մօտ շատ անգամ ենթական ներգործութեամբ չէ դրւում երբ նախապէս դրուած է մի անգամ, կամ դիւրաւ հասկացւում է: Օր. «Զրուանն... ասէ ցԱրհմնն... տուեալ լիցի քեզ թագաւորութիւնն ինն հազար ամի, և զՈրմիզդ ի վերայ քո արքայ Կոստանտինոս» (հասկացւում է՝ կացուցեալ լիցի է՛, կամ՝ կացուցեալ է է՛): Բայց զգուշալի է այսպիսի զեղջումը՝ եթէ խօսքը կարող է անորոշ մնալ կամ մինչև իսկ սխալ հասկացուիլ, մանաւանդ եթէ գտնւում է խօսքում և տրական հոլովով խնդիր, որ կարող է ընդունուիլ ենթակայի տեղ: Ինչպէս Աւետարանում (Մարկ. Ժ. 40) կարդում ենք. «Այ նստուցանել ընդ աջմէ իմմէ և ընդ ահեկէ՛ ոչ է իմ տայ, այլ որոյ որոյստեալ էջէ»: (Կարող է հասկացուիլ՝ թէ ես չպիտի տամ, այլ նոքա, որ պատրաստել են. մինչդեռ նշանակում է՝ նոցա կտրուի, որոյ հոնք (տրական) պատրաստուած է Աստուծոց): Նոյնպէս Աղիշէի մէջ «Նոյն էր քրեալ զխորխորատն», որ նշանակում է, թէ նոքա էին փորել խորխորատը. մինչդեռ խօսքի ըն-

Թացքից պէտք է մակաբերել, թէ այստեղ հեղինակն երևի ուզում է ասել, թէ Դոմ Կոմ (տրական) փորել էր խորխորատը (Աստուած?) :

§ 100. Իսկան բայը այլևայլ հոլովներով բնութեան խընդիր է առնում, և մեծ մասամբ այդ խնդիրների մօտ իւր նշանակութիւնը փոխում է: Ուղղական բնութեան խնդիրն էական բայի հետ կազմում է գոյական կամ ածական ասացուած, ինչպէս տեսանք § 7:

§ 101. Իսկան բայը սեռական հոլովով բնութեան խնդիր առնելով երկու նշանակութիւն է տալիս.

Ա). Երբ էական բայն անշեշտ է՝ նշանակում է պատկանելութիւն, վերաբերութիւն: Օր. «Նոր՝ է երկիր, և ջուրք, և օդք»: «Ի՛ն է վրէժխնդրութիւն»: Այս մտքով նաև ասուում է. «Անհնարին ամպարշտութեանն է՝ զԱստուծոյ զիւրոյ էութեանն կենդանութիւն՝ հոգևորաց և շնչաւորաց և անշնչաւորաց առ հասարակ համարել»: «Որ անհնարին յիմարութեանն է»: «Յետնոյ հայհոյութեանն է՝ եթէ էութիւնն Աստուծոյ ի մասունս բաժանիցի»:

Բ). Երբ էական բայը շեշտ ունի՝ նշանակում է ունենալ. և այս դէպքում ունեցածը դրւում է անորոշ ուղղական հոլովով իբրև ենթակայ, իսկ ունեցողը դրւում է սեռական հոլովով: Օր. «Ան յոր էին երկու որդիք»: «Եղեն նոր» ուստերք եւթն և դստերք երեք... և գործք մեծամեծք էին նոր»:

ԾԱՆ. 1. Իսկան բայի այս յատկութիւնից առաջ է եկել բաղադրեալ ժամանակների սեռական ենթական (տես § 36 ), որ իսկապէս բնութեան խնդիր է էական բային, իսկ ենթական է անցեալ դերբայլայնպէս՝ իմ տեսեալ է— է տեսեալ—տեսնի տեսած:

ԾԱՆ. 2. Իսկան բայի հետ, ունենալու նշանակութեամբ՝ երբեմն գործ է ածուում խնդիրը ոչ թէ սեռական, այլ տրական հոլովով: Օր. «Ոչ է տէ մարտ ընդ մարմնոջ՝ և ընդ արեան»: «Չիցէ ին իշխանութիւն յիմս՝ առնել զինչ և կամիմ»:

ԾԱՆ. 3. Այս նշանակութեամբ՝ էական բայի փոխանակ չաճախ գործ են ածուում 4-րդ և 5-րդ բայերը: Օր. «Աշտուտայ որջք 4-րդ»: «Ջգիրս ուսեալ նոր 5-րդ»:

ԾԱՆ. 4. Կ-ի բայի սահմ. ներկայի եզ. գ. դէմքը գործածուելով



Հարցական կամ բացասական մակբայով և երկու սեռական խնդիրներով՝ նշանակում է գործ կամ չարաբերութիւն ունենալ: Օր. «Ձե՞ տոյ է՞ և տոյ, կի՞ն դու, չի՞ է հասեալ ժամանակ իմ»: (Ի՞նչ գործ ունիս հետս; Ի՞նչ ես ուզում ինձանից): «Ձե՞ տոյ ի՞նչ տոյ և տոյ» Յեսսեայ»:

§ 102. Իական բայն առնում է և ուրիշ հոլովներով խընդիրներ, բայց այս դէպքում ընդհանրապէս փոխում է իւր նշանակութիւնը, որ մակաբերում է նորա մօտ դրուած խնդրի հոլովից: Օր.

Գրտիւն. «Եղե՞յ է՞նչ ըստ բանի քում»: (Թող ինձ պատահի ասածիդ պէս):

Բայաստիւն. «Ղունչքն թէ յԱստուծոյ հոռեանէն էյնն՝ երեք մասունքն ի նոսա ուստի իցեն»: (Աստուծոյ էութիւնից առաջ եկած լինին):

Գործիւն. «Ամենայն ինչ նոյաւ եղև»: (Նորանով գոյացաւ, ստեղծուեցաւ): «Ի՞նչ ընդ իս Բշնահառեայք»: (Թշնամաբար էին վարում ինձ հետ):

Նախորդ հայտիւն. «Ես եղեյ ձեզ ի հայր, և դուք եղիջիք ինձ յաստիւն եւ ի դաստիւն»: (Ես ձեզ հայր համարուիմ, դուք ինձ որդի համարուիք):

Նախորդ գրտիւն. «Ի նմա, իբրև ի պեղաջ էր»: (Նորանում գտնուում էր, բնակում էր, ինչպէս մի տեղում):

Ձ նախորդ գործիւն. «Մինչ նոքա զառիւման էին»: (Երբ զբաղուած էին այն աղմուկով, այն աղմուկին հետ էին): «Այլ ինչ բազում նման սոցին էր զԱստուծոյ»: (Սոցա նման շատ բան ի նկատի ունէր Աստուած):

### ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԵՒ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԱՌՈՒԹԻՒՆԸ

§ 103. Նախադասութեան մէջ բացի առացուածներից և ընդհանրապէս բայերից՝ ուրիշ բառեր ևս խնդիր են առնում, այսինքն պահանջում են իրանց իմաստը լրացնող բառեր: Այսպիսի խնդիր կարող են առնել գոյականները, ածականները, մասնական դերանունները և նախադրութիւնները:

§ 104. Գոյականներից խնդիր առնում են նոքա, որոնք կամ բայարմատ են, կամ բայարմատից ածանցական մասնիկներով կազմուած բայանուն. ինչպէս սէր, մուտ, ել, դուժ, գիւտ և այլն (արմատ՝ սիրել, մտանել, ելանել, դժալ, գտանել, բայերի), ծնունդ, արարչութիւն, աղաչանք, կորուստ և այլն (ծնանել, առնել, աղաչել, կորնջել բայերից բայանուններ): Սոքա նախադասութեան մէջ վարում են թէ՛ գոյականների պաշտօն, այսինքն լինում են ենթակայ, խնդիր, յատկացուցիչ, և թէ՛ իբրև բայ՝ անորոշ դերբայի նշանակութեամբ՝ խնդիր են առնում: Եթէ վերցնենք այս նախադասութիւնը. «Ծնւած միածինն ի կուսէն» և նրան ամբողջապէս սեռի խնդիր դարձնենք մի ուրիշ բայի, օրինակ՝ «Քարեբանեմք շնորհ միածինն ի կուսէն»—կտեսնենք, որ ծնւած գոյականը, որ առաջ իբրև ասացուած ունէր ենթակայ և բացառական սեռի խնդիր՝ այստեղ ինքն իբրև գոյական՝ սեռի խնդիր դարձաւ բարեբանել բային. նորա նախկին ենթական դարձաւ այժմ յատկացուցիչ. իսկ ծնանել բայի բացառական սեռի խնդիրը մնաց դարձեալ բացառական սեռի խնդիր ծնւած գոյականին:

Նոյնպէս՝ «(Աստուած) որք զաշխարհ յօջնչէ» նախադասութիւնը խնդիր դարձնելով մի ուրիշ բառի—օր. «Յառաջ քան զորքն ինչն աշխարհի յօջնչէ»—կտեսնենք, որ առնել բայի սեռի խնդիրը յատկացուցիչ դարձաւ որքն ինչն բայանուն, իսկ յօջնչէ բնութեան խնդիրը՝ մնաց դարձեալ բնութեան խնդիր այդ բայանուն: Նոյնպէս՝ «Մեք հասարակ ի յարութիւն մեռելոց» ենթակայ դարձնելով՝ կունենանք «Հասարակ մեր ի յարութիւն մեռելոց կեցուցանեն զմեզ», որտեղ հասարակ բայարմատն ունի յատկացուցիչ (նախկին ենթական) և բնութեան խնդիր—ի յարութիւն մեռելոց:

§ 105. Վերի օրինակներից ծագում են գոյականների խրոհրառութեան հետեւեալ կանոնները.

ա) Բայի ենթական դառնում է յատկացուցիչ նոյն բայի արմատ կամ նորանից ածանցուած գոյականին: Օր. «Յորքն ինչն»

Քրիստոսի: (==Յարեաւ Քրիստոս): «Ձի մի լինէր անդր Տոս կո-  
չատուի որդին: (==Ձի մի մտցէ անդր հոյսատուի որդին): «Հէր ընդ խո-  
տոյ ոչ տառնու-լիւն լինի, այլ ծախու-ն»: (==Հոս ոչ ամուսնանայ  
ընդ խոտոյ, այլ ծախէ):

բ) Բայի Հայցական սեռի խնդիրը դառնում է յատկացու-  
ցիչ նոյն բայի արմատ կամ նորանից ածանցուած գոյականին:  
Օր. «Առ սէր տարածոյ եկն յաշխարհ»: (==Քանզի սիրէր  
չտարածա): «Ուրախանայ ընդ քիս մոլորեալ ոչխորին: (==Ձի  
եզիտ զոչխորն մոլորեալ): «Արարչու-լիւն հարգոյն»: (==Առնելն  
զմարդն):

գ) Բայի միւս խնդիրները անփոփոխ են մնում նոյն բայի  
արմատ կամ նորանից ածանցուած գոյականին մօտ: Օր. «Հո-  
շորու-լեամբ ընդ հիւշեայն արար զամենայն»: (==Հազորդ էր ընդ  
հիւղեայն) «Մի Տոս է ամենեցուն յաշխարհ»: (Միով օրինակաւ  
մտանեն ամենեքեան յաշխարհ): «Ի վնայու-լիւն շորու-լեանն ծխեալ  
կայ խոպանացեալ»: (==Ձի վկայեացէ շորու-լեանն): «Եբեր նմա...  
իշխանու-լիւն է վերայ Բանաստայ նորա»: (==Ձի իշխեսցէ է վերայ  
Բանաստայ իւրոց): «Փրիւ-լիւն է լշտայն մերոց և է չեայ ամե-  
նայն տեղայ մերոց»: (==Փրկել է լշտայն և է չեայ ատե-  
լեաց): «Ոչբնու-լիւն նորա ազգաց յազգս երկնաշաճայ իւրոց»: (==Ողորմի նա երկնաշաճայ իւրոց ազգաց յազգս):

§ 106. Երբ կրճատուած նախադասութիւնը թէ ենթա-  
կայ և թէ սեռի խնդիր ունի՝ երկուքն էլ չեն զրոււմ սեռա-  
կան Հոլովով իբրև յատկացուցիչ, որովհետև սորանից իմաստի  
անորոշութիւն կարող է առաջ գալ. (օր. Մկրտութիւնն Յով-  
հաննու Յիսուսի՝ կարող է նշանակել թէ այն, որ Յովհաննէս  
մկրտել է Յիսուսին, և թէ այն, որ Յիսուս մկրտել է Յովհան-  
նէսին): Այս դէպքում սովորաբար բայանունը գործ է ածուում  
կրաւորական իմաստով, բայի ենթական, կանոնի Համաձայն,  
բացառական Հոլովով կգրուի իբրև սեռի խնդիր, իսկ բայի  
Հայցական սեռի խնդիրը կգրուի սեռական Հոլովով իբրև յատ-  
կացուցիչ: Օր. «Յովհաննէս մկրտեաց զՅիսուս» նախադասու-

Թիւնը բայանունով արտայայտելիս՝ կունենանք «Մկրտութիւնն Յիսուսի ի Յովհաննէ», որ Համապատասխանում է «Յիսուս մրկրացեալ ի Յովհաննէ» նախադասութեան:—Իբրև Հազուագիւտ դէպք՝ բայանունը երբեմն պահում է ներգործական նշանակութիւն, իսկ սեռի խնդիրը դրում է առ նախդրով Հայցական Հոլովով: Օր. «Սէր որդւոց առ ծնողս», «Ատելութիւն առ եղբարս»:

ԾԱՆ. Գիտնալու է, որ § 106-ում բացատրուած խօսքի ձևը սովորական չէ ընտիր գրաբարի մէջ, որովհետև լեզուն այդ աստիճանի ճկունութիւն չունի. Այդպիսի դիպուածներում ընդհանուր կանոն է՝ բայը ոչ թէ բայանուն դարձնել, այլ անորոշ դերբայ, որ բնական կերպով վարում է թէ գոչականի և թէ բայի պաշտօնը:—Իսկ յունաբան մատենագիրներն, ընդ հակառակն, յաճախ սիրում են գործածել այդ ձևը, մինչև իսկ սեռի խնդիրը բայանունի մօտ ևս հայցական Հոլովով գնելով: Օր. «Լսեմք Խօսքի նոյն ի մեր լեզուս զԾածմանս Աստուծոյ» (Գործք, Բ. 11. — Լսեմք, զի խօսին նոքա ի մեր լեզուս զմեծածածմանս Աստուծոյ): «Յառաջ քան շարունակելու յոչնչէ շարունակմանս զվերջին փրկութիւնն իմանայիր» (Սղիշէ):

§ 107. Ածականները խնդիր առնում են երկու տեսակ. նախ՝ իբրև բայարմատներ և բայարմատներից կազմուած ածանցական բաղադրական ու բարդ բառեր, (ինչպէս ազատ, զգոյշ, օտար, պիղծ, Հմուտ, կարօտ, Հակառակ և այլն բայարմատները, գթած, գիտուն, ընդունակ, փախստեայ, խոտան, տուիչ, ապականիչ և այլն ածանցականները, անճառ, անհաս, տգէտ, անգործ, անհնարին բաղադրականները, եկամուտ, սրտառուչ, լուսատու, սրտագէտ, բարեխօս, Հիւթաբեր և այլն բարդերը). և երկրորդ՝ իբրև լոկ որակական և քանակական ածականներ. (ինչպէս մեծ, փոքր, արդար, բռնի, ամբարիշտ, գեղեցիկ, Հմուտ զգոյշ և այլն և սոցա քանակական ձևերը՝ մեծագոյն, բռնաբոյն, ազնուականագոյն, զգուշագոյն և այլն): Բայածականները դերբայի իմաստ ունին. ազատ, պիղծ, օտար՝ նշանակում են ազատուած, պղծուած, օտարացած. զգոյշ, Հակառակ, գիտուն՝ նշանակում են զգուշացող, Հակառակող, գիտցող:

§ 108. Եթէ վերցնենք մի նախադասութիւն, օր. «Իուք փութ՝ զօրէնս» և նրան ամբողջապէս խնդիր դարձնենք մի ուրիշ բայի, օր. «ընդ ձեզ խօսիմ, ընդ փութոյր օրինաց» կրտեսնենք, որ նախկին բայը դարձաւ որոշիչ իւր նախկին ենթակային, իսկ սեռի խնդիրը դրուեցաւ սեռական հոլովով գիտուն բայածականին մօտ՝ իբրև նորա լրացուցիչ: Նոյնպէս «Տէր տայ պարգևս բարեաց» նախադասութեան մէջ ասացուածը բայածականի վերածելով՝ կունենանք. «Տէր տուիչ պարգևաց բարեաց», կամ «Տէր պարգևատու բարեաց»: Առաջին ձևում նախկին սեռի խնդիրը դրուեցաւ սեռական հոլովով իբրև լրացուցիչ բայածականին, երկրորդ ձևում՝ բարդուեցաւ բայածականին հետ. երկու դէպքում ևս՝ ենթական մնաց ուղղական հոլովով, և բայածականը դարձաւ նորա որոշիչը: Սորանից բղխում է հետևեալ կանոնը.

§ 109. Բայածականները սեռական հոլովով խնդիր են առնում այն բառը, որ նոցա արմատ-բայ սեռի խնդիր պէտք է լինէր հայցական հոլովով. իսկ արմատ-բայի ենթակային իրանք որոշիչ են լինում: Օր: «Վարդապետք գիտունք օրինոյ»: «Գործօնեայք բարեայ և սրբարուբեան»: «Զապականիչսն մեմեայ՝ խառնուածովք արար օգտակարս իրերաց»:

ԾԱՆ. Բայց ընդհանրապէս բայի սեռի խնդիրը բարդում է բայարմատի հետ. ինչպէս վերի օրինակներում՝ «ղխտունք օրինաց» և «գործօնեայք բարեաց» կարելի է այսպէս ասել՝ օրէնսպէտք, բարեգործք: Այսպէս գործ է ածուում սովորաբար՝ սրտագէտ, լուսատու, հիւթարեր և այլն, փոխանակ՝ գիտակ սրտի, տուիչ լուսոյ, բերող հիւթոց: Այսպէս նաև՝ ամենագէտ, ամենակարող, ամենիմաստ, որոնք նշանակում են ամեն բան գիտցող, կարողացող, հասկացող, և ոչ թէ՛ ամենից գիտուն, գորաւոր և իմաստուն, ինչպէս գործ են ածուում ստորին գրաբարի և այժմեան լեզուի մէջ:

§ 110. Կրաւորականի իմաստ ունեցող բայածականները, իրանց արմատ-բայի բացառական սեռի խնդիրը՝ իրանց խնդիր են առնում քիչ անգամ բացառական հոլովով, իսկ աւելի յաճախ տրական հոլովով: Օր. «Եղէգն շարժուն է հոշոյ»: «խուն-

կըք ձեր պիղծ են ինչ<sup>2</sup>: «Խաշինք լմ զլիզան առիչ ձերոց ճարակէին»:

§ 111. Քայածականները բնութեան խնդիր առնում են սովորաբար այն հոլովներով, որ պահանջում են նոցա արմատ-բայերը: Օր. «Ոչ են եկամուտ է նա կամքն»։ (==Ոչ մտին է նա): «Մնաց Ջրուանն դատարկ յարարչութենէ»։ (==Դատարկացաւ յարարչութենէ): «Ոչ (է) էութիւն Հակառակ նա»։ (==Որ Հակառակիցի նա): «Ոչ (էր) կարօտ յիմաստութենէ», կամ «կարօտ ինչ»: «Ձեռք ձեր լի են արեամբ»: Տէր օղնական է նա ի մահիճս ցաւոց իւրոց»: «Ոչ ոք է նման նա»: Այսպէս նաև՝ աղատ ի կարեաց, սուրբ ի մեղաց, զգոյշ ի թշնամեաց, նիազ ի գիտութիւնէ, կարօտ Հացի, Հմուտ օրինաց, արժանի ողջունի, էակից Հօր, փառակից որդւոյ, ծարաւի սրեան, Հիւթաբեր ի պէտս ուրուք, խոտան առաջի Տեառն և այլն:

§ 112. Քացասական բայածականները խնդիր առնում են ընդհանրապէս տրական հոլովով և աւելի նուազ՝ բացառական հոլովով, անկախ նոցա արմատ-բայերի պահանջած հոլովից: Օր. «Մարկիոնն թէ մարդ իցէ՝ ապա և նա անճառ էին բանքն»: «Տգէտ էր Հօրն իորհրոյ»: «Ու է հարբիւնէ այդ անհնարին է, այլ ոչ առ է յՈւրաճոյ»: Այսպէս աւուում է նաև՝ անտես կամ անտեսանելի աչաց, անհաս մտաց:

§ 113. Ըծականները Հայերէնի մէջ վաղուց կորցրել են իրանց բաղդատական և գերադրական ձևերը<sup>1</sup>); որոց Համար ընտիր գրաբարն յատուկ ձևեր չունի. այլ Համեմատութիւն ցոյց տալու Համար գործ է ածում պարզ (դրական) ածականը՝ փոք, եւ, կորի, յոյժ և նման բառերի Հետ. օր. մեծ քան, մեծ ևս, կարի մեծ, մեծ յոյժ): Քայց ժամանակի ընթացքում լեզուն այս պակասորդը լրացրել է նոր ձևեր Հնարելով. Իբրև բաղդատական գործ է ածել ածականի բարդութիւնը 4օ՞ բա-

<sup>1</sup>) Վատ-թար բառի մէջ մնացել է նախնական բաղդատականի մասնիկը. բայց այս բառն ևս պարսկերէնից է առնուած.

նի հետ, որի սկզբնական նշանակութիւնն եղել է՝ յատկութիւն. այնպէս որ Տեճագոյն, որ սկզբնապէս նշանակելիս է եղել՝ Տեճի ցարդութիւնն ասելոյն հետզհետէ փոխել է նշանակութիւնը. և արդէն Ե. դարում սկսել է նշանակել՝ ասելի մեծ. նոյնպէս դեղնագոյն, որ առաջ նշանակում էր լոկ՝ դեղին յատկութիւն, դոյն ունեցող՝ յետոյ սկսել է նշանակել՝ աւելի դեղին: Իբրև գերադրական գործ է ածել ասել բառի բարդութիւնն ածականի հետ. այնպէս որ ասելագոյն, որ իսկապէս նշանակում է արդ ասելոյնի, ամեն բան կարողացող՝ ժամանակի ընթացքում փոխել է նշանակութիւնը և այժմ նշանակում է ասելոյ ասելի արդ, ամենագորաւոր: Այս օրինակներով լեզուն գտել է միջոց կազմել բաղդատական և գերադրական աստիճաններ բոլոր որակական ածականների համար: Բայց նկատելու է, որ ընտիր գրաբարի մէջ գոյն և ասել բառերով բարդուած ածականները խիստ քիչ են պատահում բաղդատականի և գերադրականի նշանակութեամբ: Գոյն-ով բարդուած ածականներն ընդհանրապէս դրական ածականի իմաստ ունին, և նոցա փոխանակ միշտ կարելի է գործածել դրական ածականներ. (օր. նոյնչափ օրինաւոր է ասել՝ օձն էր իսպառագոյն քան զամենայն զազանս՝ որչափ և՛ օձն էր իմաստուն քան զամենայն զազանս. չոր քան զամենայն, և՛ չարագոյն քան զամենայն): Իսկ ամեն-ով բարդուած ածականները գերադրականի նշանակութեամբ ընտիր գրաբարում կարելի է նկատել իբրև բացառութիւն—այն աստիճան սակաւաթիւ են այդպիսի բառերը: Գոյն և ամեն բառերով բարդուած ածականները բաղդատականի և գերադրականի նշանակութեամբ գործ են ածուում ստորին գրաբարի մէջ և այժմեան աշխարհաբարում:

§ 114. Որակական ածականները, որոց տակ գորութեամբ հասկացուում է մի գոյական՝ առնում են յոգնակի բացառական կամ ի նախդրով յոգնակի հայցական խնդիր՝ ցոյց տալու համար ընտրութիւն իրանց տեսակին պատկանող ուրիշ առարկաներից, ինչպէս և աշխարհաբարում: Օր. «Մեծն է չէ՞ջ եղիցի

ձեր ուղասաւոր»։ «Ասէ կրտսերն ի նոյննէ»։ «Չէ յարուցեալ ի ծնունդս կանանց յեծ քան զՅովհաննէս մկրտիչ»։ Բարձր ի փրկութիւն իստանան զԱստուծոյ պատմութիւնն կատարել»։ «Զայս ոչ ամենեքին զիտեն, այլ սուրբ ի նոյննէ»։

§ 115. Մասնական և Հարցական անունները *ոհ, ոք, որ ոք, զինչ, որ ինչ, իւրաքանչիւր ոք, ո՞ր, ո՞վ, նոյնպէս և թուականներն* Հասարակ ածականների նման առնում են յոգնակի բացառական խնդիր՝ ցոյց տալու Համար ընտրութիւն իրանց տեսակի առարկաների միջից։ Օր. «Ոհ ի չէնջ մատնելոց է զիս»։ Մի ոք յորդոյն նորա էր»։ Ոք ոք (կամ ո ոք) ի նոյն է վաղ առ իս Հասցէ՞ զնա թագաւոր արարից»։ «Զոր էնչ յարարածոյն բարի կարծիցեն»։ «Յո ոք ի չէնջ Հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն»։ «Ո՞ր ի չէնջ առ Հոգալ իւրում յաւելլու կարիցէ ի Հասակ իւր կանգուն մի»։ «Ասէ մի ոհ ի նոյննէ, որ անդն կային»։ «Հինգն ի նոյննէ յիմարք էին»։

ԾԱՆ. Միևնոյն նշանակութեամբ երբեմն պատահում է գործածուած յոգնակի սեռական հոլով, փոխանակ բացառականի, որ պէտք է Համարել յունաբանութիւն։ Օր. «Եւ եղև ի հասանելն նորա ի մի արարցն... Եւ եղև ի միում արարց» (Ղուկ. Ե. 12, 17), որտեղ յունարէնն, Համաձայն իւր կանոնին՝ ունի սեռական հոլով։

§ 116. Որական և ածականները առնում են *քան* նախադրութեամբ Հայցական խնդիր՝ ցոյց տալու Համար բաղդատութիւն իրանց տեսակին չպատկանող առարկայի Հետ, որից աւելի կամ պակաս յատկութիւն ունենալ են նշանակում, որ աշխարհաբարում դարձեալ բացառական հոլովով է արտայայտուած։ Որ. «Որ այնչափ հոջը եւ իմաստունն էր քան զհայրն՝ գտանի վատթարագոյն, զի ի վատթարէն իւրբեցաւ»։ «Եթէ Բարձրոյն քան զիս էր հիւղն՝ զի ետ ի ձեռս զիւր պատրեսալսն նմա չարչարել»։ «Գոյ այլ աշխարհ՝ գեղեցիկ եւ աշխատեանագոյն քան զնորայն»։ «Միւսն ևս անարարագոյն է քան զամենայն»։ «Քան զամենայն իմաստագոյն Համարին զՊղատոն»։— Օրինակներից երևում է, որ բաղդատականի նշանակութեամբ անխտիր գործ են ածուած թէ՛ պարզ և թէ՛ գոյն-ով բարդուած ածականները. իսկ գերագրական



աստիճանի. Համար ընդհանրապէս գործ է անոււմ գոյն-ով բարդուած ձևը:

ԾԱՆ. 1. Որակական ածականների մօտ ևս պատահում է երբեմն սեռական խնդիր փոխանակ բացառականի. Սակայն այդ սեռականը կամ չունաբանութեամբ է գործածուած, կամ թէ Համարուելու է չատկացուցիչ կամ խնդիր բացառականի. Օր. «Ամենայն ~~հարմար~~ ~~հարմար~~ ~~հարմար~~ գու էիր» (Եղիշէ. որ կամ չունաբանութիւն է փոխանակ ասելու՝ գու էիր աւագ քան զամենայն նախարարսն, կամ՝ նախարարացն չատկացուցիչ է աւագ բառին — նախարարների գլխաւորը). «Մոլորութիւնն դիւաց խաբեաց ~~գլխացուց~~ ~~հարմար~~» (որտեղ Հայոց՝ որոշիչ չատկացուցիչ է — Հայ դիւցապաշտներին). «Պատուական ամենայն ~~ծողութեան~~» (րտեղ ժողովրդեանն՝ բնութեան խնդիր է պատուական բայաձականին):

ԾԱՆ. 2. Զատ անգամ պատահում է, որ խնդրառու մասնական անունը ներգործութեամբ չէ դրոււմ, բայց միայն նորա բացառական խնդիրը. Այս բացառականը ~~հարմար~~ է նշանակոււմ և կարող է պատկանել ինչպէս բային, նոյնպէս և գորութեամբ հասկացուած մասնական անուան: Օր. «Նեթանոսք և է ~~հարմար~~ աստուածացուցին» (գորութեամբ հասկացոււմ է՝ ~~հարմար~~ ի ձկանց): «Տուք մեզ ~~հարմար~~ ձերմէ» (գորութեամբ հասկացոււմ է՝ ~~հարմար~~ մի, ~~հարմար~~ բն):

### ՆԱԽԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆԸ

§ 127. Նախադրութիւններն անփոփոխ մասնբանիներ են, որոնք իրանցից յետոյ պահանջում են լրացուցիչ բառեր կամ խնդիրներ. ինչպէս յետ աւուրց, հետի ի նոցանէ, հարմար աշակերտօք, դիմի նորա, է վերայ մեր, ~~հարմար~~ աշակերտան, ընդ դետ և այլն: — Նախադրութիւններն երկու գլխաւոր տեսակի կարելի է բաժանել, 1) նոքա, որոնք առանձին առնուած՝ որոշ նշանակութիւն չունին, իսկ այլ և այլ հոլովների վերայ դրուելիս՝ տալիս են նոցա նոր իմաստ, ինչպէս ի (յ), զ, ց, առ, ընդ, ըստ, սոքա կոչոււմ են նախդիր<sup>1)</sup>. 2) նոքա, որոնք առանձին առնուած՝ ունին իրանց սեփական նշանակութիւնը, և իրանցից յետոյ պահանջում են մի որոշ հոլովով խնդիր. ինչպէս են ի

<sup>1)</sup> Նախդիրների մասին տես Գր. հոլ. §§ 124—131.

վերայ, ի մէջ, հեռի, զինի և այլն. սոքա կոչուած են նախադրութիւն:

§ 118. Գրաբար լեզուի նախադրութիւնների ամենամեծ մասը սկզբնապէս եղել են գոյական անուններ և բայարմատներ, և այս պատճառով նոցանից շատերն ունին այլ և այլ (նախնական) հոլովական ձևեր. ինչպէս վեր գոյականը (վերևի կողմը) հոլովուած է՝ ի վեր, ի վերուստ, ի վերոյ, ի վերայ. առաջ (առաջի կողմը) հոլովուած է՝ յառաջ, ընդ առաջ, առաջի, առաջոյ, զառաջեալ. այսպէս նաև՝ հետ—զհետ, ի հետէ, \*հետև. յետ—յետոյ, յետս, յետուստ, \*աղագ—աղազի, աղագալ, աղապս, յաղագս. մէջ—ի միջի, ի միջոյ, ի մէջ, ընդ մէջ. իբր—իբրև, \*հեռ—ի հեռուստ, հեռ—ի և այլն: Սորանից հետևում է այս ընդհանուր կանոնը, որ հայերէն լեզուի նախադրութիւններից մեծ մասն առնում է խնդիր սեռական հոլովով, որ իսկապէս ուրիշ բան չէ՝ բայց եթէ յատկացուցիչ գոյականի. այսպէս՝ առաջի նորա՝ նշանակում է նորա առջևում. որտեղ նորա՝ իսկապէս յատկացուցիչ է առաջ գոյականին. զհետ նորա՝ նշանակում է նորա հետքով, և նորա՝ յատկացուցիչ է հետ (հետք) գոյականին: Իսկ փոքր մասը (բայարմատներն) առնում են բնութեան խնդիր այն հոլովով, ինչ հոլով որ պահանջում են նոցա բայերը. օր. հեռի ի նոցանէ (հեռանալ ի նոցանէ). մերձ ի քաղաքն (մերձենալ ի քաղաքն), գաղտ<sup>1)</sup> ի բազմաց (գաղել ի բազմաց) և այլն:

§ 119. Նախադրութիւնների մէջ առանձին նկատելու են հետևեալ կանոնները.

Ի կողմն, ի կոյս, ի սակս, ի կողմանէ, ի կուսէ, ի հետէ հոլովուած նախադրութիւնների խնդիրը դրուած է ոչ թէ իրանցից յետոյ, ինչպէս սովորական է նախադրութիւններին, այլ իրանցից առաջ. և իրանց նախդիրը դրուած է խնդրին վերայ, որ հոլովով համաձայնում է նոցա հետ: Օր. «Այն յայն սփռ լինի», «Ի մեր սփռ», «Գարձաւ ի կինն իդր», «Գնաց յա-

<sup>1)</sup> Նախնական կրաւորական անցեալ դերբայ գաղել բայի:

ըլեւելս իոյ», «Քաջին ի տանէ իողմանէ», «Ելանէ յարեւելից իոյ», «Սկն ունէր ի վաղուց հեփէ, յերկուց ամաց հեփէ»: «Յորմէ իոսն արեգական իցէ՛ յաչնմ թերէ սկսանի ի նմա լոյս ծնանել».  
 — որոնք նշանակում են՝ կնոջ կողմը, դէպի արեւելք, տան կողմից, արեւմուտքից, վաղուց ի վեր, երկու տարուց ի վեր ևն:

§ 120. Իբրև, որպէս, քան նախադրութիւնները առնում են հայցական հոլովով խնդիր՝ երբ ցոյց են տալիս նմանութիւն կամ համեմատութիւն մի առարկայի հետ, որ դրուած է ուղղական կամ հայցական հոլովով. Օր. «Իջեալ անհոյսն իբրև զհարմաւոր ոք ոտնաձայն առնէր ի դրախտին»: Տեսանէի զստորանայ, իբրև զփայլահին անկեալ յերկնից»: «Ոչ կամէր թէ որպէս զանուան ի հարկէ վարիցին» (հարդիկ): «Ուտէին զժողովուրդ իմ, որպէս կէրփոս հացի»: «Սրեցին զշողոս իւրեանց, որպէս զօյի (=զլեզու օձի): «Ո՞ր քան զհարուստ իցեն»: «Սիրեցի զգործիքս քո, քան զուրիկս»:

ԾԱՆ. Որովհետև այս նախադրութիւնների հայցական խնդիրը անխտիր գործ է ածուում թէ ուղղական և թէ հայցական բառի հետ նմանութիւն և համեմատութիւն ցոյց տալու համար՝ ուստի երբեմն կարող է լսօսքի երկիմաստութիւն տեղի ունենալ, այսինքն նմանութիւնը կամ համեմատութիւնը կարող է վերաբերել թէ ենթակային և թէ սեռի խնդրին. Օր. այս լսօսքում. «(նա) հարկանէ իբրև զստորանայ՝ զանասուն մեր» — բերականօրէն իմաստն անորոշ է. որովհետև կարող է նշանակել, թէ նա խփում է մեր անասունին, ինչպէս խփում է ծառան, նոյնպէս և՛ թէ նա խփում է մեր անասունին՝ ինչպէս խփում են ծառային, Այսպիսի անորոշութիւնից խոյս տալու համար՝ չօգնակիւմ այս նախադրութիւնների խնդիրները կարող են դրուել ուղղական հոլովով. օր. վերոյիշեալ նախադասութիւնը առաջին նշանակութեամբ պէտք է ասել. «Նոր հարկանեն զանասունս մեր, իբրև ծառայ», (որտեղ ծառայ իւր հոլովով ցոյց է տալիս, թէ նա բառին նմանութիւն է կազմում). իսկ երկրորդ նշանակութեամբ՝ «Նոքա հարկանեն զանասունս մեր, իբրև ծառայ»: Բաց երբ նախադասութեան ձևն եզակի է՝ լեզուն հնար չունի այս երկիմաստութիւնից խոյս տալու. մնում է լսօսքի իմաստից մակաբերել. ինչպէս վերի օրինակում նախընթաց լսօսքերից մակաբերում ենք, թէ նա (Աստուած) սպանում է մեր անասունին, իբրև մեր ծառային:

§ 121. Բայց երբ այդ նախադրութիւնները նմանութիւն կամ համեմատութիւն են ցոյց տալիս մի բառի հետ, որ դրուած է թեք հոլովով՝ նոցա խնդիրը հոլովով կհամաձայնի այդ թեք հոլովին: Օր. «Անաստութիւնն եղև պատճառ մահուան հարտին, իբրև յանցանքի»: «Սաստեալ գողանին իբր շահ՝ ցածուցանէ յանաստ գաղանութենէն»: «Իբրև յարիս մատուցեալ է ի մեղ Աստուած»: «Իբր ի ողորմ իմեքէ արարածոց հրամայէր հրաժարել (ի հոյ): «Ուրախ լինէին ի նախ, իբրև յարտաջ հասարակաց»: «Արգահատեսցեն նոյս, որպէս ի չարէն Բանաստեղծոյ»: «Ետ ըմպել նոցա (ի շիմէ) իբրև ի խորոյ մեծէ»: «Առաջնորդեաց նոցա ընդ անդունդս, որպէս ընդ անաստ»: «Կապեալ էին յաշտարուէն, որպէս յերկաթ»: «Գիւրագոյն լիցի երկին՝ Սողոմացոց և Գոմորացոց, քան խաշտին այնմիկ»:

§ 122. Ի միջի նախադրութիւնը երբ խնդիր ունի մեր, ձեր, իւր ստացական գերանունները՝ ինքը իբրև նախադրով տրական գոյական է վարուում, իսկ խնդիրն իբրև ածական դրուում է յետադաս տրական հոլովով.—ի միջի մերում, ի միջի ձերում, ի միջի իւրում: Իսկ ի մէջ նախադրութիւնը առնում է սեռական խնդիր (իսկապէս չատկացուցիչ)—ի մէջ մեր, ձեր, իւրեանց:

§ 123. Ինչպէս վերը տեսանք՝ նախադրութիւնները կամ իբրև գոյական անուններ խնդիր են առնում սեռական հոլովով իբրև չատկացուցիչ, կամ իբրև բայարմատներ՝ բնութեան խնդիր են առնում իրանց արմատ-բայի պահանջած հոլովով (§ 118): Բայց կան մի քանի նախադրութիւններ, որոց ստուգաբանութիւնները որոշ չլինելով՝ հարկաւոր է չատկապէս գիտնալ նոցա խնդրառութիւնը: Սոքա են.

Վասն, հանդէպ, յանդիման, ասանց, որոնք խնդիր են առնում սեռական հոլովով: Օր. «Վասն չեք և Բողոքս հեղանի ի քառութիւն մեղաց»: «Երթայք ի գիւղդ, որ հանդէպ Բեյ կայ»: «Նստէր Յիսուս յանդիման դաժարին»: «Առանց նորս ոչ ինչ եղև»:

Մինչև, որ խնդիր է առնում ի և յ նախդիրներով հայ-

ցական հոլովով: Օր. «Մինչև ի ծագ» աշխարհի են խօսք նոցա»: «Մինչև ի հոգ» արևու»: «Երթիցուք մինչև յԲէլ-Ղէհէհ»: Այսպէս նաև ասուում է. մինչև ի մահ, մինչև ի մի (մինչև վերջի մէկը), մինչև ի սպառ (մինչև սպառիլը, վերջանալը), մինչև ցերեկոյ և այլն:

Մէդուսի, ուրոյն, որոնք խնդիր են առնում բացառական հոլովով: Օր. «Մեկուսի ի նոյանէ, յաճիւնէ». (Նոցանից, ամբողից մի կողմ, առանձին): «Ուրոյն ի նոյանէ, ի քաղհուրէնէ». (Նոցանից, բազմութիւնից մենակացած, առանձին):

Հանդերձ, չափ (խնդրին յետադաս), որոնք խնդիր են առնում գործիական հոլովով: Օր. «Հանդերձ Մարեհա, Հանդերձ ոչախէրոյն»: «Յիսիւ-չափ, յետ-չափ, հահա-չափ»: (Չեղ չափ, մեռնելու չափ, մինչև մեռնելը):

§ 124. Երբ նախադրութեան խնդիրը իւր սեփական լրացուցիչներն ունի, (որ մանաւանդ պատահում է այն ժամանակ, երբ այդ խնդիրը գերբայ է կամ բայարմատ)՝ ընտրելագոյն մատենագիրները սովորաբար այդ լրացուցիչները դնում են նախադրութեան և նորա խնդրին մէջ, որով այս երկու միմեանց հետ կապուած բառերը հեռանում են միմեանցից, բայց խօսքն աւելի ամփոփ, ազդու և վայելուչ է լինում: Օր. «Վասն զվնասակարութիւնն ի միջոյ քառասուց». (=Վասն բառնալոյ): «Վասն միոյ իրիք օգտակարին գոհանելոյ ի նոսա». (Վասն դտանելոյ ի նոսա): «Մարզն ըստ Աստուծոյ երկիւղին սահմանս արտաքոյ ելեալ անաստէ». (=Ըստ սահմանս երկիւղին Աստուծոյ): «Ու լաւութեանցն խելամուտ լինելոյ՝ զանձնիշխանութիւնն պարզեաց նմա». (=Ու խելամուտ լինելոյ լաւութեանցն): «Ո՞վ կարիցէ կալ ուրիշի դոցա յանդուզն յարչախմբոյ». (Եղիշէ. = առաջի յանդուզն յարձակման դոցա): Մտցեն ըստ Աստուծոյ հոգանդուրէնսք»: (Մտցեն ըստ Աստուծոյ հոգանդուրէնսք):

ԾԱՆ. 1. Այսպիսի դէպքերում երբեմն պատահում է, որ անորոշ դերբայ-խնդրի հացական սեռի խնդիրը իւր իսկական հոլովը փոխելով համաձայնում է անորոշ դերբայի հոլովին: Օր. «Վասն խոստիւնի ուրիշի մարդկան յառաջագոյն գործելոցն մեղաց». (=Վասն տալոյ մարդ-

կան Բողոքի յառաջագոյն գործելոցն մեղաց (նոցա)։ «Յետ հազար մի յաշտ անելոյ»։ (=Յետ յաշտ առնելոյ հազար մ)։

ԾԱՆ. 2. Փոխանակ և վասն նախադրութիւններն երբեմն գործ են անուում կրկնութեամբ ընդ նախադրութեան հետ, և այդ կրկին նախադրութիւններն առնում են սեռական խնդիր. Օր. «հատուցին ինձ չար քիչ»։ ընդ Բողոքի։ «Մահու պատիժ քիչ»։ ընդ Բողոքի կրեն»։ (Սոքա իսկապէս նշանակում են՝ բարու դէմ (ընդ բարուց—տրական) ինձ փոխարինութիւն (փոխանակ—հացական երկրորդ սեռի խնդիր) հատուցին չարք. վատութեան դէմ՝ մահի պատիժ են կրում իբրև փոխարինութիւն)։ «Վասն ընդ անագորոցն թշնամութեան ընդ մարդոցն անելոյ»։ (=Վասն (ընդ) ունելոյ անագորոցն թշնամութիւն ընդ մարդոցն)։

### ԳԻՏԵԼԻՔ ԽՆԴՐԱՌՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

§ 125. Մի քանի անգամ արդէն տեսանք, որ մի բայ կարող է խնդիր առնել երկու տարբեր հոլովներով. ինչպէս ասել ումեք և ցոք, հարցանել զոք և յումեքէ, ուսուցանել զոք և ումեք, ուրանալ զոք և յումեքէ, հաւատալ յոք և ումեք և այլն, երբեմն տարբեր հոլովներէ հետ իրանց նշանակութիւնն էլ փոխելով, բայց աւելի յաճախ՝ պահելով նոյն նշանակութիւնը։ Այսպիսի բայեր շատ կան զբարբառի մէջ, որոնք ոչ միայն տարբեր մատենագիրներէ մօտ տարբեր հոլովներով խնդիր են առնում, այլ նոյն իսկ միևնոյն մատենագրի մօտ։ Օր. Եղնիկի մէջ պատահում ենք. «Ոչ ընդ ձեր հա համէի», և «Վարող իցէ առնել՝ դէն և համէոյի». «Ոչ դգործ սպանութեան հարբերէ», և «Մանուկ կաթնակեր, որ յոյլ ինչ կերակուր հարբերէ»։ Ս. Գրքի մէջ՝ «Սարգիս հողմոյն և ծովան», և «Սարգիս է նա Յիսուս»։ «Ի Բշնամի» իմ եպեռ ակն իմ», և «Եպեռ զչոյն զի բարի է»։ «Լուաւ դչոյն երգոց և զպարուց», և «Ոչխարքն չոյնի նորա շէն» (ականջ են դնում, մտիկ են անում)։ «Որ ոչ շոնիցէ անհամբ՝ շոնիցէ Բիհմի», և «Որ ընդ ունէն ոչ շէն՝ ընդ միտնուսն տան շէն նմա» (Եզնիկ)։ «Աստուծով սրբութիւն», և «ՅԱստուծոյ սրբութիւն»։ Եւ այլն։

Այս տարբեր խնդրառութիւններից ոմանք բացատրուում են օտար լեզուի ազդեցութեամբ կամ զբարբառի ոչ լիովին կազմա-

կերպութեամբ<sup>1)</sup>), բայց մեծագոյն մասը՝ իմաստի նուրբ տարբերութիւններ են արտայայտում, որոնք քերականութեան մէջ չէ կարելի աւանդել, այլ ընտրելագոյն գրուածքների յաճախ և ուշագիւր ընթերցանութեամբ են ըմբռնուում:

§ 126. Այն բայերը, որոնք ցոյց են տալիս խնամք մարմնի վերայ, ինչպէս են արկանել (հանդերձս), լուանալ, օծանել, ածել (գօտի), կապել (թագ) նոյնպէս և բաժանել՝ չնայելով որ ներգործական սեռի են՝ բայց խօսքի մէջ գործ են ածուում կրաւորաբար՝ երբ գործողութիւնը անդրադառնում է գործողի վերայ, (այսինքն երբ ենթական կատարում է գործողութիւնը իւր համար): Օր. «Արեւ զիւրև զափածանելին»: «Լաւոյց սըբութեամբ զձեռս իմ»: «Օծու իւղով զգլուխ իւր»: «Ածու գօտի ընդ մէջ իւր»: «Բաժանեցան զհանդերձս իմ լիւրեանս»: — Իսկ երբ գործողութիւնը փոխադրում է ուրիշ առարկայի վերայ՝ այս բայերը գործ են ածուում ներգործաբար: Օր. «Ոչ լաւոյց զոտս իմ յաւիտեան... եթէ ոչ լաւոյց զքեզ»: «Օծել իւղով զգլուխ իմ»: «Գօտի ընդ մէջ թոյն և պաշտեցէ զնա»:

ԾԱՆ. Այս դարձուածքը յունաբանութիւն է, որ սակայն, սակաւ բացառութիւններով՝ ընդհանրացել է ընտիր մատենագիրների մէջ: Այժմեան լեզուում՝ այս բայերը գործ են ածուում կրաւորակերպ՝ երբ գործողութիւնն անդրադառնում է ենթական վերայ, և միևնոյն ժամանակ սեռի խնդիր չունի (այսինքն երբ այդ բայերն ստանում են չէզոքականի նշանակութիւն). այսպէս՝ հագուեցաւ, կապուեցաւ, լուացուեցաւ, սրբուեցաւ, օծուեցաւ և այլն. իսկ երբ սեռի խնդիր ունին՝ միշտ գործ են ածուում ներգործական ձևով, այսպէս՝ զգեստը հագաւ, գօտին կապեց, երեսը լուաց, սրբեց, գլուխը օծեց և այլն.

§ 127. Հայերէն լեզուի յատկութիւններից մէկն է՝ գոյական և ածական անունները կրկնել միևնոյն հոլովներով, մանաւանդ երբ նոքա խնդրի պաշտօն են վարում: Այս կրկնուած բառերը երկու նշանակութիւն ունին, կամ ընդհանրութեան իմաստ են տալիս (փոխանակ գործածելու ամենայն, բո-

1) Տես ներածութիւն, եր. 15.

լոր, բովանդակ ածականները), կամ, յողնակի գործածուելիս՝  
անորոշութեան, (փոխանակ գործածելու՝ այլ և այլ, զանազան  
ածականները): Օր. «Նստեալ ժողովեցին շէքի քարն յամանս»:  
(Մատթ. ԺԳ, 48—բոլոր լաւերը ժողովեցին ամանները. յու-  
նարէնն այստեղ ունի—ժողովեցին շէքի քարն յամանս): «Եւ եղի-  
ցին սովք և սրածութիւնք և սոսանութիւնք է «եշի» «եշի»»:  
(Մատթ. ԻԳ, 7—այլևայլ տեղերում. յունարէնն ունի մի բա-  
ռով—բա «եշի»): Եզնիկ և ուրիշ ընտիր մատենագիրներ յա-  
ճախ գործ են ածում այլ վայելուչ հայկաբանութիւնը, փոխա-  
նակ ածականներ գործածելու: Օր. «Արեղակն ընդ ժամանակն  
ժամանակն ի խաւար դառնայ»: «Եւ ածեալ՝ կերպարնն կերպարնն  
առաջի նկարէ»: «Այլոց ինն ինն խոստանան տալ»: (Այլև այլ ժամա-  
նակ, զանազան կերպարանք, այլևայլ բաներ): «Միոյ միոյ ըստ  
իւրաքանչիւր ազգաց անուանս դնէր»: «Լուսին ահայ ահայ հիւ-  
ճանի»: «Զիւրդ զարևն առաջ առաջ ի նոյն արևելիս ածիցեն»:  
(Ամէն մէկին, ամսէ ամիս, օրէցօր, ամեն օր):

ԾԱՆ. Այս կրկնուող բառերը եթէ նախդիր ունին՝ նախդիրը  
ընդհանուր կանոնով դրուում է նախադասին վերայ, իսկ երկրորդ բա-  
ռը նախդիր չէ ունենում.—բարի բարին, է տեղիս տեղիս, շտ ժա-  
մանակս ժամանակս, յագագ ազգաց, է քաղաքաց քաղաքաց և այլն:

### ԱՍՏՅՈՒԱԾ ԵՒ ՊԱՐԱԳՈՅՍԿԱՆ ԲՍՈՒՄ:

§ 128. Պարագայական կոչում են այն բառերը, որոնք  
բացատրում են ասացուածի կամ գործողութեան պարագանե-  
րն, այսինքն հանգամանքները, օրինակ որպիսութիւնը, տե-  
ղը, ժամանակը, պատճառը, քանակութիւնը և այլն: Պարա-  
գայական բառեր լինում են սովորաբար մակբայները, թէև  
դոցա փոխանակ կարող են գործածուիլ և դոյական կամ ածա-  
կան անուններ: Օր. «Յայնժամ գնաց Յիսուս ընդ արտորայսն  
նոցա»: (Ժամանակի պարագայական բառ—մակբայ): «Յայնժա-  
մանակն լուաւ Հերովդէս»: (Ժամանակի պարագ. բառ—Հոլովուած



գոյական): Այսպէս նաև՝ նստարուք և նստարուք յոյսմ արդար  
կամ է արդար՝ Ընդէր գաս և՝ Վասն արդ արդարացի գաս, և այլն:

§ 129. Մակրայնները, որոնք սովորաբար լինում են սլա-  
րագայական բառեր՝ անփոփոխ մասնաբանիներ են: Գրաբարի  
մէջ խիստ քիչ կան նախնական սլարդ մակրայններ, ինչպէս են՝  
արդ, մինչ, երբ, միշտ, մերթ, նախ, ապա, հուսի, իբր, ահա,  
այո, ոչ, մի: Իսկ զրաբարի մակրայններից ամենամեծ մասը ա-  
ռաջ են եկել գոյականներից, ածականներից, բարդուած կամ  
միմեանց մօտ զբուած զանազան բառերից: Օրինակ մակրայի  
նշանակութեամբ գործ են ածուում հետեւեալ և ուրիշ շատ  
գոյականներ, ածականներ և միջակ անուններ որոնք մեծ մա-  
սամբ հոլովուած են. երեկ, հերու, վաղ, վաթ-ով, հարկ-աւ,  
կամ-աւ, վաղ-իւ, կանխ-աւ, բն-աւ, արդ-եւք, ի սպառ, չ-ա-  
ճախ <sup>1)</sup>, չ-ոյժ, չ-իր-աւ-ի, չ-ան-իր-աւ-ի չ-առաջ, չետ-ոյ,  
ց-այդ, ց-երեկ, ց-անդ, այդ-ուն, գիշեր-ի, ի հեռ-ուստ, ի  
վեր-ուստ, ամեն-եւին, ամեն-եւիմբ, արդար-և՛, գ-ի <sup>2)</sup>, ու-ր,  
ու-րեք, ու-ստեք <sup>3)</sup>, այլ-ուր, այլ-ուստ առ-աւել և այլն:  
Չատ անգամ մակրայ են դառնում բարդուած բառերը, որոնք  
երբեմն նաև հոլովուած ձևերով են գործածուում. ինչպէս չա-  
րաչար, տարապարտ, տարաժամ, վաղ-վաղ-ակի, ա-կամ-այ,  
չ-ան-կարծ: Չատ անգամ մակրայ են դառնում նախադրու-  
թիւնն առանց խնդրի, կամ իւր խնդրի հետ միացած, և ընդ-  
հանրապէս միմեանց հետ անբաժան միացած բառեր, որոնցից  
ոմանք նաև հոլովուում են, օր. արտաք-ս, արտաք-ոյ, չ-առաջ,  
մօտ, չ-այն-կոյս, ընդ-էր, առ-տնին, մի-թէ, զի-արդ, մինչ-և  
մինչ դեռ, երբ-եմն, երբ-եք, այս-պէս, այլ-ազգ, եռ-անդ,  
այս-օր, չ-այն-ժամ, այ-ժմ (=այս ժամ), չ-այսմ-հետէ, այսու-  
հետև, ահա-լասիկ (=ահա աւասիկ) և այլն:

§ 130. Մակրայի նշանակութեամբ գործ են ածուում բազ-  
մաթիւ բառեր՝ կրկնութեամբ, և այս դէպքում առաջին ան-  
գամ բառը դրուում է անփոփոխ ձևով, իսկ երկրորդ անգամ՝

<sup>1)</sup> Անել բացից. <sup>2)</sup> Ի միջակ անունից. <sup>3)</sup> Ո միջակ անունից.

ընդհանրապէս հոլովուած ձևով, իմաստին համաձայն: Ինչպէս են՝ բերան ի բերան, ձեռն ի ձեռն, թուփ առ թուփ, ճակատ առ ճակատ, ծայր ի ծայր, կեղծ ի կեղծս, մօտ ի մօտոյ, ճեպ ի ճեպոյ, կարճ ի կարճոյ, մերթ ընդ մերթ, հուպ ընդ հուպ, ետ ընդ ետ (իսկոյն, անմիջապէս), նոյն ընդ նոյն, անդէն և անդ, դամ քան զգամ, հաղ քան զհաղ (հետզհետէ, քիչ-քիչ), ևս քան զևս, ամ ըստ ամէ, օր ըստ օրէ, մի ըստ միոջէ և այլն: Նոյնպէս և սրարգ կրկնութեամբ՝ արագ արագ, ստէս ստէս, յոյժ յոյժ, տակաւ տակաւ, երբեք երբեք, առ սակաւ սակաւ և այլն:

§ 131. Խիստ շատ անգամ մակբայի նշանակութեամբ գործ են ածուում և լոկ ածականները (պարզ կամ բաղադրեալ ձևերով), դրուելով եզակի կամ յոգնակի անորոշ հայցական հոլովներով. (§ես §§ 60, 61, 67, 88): Ածականը լինելով որպիսութիւն ցոյց տուող բառ՝ կարող է ցոյց տալ ինչպէս առարկայի, նոյնպէս և գործողութեան որպիսութիւնը: Այսպէս միևնոյն աստիճանը, գործածուելով գոյականի հետ՝—մազ տարածամ—լինում է որոշիչ, իսկ գործածուելով բայի հետ՝—մեռաւ տարածամ—լինում է պարագայական բառ: Ուրեմն որոշելու համար, թէ ածականն ինչ պաշտօն է վարում նախադասութեան մէջ՝ պէտք է նայել, թէ նա առարկայի թէ գործողութեան որպիսութիւն է ցոյց տալիս: Օր. «Կապեն բեռնս ծանունս». «Որպիսի բեռներ՝ ծանր—որոշիչ. իսկ՝ «Ականջօք իւրեանց ծանունս լուան». ինչպէս լսեցին—ծանր կերպով, դժուարութեամբ. պարագայական բառ: «Սրկանել յապակի շար ուսողի» (որոշիչ), և՛ «Եթէ զջուրն քամեալ անողի շարիչք» (պարագայական բառ): «Ճարար բանիս պատրեն զանմեղ մարդիկ» (որոշիչ), և՛ «Ինքն միայն ճարար գիտէ» (պարագայական բառ): «Ի հանրեցս գեշտիչ» զարդարեալ և պաճուճեալ», և՛ «Ձամենայն զոր արար գեշտիչս արար»<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Ուրիշ հին լեզուների մէջ, որոնք գոյականների և ածականների սեռ ունին՝ ածականները մակբայ դառնալիս դրուում են չէզոք-

§ 132. Մակբայների գործածութեան մէջ յատկապէս նկատելու են հետեւեալ կանոնները:

Յուցական դերանունական արմատներից կազմուած մակբայները երեք սկզբնական և երեք ածանցուած ձևեր ունին. այսր, աստ, աստի, (կամ աստուտ) և՛ այսր-էն, աստ-էն, աստստ-ին: Սկզբնական ձևերից առաջինը (այսր) շարժում է ցոյց տալիս դէպի նպատակակէտը (հայցականի նշանակութիւն), երկրորդը (աստ՝) դադարում (նախդրով տրականի նշանակութիւն), իսկ երրորդը (աստի կամ աստուտ՝) շարժում սկզբնական կէտից (բացառականի նշանակութիւն): Սր. «Ն՞րբ եկիր այր»: «Յայսմ վայրէ ոք անոր մի ժտեսցի երթալ»: «Ծագեալ անոր՝ գնաց առ հարաւով»: «Սա ար միւրիժարի և դու այր 2) պապակիս»: «Եթէ կամիցին արի առ քեզ անցանել՝ ոչ կարեն, և ոչ այրի ոք առ մեզ անցանել»: «Անի ուստեք ի մօտէ ելանէ արեգակն»:

§ 133. Ածանցուած ձևերում էն, ին մասնիկները նշանակում են կրկնութիւն 3). ուստի ածանցուած ձևերը հօլովական նոյն նշանակութիւնն ունին՝ դարձեալ, կրկին, հէնց յաւելուածներով. այսրէն նշանակում է՝ դարձեալ այստեղ, աստէն—կրկին այստեղում, աստստին—հէնց (կրկին) այստեղից: Սր. «Գարձաւ այրէն»: «Գարձցի շողն անորէն յետս»: «Անդ եկեաց և անորէն մեռաւ»: «Բնկալար անորէն զբարիս քո ի կեանսն քում» (հէնց այնտեղ, կեանքումդ):

ԾԱՆ. Այս մակբայները յաճախ գործ են ածուում և ինչպէս ածական գոյականի հետ, պահելով իրենց նշանակութիւնը: Սր. «Ի ար-

---

քական սեռի վերջաւորութեամբ, եզ հայցական հօլովով, նոյնպէս և առանձին մակբայակերտ վերջաւորութիւններով: Հայերէնը կորցրած չինելով սեռերն և մակբայակերպ վերջաւորութիւնները՝ միևնոյն ձևը գործ է ածուում երբեմն ածականի և երբեմն մակբայի նշանակութեամբ:

2) Երկրորդ դէմքի համար չկայ նախդրով տրականի ձևը, որի փոխանակ գործ է ածուում հայցականի ձևը:

3) չամեմատել նա—նոյն (=նո՛ւն), նոքա—նոք-իս:

աւ անոր եմուտ)։ «Ի դրեալի ան բերին»։ «Թուի, թէ է ծնէ անի ելա-  
նիցէ»։ «Անորի իսկ յորինոյ մահապարտ գտանի»։

§ 134. Նոյնպիսի գործածութիւն ունին և ո գերսանու-  
նական արմատից կազմուած տեղական մակբայները, որոնք նոյն-  
պէս մի քանի ձևեր ունին՝ տարբեր հոլովների համապատաս-  
խանող. ուր — հայցականի, ուր-եք — նախդրով տրականի, ուստի,  
ուստ-եք բացառականի։ Օր. «Ուր ենն երթամ՝ դուք ոչ կա-  
րէք գալ»։ «Հողմն ուր կամի շնչէ»։ «Յայտ է, թէ ուրեք ծած-  
կի ցայգ» (արեգակն)։ (—որևէ տեղում)։ «Յամաք ուրեք ի  
ծովէ անտի ոչ երևի»։ «Խաւարս օր լինի՝ ուրեք իցէ»։ (նր-  
տեղից)։ «Ուրեք յայտ է, թէ բեւեռալք են»։ (որտեղից, որից  
պարզ երևում է)։ «Թուի նմա, թէ անտի ուրեք ի մօտէ ելա-  
նիցէ արեգակն»։

ԾԱՆ. Ուր-ը ժամանակի ընթացքում սկսել է գործածուիլ և  
նախդրով տրականի իմաստով. և այս նշանակութեամբ աւելի չաճալի  
է պատահում, քան իւր բուն (հայցականի) նշանակութեամբ։ Օր. «Ուր  
առնէր գշաշուն»։ «Ուր գէշն իցէ՝ անդր ժողովեսցին արծուիք»։ Իսկ  
հայցականի նշանակութեամբ աւելի սովորական է գործածել ո, ով  
գերանունը նախդրով հայցական հոլովով։ Օր. «Յ՞՛ղ երթաս»։ «Ոչ գի-  
տես ուստի՞ գայ կամ յ՛ երթայ»։

§ 135. Ոչ և մի մակբայները թէպէտ գործողութեան բա-  
ցասական նշանակութիւն են տալիս՝ բայց մեծ տարբերութիւն  
կայ նոցա իմաստի, ուրեմն և գործածութեան մէջ։ Ոչ-ը գործ է  
ածուում այն ժամանակ, երբ հարկաւոր է ցոյց տալ, թէ գոր-  
ծողութիւնը չկար, չկայ և չպիտի լինի. իսկ մի-ն գործ է ա-  
ծուում՝ երբ խօսողը չի, յանդուրեմն է յայտնում, որ գործողու-  
թիւնը չլինի, (որ սակայն կարող է և կատարուիլ, հակառակ  
արտայայտուած ցանկութեան)։ Ոչ-ը նշանակում է լոկ իրա-  
կանութիւն, չգոյութիւն, իսկ մի-ն՝ խօսողի կամքը, տրամա-  
դրութիւնը՝ որ գործողութիւնը չլինի։ Օր. Եզնիկի այս խօս-  
քում «Այլոց ի գրոց պատճառս առեալ՝ ասեն. ի նոյն իսկ զիրս  
գրեալ է, թէ եղ զնոսա ի հաստատութեան երկնից, ուստի  
յայտ է, թէ բեւեռալք են և ոչ գնայունք»։ (Ս. գրքի վերայ

Հիմնուելով ոմանք համոզուած են, թէ լուսաւորները բեւ-  
ռուած են երկնքում, և ոչ թէ շարժական են. նոցա համար  
իրողութիւն է, որ լուսաւորները շարժական չեն): — Որին նոյն  
մատենագիրն առարկում է. «Այլ թէ այնպէս իցէ՞ յորժամ զՎ-  
դամայ ասէ, թէ եդ զնա ի դրախտին փափկութեան՝ բեւ-  
ռեալ համարեսցին և Տի՛ գնայուն»: (Հեղինակը յայտնում է իւր  
ցանկութիւնը, որ Ադամին ևս բեւռուած համարին և ոչ թէ  
շարժուն. Ադամի ոչ-շարժուն լինելը իրականութիւն չէ հեղի-  
նակի համար, այլ նորա ցանկութիւնը, որ այսպէս լինի): Այս-  
պէս ևս՝ «Ոչ հեղգասցուք այնմ ևս առնել պատասխանի»: (Մենք  
չենք հեղգայ. իրողութիւն է, որ հեղինակը չպիտի հեղգայ),  
որ եթէ ասէինք՝ Տի՛ հեղգասցուք՝—կնշանակէր չհեղգանք— լոկ  
մի ցանկութիւն չհեղգալու, և ոչ իրողութիւն: «Ոչ տացես».  
(պիտի չտաս—չայտնի իրողութիւն է, որ պիտի չտայ): «Մի  
տացես». (չտաս—ցանկութիւն է, ոչ չտայ. բայց կարող է տը-  
րուիլ հակառակ այս ցանկութեան):—Սորանից հետևում է այս  
ընդհանուր կանոնը.

§ 136. Մի մակբայը բացի հրամայական-արգելականից, որ  
բացարձակ կամք է արտայայտում՝ գործ է ածուում նաև ստո-  
րադասականում, սահմ. ապառնիում և անց. անկատարում (երբ  
սա դրուած է ստորադասականի փոխանակ) այն դէպքերում՝  
երբ արտայայտում է նպատակ, ցանկութիւն, կամք, հրաման՝  
որ գործողութիւնը եղած չլինէր կամ չլինի: Իսկ ոչ մակբայը  
գործ է ածուում՝ երբ մերժուում է գործողութիւնը, առանց խօսո-  
ղի կամքը կամ տրամադրութիւնն ի նկատ առնելու, կամ երբ  
իրականութիւն է, որ գործողութիւնը չէ կատարուել, չէ կա-  
տարւում, չպիտի կատարուի: Մի-ն գործ է ածուում անշուշտ՝  
արգելականի հետ, նպատակ ցոյց տուող (զի, որպէս զի, այնու  
զի) շաղկապներից յետոյ, կամել, ցանկալ և նման նշանակու-  
թեամբ բայերից յետոյ. իսկ ոչ-ը անշուշտ՝ սահմ. ներկայի և  
անց. կատարեալի հետ: Օր. «Մի գործիչի գծեզ Եգեկիա բանիւք,  
որովք ոչ իւրի փրկել գծեզ. և Տի՛ իւրեւնի գծեզ, թէ Աստուած

փրկեսցէ զձեզ, և ոչ հարնչի քաղաքս ի ձեռս թաղաւորին Ասորեստանեայց. Տի աստուծոյ Եզեկիայ»։ (Այստեղ մի պատրեսցէ, մի խաբեսցէ, մի անսայք—խօսողի ցանկութիւնն ու կամքն են արտայայտում, ուստի գործ են ածուած մի մակբայով. իսկ ոչ կարէ՛ իրականութիւն է խօսողի համար, նոյնպէս և ոչ մատնիցի՛ իրականութիւն է Եզեկիայի համար—Եզեկիան չէ կարող ձեզ փրկել... այս քաղաքը չի մատնուի—ուստի դրուած են ոչ մակբայով)։ «Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պատշաճէ»։ (Ինձ ոչ մի բան չի պակասի)։ «Մի պատշաճէ իշխան Յուդայ, մինչև եկեսցէ օծեալն»։ (Յուդայի իշխանը չպակասի—խօսողի ցանկութիւնը, օրհնութիւնը)։ «Աղօթս արարէք, զի մի պատշաճէ ի փորձութիւն»։ (Որ փորձութեան մէջ չընկնիք)։

ԾԱՆ. Աշխարհաբարի մէջ՝ մի գործ է ածուած միայն հրամայական-արգելականի հետ. իսկ բոլոր միւս դէպքերում՝ ոչ, գրաբարի ոչ և մի մակբայների փոխանակ, Սակայն նկատելու է, որ գրաբարի մի գործածած տեղում՝ աշխարհաբարը ոչ-ը գործ է ածուած միշտ պարտաւարական եղանակով—մի խաբեսցէ—չխաբէ, մի անկանիցիք—չընկնիք և այլն։

§ 137. Ոչ մակբայն ընտրելագոյն մատենագիրներն յաճախ սղում են և գրում չ։ Այս սղումը տեղի է ունենում մանաւանդ՝ երբ մակբայը գործ է ածուած էական բայի հետ, անորոշ դերբայի հետ և այն բայերին հետ, որոնք սկսւում են ձայնաւոր գրով։ Օր. «Իցէ արարած շունչն, թէ չիցէ»։ «Որ ինչ Մովսիսի չէ ասացեալ՝ այլ մարգարէք լցին նովին Հոգևով»։ «Որ ինչ հաստատութիւն է՝ չէ շարժուն»։ «Եւ չասաց, թէ երկինք դադարեսցին ի գնացից իւրեանց»։ «Բնութեամբ էր նմա չճանաչելն զԱստուած Հայր»։

ԾԱՆ. 1. Ոչ-ը չէ կրճատուում՝ երբ նորա մօտ զեղջուած է բայը, երբ բայը հեռացած է նորանից, երբ կրկնուած է (բայի կամ ուրիշ մասնբանիի վերայ), երբ յետադաս է դրուած, երբ միացած է ինչ, ապաքէն, թէ, զի, ոք և այլ բառերի հետ։ Օր. «Արեգակն դարձաւ յետս, և ոչ երկինք», «Բևեռեալք են և ոչ գնացունք», «Ոչ նա անօթս բարկութեան կազմէ ի կորուստ, և ոչ անօթս ողորմութեան ի փառս »։ «Ոչ զհրոյ, և ոչ զջրոյ, և ոչ զօդոյ, և ոչ զփայտատականց...

ճատ, ինչ Մովսէս: «Ոչ էլէ բնածին բարք են, այ եկամուտս»: «Նորա ոչ է ոչ գոյ չայնմ շնորհ»: «Ո՛չ ապաքէն երկու ճնճողուկք դանգի միող վաճառին»:

ԾԱՆ. 2. Տարբերելու է՝ ոչինչ և ոչ ինչ բառերը, որոնք թէպէտ երկուքն էլ նոյն կազմութիւնն ունին, բայց առաջինը միացած է գրւում և գործ է անւում նախադասութեան մէջ իբրև ենթակայ կամ սեռի ու բնութեան խնդիր և հոլովում է՝ ոչնչի, չոչնչէ և այլն. (ոչ մի բան, ոչնչութիւն նշանակութեամբ): Իսկ երկրորդը գրւում է բաժանուած և ինչ-ը վերաբերում է նախադասութեան մէջ մի ուրիշ բառի իբրև ածական, թէև սովորաբար գրւում է անմիջապէս ոչ մակբային մօտ (ամենևին, բոլորովին նշանակութեամբ): Օր. «Ի ներքոյ երկրի ոչնչ է»: «Զամենայն գիշերս աշխատ եղաք, և կայաք ոչնչ»: «Եթէ ոք ոչնչ գնատուծոյ պատուիրանն համարիցի»:— «Ո՛չ է ոչ տկարագոյն է սորա անձնիշխանութիւնս քան զնորայն»: (==Ոչ տկարագոյն ինչ է—ամենևին տկար չէ): «Նորա ոչ է ոչ գոյ չայնմ շնորհ»: (==Ոչ գոյ շնորհ ինչ):

ՅԱՏԿԱՅՈՒՅԻՉ ԵՒ ՅԱՏԿԱՅԵԱԼ:

§ 138. Յատկացուցիչ կոչւում է այն բառը, որ սեռական հոլովով գրուելով առարկայ նշանակող ուրիշ բառի մօտ՝ ցոյց է տալիս, թէ այդ առարկան իրան է պատկանում, կամ յատկացնում է այդ առարկան: Իսկ յատկացեալ կոչւում է այն բառը, որ պատկանում է յատկացուցչին, կամ նորանով որոշուած է: Յատկացուցիչը պատասխանում է ոչնչ հարցմունքին: «Լոյս արեգական» խօսքում՝ արեգական գրուած է սեռական հոլովով լոյս բառի մօտ և ցոյց է տալիս, թէ լոյսը իրանն է.—լոյս որոյ—լոյս արեգական: Արեգական՝ կոչւում է յատկացուցիչ, իսկ լոյս՝ յատկացեալ: Այսպէս և՝ «կորիւն առի՛ծու նստի դարանեալ»: «Վերաւ ի պտղոյ ծառայն»: Մարմինք ճարտիւն և ուսանոյ: «Վերպարանք դիւայ են և ոչ վեշտայ»: «Արարածք բարույ աբարէն»: «Պատճառք չարէայ»: «Թագաւորութիւն նորա»: Սիրտք երէնայ» և այլն:

ԾԱՆ. Իբրև բացառութիւն պէտք է նկատել, որ ընտրելագոյն մատենագիրների մօտ (աւելի յաճախ Սաղմոսի մէջ) տեղ-տեղ յատկա-

ցուցիչը պատահում է դրուած ոչ թէ սեռական հոլովով, ինչպէս պէտք էր՝ այլ յատկացեալի հոլովով. մանաւանդ եթէ սա գործ է ածուած բացառական հոլովով. Օր. «Հանէ զամպս ի ծագաց ելիք»: «Պտուղ նոցա չերկրէ կորիցէ, և զաւակ նոցա չորդւոց է հարչանէ»: «Ի պտղոց որոշին համե նստուցից յաթոռ քո»: (Փոխանակ՝ ի ծագաց ելիք, չորդւոց հարչան, ի պտղոց որոշին հո):

§ 139. Յատկացուցիչը այլ և այլ ծագումներ ունի, որոց համեմատ և տարբեր նշանակութիւններ է ստանում: Գլխաւորները սոքա են.

Ա). Բուն յարկայոցիչ—գոյական կամ գոյականաբար գործածուած ածական, որ ցոյց է տալիս, թէ յատկացեալն իրան է պատկանում, կամ ինքն է նորա տէրը: Օր. «Մեշտարայն ոգիք յաղտեղի մարմինս փոխիցին»: «Պիւթագորեանք ոչ ուտեն զմիս կենդանեայ»: «Ետես տէրն արարածոյ, թէ յաղթեաց նմա»: «Այս է սկիզբն աշանդայն Մարկիանի»:

Բ). Որոշիչ-յարկայոցիչ, որ թէև գոյական անուն է, բայց դրուելով յատկացեալի մօտ՝ որոշում է նորա որպիսութիւնը: Այս յատկացուցիչները մեծ մասամբ ութիւն ածանցականով վերացական գոյականներ են, որոնք հալկաբանօրէն գործ են ածուած փոխանակ իրանց արմատ ածականին, կամ հոլովուած անորոշ դերբայի: Օր. «Նոքա խորհեցան խորհուրդ չարաւէտան». (= չար): «Ընդ նմա իսկ մարտիցուք գարաւէտան բանիւք». (= գոռ): «Շառ գիտարաւէտան բարւոյ և չարի». (= ծառ, որ գիտակ առնէ բարւոյ և չարի, ծառ առ ի գիտել զբարի և զչար): «Ուտէին զժողովուրդ իմ որպէս կերակուր հոյի». (= հացեղէն): «Գնացին Տեյ առար ճանապարհ». (= միօրեայ): «Թագաւորութիւն հալար ամի». (= հազարամեայ):

Գ). Ենթակայ-յարկայոցիչ, որ գործ է ածուած բայարմատ-յատկացեալների հետ և ցոյց է տալիս, թէ յատկացեալի նշանակած գործողութիւնն ինքն է կատարում: Այս տեսակ յատկացուցիչ և յատկացեալը կրճատուած նախադասութիւններ են, որոց ասացուածը դարձել է յատկացեալ, իսկ ենթական՝ յատկացուցիչ: Օր. «Չիք ինչ չար յարարածս Արարածոյ». (= գոր



արար Աստուած): «Յորժամ զբարբառ. միայն հարդոյն լսիցեն զազանքն». (= յորժամ բարբառեսցի մարդ): «Յիսուսի Գրիստոսի ծնունդն էր այսպէս». (= այսպէս ծնաւ Յիսուս Գրիստոս): «Լիկանաց չարիքն երկոքին պատճառք եղեն». (= զի չարն լիկեսցէ): «Միոյ արարչէ գործ է ամենայն ինչ». (= մի սրարիչ գործեաց):—Տես § 105.

Գ). Խնդիր-յարդոյն, որ գործ է ածուում բայսրմատ-յատկացեալների հետ և ցոյց է տալիս, թէ յատկացեալի նը-շանակած գործողութիւնն իւր վերայ է ընկնում (սեռի խնդիր-յատկացուցիչ) կամ այդ գործողութեան հետ վերաբերութիւն ունի (բնութեան խնդիր-յատկացուցիչ): Սր. «Աստուած զգործուածն անկեցումն զեղեցիկ գործէ. (= գործէ զամենայն): «Ոչ այլ ոք արարիչ էր չարաց». (= արար զչարիս): «Եթէ ոք ճարտարութիւն իրաց ինչ զիտիցէ». (= ճարտարել իրս ինչ): «Ջաչ և զերկիւղ հարդոյն՝ արկեալ է արարչին ի վերայ զազանացն». (= երկնչել ի մարդոյ): «Տեսի հեծեալ մի արար և հեծեալ մի իշոյ». (= որ հեծեալ էր յուզտ, լէ2): «Տէր երբի և երբի». (= որ տիրեսդ երկնի և երկրի): «Իշխան արդոյն այսօրիկ կոչէ զնա՝ վասն յերկնիցն անկանելոյ». (= իշխէ օդոյն):

§ 140. Յատկացուցիչը գրաբարի մէջ կարող է գրուել յատկացեալից թէ առաջ և թէ յետոյ. բայց մատենագիրները մեծ մասը սովորաբար յատկացուցիչն յետադաս է գործածում: Սր.— Յետադաս. «Հոգի հեռան ի վերայ իմ... կոչել ամ հեռան ընդունելի և օր հարդոյնսն Աստուծոյ մերոյ... տալ սգաւորաց Սոսիի փառս. փոխանակ մոխրոյն՝ օծումն արարիւթեան և սգաւորացն՝ հանդերձ փառաց՝ փոխանակ ոգւոցն վարարիւթեան: Եւ կոչեսցին նոքա ազգք արարիւթեան, տունկ հեռան ի փառս»: (Եսայի): «Յականջս անդամի ամենեւին մի խօսիր... ի ստացուածս արքոյ մի մտանիցես... զլսելիս քո պատրաստեա բանից իմաստարարիւթեան... Մի մատուցաներ զամպարիշտն յարօտս արարիւթոյ և մի խարիբ լրութեամբ արդոյնի»: (Առակք Սող.): «Մատենցին զանձինս ի կորուստ հարդոյն, ուստի փրկութիւն ոգոյն զտանի: Ի զուր ջա-

նան իմաստունքն Յոնայ զԱստուծոյ ճառել... որք միտով որ-  
այն խաւարեալք՝ ծնունդս բազումս և անթիւ(ս) աստուծոյ  
մուծանել դանդաջեցին» (Եզնիկ):—Նախադաս. «Առաջին բնու-  
թեանն օրինակք և գրոյ վիպութիւնք բաւական էին հաւանե-  
ցուցանել զմտավարժս»: «Յայդ ի նորս լուսոյն ի լուսնն ամանն  
լոյս ծագէ»: «Զլուսաւորսն շարժել նորս բնին զորձ է»: «Աղ-  
բերք մշտաբուղիք ի նորս հրամանէ կարգեցան... որոյ բղխմունքն  
շոյլոյ կարօտութիւնս լնուն»: «Բստ Աստուծոյ արժանեաց սրք  
արժանաւոր իցեն սլատմիչ, բայց եթէ Աստուծոյ բարեկամք,  
որք վասն նորս սիրոյն և զկեանս աշխարհիս արհամարհեցին»:  
(Եզնիկ): «Յեռոսի Քրիստոսն ծնունդն էր այսպէս»: «Մի ցանկա-  
նայցես խորտկաց նորա, զի այն իսկ կցեալ երթայ զէնսն սը-  
տուլթենէ»: (Ս. Գիրք):

ԾԱՆ. Նախադաս յատկացուցիչը, որ այժմեան հայերէնի մէջ մե-  
նակ գործածականն է՝ յատուկ է Եզնիկիին, որ աւելի նախադաս է  
գործածուած քան յետադաս. Գիտար է որոշ կանոն սահմանել, թէ  
երբ Եզնիկ նախադաս յատկացուցիչ է գործածուած և երբ յետադաս,  
որովհետև միևնոյն խօսքի ձևերում, մինչև իսկ նոյն բառերի գործա-  
ծուլթեան մէջ երբեմն մէկ և երբեմն միւս դասաւորութիւնն է նը-  
կատուում. կարելի է ենթադրել, թէ յատկացուցիչ յատկացեալից նա-  
խադաս դրուելը ինչպէս այս աւուր՝ նոյնպէս և Ե և նախընթաց  
դարերի հայերէնին յատուկ էր (թէպէտ և յետադաս յատկացուցիչն ևս  
անսովոր չէ եղել), բայց Ս. Գրքի թարգմանութեան մէջ, յունարէն  
բնագրի հետևողութեամբ, մտել է յետադաս յատկացուցիչ ընդհանուր  
գործածութիւնը, և Ս. Գրքի հետևողութեամբ նոյնը գործ են անել  
և յետագայ մատենագիրները.—Նախադաս յատկացուցիչ յաճախ գոր-  
ծածութեան կողմից՝ Եզնիկիից յետոյ երկրորդ տեղը բռնում է Ղ. Փար-  
պեցին, որի լեզուն ժողովրդականութեան բազմաթիւ հետքեր է կրում.

§ 141. Բայց դասաւորութեան մէջ ընդհանուր կանոն է՝  
նախադաս դնել ուր յարաբերականն՝ երբ յատկացուցիչ լինի. և  
այս դէպքում երբեմն յատկացեալից յետոյ աւելադրութեամբ  
գործ են անուում նորս կամ իւր բառերն, իբրև բացատրութիւն  
որոյ յատկացուցիչն: Օր. «Որոյ հայհուլութիւնն ի բունն իսկ  
զնայ»: Առ ի չկարելոյ առնել զայնս, որոյ խելամտութիւնն

լինքեան ունէր»: «Վանեփուկն թուփ ինչ է, որոյ սերմն նորս  
 դեղ է»: «Զորոյ կալայ զաջոյ ձեռանէ նորս»: «Փայտ պտղաբեր,  
 որոյ սերմն իւր ի նմին»: «Ո՞չ արարածոց լինէր թագաւոր»:

§ 142. Յատկացուցիչը կարող է ունենայ և իւր սեփա-  
 կան յատկացուցիչը և այս վերջինը՝ դարձեալ իւրը: Սր. «Չկեն-  
 դանիքն զիւրդ կարիցեն չենդանեայն պատճառ ծննդեան լինել».  
 (որտեղ կենդանեացն՝ յատկացուցիչ է ծննդեան յատկացուցչին):  
 «Մինչ չև արարեալ էր զարարածս՝ ի մտի իւրում ունէր յառաջ-  
 գիտութեամբ զպայման չաղճոյ տարածոյ»: «Ի պտղոյ ծառոյդ  
 փորո-լեան քարոյ և չարի մի ուտիցէք». (որտեղ բարւոյ և չա-  
 րի՝ խնդիր-յատկացուցիչներ են գիտութեան, սա՛ որոշիչ-յատ-  
 կացուցիչ է ծառոյն, իսկ սա՛ բուն-յատկացուցիչ պտղոյ):

§ 143. Զատ անգամ յատկացեալը խօսքի մէջ ներգոր-  
 ծութեամբ դրուած չէ լինում, այլ հասկացում է զօրութեամբ:  
 Այս պատահում է կամ այն ժամանակ, երբ միևնոյն յատկա-  
 ցեալը մի քանի յատկացուցիչներ է ունենում, որոնցից առա-  
 ջինին հետ դրուելով՝ միևնորին մօտ այլ ևս չէ կրկնում, կամ  
 երբ յատկացեալն առաջ մի անգամ յիշատակուած է, այնպէս  
 որ երկրորդ անգամ, առանց կրկնուելու էլ, կարող է մակա-  
 բերուիլ: Այս դէպքերում եթէ յատկացեալը նախդիր ունի ունի՝  
 ինքը զեղջուելիս նախդիրը սովորաբար դրում է յատկացուցչի  
 վերայ, և այս նախդիրը շօշափելի կերպով լիշեցնում է զեղ-  
 ջուած բառը: Սր. «Կիսոցն ճրագուն դեղնեղի լինի և այլ ինչ  
 յանդամոցն, որպէս ա-ի-ծո-ն և արջոյ և այլոյն»: (Փոխանակ՝  
 որպէս ճրագուն և այլ անդամս առիւծու, արջոյ և այլոցն): «Լը-  
 ուաւ զձայն երգոցն և զպարուց». (փոխանակ՝ և զձայն պա-  
 րուց): «Որպէս թէ արգարոցն մեռելոց ողիք յալ ի սուրբ մար-  
 մինս փոխիցին, կամ ի մարդկան, կամ յանասնոց սրբոց... և  
 մեղաւորացն ողիք յաղտեղի մարմինս փոխիցին, կամ ի մարդ-  
 կան, կամ ի գազանաց և ի ճճեաց և ի սողնոց»: (Փոխանակ՝  
 ի մարմինս մարդկան, ի մարմինս անասնոց... զազանաց, ճր-  
 ճեաց, սողնոց): «Նշան յաղթութեան՝ զնահատակութեանն կանգ-

նիցեն»։ (Փոխանակ՝ դնշանն նահատակութեան)։ Չիք ինչ արա-  
րած բանաւոր արտաքոյ քան զայս երիւ ջոկս, շհրեշտակաց,  
շդիւաց և զմարդկան»։ (փոխանակ՝ շջոկս հրեշտակաց, դի-  
ւաց և մարդկան)։ «Գոյ այլ աշխարհ, գեղեցիկ և ազնուակա-  
նագոյն քան շնորայի»։ (Փոխանակ՝ քան շաշխարհն նորա)։

§ 144. Յատկացեալի և յատկացուցչի մէջ կարող են գրտ-  
նուիլ միջանկեալ բառեր, որոնք նրանց բաժանում են մի-  
մեանցից։ Բնական, կանոնաւոր լեզուի մէջ՝ այս միջանկեալ բա-  
ռերը պատկանում են կամ յատկացեալին կամ յատկացուցչին  
(իբրև նոցա ենթական, խնդիրը, որոշեալն և այլն)։ Իսկ զար-  
դարուն լեզուի մէջ այս բաժանումը յաճախ տեղի է ունենում  
առանց քերականական կարևոր պատճառի՝ ոճի գեղեցկութեան  
համար, համաձայն հեղինակի ճաշակին։ Այսպիսի դէպքերում  
եթէ յատկացեալը նախդիր ունի՝ նախդիրը սովորաբար կրկ-  
նուում է և հեռացած յատկացուցչի վերայ, որով դիւրին է լի-  
նում հասկանալ այդ երկու միմեանցից հեռացած բառերի մէջ  
եղած կապը։ Օր. «Աւրդի, որ գազանագոյն է քան զամենայն  
գազանս՝ ուտի Տէն և ոչ վնասէ»։ (= Ուտի միսն վարագի)։  
«Ջի առաւելութիւն բարերարութեան նորա յայտնի լիցի մարդ-  
կան՝ վասն Խոշ-Լեւն տալոյ մարդկան յառաջագոյն գործելոցն  
Տեղոյ»։ (= վասն տալոյ մարդկան Խոշ-Լեւն Տեղոյ, յառաջա-  
գոյն գործելոց)։ «Ջօրոյն, որ ցայգ ուռնու ի խոնաւութենէ  
ջուրց՝ հասեալ ջերմութեան ճառագայթից արեգականն՝ շքե-  
ցուցանէ ի բաց զԿոմիտ-Լեւն»։ (Չրջուն ձև, փոխանակ ասելու՝  
հասեալ ջերմութեան ճառագայթից արեգականն՝ շքեցուցանէ  
ի բաց զԿոմիտ-Լեւն օրոյն, որ ցայգ ուռնու ի խոնաւութենէ  
ջուրց)։ «Ջի ծանիցես շէտիցն, որոց աշակերտեցար շշմարտու-  
թիւն»։ (= Ջճշմարտութիւն բանիցն)։

### ԲՈՅՈՅՈՅՏԻՉ ԵՒ ԲՈՅՈՅՈՅՏԵԱԼ:

§ 145. Բացայայտիչ կոչում է այն բառը, որ գործա-  
ծուելով ուրիշ, ընդհանուր նշանակութիւն ունեցող բառի հետ՝

բացայայտում կամ որոշում է նորա մի մասնաւոր կամ յատուկ տեսակը: Իսկ բացայայտեալ կոչուում է այն ընդհանուր նշանակութիւն ունեցող բառը, որ որոշուում է բացայայտիչով: Բացայայտիչը պատասխանում է ո՞ր հարցմունքին: «Լեառն Մասիս» խօսքում լեառն ընդհանուր նշանակութիւն ունի, այսինքն այդ բառով հասկացուում է առ հասարակ որեւէ լեռ. իսկ Մասիս բառը բացայայտում է լեռը, որոշելով նրան ուրիշ բազմաթիւ լեռներից. ո՞ր լեռը—Մասիս լեռը. ուստի Մասիս կոչուում է բացայայտիչ լեառն բացայայտեալին: «Գետն Երասխ» խօսքում Երասխ բացայայտիչ է. գետն՝ բացայայտեալ: «Մովսէս Խորենացի» խօսքում Խորենացի բառը որոշում է Մովսէսին ուրիշ շատ Մովսէսներից, թէ դա Մովսէս մարգարէն, Մովսէս կաթողիկոսն և այլն չէ, այլ Մովսէս Խորենացին է, ուստի և լինում է բացայայտիչ Մովսէսի:

ԾԱՆ. Ինչպէս օրինակներից երևում է՝ ոչ միայն յատուկ անունը լինում է բացայայտիչ հասարակ անուան (Գետն Երասխ), այլ և հասարակ անունը յատուկ անուան (Մովսէս Խորենացին). Միևեւոյն բառը մի խօսքում կարող է բացայայտիչ լինել, իսկ ուրիշ խօսքում բացայայտեալ. ինչպէս եթէ ասենք ս. Գրիգոր Լուսաւորիչ՝ այստեղ վերջին բառը մի քանի ս. Գրիգորներից որոշում է Հայոց լուսաւորիչ ս. Գրիգորին (ո՞ր ս. Գրիգորը—Լուսաւորիչը), ուստի լինում է բացայայտիչ ս. Գրիգորի. իսկ եթէ ասենք՝ լուսաւորիչն Հայոց ս. առաքեալն Թադէոս՝ այստեղ լուսաւորիչն արդէն բացայայտիչ չէ, որովհետև Թադէոս առաքեալը մէկ հատ լինելով՝ պէտք չունի բացայայտուելու, այլ բացայայտիչ է, որովհետև հարկ է մնում որոշելու, թէ Հայոց ո՞ր լուսաւորիչի մասին է խօսքը: Այստեղ բացայայտիչն է՝ ս. առաքեալն Թադէոս, և կանոնին համաձայն պատասխանում է ո՞ր հարցմունքին.—ո՞ր լուսաւորիչն Հայոց—ս. առաքեալն Թադէոս:

Կարող է պատահել նաև, որ երկու բառ փոխադարձաբար մէկը միևսին բացայայտիչ լինին, երբ նոցանից իւրաքանչիւրն էլ ունին իրանց համանուն ուրիշ անձեր կամ առարկաներ, այնպէս որ երկուքը միասին միայն կարող են որոշել մի յայտնի անձ կամ առարկայ. Օր. Մովսէս անունը շատերն են կրում, նոյնպէս մարգարէ բառը մի քանիսին է պատկանում, ուստի «Մովսէս մարգարէ» խօսքում մի բառը առանց միևսին որոշ գաղափար չէ տալիս մի յատուկ անձի մասին, այլ

մէկը փոխադարձաբար բացայայտում է միւսին — իր Մովսէսը — մարգարէն, իր մարգարէն — Մովսէսը:

§ 146. Բացայայտիչը յաճախ կարելի է նկատել իբրև ծածուկ նախադասութիւն, որի մէջ կամ ենթական ու ասացուածը ղեղձուած են, կամ նախադասութեան մի ուրիշ անդամը: Այսպէս՝ «Ել է լեռն Գորբէ» նախադասութեան մէջ՝ Գորբը բացայայտիչը կարելի է նկատել իբրև ծածուկ նախադասութիւն, փոխանակ ասելով՝ որ ի՞նչ Գորբը: «Կենդանիք ի մարմնաւորաց երբևէ և եթէ կան — Ենով և Եղի» ( = որ են Ենովք և Եղիա): «Զբուսն ասն անուն էր» (փոխանակ՝ էր ոմն Զբուսն անուն = էր ոմն, որում Զբուսն անուն էր): Ուտի շատ անգամ բացայայտիչն անմիջապէս դրուած չէ լինում բացայայտեալին հետ իբրև մի լոկ բառ, այլ առանձին նախադասութիւն է կազմում՝ այս ինքն է, այս է, որ է, ասեմ, իմա բառերով: Օր. «Զդոյշ լերուք է խմորոյ փարիսեցւոցն, որ է կէշտորուիւն»:

§ 147: Բացայայտիչը բացայայտեալից թէ՛ առաջ և թէ՛ յետոյ կարող է դրուել: Բայց աւելի սովորական և բնական է յետադաս զործածութիւնը, մանաւանդ երբ բացայայտիչն յատուկ անուն չէ, այլ ծածուկ նախադասութիւն է (§ 146): Օր. «Յորդոյն իւրմէ Արհմէսոյ կասկած ինչ էր նմա»: «Զբարսմունսն ցորդին իւր յՈրմիտք ետ»: «Յանուն օտարին և որդւոյն նորա Յեռոայ ասպաւինեցին»: «Առաքեաց շէտոս զորդի իւր»: «Վասն Դուրի սիրելոյ քոյ մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ»: «Զերկուս պատանիս իւր, զհրեշտակս խորհրդեղեաց առ զեղեցիկ ասպնջականն ու Ղուր արձակէր»:

§ 148. Բացայայտիչը, թէ՛ նախադաս լինի և թէ՛ յետադաս՝ թուով և հոլովով համաձայնում է բացայայտեալին հետ: Եթէ բացայայտեալը նախդիր ունի՝ նախդիրը նախընթացին վերայ անշուշտ դրուում է, իսկ հետևորդին վերայ կրկնում է սովորաբար: Օր. «Այրակերպեալ զչորակարն զՄիհայել՝ զորակերպի իւրում Յեռոայ ի դաշտին ցուցանէր... և ձեռն ի ձեռն ընդ բարեկամսն իւրում ընդ Մովսէսի խօսէր»: «Զբուսն եթէ արջառ էր՝

շէրիճն զԱրհմն զլանրդ ծնանէր, և եթէ գալլ էր՝ շփոսնն շնորհէր  
 Հին ծնանէր»։ «Առաքեաց շնեսն շրտի իւր»։ «Յորտոյն իւրմէ  
 Արհմնայ կասկած ինչ էր նմա»։ «ԶԵրչոսն գոտոննն իւր, շէրէշ-  
 րոսն յարդոնէրդեւու առ Ղովտ արձակէր»։ «Զիք ինչ արարած  
 բանաւոր արտաքոյ քան զայս երիս ջուս, շհրեշտակաց, զղի-  
 ւաց և զմարդկան»։ (Փոխանակ՝ շշոն հրեշտակաց, զշոն զիւաց  
 և զշոն մարդկան։ Բացայայտիչը, որ միևնոյն ժամանակ յատ-  
 կացեալ է հրեշտակաց, դիւաց, մարդկան՝ դրուած է զօրու-  
 թեամբ, իսկ նորա նախդիրը կրկնուած է յատկացուցիչներին  
 վերայ, համաձայն § 143)։

ԾԱՆ. 1. Անհամաձայն կարող է մնալ նախադաս բացայայտիչը,  
 եթէ տեղի յատուկ անուն է. և այս դէպքում նախդիրը համաձայն  
 կանոնի՝ դրոււմ է նախադաս բացայայտիչին վերայ, սակայն առանց  
 կրկնուելու յետադաս բացայայտեալին վերայ. Օր. «Աստուած ի հարա-  
 ւոյ եկեցէ և սուրբն նորա ի Փոսն լեռնէ»։ «Եկեալ նստեալ զԵւէ  
 բլրով, զԱրհմէր քաղաքաւ գիւտի գետով» (Գողթան երգ)։

ԾԱՆ. 2. Անհամաձայն մնում են և այն բացայայտիչները, ո-  
 րոնք անմիջապէս չեն միացած բացայայտեալի հետ, այլ կազմում են  
 առանձին նախադասութիւններ՝ որ է, ասեմ, իմա բառերով (տես §  
 146)։ Այս դէպքերում բացայայտեալն ինչ հօրովով էլ լինի՝ բացա-  
 յայտիչը դրոււմ է—որ է-ի հետ ուղղական հօրովով (իբրև ուղղական  
 բնութեան խնդիր), ասեմ-ի հետ՝ գ-ով բացառականով (իբրև բնու-  
 թեան խնդիր), իմա-ի հետ՝ հացական հօրովով (իբրև սեռի խնդիր)։  
 Օր. «Զգոյշ լերուք է իմոս փարիսեցւոցն, որ է շէշոսնն լեռնայն»։ Նոյն-  
 պէս և զօձ ցամաքային անճոռնի և զգոյսն ծովայն լեռնայն, զիւրոսն ո-  
 սեմ և զշէրիճն, վիշապս անուանեն»։

Բաց ասեմ-ի հետ պատահում է և համաձայնած բացայայտիչ.

### ՈՐՈՂԻՉ ԵՒ ՈՐՈՂԵՍԸ :

§ 149. Որոշիչ կոչոււմ են այն բառերը, որոնք առարկայ  
 նշանակող բառի հետ դրուելով ցոյց են տալիս այդ առարկայի  
 որպիսութիւնը և քանակութիւնը. իսկ առարկան, որ որոշոււմ  
 է՝ կոչոււմ է որոշեալ։ Որոշիչ լինում են մեծ մասամբ ածա-

կան անունները, նոյնպէս և թուական անուններն և անորոշ, ստացական և ցուցական-ածական դերանուններն և ածականաբար գործածուած գոյականները: Որոշիչը պատասխանում է «բոլորի, որ և ասի» հարցմունքներին: «Ծառ բարի», «Գազան ծովածին» խօսքերում բարի և ծովածին որոշիչ են ծառ և գազան բառերին, որովհետև ցոյց են տալիս սոցա որպիսութիւնը— որպիսի ծառ—բարի, որպիսի գազան—ծովածին: «Այր հո», «Թուփ ինչ» խօսքերում ոմն և ինչ որոշիչներ են, որովհետև ցոյց են տալիս այր և թուփ բառերի որը լինելը—որ այր—այր ոմն, որ թուփ—թուփ ինչ: «Չորեքին հիւթք», «Ժողովուրդ բարո», «Կէս բնութիւն» խօսքերում չորեքին, բազում, կէս՝ որոշիչներ են, որովհետև ցոյց են տալիս հիւթ, ժողովուրդ, բնութիւն բառերի քանակութիւնը.—քանի հիւթք, բնութիւնք, որչափ ժողովուրդք: Նոյնպէս և՛ նոյն բան, արարածք ասեսոյն, Ժողովուրդ այր, ջէր ժամանակ և այլն:

Որովհետև առարկան կարող է այլ և այլ որպիսութիւններ ունենալ՝ ուստի նոցա յայտարարող մի քանի որոշիչ կարող է ունենալ միևնոյն բառը. այսպէս՝ ծառ բարի և պարզեք. գազան ինչ ծովածին, չեւոյնք»։ Այ, սուրբ, հաւաքիչ և աստիճանային եկեղեցի:

§ 150. Որոշիչը զբաբարում կարող է դրուել որոշեալից թէ՛ առաջ և թէ՛ յետոյ: Օր. Յետադաս.—«Եւ զօձ յաշխարհում կամ զգազան ինչ ծովածին՝ կոչեն Գիրք վիշապ, որպէս զմարդ յաշխարհում՝ հսկայ անուանեն. նոյնպէս և զօձ յամբարայն ունենան» և զգազանն ծովածին չեւոյնք վիշապս անուանեն»: Նախադաս.—«Ջորացուցանէ զանգորս Բեժողոջ զօրութեամբ և ինքն ոչ թերանայ ի զորոյնք զօրութենէն, և պարզեւէ գիտութիւն ասեսոյն անգիտաց և ինքն բաւանդակ ունի ինքեան զամենագէտ գիտութիւնն, և բոլիւ յամենեօն զանպիտան իմաստութիւնն և ինքն մնայ անխախտ յամենայն իմաստութեանն»: Խառն.—«Նոյնք Զսկքս յայտիկն նովին իսկ անուամբ անուանին»: Արարեցիւ լուսաւորո Բեժամեծ»: «Աստուած կանխագէտ և հարստեք



զթացեալ յիւր արարածն՝ աստուծոյ մահուամբ գերծուցանէ ըզմարդն յայտիտ չարեացն»:

§ 151. Որոշիչը որոշեալից թէ առաջ դրուած լինի, թէ յետոյ՝ նորա հետ համաձայնում է թուով և հոլովով: Օր. «Մարմինք անհաս և անբաժին էին զառաջինն»: «Արարածք զսահմանօքն էրէջս<sup>1)</sup> նոցա ոչ անցանեն»: «Այլոց զքարք ի գահերու կալեալ թովջութեամբք լընտելութիւն մարդկան ածեն, ջրեցուցեալ զթոյնսն «սոսոց»: «Արդել զնա ի ճաշակելոյ ի տնկս ինքն ի հահաբերէ»: «Արարոյն մեռելոց ողիք փոխիցին ի մարմինս մարդկան կամ յանասնոց սրբոյ, և այն նոցա իբրև ընդհատուցման բարեաց գործոց լինիցի»: «Գործի աստուածս եհան չիւրմէ, և Գործի աստուածքն ունի պիտոյ իցեն»: «Յեանոյ հաշտութեանն է»: «Մեծի ծաղու արժանի է»: «Զպաշտօն ճշմարտին՝ անշնչոյ և անհանչոյ արարածոցն մատուցանեն»: «Մարմին նոցա ի շնչոյ հիւթոցն կայ»:

ԾԱՆ. Բաց եթէ որոշիչը դրուած է յոգնակի ուղիղ հոլովներով որոշեալից նախադաս՝ ընդհանրապէս մնում է անհամաձայն, այսինքն չէ առնում յոգնականացուցիչ ք և ս գրերը: Օր. «Ընդէր ոչ բարձր աշխարհք իցեն և ոչ բարձր երկինք և ոչ բարձր արեգակունք և ոչ բարձր երկիրք»: «Արդարոցն մեռելոց ողիք յայ ի սոսոց մարմինս փոխիցին»: «Կամի զի իւր բարձր արարածքն ցանկացողք բարեաց լինիցին»: Ոչ իշխեն յայտիտ իրս մտաբերել»:

§ 152. Ածականներից շատերը զրաբարում ամենևին չեն հոլովում, շատերն էլ թէպէտ ընդունակ են հոլովուելու՝ բայց անսովոր և ծանրալուր են լսողութեան համար նոցա թեք հոլովները: Արեմն այսպիսի ածականները որոշիչ լինելիս ընդհանուր կանոնի հակառակ՝ պէտք է մնան անհամաձայն, այսինքն պէտք է դրուին եզակի ուղղական հոլովով՝ եզակի կամ յոգնակի թեք հոլովով որոշեալի հետ: Այս դէպքում որոշիչը գրւում է որոշեալից նախադաս, որովհետև յետադաս որոշիչը

<sup>1)</sup> Փոխանակ՝ եզելովք: Ձեռագիրներում յաճախ շփոթւում են ա և ո հոլովիչ ունեցող բառերի յոգնակի գործիականները հնչման նրմանութեան պատճառով:

կանոնաւոր լեզուի մէջ անպայման պէտք է համաձայնի որոշեալին հետ: Օր. «Աշխարհի բարբառով ասէր ցյանցուցեալն»: «Աշխարհի խեղութեամբք խեղէին և անհասկին մահուամբք սպանանէին»: «Քամբասին յաստատութեան բարբառուն»: «Պէտքէ զինուք վառեցաւ թշնամին ճշմարտութեան»: «Յաստատութեանէ դիպեցաւ նմա»: «Ինքն մնայ անխախուտ յամենայն ժամաստութեանն»: «Իբրև խօսան բերանով անշշունչն բողոքէ»:

ԾԱՆ. Այժմեան հայերէնում որոշիչն առանց բացառութեան որոշեալից առաջ է դրւում, և ածականն իբրև որոշիչ գործածուելիս երբէք չէ հղովւում, այլ անփոփոխ մնում է եզակի ուղղական հղովով: Ուրեմն այժմեան հայերէնում ընդհանրացել է նախադաս անհամաձայն որոշիչի գործածութիւնը <sup>1)</sup>: Նախադաս որոշիչի ընդհանրանալը, որ ուրիշ շատ լեզուների մէջ ևս նկատոււմ է՝ բացի ընդհանուր լեզուագիտական պատճառներից՝ հայերէնի մէջ մասամբ հետեւանք է և ածականների անշարժ (անհղով) և դժուարութեք լինելուն: Սակայն գրաբար լեզուն, որի մէջ որոշիչի դասաւորութիւնը դեռ տատանոււմ է, և թէ նախադասն ու թէ յետադասը գործածական են՝ աւելի ընտիր է յետադաս որոշիչի գործածութիւնը՝ եթէ ածականը դիւրութեք է և կարճ:

§ 153. Եթէ որոշեալը նախդիր ունենայ՝ նախդիրը սովորական ընտիր լեզուի մէջ դրւում է նախընթացին վերայ, որոշեալը լինի թէ որոշիչը: Օր. «Նշանացն նշխարք՝ և այժմ է սուրբ Եղիշողոս և է շշարիս վարդապետս երևին»: «Եթէ զճշմարիտս Աստուած ոք պաշտեսցէ՝ գործ ազնուական գործէ»: «Աստուած ընտրեաց զբարին է Տէր և զչարս Տրտուտան՝ է Տէր և իողմն»: «Եղև Ադամ է շունչ կենդանի»: «Չկարաց յոչնէ ինչ առնել՝ այլ է նիւթոյ ընկերայեցէ»: «Զօջ յաղթանդամ կամ զգողան ինչ ծովածին՝ կոչեն Գիրք վիշապ»:

§ 154. Բայց նախդիրը կարող է կրկնուել թէ որոշիչի և թէ որոշեալի վերայ ևս, մանաւանդ երբ երկուսի մէջ օտար բառ ընկած է, կամ երբ որոշիչը նախադաս է գործածուած: Օր. «Յառաջ քան զհինգամեայ զժամանակն վճարէր»: «Եցոյց

1) Համեմատել յատկացուցի հետ, § 140 և ծան.

շիւր շքարհրարութիւնն և զօրութիւնն: «Որմիզդ շսակաւիկ ինչ  
շհայթայթանացն հնարս չմարթէր իմանալ»: «Յերէին շգիրս  
կախարդանացն շճանրագինս և այրէին»:

§ 155. Նոյնպէս եթէ որոշեալը մի քանի նախագաս ու-  
րոշիչ ունի՝ նախդիրը սովորաբար կրկնուում է բոլոր որոշիչներին  
վերայ, իսկ որոշեալի վերայ կամ դրուում է կամ ոչ: Օր. «Մար-  
մինն նոցա ի չորից հիւթոցն կայ, և ոզին է պարզահոն և է ու-  
շահոն բնութենէ, և այլոց անասնոց ոչ նոյնպիսի, այլ է բնո-  
հոն և յարեւելահոն բնութենէ, և սերմանց՝ է բնահոն և յանշնչա-  
հոն խաղացից»: «Այլքն ամենեքեան շխորտանչեար շանջնիար շո-  
նարգանայ վրէժս պահանջեն»:

ԾԱՆ. Նախդրի գործածութիւնն ինչպէս որոշիչի և որոշեալի,  
այնպէս և յատկացուցչի ու բացաչացտչի մէջ՝ ընդհանրապէս չափա-  
զանց ազատ է գրաբարում, այնպէս որ ընտիր մատենագիրների ու-  
սումնասիրութիւնից չէ կարելի որոշ օրէնքներ հանել նորա գործա-  
ծութեան եղանակների մասին: Թէպէտ ներգաշնակութեան օրէնքը,  
իմաստի շեշտը, բառի դիրքն ու դասաւորութիւնը ունին ազդեցու-  
թիւն նախդրի գործածութեան վերայ՝ բաց ինչպէս երևում է՝ այս-  
տեղ աւելի զերակշիռ նշանակութիւն ունի մատենագրի անհատական  
ճաշակը, նորա աւելի կամ նուազ զարդարուն ոճը:—Իբրև օրինակ  
բազմատեսակ, կանոնաւոր և անկանոն գործածութեան՝ մէջ բերենք  
հետեւեալ մաղթանքը՝ «Յարեխօս ունիմք սուրբ Մարիամ շաստուա-  
ճածինն, յիսուաւորեալ և շամենօրհնեալ միշտ սուրբ կոչան, սուրբ  
Պովհաննէս մկրտիչն, սուրբ Մտեփանոս նախավկայն, սուրբ շառա-  
քեայսն և շմարգարէսն, շարի և շյաղթող սուրբ շվկայսն և շմեծ խոս-  
տովանողն Քրիստոսի շպատուական հայրապետն մեր շուրբ Գրիգոր  
լուսաւորիչն շայաստանեաց աշխարհի»:

§ 156. Անորոշ զերանունների նշանակութեան և գոր-  
ծածութեան մասին գիտնալու է հետեւեալ կանոնները:

Ոմն, ոք գործ են ածուում շնչաւոր առարկայի փոխանակ  
և հետ. իմն, իք, ինչ՝ անշուունչի, իսկ իւրաքանչիւր, անճնիւր  
կամ անցնիւր և երկաքանչիւր՝ թէ շնչաւորի և թէ անշուունչի  
փոխանակ:

Ոմն, իմն նշանակում են մասնաւոր առարկայ, (որ գոյու-

Թիւն ունի, բայց որը լինելը որոշ չէ—ով-որ, ինչ-որ). ոք, իք, ինչ նշանակում են ընդհանուր, անորոշ առարկայ, (որի գոյութիւն ունենալը կամ չունենալը որոշուած չէ, այլ ենթադրական է.—որևէ մէկը, որևէ բան). իւրաքանչիւր, անձնիւր, երկաքանչիւր նշանակում են բոլոր առարկաները միասին (ամեն մէկը, երկուքն էլ): Ինչ յաճախ գործ է ածուում իմն բառի փոխանակ, և իւր թեք հոլովները լրացնում է իմն բառի թեք հոլովներին:

Բոլորն էլ գործածուում են թէ՛ գոյական անուան փոխանակ, և թէ՛ իբրև ածական՝ որոշիչ են լինում գոյականի: Միայն անձնիւրը ընդհանրապէս գործ է ածուում իբրև ածական:

Օրինակներ: Գայ ոմն (ով-որ գալիս է). Գայ այր ոմն (ով-որ մարդ, մէկը գալիս է). Եթէ ասիցէ ոք (եթէ որևէ մէկն ասելու լինի). Խնդրեսջիւր զայր ոք հրեայ (փնտուի որևէ հրեայ մարդ). Իմն ասեն (ինչ-որ ասում են, ինչ-որ բան են ասում). Հողամաղք իմն երևին (ինչ-որ հողամաղներ, հողի փոշիներ են երևում). Է ինչ (կայ մի բան, ինչ-որ բան կայ). Արարած ինչ (ինչ-որ արարած, որևէ արարած): «Ստուեր իրիք ոչ հեռանայ յիմեքէն». (որևէ բանի ստուերն այն բանից չէ հեռանում): «Ի մարմնաւորէ աներևոյթ ինչ ոչ ելանէ, որպէս ոչ յաներևութէ իմեքէ՛ մարմնաւոր». (մարմնաւորից որևէ աներևոյթ բան չէ ելնում, ոչ էլ որևէ աներևոյթից մարմնաւոր): «Գնացին իւրաքանչիւր ի տունս իւրեանց. (ամեն մէկն, իւրաքանչիւրն իրանց տունը գնացին): Այր իւրաքանչիւր: Մեռան երկաքանչիւր (երկուքն էլ մեռան): Եղբարք երկաքանչիւր (երկու եղբայրն էլ): «Այլք ամենեքեան զիւրաքանչիւր զանցնիւր զանարգանաց վրէժս պահանջեն». (ուրիշ ամենքն էլ իւրաքանչիւրը իւր անարգանքի վրէժս է պահանջում):

ՄԱՆ. Այս դերանունները, բացի ոմն և իմն բառերից, յաճախ բաղադրեալ ձևեր են կազմում, միմեանց և ուրիշ բառերի. հետ գործածուելով, ինչպէս են՝ որ ոք, ո ոք, որ ինչ, այլ ոք, այլ ինչ, ոչ ինչ (ոչ իրիք, ոչ իմիք), իւրաքանչիւր ոք, անձնիւր ոք, մէն մի իւրաքանչիւր: Այսպէս նաև՝ ոք ուրեք, ոք ուստեք, ոմն ուրեմն:

§ 157. Ոմն, ոք, իմն, իք, ինչ՝ երբ գործածուած են լինում իբրև որոշիչ՝ ընդհանուր կանոնով համաձայնում են իրանց որոշեալին հետ: Սովորաբար նոքա դրոււմ են յետադաս այն բառին, որի նշանակութիւնը մասնաւորում են: Օր. «Առն ուրուսն էին երկու որդիք»: «Արարածոց պաշտօն մատուցանելոյ վարդապետ այլ ոչ էէր, բայց միայն սատանայ»: «Զլուսաւորսն շարժել նորա բանին գործ է, և ոչ այլոյ ուրուս»: «Ընդէր ալուստագէտ նիւթոյ իիւ գնա համարիցին»: «Եթէ բնութեամբ չար էն էր օձ, կամ չարի իբիւ արարած»:

Բայց երբ այս բառերի հետ ուրիշ որոշիչ էլ կայ՝ այն ժամանակ սոքա դրոււմ են որոշեալի և միւս որոշիչի մէջ, և մեծ մասամբ այս որոշիչները դրոււմ են որոշեալից նախադաս: Օր. «Եթէ գաղանք վասն վնասակարութեանն ի չարէ ուսեիւ արարչէ կարծիցին»: «Զուսնայն էն զվնաս յառաջագոյն գիտէ ըստուած»: «Գազանքն ի բարւոյ արարչէ լեալ են, վասն յոյ իբիւ օգտակարին գտանելոյ ի նոսա»: «Առն ուրուսն Ռեծարուն ետուն անդք տոհմականս»:

ԾԱՆ. Բայց ընտիր մատենագիրների մօտ անսովոր չէ նաև՝ իմն և ինչ անհամաձայն թողնել և որոշեալից նախադաս գործածել: Օր. «Ինքն կերպարանի կամ ի վիշապի կերպարանս կամ ի նահապէ ին»: «Զիք էն չար ուրուսն բնութեամբ»: «Ինիւն էն ընթերակացէ արար զամենայն»:

§ 158. Իմն և ինչ շատ յաճախ մնում են անհամաձայն, որ պատահում է մանաւանդ այն դէպքերում, երբ նոքա մասնաւորում են ասացուածի իմաստը և անորոշ մակբայի նշանակութիւն են ստանում: Այս տեսակ գործածութիւն ունի մանաւանդ ինչ-ը՝ ենթադրական, հարցական և բացասական խօսքերում, որ նրբութիւն և միանգամայն գեղեցկութիւն է տալիս խօսքին և շատ անգամ անթարգմանելի է աշխարհաբարում: Օր. «Այսու ին մեծարոյ երեւին առաջնորդք քէշին» (Սորանով էն-որ կերպով, կործէս ըէ նոցա կրօնի առաջնորդները պատուական են երևում): «Զաճելն և զնուաղելն լուսնի իբրև ընդ պատենիւք էն մտանել և ելանել ասեն իմաստունք»: (Ղուսնի աճելու և նուաղելու մասին իմաստուն մարդիկ ասում են,

Թէ նա հարծէ՞ թէ, Տէ արեւի պատեանի տակ է մտնում, դուրս է գալիս): «Փազանքն եթէ ի չարէ Խն էին չարք արարեալք՝ ոչ ինչ ի նոցանէ օգտակար գտանէր»: (Փազաններն՝ եթէ որեւէ հերոյժ չարից ստեղծուած լինէին): «Եւ ոչ բնութեամբ առնկն մահաբեր էր, և վասն այնորիկ Խն արգելաւ մարդն ի ճաշակելոյ ի նմանէ»: (Ոչ էլ ծառը բնութեամբ մահացու էր, որի պատճառով, Գոյն, ասեոյ թէ, մարդուն արգելուեցաւ նորանից ուտել): «Եթէ լինին Խն ի նշանս կամ ջերմոց կամ ցրտոց աստեղք՝ ոչ եթէ իբրև զկենդանիս Խն լինիցին, այլ իբրև Աստուծոյ կարգեալ յայն, զի մի դատարկք Խն յարարածոցն Աստուծոյ իցեն»: (Եթէ աստղերը որեւէ հերոյժ, այսպէս համայնէն ցրտի կամ տաքութեան նշան են լինում՝ ոչ թէ, այսպէս ասած, կենդանիների նման կդառնան. բայց այնպէս՝ իբր թէ Աստուծ է նոցա այդ բանի վերայ նշանակել, որպէս զի նոքա Աստուծոյ արարածներին մէջ որեւէ հերոյժ անգործ չլինին):— «Լուեալ կայր և ոչ Խն մեղանչէր նմա»: (Որեւէ հերոյժ, ասեոյն նորան չէր վնասում): «Առ քեզ Խն ոչ մերձեսցին»: (Ոչ Տէ հերոյժ, ասեոյն քեզ չեն մօտենայ): «Մի Խն վերտեսցին՝ որք արարածոցն երկիր պագանեն»: (Արարածներին երկրպագողներն ասեոյն թող չպարծենան):— «Պարզ Խն բնութիւն իցէ հիւզն, եթէ յօղուածով»: (Հիւզն պարզ մարմին է արեւոյ, թէ բաղադրեալ): «Զինչ արժան է ի շաբաթու, բարի Խն գործել, եթէ չար առնել»: (Արեւոյ բարիք գործել, թէ չարիք): «Առ տկարութեան Խն, թէ առ չարակամութեան»: (Անգորութեան պատճառով արեւոյ, թէ չարակամութեան):

Ինչպէս երևում է օրինակներից՝ ինչ-ը ենթադրական խօսքերում մօտաւորապէս նշանակում է՝ որեւէ հերոյժ, այսպէս համայնէն, իբր թէ. բացասական խօսքերում նշանակում է՝ ոչ Տէ հերոյժ, ասեոյն, բոլորովին. իսկ հարցական խօսքերում կասկածելի է դարձնում հարցմունքը, մօտաւորապէս նշանակելով՝ արեւոյ:

§ 159. Իւրաքանչիւր և անձնիւր՝ ընտիր մատենագիրն-

րի մօտ չեն հղովում, այլ թէ գոյականաբար և թէ ածականաբար գործածուելիս՝ մնում են եղակի ուղղական հղովով, որ թէ յողնակիի և թէ թեք հղովների տեղ է ծառայում: Իսկ երբ նոցա որոշեալը նախդիր ունենայ՝ նախդիրը սովորական կանոնով դրւում է նոցա վերայ, եթէ նախադաս են գործածուած: Օր. «Տալ իւրօրինչիւր ըստ գործոյ իւր» (փոխանակ տալ իւրօրինչիւրո՞ւմ): «Նստաւ իւրաքանչիւր ի վերայ նոցա» (փոխանակ՝ ի վերայ իւրաքանչիւրոյ նոցա): «Ընդ իւրօրինչիւր Բանի Համարս տալոց էք»:

ԾԱՆ. Երկաքանչիւր բառը, որ իւրաքանչիւրի նման գործածութիւն ունի՝ ընտիր մատենագիրների մէջ յաճախուած չէ. նորա փոխանակ գործածուում է՝ երկոքեան:

§ 160. Իւրաքանչիւր իբրև որոշիչ գործածուելիս մի առանձին յատկութիւն ունի. չնայելով որ նա նշանակութեամբ պէտք է գործածուէր իբրև ենթակայ կամ խնդիր՝ սակայն լինում է որոշիչ մի ուրիշ խնդրի, որի մօտ հարկաւոր էր իւր բառը գործածել. և այս խնդիրը դրւում է յողնակի թուով: Օր. այս խօսքը— Աստուած իւրօրինչիւր Դէլին Հատուցանում է իւր գործերին՝ Համաձայն, որ զբարբար պէտք է ասուէր՝ Աստուած Հատուցանէ իւրաքանչիւր ումեք ըստ գործոց իւրոց՝—կանոնաւոր լեզուով ասուում է. Աստուած Հատուցանէ ըստ իւրաքանչիւր գործոց: Այսպիսի ասացուածներն աշխարհաբար թարգմանելիս՝ իւրօրինչիւր բառը պէտք է վերցնել առանձին, իբրև ենթակայ կամ խնդիր, նայելով իմաստին, իսկ ո՞ր բառին որ նա եղել է որոշիչ՝ այնտեղ աւելցնել իւր բառը. —Իւրաքանչիւրը իւր, իւրաքանչիւրից իւր <sup>1)</sup> և այլն: Օր. «Նորին իսկ իւրօրինչիւր»

<sup>1)</sup> Այս երևութիւնը հասկանալու համար պէտք է գիտնալ, որ իւրաքանչիւր, ինչպէս և երկաքանչիւր, անձն-իւր բաղադրուած բառեր են, որոց առաջին մասերը նախնական լեզուում նոյնն են նշանակելիս եղել՝ ինչ որ այժմ նոցա ամբողջ ձևերն. \* իւրաքանչիւրաքանչիւր, \* երկաքանչիւրաքանչիւր ևլ, անձն—մարդ-գլուխ, ևւ ինչպէս այժմեան լեզուում իւրաքանչիւր բառից յետոյ պէտք աւելցնել իւր բառը՝ նոյնպէս և հին լեզուում իւրաքանչիւր բառից յետոյ աւելացնում էին

չիւր փոփոխութիւնք յայտ առնեն, թէ է ոմն, որ փոփոխէ գնոսա»:  
 (Իւրաքանչիւրը իւր փոփոխումով ցոյց են տալիս): «Զամենե-  
 ցուն զինամս ըստ իւրապանչիւր պիտոյն ըստ իւրաքանչիւ-  
 րին իւր պիտոյքի չափով): Ելին յիւրապանչիւր քաղաքի»:  
 (Իւրաքանչիւրը իւր քաղաքից): «Լսէին յիւրապանչիւր լեզուս խօսել  
 նոցա»:  
 (Իւրաքանչիւրը լսում էր, որ նոքա իւր լեզուով էին  
 խօսում):

ԾԱՆ. Աշխարհաբարում աւելցուած իւր բառի փոխանակ՝ գրա-  
 բարում երբեմն, իւրաքանչիւր-ից չետոյ, գործ է ածուած անձնիւր բա-  
 ուր, և այս է անձնիւր բառի գործածութեան յատուկ տեղը: Սր. «Այլքն  
 ամենեքեան զիւրաքանչիւր զանարգանաց վրէժս պահանջեն»  
 (Իւրաքանչիւրն իւր անարգանքի վրէժս են պահանջում: Անցնիւր բա-  
 ուր կարող էր բոլորովին չլինել, որովհետև իւրաքանչիւրը կատարելա-  
 պէս բաւական էր միևնույն իմաստն արտայայտելու): «Թուլացուցանէ  
 զի իւրաքանչիւր գործոց անարգանք հանդէսք երեւիցին»:  
 (Թուլ է տալիս, որ իւրաքանչիւրի գործից իւր քաջութիւնն երևի):

### ԴԻՄՈՐՈՂ ՅՕԴԵՐ:

4.

× § 161. Գոյական անունները և գոյականի փոխանակ  
 գործածուած ածականները խօսքի մէջ կարող են լինել ուրիշ  
 և անորոշ: Որոշեալ են կոչուած եթէ յայտնի է նոցա որ կամ  
 որինը լինելը, կամ երբ նոցա մասին առաջուց խօսուած է.  
 իսկ անորոշ են կոչուած երբ նոցա մասին դեռ յիշատակու-  
 թիւն չէ եղել, և երբ յայտնի չէ, թէ նոքա որն են կամ ո՞-

ւր—իւրաքանչ՝ իւր, անձն՝ իւր: Այս բառերի յաճախակի միմեանց  
 մօտ գործածուելու հետևանքն այն է եղել, որ դուքա միաւորուել են  
 —իւրաքանչ+իւր, անձն+իւր: Եւ որովհետև ժամանակի ընթացքում  
 այդ միաւորուած բառերի ստուգաբանութիւնն ու նշանակութիւնը  
 մոռացել է խօսող ժողովուրդն՝ հարկ է եղել մի նոր իւր էլ աւելցնել  
 այնտեղ, որտեղ նա արդէն կայ: Այսպէս երբեմն լեզու չգիտցողները  
 գրում են բացի ի նմանէ, դէպի ի քաղաքն, մոռանալով, որ բացի,  
 դէպի բառերում արդէն իսկ գտնուած է ի նախդիրը:



րինը: Օր. «Ահա ել սերմանացոս սերմանել. և ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհոս... Եւ այլն անկաւ յապտատի... Եւ այլն անկաւ ի մէջ փշոյ... Եւ այլն անկաւ յերկիւր քարի և տալր պտուղ»։ Այստեղ նօտրագրուած բառերն անորոշ են—մի սերմանացոս դուրս է գալիս սերմանելու.. մի քանի սերմ ընկնում են ճանապարհի վերայ, միւսներն՝ ապտատի, միւսները՝ փշերի մէջ. միւսներն ընկնում են լուսնի վերայ և պտուղ են տալիս (Մատթ. փԳ. 4—8)։ Իսկ երբ ֆրիստոս բացատրում է այս առակի միտքը՝ ասում է. «Լուարուք դուք զառակ սերմանացոսին... զայ շարն և յափշտակէ սերմանելն... այն է որ առ ճանապարհոս սերմանեցաւ:—Եւ որ յապտատիս սերմանեցաւ՝ այն է, որ իբրև լսէ ղբանն և վաղվաղակի խընդուածեամբ ընդունի զնա... Իսկ որ ի մէջ փշոյն սերմանեցաւ... Իսկ որ յերկիւր քարի սերմանեցաւ՝ այն է որ իբրև լսէ զբանն՝ և ի միտ առնու և տայ ղպտուղ» (Անդ. 18--23)։ Այստեղ էլ բոլոր նօտրագրուած բառերը որոշեալ են—սերմանացոսին առակը (որի մասին խօսել էր առաջ). զալիս է շարն (յայտնի է, թէ ինչ չար է կողոր). սերմանուածը, ճանապարհը, ապտատի, փշերը, լուսնը, պտուղ ծանօթ են արդէն. խօսքը յայտնի է թէ որինն է։ Այսպէս նաև՝ «նովալ ֆեռնէ էր, և ֆեռնէն էր լոյս մարդկան. էր լոյսն ճշմարիտ»։

§ 162. Բառին անորոշութիւն տալու համար՝ գրաբարում յատուկ նշաններ չկան. սովորաբար բառը զրուում է առանց որևէ յաւելուածի, ինչպէս վերը բերուած օրինակում՝ սերմանացոսն, ճանապարհաւ, յապտատի, պտուղ և այլն։ Իսկ երբ հարկաւոր է լինում յայտնի ցոյց տալ առարկայի անձանօթութիւնը կամ անորոշութիւնը՝ զրուում են նորա մօտ ոչ, ոհն (շնչաւորների մօտ), ինչ, իհն (անշունչների մօտ) և մի (շնչաւորների և անշունչների մօտ). Օր. Իմաստուն ոք, թագաւոր ոմն, այր մի, բնութիւն ինչ, հիւղ իմն։ Իսկ առարկան որոշելու համար՝ զբարբարում գործ են ածուում ո, ու, ն որոշիչ յօդերը, որոնք ցուցական դերանունների արմատներն են և նոցանից սղումով ա-

ուշ եկած: Այս գրքերը որովհետև որոշում են նաև առարկայի դէմքերը՝ ուստի կոչուում են նոյնպէս Գրքեր: Եւ այս:

× § 163. Գիմորոշ յօդերի սկզբնական նշանակութիւններն են՝ «—այս, Գ—այտ, ն—այն, և այս նշանակութեամբ ընդհանրացնէս գործ են ածուում ընտիր գրաբարում: Նուքա ոչ միայն որոշում են առարկան (այսինքն ցոյց են տալիս այդ առարկայի արդէն ծանօթ լինելը, որը լինելը և որին պատկանելը), այլ և ցոյց են տալիս այն մերձաւորութիւնը կամ հեռաւորութիւնը, որ կայ առարկայի և այդ առարկայի մասին խօսողի մէջ:

× Ս գործ է ածուում այն ժամանակ, երբ որոշուելիք առարկան աւելի մօտ է խօսողին (առաջին դէմքին), քան լսողին (երկրորդ դէմքին): Գ գործ է ածուում՝ երբ այդ առարկան աւելի մօտ է լսողին, քան խօսողին: Ն գործ է ածուում՝ երբ առարկան աւելի հեռուն է գտնուում, քան խօսողն ու լսողը միմեանցից: Օր. «Տուք մեզ իւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերք» մեր». (Տուէք մեզ ձեր (այտ) իւղից, որովհետև մեր (այս) լապտերներն ահա հանգում են. իւղը լսողների, իմաստուն կոյսերի մօտն էր, իսկ լապտերները խօսողների, չիմար կոյսերի): «Երկեան արքն երկիւղ մեծ... և ասեն ցնա (ցՅովնան). զի՛նչ արասցուք քեզ, զի դադարեսցէ ծով՝ ի մէնջ. զի ծովն առաւել ևս խռովեալ էր և յարուցանէր մրրիկ ի վերայ նոցա: Եւ ասէ ցնոսա Յունան. առէք ընկեցէք զիս ի ծովտ՝ և դադարեսցէ ի ձէնջ ծովտ»: Նաւավարներ (առաջին դէմք) հարցնում են Յովնանից (երկրորդ դէմք), թէ ի՛նչ անենք, որ (այս) ծովը (որի մօտ իրանք կանգնել են) մեզանից ձեռք քաշէ: Յովնան պատասխանում է—ձգեցէք ինձ (այտ) ծովը (ինքն աւելի հեռու էր գտնուում ծովից, քան նաւավարները, որոնք այստեղ երկրորդ դէմք—լսող են դառնում) և Գ՝ ձեզանից ձեռք կրքաշէ: Միջանկեալ խօսքը—զի ծովն առաւել ևս խռովեալ էր՝ պատկանում է Յովնանին, որ այս դէպքը պատմում է շատ ժամանակ յետոյ, երբ ծովն իրանից և հրէաներից, որոնց պատմում է՝ շատ հեռու էր գտնուում: ×

§ 164. Բացի այս զլիաւոր նշանակութիւնից՝ յօդերը երբեմն գործ են ածուում երկրորդական նշանակութեամբ՝ փոխանակ անձնական և ստացական դերանունների. և այս դէպքում բուն դերանունները կարող են նոյնպէս դրուել ներգործութեամբ (որ աւելի սովորական է) կամ չդրուել: Օր. «Ես լուացի գոտս ձեր, տէր» և վարդապետս». (= «տէրս, է-վարդապետս»). «Ես հովիւ մեղայ, դռքա ոչխարքդ զի արարին: «Զիմրդ ի դառնութիւն փոխեցար, որթդ խոպանացեալ»: «Ել եկաց առաջի հօրն». (= հօր է-րոյ): Ամենայն ծննդոց լետ ծննդեանն դնին անուանք, և նա զիմրդ յառաջ քան զծնանելն դնէր նմա անուն» (= լետ ծննդեան իւրեանց... յառաջ քան զծնանելն նորա): «Ասա բանիւ, և բժշկեսցի մանուկ» իմ». (ոչ թէ «յ» մանուկը, որ հիւանդ պառկած էր տանը, այլ ի՞ մանուկս: Եթէ յօդը ցուցական լինէր՝ պէտք կլինէր ասել՝ մանուկն իմ):

§ 165. Յօդը անշուշտ դրուում է գոյականին վերայ՝ երբ գոյականին հետևում է ցուցական-ածական դերանուն. և յօդը պէտք է համաձայնի դերանունան դէմքին. իսկ երբ ցուցական դերանունը գոյականից առաջ է դրուած՝ յօդը սովորաբար չէ դրուում: Օր. «Ողջոյն տան» այսմիկ»: «Ապրեցուցից զքեզ և զքաղաքդ զայդ և վերակացու եղէց քաղաքիդ այդմիկ»: «Պատուէրն այն կեանք են յաւիտեանականք»: «Յայն՝ զիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջեն»: «Յայն՝ աւուր գիտասջիք դուք»:

§ 166. Այն գոյականը, որից լետոյ գալիս է ստացական դերանուն կամ ցուցական դերանուն իբրև յատկացուցիչ՝ սովորաբար յօդ չէ առնում. իսկ երբ այս դերանունները նախադաս են գոյականից՝ յօդը դրուում է: Օր. «Հայր ի՞ մեծ է քան զիս»: «Ահա հայր քո և եղբարք քո կան արտաքոյ»: «Բնու-լինն նոյս ի վեր է քան զհողմ»: «Յամաքեցաւ խոտն և թօթափեցաւ ծառիկ նորս». (իսկ փոքր ինչ լետոյ՝ ցամաքեցաւ խոտն և թօթափեցաւ ծառիկն): «Որդի ի՞ ես դու»: «Պարտ-իրանս նորս՝ մազ գործեցին»: «Զի առաւելութիւն բարերարու-լեան նորս՝ յայտնի լի-

ցի մարդկան»։ «Մայր ուր» կոչի Մարիամ և հոր հոր» ամենեքին առ մեզ են»։ «Արեւն ուր» ի վերայ մեր»։ — «Իմ որդի՛ն լուսաւոր է»։ «Էր ոմն որ շոր» թերակատարութիւնն կարէր լնուլ»։ «Ի հոմ աւանդ գերան կայ»։ «Յուցանել շէր զբարերարութիւնն և զգօրութիւնն»։ Զլուսաւորսն շարժել ուր քանի գործ է»։

Բայց պատահում է երբեմն յօդ յետադաս ստացական կամ ցուցական-յատկացուցիչ գործածուելիս, մանաւանդ եթէ գոյականը յատուկ կերպով որոշուում է տեղի կամ ժամանակի վերաբերութեամբ։ Օր. «Տուք մեզ լիւղոյտ Յէրմէ, զի ահա շիջանին լապտերք» Եր»։ (իւղը ձեր մօտ է, լապտերները մեր մօտ)։ «Երկիւղդ հո անգգամութիւն է»։ (քո այդ երկիւղը, որ արտայայտում ես)։ «Եթէ զբանն իմ պահեցին՝ ապա և զձերն պապաձեսցին»։ (այն խօսքը, որ առաջ խօսել եմ)։ «Իբրև ինձորի ի փայտս անտառի՝ այնպէս եղբօրորդիդ ի՛մ ի մէջ ուստերաց»։ (իմ եղբօրորդիս, որ այդտեղ դէմս կանգնած է)։ Վերջի օրինակներէց երևում է, որ յօդը կարող է չհամաձայնել ստացական դերանունան դէմքին, այլ գործածուել իւր սեփական նշանակութեամբ (§ 163)։

§ 167. Երբ երկրորդական նախադասութիւնը կապուում է գլխաւորին հետ ուր յարաբերական դերանունով, կամ այնպիսի բառերով, որոց մէջ ներգործութեամբ կամ գօրութեամբ գըտնւում է որ դերանունը, ինչպէս են՝ որ ոք, որ ինչ, որպէս, որչափ, ուր, զի և այլն՝ ընտիր գրաբարում սովորութիւն է ընդհանրապէս այդ յարաբերականներին յաջորդող բառին վերայ յօդ դնել, ինչ մասն-բանի էլ որ սա լինի, քացի նախադրութիւններէց և շաղկապներէց։ Այս յօդն ընդհանրապէս համաձայնում է դէմքով գլխաւոր նախադասութեան մէջ եղած այն բառին հետ, որի փոխանակ դրուած են յարաբերականներն երկրորդական նախադասութեան մէջ (այսինքն համաձայնում է յարաբերակի դէմքին)։ Օր. «Չար իմն հո-նի-ն հակառակ բարուդ դնեն, շոր հի-ն կոչեն»։ Զոր բարին կարծիցեն՝ վնասակար

ինի» (փոխանակ՝ ոյն, զոր բարին կարծիցեն): «Ինքն է պատ-  
ճառ ամենայն՝ որ ի լինելն և ի գոյանալ եկին»: «Որ շարժին և  
փոփոխի՝ չէ հական»: «Որ էն և որ շարժէ զամենայն: «Հայրն  
իմ, որ առաքեացն զիս»: «Դուք որ խօսիք»: «Գիտեմ զուր» ըն-  
տրեցիր»: (փոխանակ՝ գիտեմ զչէդ, զորս ընտրեցիր): «Զինչ է  
այս, զոր լսեմ» զքէն»: «Որ խօսիմ»: «Ուր են» երթամ՝ դու ոչ  
կարես գալ» (փոխանակ՝ ի Կէշի, ուր են» երթամ): «ԶՅուրս,  
զոր Հանապազն ըմպեմք»: «Ո՛հ, որ անդն կային»: «Սճէ հիւն»,  
որ ի նմայն է»: <sup>1)</sup> «Գարձայց ի Կուն իմ, ուստի ելին»: «Պատ-  
մեցին զամենայն, որ էնչ եղև»: «Զի ամն ի չգոյէ ի գոյ»: «Որ-  
պէս վկայեն» մի է պատճառ ամենեցուն»:

§ 168. Երբեմն պատահում է, որ յօդն անմիջապէս ըս-  
րաբերականին յաջորդող բառին վերայ չէ դրում, այլ Հեռա-  
նում է յարաբերականից. բայց այս դէպքում յօդառու բառը  
երկրորդական նախադասութեան բայից անմիջապէս առաջ դը-  
րուած պէտք է լինի, կամ իմաստի շեշտ կրէ իւր վերայ: Օր.  
«Որ անչափ հզօր և իմաստունն էր»: «Սկն քո չմը է, զի ես  
առատ» եմ»: «Որք ընդ նմա ի խաչն ելեալ էին»: «Որ առա-  
ւել ծաղուն արժանի է»: «Որ կարծեալ սիւնքն էին եկեղեցւոյ»:

ԾԱՆ. Այս յօդը պարտաւորիչ չէ ամեն անգամ. յաճախ ընտրե-  
լագոյն մատենագիրներն առանց յօդի են գրում այն երկրորդական  
նախադասութիւնները, որտեղ սպասելու էր յօդ: Օր. Եզնիկ ունի.  
«Զիք ոք բարերար և երախտաւոր, բայց միայն որ քուր և ոչ խնայ-  
եաց». (սպասելու էր՝ որ արարն): «Կամ ծով ճաճկելով, որ տկար աւա-  
զով պաշարեալ՝ չիշխէ անցանել ըստ հրաման. կամ երեք կլանելով, որ  
ի վերայ ոչնչի էր հասարակու... կամ հող պարտասեցուցանելով, որ կենդա-  
նութիւնն է ամենայն շնչաւորաց»: Առաջին և երրորդ նախադասու-  
թիւնները յօդ առել են. իսկ երկրորդը, որ բոլորովին նման կազմու-  
թիւն ունի՝ չէ առել. (փոխանակ ասելու՝ որ ի վերայ ոչնչի կայ հաս-  
տատեալ, կամ որ հաստատեալն կայ ի վերայ ոչնչի):—Յօդը, որ խօս-

<sup>1)</sup> Դերանունների այն ձևերը, որոնք վերջանում են - ձայնա-  
ւորով՝ յօդ առնելիս՝ յօդի առաջ աւելցնում են , ներդաշնակութեան  
գիրը. այսպէս սայս, նայն, դոքայդ, ի նոսայն:

քին նրբութիւն և ազգութիւն է տալիս՝ սովորաբար զանց է լինում՝ երբ մատենագիրը նպատակ չունի շեշտել երկրորդական նախադասութիւնը կամ առանձին ուշադրութիւն դարձնել նորա վերայ:

§ 169. Ասացինք (§§ 162—3), որ երբ առարկան որոշուած է՝ պէտք է առնէ դիմորոշ յօդ: Բայց կան այնպիսի որոշուած բառեր, որոնք յօդ չեն առնում: Այսպէս են բոլոր այն գոյական անունները, որոնք ընդհանուր մտքով են գործածուում, այսինքն որոնք նշանակում են բոլոր տեսակը, և ոչ թէ այս կամ այն մէկը. այս գոյականներին հետ միշտ կարելի է աւելցնել՝ Բոլոր, Մեն յի, որեւիցէ բառերը: Իսկ երբ այս գոյականները մասնաւոր մտքով գործածուած լինին (այս կամ այն մէկը նշանակեն) յօդ կառնեն: Օր. Ընդհանուր որոշեալ անյօդ. «Ջիւրի պաշտեցեմք... զոր, որ մերթ գոչ (ից) է՝ հրամանաւ և մերթ սարսէ ի գոչելոյն՝ սաստիւ. կամ զհոսր, որում և զքեզ իսկ երկրորդ արարիչ կազմեաց յօրինիչն. կամ զԵրկր, որ հանապազ բրեմք. կամ զԼոսր, զոր հանապազն ըմպեմք»: «Ընդդիմակաց է հոսր զոսր, և լոսր խոսր, և զոսր զերժ, և յոսրի խոսր»: «Բաղմացուցից զգաւակ քո իբրև զոսրից Երկրից բազմութեամբ և որպէս զոսր առ ոսր ծով»: Հոսր հաստատէ զԵրկր Տարրոյ»: «Գիտութիւն հպարտացուցանէ, այլ ոչ շինէ»: «Եղիցի լոսր. և եղև լոսր»: — Մասնաւոր որոշեալ յօդով. «Հրաման թագաւորին սաստկանայր և հոսր բորբոքէր»: «Հոսր, զոր ես տաց՝ ճշմարիտ մարմին իմ է»: «Ջինչ արասցուք զի դադարեսցէ ի մէջն ծով. առէք ընկեցէք զիս ի ծովդ»: «Ետես Աստուած զլոսր, զի բարի է»: «Եւ բժշկեցան ջուրքն»: «Ջերկր տաց քեզ ի ժառանգութիւն»: «Լաւ էր, եթէ չէր ծնեալ Տարրն այն»: «Նաւն հեռացեալ էր ի յոսրից բազում ասպարիսօք»:

§ 170. Յօդ չեն առնում այն որոշեալ գոյականները, որոնք մէկ հատիկ են, թէ յատուկ և թէ հասարակ գոյական լինին: Օր. «Ջոսրում ոչ ոք ետես ի մարդկանէ»: «Ջերկր և զհոսր գու արարեր»: «Արեգայն դարձաւ յետս և ոչ երկր»: «Լոսր անոյ ամոյ հիւծանի»:

Այսպէս և շատերին յարմարող բառը եթէ գործ է ած-

ւում յատկապէս մի անձի կամ մի առարկայի համար՝ անյօդ է մնում: «Տէր ամաց ցիս»: «Այսպէս ասէ Տէր»: (Տէր գործ է ածուած Աստուծոյ տեղ): Թէպէտ և Առաքեալ անօթ ընտրութեան էր՝ սակայն ընկեր էր Պետրոսի»: «Որպէս Առաքել առեալ զինքեամբ զերեսս ամենայն մարդկութեան՝ ասէ»: (Առաքեալ գործ է ածուած Պօղոս առաքեալի տեղ): «Զերկինս հաստատութիւն կոչեն Գիբ»: «Որպէս Գիբ ասէ»: (Գիբը, զիբ գործ են ածուած Աստուածաշունչ զրքի տեղ):

ԾԱՆ. Իսկ երբ ընդհանուր մտքով գործածուած բառը, կամ տեսակին մէջ մէկ հատիկ նշանակող բառը (§§ 169, 170) լինի գոյականաբար գործածուած ածական՝ այս ածականը սովորաբար յօդ առնում է: Օր. «Արդար՝ հազիւ կեցցէ»: Անզգամ՝ անգոսնէ զխրատ հօր»: «Սուտն ի հօրէ սատանայէ է»: «Աստուած ընտրեաց զբարին ի մի թեր, և զչար՝ մորախառն ի միւս կողմն»:—Գայ չար՝ և յաիշտակէ զսերմանեալն ի սիրտ նորա». (չար՝ այստեղ դրուած է սատանայի տեղ): «Թերակատարն՝ զսորհուրդն հայրենի իմացաւ». (Թերակատարն=Որմիզդ): «Որ այնչափ հօր և իմաստունն էր՝ ի վատթարէ՛ խաբեցաւ» (վատթար=Արհմն):

§ 171. Երբ խօսքի մէջ երկու կամ աւելի բառեր կան միևնոյն պաշտօնը վարող, այսինքն ենթականեր, սեռի խնդիրներ, միևնոյն հօղովով բնութեան խնդիրներ, յատկացուցիչներ և այլն, որոնք պէտք է յօդ առնեն՝ յօդը սովորաբար դրուում է առաջինին կամ առաջիններին վերայ, իսկ երկրորդին կամ վերջիններին վերայ չէ դրուում: Օր. «Քարին և չար ի միում անկանել ոչ մարթէին»: «Արեգակն և լուսին չև ևս էին լեալ, որով ժամքն և արեւը և արեւը և արեւը կարգին»: «Արեգակնը և լուսինը և արեւը և արեւը և արեւը և արեւը և արեւը»: «Զերախտաւորսն և զբարեբարսն մեք ոչ հրամայեմք անարգելք»: «Եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր առաւել քան զգպրացն և արեւեայնը»: «Ախտոցն ճրագուն դեղնեղի լինի, որպէս առիւծուն և արջը»:

§ 172. Յօդը յաճախ՝ դրուելով յատկացուցիչ կամ որոշիչի վերայ՝ փոխարինում է յատկացեալը կամ որոշեալը, մանաւանդ երբ սոքա առաջ մի անգամ արդէն գործ են ածուած: Օր. «Յիւրս՝ եկն և իւրք՝ զնա ոչ ընկալան». (փոխանակ՝ իւր

«Երթալք տուք զկայսերն՝ կայսեր և զԱստուծոյն՝  
Աստուծոյ»։ (փոխանակ՝ որ ինչ կայսեր է, որ ինչ Աստուծոյ է—  
կայսեր սեփականը, Աստուծոյ սեփականը)։ «Ջուրն ըստ աճել  
լուսնին աճէ, և ըստ լնուին լնու և ըստ պակասելն պակասէ»։  
(փոխանակ՝ ըստ լուու լուսնին, ըստ պակասել լուսնին)։ «Մանի  
կամեցաւ վերագոյն քան զնոցայն վարս ցուցանել»։ (փոխանակ՝  
քան զվարս նոցա)։ «Որմզդի զբարի արարածսն դնեն և Արհ-  
մենի՝ զչարսն»։ (փոխանակ՝ զչար արարածսն)։ «Էին առ մեզ  
եղբարք եօթն. առաջինն արար կին և մեռաւ. նոյնպէս և երկ-  
րորդն և երրորդն, մինչև ցեօթներորդն»։ (փոխանակ՝ առաջին  
եղբայրն, երկրորդ եղբայրն...):

§ 173. Յատուկ անունները սովորաբար որոշիչ յօդ չեն  
առնում, բացի այն դէպքերից, երբ նոցա հետևում է ցուցա-  
կան դերանուն, կամ երբ նոքա գալիս են յարաբերականից յե-  
տոյ, կամ երբ առանձին կերպով շեշտւում է յատուկ անունը։  
Առաջին երկու դէպքում յօդը պարտաւորեալ կերպով դրւում է  
ցուցական և յարաբերական դերանունան պատճառով։ (Տես §§  
165, 167)։ Օր. Անյօդ. «Անտրեա» և Փիլիպոս ասեն ցՅիսուս»։  
«Մանի կամեցաւ վերագոյն վարս ցուցանել»։ «Ի տալ Զրուսայ,  
զբարսմունսն յՈւրդր՝ մատուցեալ Արհմենի առաջի Զրուսայ՝ ա-  
սէ ցնա»։ «Իբրև մօտ եղեն յԵրուսղէմ և եկին ի Քելֆոֆէ»։  
(Եթէ այս յատուկ անունների տեղ հասարակ անուններ դնե-  
ինք՝ պէտք է ասէինք յօդով.— Աշակերտքն ասեն ցվարդա-  
պետն իւրեանց։ Աղանդաւորն կամեցաւ։ Ի տալ հօրն ցորդին։  
Մօտ եղեն ի քաղաքն և եկին ի զիւղն)։

Յօդով. «Մարկիոն» «յ» ի Պոնտացոց աշխարհէ անտի ե-  
ղեալ էր»։ «Մովսէսն» «յ», որ եհան զմեզ յերկրէն Եգիպտացոց»։  
«Աբիմելեք, որ Աստուծովն խօսէր»։ «Որպէս և զայն, զբ Յօրն  
զրեալ է»։ «Որպէ՞ Մարկիոնն ասէ»։ «Ոչ որպէ՞ Մարկիոնն դան-  
դաջէ»։ «Ապաքէն և Որմիզդն թերակատար էր»։ «ՅԵրոսայն տե-  
ղիք ինչ են ծովուց»։

§ 174. Երբ յատուկ անուններն ունին նախադաս որոշիչ



կամ բացայայտիջ՝ սոքա յօդ են առնում. իսկ եթէ սոքա յետադաս լինին յատուկ անունից՝ յօդառութիւնն ազատ է, այսինքն կարող են առնել կամ չառնել: Օր. «Մեծն Մովսէս», «Քաջին վարդանայ», «Զարքայն Դաւիթ», «Ի քաղաքին Երուսաղեմի»: «Առ գետովն Երասխաւ»:—«Մովսէս մեծն», «Վարդանայ քաջի» (կամ քաջին), «ԶԴաւիթ արքայ» (կամ արքայն), «ՅԵրուսաղէմ քաղաքի», «Առ Երասխ գետով» (կամ գետովն): «ԶՋրէշ բլրով, զԱրդիմէդ քաղաքաւ, զՔասախ գետով»:

§ 175. Երբ որոշեալ գոյականն ունենայ նախադաս կամ յետադաս որոշիչ՝ յօդը գոյականին վերայ կդրուի և ոչ որոշիչին: Օր. «Որմդդի զբարի արարածոն դնեն»: «Ի նոյն ջուրս պիղծ ճճիքն ընդ սուրբ ձկունսն սնանին, և ի նոյն օդս գիշակեր թռչունքն ընդ աղնուագոյն թռչունսն շողան, զորս պարտ էր Որմդդի բարիք արարածոցն սատակել»:—Միթէ մնդր միայն ոչ եհաս աստղն սպիտակարար»: «Յարիցէ ի յարութեան յառուրն յետնում»: «Հանէք զպատմուճանն առաջին»: «Գտի զոջխարս իմ զկորուսեալ»:

§ 176. Երբ որոշեալ յատկացուցիչ և յատկացեալ պատահին՝ յօդը ոչ թէ երկուսի վերայ էլ կդրուի, ինչպէս սպասեալու էր՝ այլ յատկացուցչի վերայ միայն, նախադաս լինի սա թէ յետադաս: Յատկացեալի յօդ չառնելը խօսքի ներդաշնակութեան համար է, որ յաճախ կրկնուած յօդը միաձայնութիւն և տաղտուկ չտատճառէ: Օր. «Թէ զհօրն խորհուրդ ծանեալ Որմիզդ՝ զեղբօրն չարբաճոյ զխորհուրդ ընդէր ոչ գիտաց»: «Մեղաւորացն ոգիք յաղտեղի մարմինս փոխիցին»: «Զաւ և զերկիւղ մարդոյն արկեալ է արարչին ի վերայ գազանացն»: «Վարճէ Աստուած զվնասս վնասակարացն»: (Այստեղ խորհուրդ, աւ, երկիւղ, վնաս յատկացեալները որոշուած են, սակայն յօդ չեն առել, այլ յատկացուցիչների յօդը բաւական է համարուել երկուսին համար ևս):

ԾԱՆ. Երբ յատկացուցիչն այնպիսի բառ է, որ յօդ չէ առնում (§§ 169, 170)՝ այս դէպքում յօդը դրուում է որոշեալ յատկացեալին

վերայ. Օր. «Վարչի, որ գազանագոյն է քան զամենայն զազանս՝ ուտի մեռն»: «Զի Աստուծոյ Բարեբաղնիքն ցուցանիցի»: «Զանշնիչունիքն ստանայի կամին խափանել»:

§ 177. Դիմորոշ յօդերի փոխանակ յաճախ գործ են ածուում ցուցական մակբայները, որոնք ցուցական դերանունների հին հոլովական ձևերը լինելով միևնոյն ծագումն ունին, ինչպէս և դիմորոշ յօդերը: (Համեմատել §§ 132, 162 և Գրաբ. Հոլ. § 81, ծան. 2): Այս մակբայները դիմորոշների տեղ գործածուելիս՝ ճշտիւ պահպանուում է նոցա իւրաքանչիւրի հոլովական նշանակութիւնը.— այսր, այդր, անդր՝ նախդրով հայցական բառի հետ. աստ, այդր, անդ՝ նախդրով տրականի հետ. աստի, այտի, անտի՝ բացառականի հետ: Ուրեմն միւս հոլովների վերայ (սեռական, պարզ տրական և հայցական, գործիական), որոց համապատասխան ձևեր չունին այս մակբայները՝ գործ են ածուում միայն դիմորոշ յօդեր: Օր. «Ո՞չ զայցէ է աստայսր»: «Առ զաղանին է աստան անդր»: «Ղոյսն է խոտարի անդ լուսաւորէ»: «Ասէլն՝ մի է աստի աստ»: «Թուի նմա, թէ է լեռնէ անդի ելանիցէ արեգակն»: «Ի պարոյ աստի ծառն ճանաչի»:—Նոյնպէս՝ «Ապրեցո զիս է ժամէ աստի յայտանէ»: «Ի ժամանակէ աստ յայտի հասուցանելոց իցես զարքայութիւն Իսրայէլի»: Բոլոր օրինակներում կարելի էր մակբայների փոխարէն գործածել համապատասխան դէմքերի յօդեր:

ԾԱՆ. Յօդերի վերայ ինչ որ ասացինք՝ ընդհանուր, սովորական կանոններն են, որոնք յաճախ պատահում են ընտիր մատենագիրների մէջ. Բաց նոյն մատենագիրներին մէջ պատահում են՝ այստեղ աւանդուած կանոններին հակառակ գործածութիւններ ևս, որոնք կամ գրչի անուշադրութեան հետևանք են, կամ հեղինակի արած զարտուղութեան, կամ վերջապէս այնպիսի նրբութիւններ են արտայայտում, որոնք մեզ այժմ հասկանալի չեն.— Յօդերի ուղիղ և վայելուչ գործածութիւնը, որ խօսքին ճշտութիւն ու գեղեցկութիւն է տալիս՝ աւելի լաւ կըմբռնուի ընտիր մատենագիրների ուշադիր ընթերցանութեամբ, ինչպէս առ հասարակ բոլոր քերականական կանոնները:

ՈՐՈՂԵՍԸ ԵՒ ԱՆՈՐՈՂ ՀԱՅՅԱԿՈՒՆ:

§ 178. Յայտնի է, որ երբ հայցական հոլովը որոշուած է՝ առնուած է ղ նախդիրը, իսկ եթէ անորոշ է՝ չէ առնուած: Ձ նախդիրը ինքը չէ որոշուած բառը, այլ երբ սա արդէն որոշուած է՝ այն ժամանակ դրուում է նախդիրը: Այժմ տեսնենք այն դիտաւոր դէպքերը, երբ հայցական հոլովը պէտք է առնէ ղ նախդիր:

§ 179. Հայցական հոլովը զ նախդիր առնուած է՝ երբ բառը ընդհանուր մտքով է գործածուած, այսինքն երբ նորանով հասկացուում են նոյն տեսակին պատկանող բոլոր առարկաները: (Տես § 169): Օր. «Ձհիւսնիս բո՛ւշկեցէք, զբո՛րոս սըրբեցէք»: «Որմիղդն զանասունս, զչորոսանիս և զլուչունս և զչիւանս արար, և Արհմն զբո՛րոս չարս և զսոչունս և զօջս և զխրի՛ճս»: «Գև զբո՛ ոչ հանէ»: «Գնէ զչիւս որպէս զբո՛ր, և զմե՛ք որպէս զփոշի ցանեաց»: (Այսինքն որեւէ հիւանդ, որեւէ բորոտ. բոլոր անասունները, չորքոտանիները, գազանները, օձերը. որեւէ դև, ձիւն, բուրդ, մէգ, փոշի):

Այսպէս զ նախդիր առնուած են այն գոյականները, որոց մօտ կան ամենայն, իւրաքանչիւր, անձնիւր ևն որոշիչները, որոնք ընդհանրութիւն են ցոյց տալիս, նոյնպէս և այս բառերն առանձին գործածուելիս: Օր. «Ասիցեն զամենայն բան չար սուտ զձէնջ վասն իմ»: «Ձամենայն ինչ զբո՛ր՝ մշտնջենաւորութեամբ ունի»: «Ամենեքեան զբո՛րոս զչիւս զանարգանաց վրէժս պահանջեն»: Պատմեցին զամենայն որ ինչ եղևն»: «Մի մի ի նոցանէն բաւական էր զամենայն սատակել»:

§ 180. Հայցական հոլովը զ նախդիր առնուած է՝ երբ բառը նշանակում է մէկ հատիկ առարկայ, լինի դա հասարակ կամ յատուկ անուն: (Տես § 170): Օր. «Արար Աստուած շերի՛ն և շերի՛ր»: «Ձհիւսնիս և զհո՛րոս դու արարեր»: «Ձիւնրդ պաշտիցեմք շարեգանի՛ն, կամ զլուսնի, կամ զօր և կամ զհո՛ր, կամ զերի՛ր, կամ զլուսնի»: (Օր, հուր, երկիր, ջուրք այստեղ վեր-

ցուած են իրրև տարր): «Զ Աստուծոյ ոչ ոք ետես ի մարդկանէ»: «Զ Յակոբ սիրեցի և զԵսայա տեցի»: «Արհման շնորհք ի ճաշ կոչեաց»:

§ 181. Հայցական հոլովը զ նախդիր առնում է՝ երբ բառը որոշուած է դիմորոշ յօդերով: Երբ նոյն պաշտօնը վարող մի քանի բառերից վերջինները յօդ չունին կանոնի համաձայն (§ 171)՝ նոքա այնու ամենայնիւ նախդիր առնում են, որովհետև նոքա ոչ թէ իրանց նշանակութեամբ յօդ չունին՝ այլ իրանց դիրքի պատճառով յօդը վերցուած է ներդաշնակութեան համար: Օր. «Որմզդի շքարի արարածսն դենն և Արհմանի շքարան»: «Փողովեցին շքարի-բարին յամանս»: «Առէք ի դմանէ շքանքարք»: «Հաւատովք հաստատեաց շանդամալոյճն»: «Օղք երբեմն շսառնամանիսն շնչելով և երբեմն շխորշակն բերելով»: «Զ Եսայի և շքարերարս մեք ոչ հրամայեմք անարգել»: «Յցոյց զիւր շքարերարութիւնն և շգօրութիւնն»:

ԾԱՆ. Բաց որոշուած չէ համարուած բառն այն յօդով, որ դրուում է որ յարաբերականի պատճառով (§ 167). ուստի այսպիսի բառը կարող է և նախդիր չառնել՝ եթէ ուրիշ պատճառներ չկան նախդիր գործածելու: Օր. «Կէսք կամեցան դնել նիւթ ինչ, զոր հեռն անուանեն»: «Բագում անգամ զոր բարին կարծիցեն» վնասակար մերումս լինի»: (Յիւղ և բարի հայցականները թէև յօդ ունին, բայց դա յարաբերականի յօդն է. իսկ իրանք իբրև երկրորդ սեռի խնդիրներ (§ 49) դրուած են աննախդիր հայցականով):

§ 182. Հայցական հոլովը զ նախդիր առնում է՝ երբ ունի բացայայտիչ կամ յատկացուցիչ: Օր. «Զրուանն եթէ արջառ էր՝ շկարիճն շԱրհմն զիւրդ ծնանէր. և եթէ գայլ էր՝ շգառնն շՈրհեշտ հիմ ծնանէր»: «Եթէ քաղցր զիտեն զԶրուանն՝ ոչ պարտին շգառն պտուղն շԱրհմն ի նմանէ համարել, և եթէ գառն հաշուին՝ չէ պատճառ շքաղցր պտուղն շՈրհեշտ ի նմանէ դնել»: «Ոչ կամիմ շմահ Բեշտարին, այլ շգառնալ նոր» և շկեալ»: «Յորժամ շսողոմանի ուրուք շորդի յաղակատանս հատեալ տեսանիցէ ոք»: «Զիւր յիւր ի նոցանէ շարարած մարթի

ի դրոց ցուցանել»։ (նոցանից ամեն մէկի արարած լինելը կարելի է ասպացուցանել Ս. Գրքով)։ «Զբարսութեան երկի կերիջիք»։ Այս օրինակներում եթէ չլինէին յատկացուցիչներն ու բացայայտիչները՝ հայցականները պէտք է դրուէին առանց նախդրի։ (Զկարիճն, զգառն, զբառն պտուղն, զքաղցր պտուղն բառերի զիմորոշ յօդերն էլ դրուած են բացայայտիչներին պատճառով)։

ԾԱՆ. Եթէ յատկացուցիչները բուն յատկացուցիչներ չեն, այլ որոշիչ կամ խնդիր-յատկացուցիչներ՝ սոցա յատկացեալը աննախդիր հայցական կորուի՝ եթէ ուրիշ հանգամանքներով որոշուած չէ։ Օր. «Ջնորհեաց նմա թողութեան մեղաց»։ (խնդիր-յատկաց.)։ «Ոչ անօրն բարսութեան կազմէ ի կորուստ, և ոչ անօրն ողորմութեան՝ ի փառս»։ «Խորհեացան զինէն իորհուրդ շարսութեան»։ (որոշիչ-յատկացուցիչներ)։

§ 183. Հայցական հոլովը զ նախդիր առնում է՝ երբ իւր մօտ ունի ստացական կամ ցուցական դերանուններ իբրև որոշիչ։ Օր. «Յորժամ շընկեր իւր կամ շճառայ մեծարիցէ ոք»։ «Զսուսն չէր առաջի ձեր օտարք կերիցեն»։ «Գնէ զագարակն շայն»։ «Գնեաց շայն մարգարիտ»։ «Ասաց ցնոսա զառակս շայն»։ «Որ լսէ զբանս իմ շայնսոսիք»։

ԾԱՆ. Նոյնպէս զ նախդիր առնում է հայցականը՝ եթէ յատկացուցիչը կամ ստացական-որոշիչը զօրութեամբ հասկացուում են նորա մօտ, թէպէտ ներգործութեամբ դրուած չեն։ Օր. «Երբեմն հարկանէ զանասուն մեր, երբեմն զանդս և զայգիս»։ (զօրութեամբ հասկացուում է՝ հեր)։ «Որ ոչ թողցէ զհալը, կամ զմալը, կամ զորդիս, կամ զագարակս՝ չէ ինձ արժանի»։ (հասկացուում է՝ իւր)։ «Մրջիւն յամարայնոցն պատրաստէ զկերակուր»։ (հասկացուում է՝ իւր)։

§ 184. Հայցական հոլովը զ նախդիր առնում է՝ երբ դերանուն է, բացի իմն և ինչ անորոշ դերանուններից։ Նոյնպէս սովորաբար զ նախդիր առնում են թուական անունները, թէ գոյականաբար և թէ ածականաբար վարուելիս, (վերջի դէպքում՝ մանաւանդ երբ թուական ածականները գոյականից նախադաս են)։ Օր. «Զոհն յընչից և զոհն յարևէ արկանեն»։ «Յորոցն հանել, յորժամ ոչ շոք կամ զինչ ինչ բարի յիշելոյ լինի՝ բնական ազգեցութիւն է»։ <sup>1)</sup> «Ընդէր այդպէս ստեղծեր

<sup>1)</sup> Փոխանակ՝ է յիշելոյ գոք կամ զինչ ինչ բարի Եզնիկի սովո-

դի»։ «Մի տանիր շէշ ի փորձութիւն»։ «Յարուցից շէշ յաւուրն յետնում»։ «Է ինչ՝ շէշ կամի, և է ինչ՝ շէշ ոչ կամի»։ «ԶՔ խնդրեցի և շէշն աղաչեմ»։ «ԶՔն ի ծառայութեան ունի և շէշն յորդեգիրս գրէ»։ «Նստան շուրջ զնովաւ յերկրի շէշն օր և շէշն գիշեր»։ «Սաւուղ եհար շէշաշուս և Գաւիթ շէշաշուս»։

Աննախդիր. «Այլոց ինն ինն խոստանան»։ «Ունիք ինչ ուտել»։— «Ումեմն ետ հինգ քանքար և ումեմն՝ երկուս և ումեմն՝ մի»։ «Որ զհինգ քանքարն էառ՝ մատոյց այլ ևս հինգ քանքար»։

§ 185. Հայցական հոլովը զ նախդիր առնում է սովորաբար՝ երբ խնդիր է իբր, իբրև և քան նախադրութիւններին։ Օր. «Իջեալ անմարմինն՝ իբր զմարմնաւոր ոք ոտնաձայն առնէր»։ Աւասիկ իբրև զկառս իմն լծեալ ի չորից երկվարաց զաշխարհս տեսանեմք»։ «Ոչ կոչէր զնոսա Հոգին ի փառատրութիւն, այլ իբրև զօտարոտիս մեկուսի դնէր»։ «Իբրև զպատմութիւնս կացեալ թիւրեցաւ յԱստուծոյ»։ «Զինչ չար քան զօձ կայցէ»։ «Զինչ աւելի իցեն քան զմոզս»։ «Ի վեր է (Աստուած) քան շէշուր և քան շլոյս»։

§ 186. Հայցական հոլովը զ նախդիր առնում է՝ երբ բուն սեռի խնդիր է այնպիսի բայերի, որոնք ունին երկրորդ սեռի խնդիր։ (Տես § 49)։ Օր. «Տեսանեմք զմեծատունս աղքատացեալս և զաղքատս՝ մեծացեալս... և շէշօրս երբեք երբեք տրկարացեալս տեսանեմք և շտկարսն զօրացեալս»։ «Սպանողք յորժամ ի պատիժս մտանեն՝ ոչ բարերարս զպատժածունս կոչեն, այլ չարարարս»։ «Մեզ մի լիցի այնպիսի ինչ ասել, այլ զչարիսն ոչ անձնաւորս կարծել, այլ կամածինս»։

§ 187. Իսկ Հայցական հոլովը չէ առնում բո-

---

րութեամբ՝ է յետոյ բացառականի նախդիրը պէտք է դրուած լինէր նորա սեռի-խնդիրներից առաջ—յորժամ ոչ է՝ զոք կամ զինչ ինչ բարի յետոյ, իսկ երբ երկու նախդիր միմեանց մօտ պատահում են՝ ընտիր մատենագիրները նոցանից մէկը գեղջում են, ինչպէս այստեղ՝ է նախդիրը—Քնն՝ այստեղ գործածուած է իբրև գոյական, որի ածականն է յաջորդ ինչ բառը։

լոր այն դէպքերում, որոնք չունին վերոյիշեալ հանգամանքները (§§ 179—186): Բացի սոցանից յատկապէս նկատելու է հետեւեալ դէպքերը.

ա) Զ նախդիր չեն առնում այն հայցական սեռի խնդիրները, որոնք թէպէտ ընդհանուր նշանակութիւն ունին (§ 179), բայց բայի հետ սերտ կերպով կապուած են, այնպէս որ բայի հետ միասին՝ մի նշանակութիւն են տալիս: Սոցանից շատերը բաղադրեալ ասացուածներ են կազմում բայի հետ և ոմանք ունին նաև բային հետ բարդուած ձևեր ևս: Սյսպէս են՝ երկիր պազանել (բարդուած ձև՝ երկրպազել), ձեռն արկանել (բարդուած՝ ձեռնարկել), ձայն տալ (=ձայնել), հրաման տալ (=հրամայել), ձեռն տալ (=ձեռնտու լինել), խորհուրդ առնել (=խորհել), ժոյժ ունել (=ժուժել և բարդուած՝ ժուժկալել), աւար առնուլ (=աւարել), ածել անձրև (=անձրևել), փող հարկանել, բուռն հարկանել, հաց ուտել, ոգի առնուլ, ոգի կլանել, գնալ ճանապարհ, գան ըմպել, և ուրիշ շատերը: Օր. «Ձեռ ոփի առնուլ, չես ոփի կլանել»: «Փող հարաք ձեզ՝ և ոչ կաքաւեցէք»: «Նստան ուտել հոյ»: «Բաւն եհար զեղջերացն»: «Սղէ, կարդա, թէ ոք տայցէ քեզ չոյն»: «Ծառայ, որ զիտիցէ զկամս տեառն իւրոյ և ոչ առնիցէ՝ ըմպէ փոք բազում»: «Սծէ անջրի ի վերայ արդարոց և մեղաւորաց»: Տեառն Աստուծոյ քում էրկիր պազցես»: Եւ այլն:

բ) Զ նախդիր չեն առնում երկրորդ սեռի խնդիրները (տես § 49): Օր. «Ոչ կոչեցի զձեզ ծառայ»: «Զքեզ իսկ երկրորդ արարէ կազմեաց յօրինիչն»: «Զամենայն զոր արար՝ գեշեցիկ արար»:

գ) Զ նախդիր չեն առնում այն հայցական հոլովները, որոնք գործ են ածուում մակբայների նշանակութեամբ (տես § 61): Օր. «Ականջօք իւրեանց ծանուս լուան»: «Վառէ գեշեցիկ զմարդիկ»: «Ոչ եթէ բնածին բարք են, այլ էկամուս»:

§ 188. Հայցականի զ նախդրի իւր տեղում գործածելը և իւր տեղում չգործածելը ոչ միայն լեզուի կանոնաւորութեան համար է կարևոր, բայց և շատ անգամ՝ իմաստի ճշտութեան

Համար: Յաճախ խօսքի նշանակութիւնը բոլորովին կփոխուի՝ եթէ զ նախդիրը կանոնաւոր կերպով չգործածուի: Ինչպէս երևում է Հետեւեալ օրինակներէից: Եղնիկ գրում է. «Վախարդք, ասեն, յղեն *ԴԻ*» և Հանեն *ԴԻ*»: Մատենագիրը մի կարճ խօսքում երկու անգամ գործ է ածել դե բառը, մի անգամ զ նախդրով, միւս անգամ առանց նորան. ոճի զեղեցկութիւնը դոհել է իմաստի ճշտութեան: Նա ուզում է ասել—կախարդները, ոմանց կարծիքով, *Կարող են ԴԻ* զրկել մարդոց մէջ (այսինքն դիւահարեցնել), և այն *ԴԻ* Հանել: Նոքա ոչ թէ զրկում են մարդու մէջ բոլոր դեւերը, որչափ որ կան, այլ թէ՛ ընդունակ են դեւեր զրկելու: Իսկ նոքա կարող են Հանել բոլոր այն դեւերը, որոնց մտել են մարդոց մէջ: Եթէ այս խօսքն ասէինք. «Վախարդք յղեն *ԴԻ*» և Հանեն զդեւս—սա կնշանակէր, թէ կախարդները որեւիցէ դեւ, կամ բոլոր դեւերը զրկում են մարդոց մէջ: Իսկ եթէ ասէինք. «կախարդք յղեն դեւս և Հանեն *ԴԻ*»—սա կնշանակէր, թէ կախարդներն ընդունակ են դեւ զրկելու և դեւ Հանելու: Իսկ մատենագիրը որոշում է կախարդների կարողութեան չափը. դեւեր զրկելու կարողութիւնը կախարդների մէջ սահմանափակ է, իսկ Հանել կարող են նոքա որեւիցէ դեւ: Նոյնպէս Աւետարանի մէջ կարդում ենք. «Վարող է Աստուած ի քարանցս յայտցանէ յարուցանել *ԴԻ*» Աբրահամու»: Քրիստոս յանդիմանելով հրէաներին, որոնք պարծենում էին, թէ Աբրահամ նահապետի նման Հայր ունին՝ ասում է, թէ Աստուած կարող է այս քարերից էլ Աբրահամի *ԴԻ* Հանել (այսինքն այս քարերը Աբրահամի որդիների, ձեզ նման հրէաների փոխել): Եթէ այս խօսքն ասէինք այսպէս. «Վարող է Աստուած ի քարանցս յայտցանէ յարուցանել *ԴԻ*» Աբրահամու—սա կնշանակէր, թէ Աստուած այն քարերից կարող է Հանել Աբրահամի *ԴԻ*—այսինքն բոլոր այն հրէաներին, որոնք Աբրահամի օրերից ի վեր մեռած և թաղուած էին՝ նոցա Աստուած կկենդանացնէ և դուրս կհանէ այն քարերի միջից:



## ՀԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ

§ 189. Ինչպէս առանձին բառերը լեզուի կանոններին համաձայն միմեանց հետ կապուելով կազմում են պարզ նախադասութիւն՝ այնպէս էլ մի քանի պարզ նախադասութիւններ միմեանց հետ կանոնաւոր կերպով շաղկապուելով՝ կազմում են Բարդ Կապուած Նախադասութիւն, որ մի ամբողջութիւն է կազմում և լիակատար միտք է արտայայտում: Արդեւեւք Արդեւեւք Հետագայ խօսքը. «Յորժամ զաներևութէն և զնորին զմշտնջենաւոր զօրութենէն ճառիչք ոք»—քանզի մարմնաւոր լեզու է—պարտի զմիտս յստակել և զխորհուրդս սրբել, զի յայն, զոր առաջի էր՝ Հասանել կարոյցէ»: Այստեղ մի լիակատար իմաստ արտայայտուած է մի բաղադրեալ նախադասութեամբ, որ կազմուած է հետևեալ հինգ նախադասութիւններից.

1) Յորժամ զաներևութէն և զնորին զմշտնջենաւոր զօրութենէն ճառիչք ոք.

2) Քանզի մարմնաւոր լեզու է. (ենթական զօրութեամբ՝ նա):

3) Պարտի զմիտս յստակել և զխորհուրդս սրբել. (ենթական զօրութեամբ՝ նա):

4) Զի Հասանել կարոյցէ յայն. (ենթական զօրութեամբ՝ նա):

5) Զոր առաջի էր. (ենթական զօրութեամբ՝ նա):

Այս բաղադրեալ նախադասութիւնը քննելով՝ տեսնում ենք, որ գլխաւոր իմաստը, կամ գլխաւոր նախադասութիւնը երրորդն է.— Այն մարդը պարտաւոր է իւր միտքը յստակել, իւր խորհուրդները մաքրել: Միւս նախադասութիւններից երեքը այս գլխաւոր իմաստի շուրջը խմբուել են՝ նորա այլևայլ Հանգամանքները բացատրելու համար, և իւրաքանչիւրը, Համաձայն իւր կատարած պաշտօնին՝ գլխաւոր նախադասութեան հետ կապուած է Համապատասխան մակըայնորով ու շաղկապներով. այսպէս.

Այն մարդը պարտաւոր է իւր միտքը յստակել, իւր խորհուրդները մաքրել. Երբ է պարտաւոր.— Երբ աներևութի և նո-

րա մշտնջենաւոր զօրութեան մասին խօսելու լինի (1)—ցոյց է տալիս գլխաւոր նախադասութեան ժամանակի պարագան: Ի՞նչ պարագան է պարագան.— Որովհետեւ նա մարմնաւոր է (2) — ցոյց է տալիս գլխաւոր նախադասութեան պատճառի պարագան: Ինչո՞ւ համար է պարագան.— Որովհետեւ շէ հասնէ այն բանին (4)—ցոյց է տալիս գլխաւոր նախադասութեան նպատակի պարագան:

Վերջին նախադասութիւնը— շոք առաջի եղ՝ կապուած է չորրորդին հետ— Ո՞ր բանին հասնէ— որ իւր առաջն է դրել (այսինքն՝ որ իրան նպատակ է դրել). — սա ցոյց է տալիս հասանելու գործողութեան նպատակակէտը, և նորա միտքը լրացնող խօսք կամ բնութեան խնդիր է:

Ուրեմն վերոյիշեալ բաղադրեալ նախադասութիւնը կազմուած է մի գլխաւոր նախադասութիւնից, երեք երկրորդական նախադասութիւններից, որոնք պատկանում են գլխաւոր նախադասութեանը, և մի երկրորդական նախադասութիւնից, որ պատկանում է ուրիշ երկրորդական նախադասութեան. և այս բոլոր նախադասութիւնները միասին՝ արտայայտում են մէկ իմաստ. Այս մէկ լիակատար իմաստը, որ մատենագիրը բացատրել է հինգ նախադասութիւնների համադրութեամբ՝ կարելի էր արտայայտել նաև մէկ ընդարձակուած նախադասութեամբ. «Ի ճշտեան ուրուք զաներևութէն և զնորին զմշտնջենաւոր զօրութենէն— Վասն մարմնաւոր գոյնի— պարտի զմիտս լրստակել, զխորհուրդս սրբել, և ի նորեշ հասանել ի յառաջադրեալն»: Այս ընդարձակուած մի նախադասութիւնը համեմատելով մատենագրի բաղադրեալ նախադասութեան հետ՝ նկատում ենք, որ այնտեղի գլխաւոր նախադասութիւնն այստեղ ևս մնացել է անփոփոխ. իսկ այնտեղի երեք երկրորդական նախադասութիւնները՝ այստեղ համապատասխան հոլովներով ու նախադրութիւններով դարձել են բնութեան խնդիր գլխաւոր նախադասութեան ասացուածին.— Ի ճշտեան— ժամանակական, Վասն գոյնի մարմնաւոր— պատճառական, և ի նորեշ— նպատակական բնու-

Թեան խնդիրներ. իսկ մի երկրորդական նախադասութիւնն էլ դարձել է ընտելեան խնդիր հասանել անորոշ դերբային: Այս վերջին կազմութիւնը նույնպէս կանոնաւոր է, ինչպէս և առաջինը, բայց հակառակ է գրաբար լեզուի ոգուն, որ սիրում է պարզ ո՞՞ և կարճ, դիւրմբռնելի նախադասութիւններ:

§ 190. Ինչպէս պարզ նախադասութիւնները կանոնաւոր իմաստ արտայայտելու համար պէտք է, որ նոցա մէջ իւրաքանչիւր բառ միմեանց հետ որոշ կապակցութիւն ունենան (§ 1)՝ այնպէս էլ բարդադրեալ նախադասութիւն կազմող պարզ նախադասութիւնները, կանոնաւոր իմաստ արտայայտելու համար՝ պէտք է որոշ կապակցութիւն ունենան միմեանց հետ: Համաձայնութեան այն մասը, որ աւանդում է բարդադրեալ նախադասութեան կազմութեան կանոնները՝ կոչուում է համարդրութիւն:

§ 191. Բարդադրեալ նախադասութիւնը կարող է երկու տեսակ կազմուել. կամ մի գլխաւոր և մի, կամ մի քանի երկրորդական նախադասութիւններից, և կամ մի քանի հաւասարագոր նախադասութիւններից: Առաջին տեսակում՝ գլխաւոր նախադասութիւնը պարունակում է խօսքի գլխաւոր իմաստը, իսկ երկրորդականը լրացնում է նորա մի մասնաւոր միտքը, բացատրում է նորա որևէ մասնաւոր յատկութիւնը, և սերտ կապուած է նորա հետ: Եթէ այս նախադասութիւնները միմեանցից բաժանելու լինինք՝ կամ գլխաւոր նախադասութեան միտքը թերի կմնայ, կամ երկրորդականինը: Իսկ երկրորդ տեսակում՝ նախադասութիւնները մէկը միւսից քերականօրէն անկախ են. այնպէս որ առանձին առանձին վերցնելիս՝ նոցանից իւրաքանչիւրն էլ ամփոփ իմաստ են արտայայտում: Առաջին տեսակ կազմութիւնը կոչուում է համարդրութիւն կախման չեղով, իսկ երկրորդ տեսակը կոչուում է համարդրութիւն զուգորդութեամբ:

ՀԱՄԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՒՄԱՆ ՁԵՒՈՎ:

§ 192. Կախման ձևով համադրութիւնը, ինչպէս ասացինք՝ կազմուում է մի գլխաւոր և մի, կամ մի քանի երկրորդական նախադասութիւններից, որոնք բացատրում են գլխաւոր նախադասութեան մի մասնաւոր իմաստը: Նայելով իրանց վարած պաշտօնին՝ այս երկրորդական նախադասութիւններն երեք տեսակ կարող են լինել—ա) որոշէ երկրորդական նախադասութիւն, բ) լրացոյցէ երկրորդական նախադասութիւն և գ) պարագայիան երկրորդական նախադասութիւն:

Ա. ՈՐՈՇԻՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱՄԱՐԱՍՈՒԹԻՒՆ:

§ 193. Որոշիչ երկրորդական նախադասութիւնը որոշում է գլխաւոր նախադասութեան մէջ եղած մի առարկայի որպիսութիւնը. այնպէս որ կարելի է ասել՝ թէ որոշիչ նախադասութիւնն իւր բոլոր անդամներով՝ ածականի պաշտօն է վարում գլխաւոր նախադասութեան մէջ եղած գոյականին համար: Օր. «Ձեռն աստուածք արեգակն և լուսին, որք անխօսքն և անհաւանչ են»: «Մանուկ կաթնակեր, որ յայլ ենչ կերակուր հարբէրիցէ՝ ոչ պատժելի է, այլ արգահատելի»: «Ձեռնանքն, որ ի ջուրան ի ներքս են՝ ի չորից հիւթոցն յօգեալ են»: «Եղիցի յայնժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ եղև ի սիլբոնէ պարսժոց ոշխարհի»: «Եղիցին իբրև զաստիշո երկնից բազմութեամբ, որոց ոչ գոյ ընդ»: «Աստուած զանցնիշխանութիւնն պարգևեաց մարդոցն, որով չարոշ եղէ ասնել զինչ և գամեայի»:—Այս օրինակներին մէջ բոլոր երկրորդական նախադասութիւնները վերաբերում են իրանց գլխաւոր նախադասութեան որևէ բառին և բոլորը, ինչպէս ածականներ՝ որոշում են այդ գոյականների որպիսութիւնը:—Ո՞րպիսի արեգակն և լուսին—անխօսք, անմուռնչք. ո՞րպիսի մանուկ—մտաբերող յայլ ինչ կերակուր. ո՞րպիսի զեռունք—ջրայինք, և այլն:

§ 194. Որոշիչ երկրորդական նախադասութիւնը կապ-

ւում է գլխաւորին Հետ ընդհանրապէս որ և որպէս յարաբերական դերանուններով, որոց համապատասխանում են գլխաւոր նախադասութեան մէջ «յ» և «յնպէ» ցուցական դերանունները, որոնք շատ յաճախ զօրութեամբ են հասկացուում, կամ արտաբայտուում են դիմորոշ յօդորով: Ինչպէս վերը բերուած օրինակներում— *հետո՛ւ* կաթնակեր բառին մօտ զօրութեամբ հասկացուում է՝ այն— «յ» կաթնակեր մանուկը, որ... , զեռունքն, որ ի ջուրսն են, նշանակում է՝ «յ» զեռունները, որ... և այլն: Եղիցի (այնպէս) նեղութիւն մեծ, որպէս ոչ եղև ի սկզբանէ արարածոց աշխարհի»: Իսկ երբ երկրորդական նախադասութիւնը սրոշում է այնպիսի բառ, որը «եղ է նշանակում՝ կարող է կապուել գլխաւորին Հետ որ, որպէս տեղական մակըայներով: Օր. «Գարձայց ի տուն իմ, որպէս ելին»<sup>1)</sup>. (փոխանակ՝ յորմէ): «Եկին ի քաղաքն, որ զնշանսն արարեալ էր». (փոխանակ՝ յորում): Իսկ երբ երկրորդական նախադասութեան ասացուածը դրուած է ստորադասական եղանակով (կամ սահմ. ապառնիով)՝ յարաբերականի փոխանակ յաճախ գործ է ածուում շեշտակապը: Օր. «Որքի այնպիսի ետ նմա, շեշտակիսս և զերկիր առնիցէ»:

§ 195. Յարաբերական դերանունը կրկնակի կապ ունի, մի կողմից գլխաւոր նախադասութեան այն բառին Հետ, որին որոշում է (յարաբերեալ) և միւս կողմից երկրորդական նախադասութեան Հետ, որի անդամն է կազմում: Այս պատճառով նա պէտք է համաձայնի թէ՛ յարաբերեալին Հետ և թէ՛ երկրորդական նախադասութեան Հետ: Յարաբերեալին Հետ համաձայնում է *Եւ*, իսկ երկրորդական նախադասութեան Հետ՝ *Կարևոր*, նայելով թէ ինքն ինչ պաշտօն է վարում նորանում: Օր. «Չեն աստուածք *արեգակն* և *լուսին*, որք անխօսքն և անմուռնչ են»: Այստեղ որք դրուած է յոգնակի՝ որովհետև յարաբերեալները—*արեգակն* և *լուսին*—մէկից աւելի են, և դր-

<sup>1)</sup> Ելի-ն=անց, կատար. եզակի ա. դէմք: Ն գիրն այստեղ դիմորոշ յօդ է, և ոչ յոգնակիի վերջաւորութիւն. Տես § 167:

ըրուած է ուղղական հոլովով որովհետև ենթակայի պաշտօն է վարում երկրորդական նախադասութեան մէջ: «Եղիցին որպէս շատեալս երկնից բազմութեամբ, որոց ոչ գոյ թիւ»: Այտեղ որոց զըրուած է յոգնակի՝ որովհետև յարաբերեալը—զաստեղս—յոգնակի է, և զըրուած է սեռական հոլովով, իբրև բնութեան խնդիր գոյ բային: «Աստուած շատեալս պարզեաց մարդոցն, որով կարող իցէ առնել՝ զինչ և կամեսցի»: Այտեղ էլ որով զըրուած է եզակի՝ որովհետև յարաբերեալը—զանձնիշխանութիւնն—եզակի է, և զըրուած է գործիական հոլովով իբրև բնութեան խնդիր կարող լինել բային:

ԾԱՆ. Սակաջն նկատելու է, որ երբ յարաբերականը գործ է ածուամ ուղղական կամ հայցական հոլովով ընդհանրապէս եզակի է զըրուում, թէպէտ և յարաբերեալը յոգնակի լինի Օր. «Զեռանս, որ ի ջուրս ի ներքս են». (փոխանակ՝ որք): «Յորժամ երկիր չէր և ոչ բանի, որ ի նմանէ՝ զբարսմունսն ուստի գտանէր». (փոխ. որք): «Զհրճան, զոր ես գործեմ». (փոխ. գորս): «Ի յարանս, զոր ընդ միմեանս շփիցեն՝ յայտ յանդիման ցուցանի». (փոխ. գորս):—Այսպիսի եզակի յարաբերականը սովորական է ընտիր մատենագիրներին, ինչպէս և աշխարհաբարին, թէպէտ յոգնակի յարաբերականի օրինակներն ևս պակաս չեն:

§ 196. Որոշիչ երկրորդական նախադասութիւնները կարող են կրճատուել այլ և այլ եղանակով.

Ա). Երբ երկրորդական նախադասութեան ասացուածը գոյական անուն է էական բայով (տես §§ 7, 9)՝ էական բայն և յարաբերական դերանունը զեղջուում են, և գոյական-ասացուածը թուով ու հոլովով համաձայնում է գլխաւոր նախադասութեան մէջ եղած յարաբերեալին հետ, դառնալով նորա բացայայտիչը. (տես § 146): Օր. «Գլուխ փիլիսոփայիցն նոցա Պիլոսոփոս ասէ». (փոխանակ՝ Պիլոսոփոս, որ գլուխն է փիլոսոփայիցն նոցա՝ ասէ): «Զերկուս պատանի իւր, զհրէշտակ մարդակերպեալս՝ առ Ղովտ արձակէր». (փոխանակ՝ որ էին հրէշտակ Տարսիսիւրդեալս):

Բ). Երբ երկրորդական նախադասութեան ասացուածն

ածական անունն է հական բայով (տես §§ 7, 9)՝ հական բայն և յարաբերական դերանունը նոյնպէս զեղջում են, և ածական ասացուածը դառնում է որոշիչ գլխաւոր նախադասութեան մէջ եղած յարաբերեալին, Համաձայնելով նորա Հետ թուով և Հոլովով: Օր. այս խօսքը— «Չեն աստուածք արեգակն և լուսին, որք անխօսին և անհառնչ են» կարելի է կրճատել այսպէս. Չեն աստուածք արեգակն և լուսին, անխօսին և անհառնչ: Նոյնպէս՝ «Հաւատամք ի սուրբ Հոգին, յանէջն և ի կաթարեայն». (Հանգանակ. փոխանակ ասելով՝ որ անեղն է և կատարեալ):

Գ) Երբ երկրորդական նախադասութեան ասացուածը բայ է՝ յարաբերականը զեղջւում է, և բայը դրւում է դերբայի ձեւով, իբրև որոշիչ գլխաւոր նախադասութեան մէջ եղած յարաբերեալին, Համաձայնելով նորա Հետ թուով և Հոլովով: Այս կրճատումի ժամանակ ուշադիր լինելու է, որ դերբայի ժամանակը Համապատասխանէ դիմաւոր բայի ժամանակին: Անցեալ դերբայով կրճատուում են այն չէզոքական կամ կրաւորական բայերը, որ դրուած են անցեալ ժամանակներով (անկատար, կատարեալ, յարակատար, գերակատար), և այս ձևը ամենից սովորականն է: Ներկայ դերբայով կրճատուում են չէզոքական կամ ներգործական բայերը, որ դրուած են սահմանական ներկայով, որ շատ գործածական չէ ընտիր գրաբարում: Իսկ ապառնի դերբայով ամենևին չէ կրճատուում երկրորդական նախադասութիւնը: Օր.

«Նման է արքայութիւն երկնից ուսնիսի արիւնջ ի ծով». (փոխանակ՝ ուռկանի, որ արիւնջ է՞ է ծով): «Արարածք երբեք զսահմանօքն երէտի նոցա ոչ անցանենն». (փոխանակ՝ ոչ անցանենն զսահմանօքն, որ երէտ են նոյս): «Իբրև զիստ իմն չեմու ի չորից երիվարաց զաշխարհս տեսանեմք». (փոխանակ՝ որ չեմու է՞ է): «Ետես զաշակերտսն հողմկոծեալս ի վարելն». (փոխանակ՝ որ է կամ զի հողմակոծէին ի վարելն): «Ահա այր չեբոջ և արբեցոջ». (փոխանակ՝ ահա այր, որ ուր է և ըմպէ):

ԾԱՆ. 1. Ներկայ դերբայի փոխանակ աւելի սովորական է կըր-

ճատուած նախադասութիւնների մէջ գործածել է վերջաւորութեամբ բաշտականք: Օր. «Փառաւոր առնէին զԱստուած, շոքէն այնպիսի իշխանութեան՝ մարդկան» (փոխանակ՝ որ որ, կամ որ էր մարդկան զայնպիսի իշխանութիւն):

ԾԱՆ. 2. Չատ չէգոքական բայեր, որոնք ներկայ դերբայ չունին՝ կրճատուելու ժամանակ դրուում են անցեալ դերբայով, չնայելով որ նոքա սահմանական ներկայի նշանակութիւն ունին: Օր. «Իբրև զճառայ երբեք ի տեառնէ իւրմէ և զօրէն ընդ հովանեալ... այնպէս և ես սպասեցի» (փոխանակ՝ որ երբեք է դեռնէ և զօրէն ընդ հովանէն):

§ 197. Որոշիչ երկրորդական նախադասութիւնը կրճատուում է միայն այն ժամանակ՝ երբ յարաբերական դերանունը դրուած է ուղղական հոլովով, իբրև ենթակայ, կամ տրական հոլովով, իբրև խնդիր «նաև էր բային (տես § 78): Օր. «Էր այլ մի ի փարիսեցոց անտի, Նիկոլէճոս անուն, իշխան հրէից» (փոխանակ ասելով՝ որո՞ւմ անուն էր Նիկոլէճոս, որ էր իշխան հրէից): Իսկ երբ որ յարաբերականը գործ է ածուած ուրիշ հոլովներով՝ կրճատել կարելի չէ: Օր. «Աստուած դանչնիշխանութիւնն պարգևեաց մարդոցն, որով կարող իցէ առնել՝ զինչ և կամեսցի»: «Նղիցին իբրև զսպիտակ, որոյ ոչ գոյ թիւ»: «Ո՞ր իցէ ի ձէնջ հայր, յոր խնդրիցէ որդի իւր հաց»:

## Բ. ԼՐԱՅՈՒՑԻՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ:

§ 198. Լրացուցիչ երկրորդական նախադասութիւնը լրացնում է գլխաւոր նախադասութեան որևէ գլխաւոր իմաստը, կամ փոխարինում է նորա գլխաւոր անդամներից մէկը. այնպէս որ կարելի է ասել, թէ լրացուցիչ երկրորդական նախադասութիւնը իւր բոլոր անդամներով գլխաւոր նախադասութեան անբաժանելի մասն է կազմում, իբրև նորա ենթական, սեռի խնդիրը, կամ բնութեան խնդիրը: Օր. «Որ համբերեայէ ի սպասումն նա կեսցէ»: «Արժանի է պաշտաման այն, որ զիս և զամենայն որևէ շնորհաբար դասէ»: Այս օրինակներում երկրորդական նախադասութիւնները գլխաւորներին համար ենթակայի



պաշտօն են վարում, ո՞վ կապրի—նա որ կհամբերէ—համբէրչը. ո՞վ արժան է պաշտօնի—նա որ լուսաւոր է պահում—լուսաւոր պահողը: «Պատեա, տէր, ղայնսի, ոյ՛ դոսիս ղիս»: «Որմիզդ որ ինչ Բարի էր՝ ղայն ասէր»: Այստեղ երկրորդական նախադասութիւնները գլխաւորներին համար հայցական սեռի խնդրի պաշտօն են վարում. Ո՞ւմ դատապարտիր—ինձ դատապարտողներին, չարչարողներին. Որմիզդ ինչ էր ստեղծում—ինչ որ բարի էր—բարի արարածները: «Որում հոսի՛ ընծայեցուցանէք զանձինս ձեր ի հնազանդութիւն»: «Նոյս, որ հոս աս ծովուն հայցէն՝ թուի, թէ ի ծով, ելանիցէ արեգական»: «Նովս, որ ի չարս-լիսն իրծանեցա՛ զործ բարուք զործէ Աստուած»: Այստեղ էլ երկրորդական նախադասութիւնները գլխաւորներին համար բնութեան խնդրի պաշտօն են վարում: Հնազանդում էք—որին կամենաք—ձեր կամեցածին: Երևում է—ծովի մօտ կանգնածներին: Աստուած բարի զործ է կատարում—չարութեան մէջ ընկղմածի միջոցով—սատանայով:

§ 199. Լրացուցիչ երկրորդական նախադասութիւնը կապւում է գլխաւորին հետ ընդհանրապէս որ ո՛ր, որ ինչ յարաբերական դերանուններով, որոնց համապատասխանում են վրլխաւոր նախադասութեան մէջ՝ նա, այն, նոյն ցուցական դերանունները, որոնք կամ ներգործութեամբ դրուած են լինում, կամ հասկացում են զօրութեամբ: Օր. «Մատեան որ՛ զերկդրամեանն պահանջէին՝ առ Պետրոս». (փոխանակ՝ մատեան առ Պետրոս այնոյնի, որք...): «Երանի՛ որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան». (փոխանակ՝ երանի այնոյնի, որ...): «Որ ո՛ր լուծցէ ի պատուիրանացս յայցանէ ի փոքունց՝ փոքր կոչեսցի յարքայութեան երկնից». (փոխանակ՝ նա փոքր կոչեսցի): «Որ զհրեշտակս և զհոգիս մարդկան կենդանիս պահէ՛ նոյն և զմարմինս կարող էր կենդանի պահել»: Որ յարաբերականը թուով համաձայնում է գլխաւոր նախադասութեան մէջ եղած ցուցականին, իսկ հոլովով՝ երկրորդական նախադասութեան ասացուածին, նայելով իւր վարած պաշտօնին: Իսկ ցուցական

դերանունը դրոււմ է այն Հոլովով որով որ պիտի դրուէր զըլ-  
խաւոր նախադասութեան մէջ իւր փոխանակած բառը: Ինչ-  
պէս այս օրինակում—«Որմիզդ՝ որ ինչ բարի էր՝ շոյն առնէր»  
— որ յարաբերականը դրուած է ուղղական Հոլովով՝ իբրև են-  
թակայ Բարի էր ասացուածին. իսկ շոյն ցուցականը դրուած է  
Հայցական Հոլովով, որով պէտք է դրուէր առնել բայի սեռի  
խնդիրը—Որմիզդ առնէր շոյն:

§ 200. Լրացուցիչ երկրորդական նախադասութիւնը կապ-  
ւում է զլիաւորին Հետ՝ նաև ղի և Լէ շաղկապներով: Ձի գործ  
է ածուում երբ երկրորդական նախադասութիւնը պարունակում  
է բացատրութիւն կամ ապացոյց զլիաւոր նախադասութեան  
իմաստին, և երբ երկրորդական նախադասութեան ասացուածը  
դրուած է ապառնի ժամանակով, (փոխանակ ստորադասականի):  
Օր. «Ձի բարեաց կամեցող է Աստուած՝ ուսուցանէ տէրն մեր  
յասելն, թէ այս են կամք Հօր իմոյ, ղի ամենայն ոք... Ընկալի  
զկեանսն յաւիտեանից»: Առաջին զի-ն դրուած է՝ որովհետև եր-  
կրորդական նախադասութիւնը բերուած է իբրև ապացոյց զըլ-  
խաւորին. (Աստուծոյ բարիք կամենալը երևում է սորանից, որ  
մեր Տէրն ասում է...) իսկ երկրորդ զի-ն դրուած է՝ որովհետև  
երկրորդական նախադասութեան ասացուածը գործ է ածուած  
ապառնի ժամանակով (փոխանակ ստորադասականի):— Ձի գործ  
է ածուում մանաւանդ այն ժամանակ, երբ երկրորդական նա-  
խադասութիւնը դրուած է զլիաւորից առաջ, և այս դէպքում  
ունի Լէ շաղկապի նշանակութիւն: Օր. «Ձի բամբասեալ ի չա-  
րութիւն է սատանայ՝ այն ամենեցուն յայտնի է». (փոխանակ՝  
յայտնի է ամենեցուն, Լէ բամբասեալ է սատանայ ի չարու-  
թիւն): իսկ Լէ կամ ԵԼէ գործ է ածուում երբ երկրորդական  
նախադասութիւնը պարունակում է զլիաւոր նախադասութեան  
ենթակայի կարծիքը կամ խօսքերը: Օր. «Պղատոն ցուցանէ,  
Լէ Իբրաիմայ որդեայն իմոյ յառաջ առ իս հոսոյն՝ զնա Լազարոս որ արարից»:

§ 201. Վերջին տեսակ երկրորդական նախադասութիւն-

ները, որոնք պարունակում են գլխաւոր նախադասութեան ենթակայի միտքը կամ խօսքերը՝ կոչւում են յաւելեալ նախադասութիւն, որոնք սովորաբար հայցական սեռի խնդիրներ են գլխաւոր նախադասութեան ասացուածին: Այսպէս վերի օրինակներում «թէ կերպարանաց արարիչ է Աստուած» նախադասութիւնը սեռի խնդիր է յոյսնէ ասացուածին. զինչ ցուցանէ— շինէն Աստուծոյ արարիչ կերպարանաց. իսկ «թէ ոք յերկուց որդւոցն իմոց յառաջ առ իս հասցէ՝ զնա թագաւոր արարից» նախադասութիւնը սեռի խնդիր է որոշեցի ասացուածին. զինչ ուխտեցեր— շինէն որոշեցի յերկուց որդւոցն զայն, որ յառաջ հասցէ:

Յաւելեալ նախադասութիւնը կոչւում է «շաղկ» երբ գլխաւոր նախադասութեան ենթակայի խօսքերը բառացի կերպով մէջ են բերւում, առանց որեւէ փոփոխութեան. կոչւում է «նոշաղկ» երբ պատմողը կամ գրքի հեղինակը ինքը իւր կողմից ականդում է գլխաւոր նախադասութեան ենթակայի խօսքերը: Օր. եթէ ասենք. «Ջրուան ուխտեաց, թէ ո ոք յերկուց որդւոցն իմոց յառաջ առ ի հասցէ՝ զնա թագաւոր որոշեցի». այստեղ բառացի մէջ են բերուած Ջրուանի խօսքերը առաջին դէմքով, ինչպէս որ նա ասելիս է եղել. սա «նոշաղկ» յաւելեալ նախադասութիւն է: Ասկ եթէ նոյն իմաստն արտայայտելու լինինք այսպէս. «Ջրուան ուխտեաց, թէ ո ոք յերկուց որդւոցն նոր յառաջ առ նա հասցէ՝ զնա թագաւոր որոշեցի»— այստեղ Ջրուանի խօսքերը անփոփոխ կերպով բերուած չեն, այլ հեղինակը իւր կողմից մէջ է բերում նորա խօսքերի բովանդակութիւնը. սա «նոշաղկ» յաւելեալ նախադասութիւն է:— Ուրիշ օրինակներ:

Ուղղակի յաւելեալ նախադ. «Միթէ ասիցէ՞ կաւն ցբրուտն, թէ ընդէր ոյրպէս որոշեցի զի»: «Սկսաւ Ջրուան ածել զմտաւ, ասէ. օգոհո ինչ իցէ յաշոս, զոր ստանէ»: «Ասէ ցնա Ջրուան. ի՞ որդին անուշահոտ եւ չոստոտ է, եւ դոս խոսարին եւ ժանդահոտ ես»:

Անուղղակի յաւելեալ նախադ. «Միւսն ևս անպիտանա-

գոյն է, զոր ասենն, թէ ղ Բարսիսնսն եր Կոմ ասենել զասն իւր  
յաշո»: «Քիժիշկք Համարին, թէ Բնու չիս դեռ, որ ի Կարդ Կրտսիցէ»:  
«Ոմանք վիճին, թէ Բնու իսկ ստատանս ոչ քորչէ ղ Կարդ»:

Ուղղակի յաւելեալ նախադասութիւնները շատ անգամ չեն  
գործածում ըն շաղկապը: Իսկ անուղղակի յաւելեալ նախադա-  
սութեան մէջ թէ շաղկապը զեղջուում է միայն այն ժամանակ,  
երբ գլխաւոր նախադասութեան ասացուածը (սովորաբար սեմ-  
բայը) ընկնում է յաւելեալ նախադասութեան մէջ: Օր. «Մին,  
սեմ, ճանապարհի գնալոյ նշանակ է, և միւսն՝ առնալոյ ինչ  
յումեքէ» (փոխանակ՝ սեմ, ըն մին... և միւսն):

§ 202. Լրացուցիչ երկրորդական նախադասութիւնները  
կրճատուելիս դառնում են ենթակայ կամ լսնդիր գլխաւոր նա-  
խադասութեան: Կրճատուելու ժամանակ դուրս են ընկնում  
գլխաւոր նախադասութեան ցուցական դերանունը և երկրորդա-  
կան նախադասութեան չարաբերականը կամ շաղկապները: Իսկ  
երկրորդական նախադասութեան ասացուածը փոխուելով զոյա-  
կանի, զոյականաբար գործածուած ածականի, անորոշ, ներկայ  
և անցեալ դերբայնելի՝ դրում է զեղջուած ցուցական դե-  
րանունան հոլովով իբրև մի անգամ գլխաւոր նախադասութեան:

Օրինակներ. «Անգիտութիւնն իւրժեղ զԱստուծոյ՝ անհնարին  
լիմարութիւն է» (փոխանակ՝ անհնարին լիմարութիւն է կար-  
ծել, ըն անգիտ իյէ Աստուած. փոխանակ՝ անհնարին լիմարու-  
թիւն է՝ ելէ որ իւրժեղայէ, ըն անգիտ իյէ Աստուած): «Անծանօթ  
լինէր մարդկան Աստուծոյ Բարեբարութիւնն» (փոխանակ՝ ան-  
ծանօթ լինէր մարդկան, ըն Բարեբար է Աստուած): «Ժողովեցին  
ղ Բարեբարին յամանս» (փոխանակ՝ ժողովեցին յամանս զայն,  
որ ինչ Բարեբար էր): «Եկեղեցոյ Աստուծոյ գործ այն է՝ զարտա-  
քինան իրօք ճշմարտութեան յանդիմանելը» (փոխանակ՝ ղ յան-  
դիմանայէ իրօք ճշմարտութեան): «Չմարդոյ լիրաւի ասեմք իրէ  
պատուհաս ընդ որոց գործիցէ» (փոխանակ՝ զմարդոյ ասեմք,  
ըն լիրաւի իրէ պատուհաս...): «Այլք զաղօթից կարծեցին ստա-  
յեալ ի Տեառնէն» (փոխանակ՝ այլք կարծեցին զաղօթից, ըն

«...» Տէրն): «Ամօթ կրեսցեն յոսանայէսն ի քաղաքս». (փոխանակ՝ ամօթ կրեսցեն (այնօրէիկ), ոչ յոսանայէսն ի քաղաքս): «Ընդ Պարսից քէշին Գորշ մատիցուք ի պայքար». (փոխանակ՝ մատիցուք ի պայքար ընդ այնոսէն, ոչք գտին զքէշն Պարսից): «Չարեաց որբիչ՝ զԱտուած չկամիք ասել». (փոխանակ՝ չկամիք ասել, Լէ Ատուած որբիչ իշէ չարեաց):— Այսպէս և Հետեւի օրինակները կարելի է կրճատել. Զի Բարեաց Կամեյոզ է Ատուած՝ ուսուցանէ Տէր մեր»— ԶԲարեաց Կամեյոզն Ատուածոյ ուսուցանէ Տէր մեր: «Որմիզդ՝ որ ինչ Բարին էր՝ զայն առնէր»— Որմիզդ առնէր զԲարի-Բարին: «Մատեան որչ զերկրայեանն պահանջէն՝ առ Պետրոս»— Պահանջողք երկրամենին մատեան առ Պետրոս: «Ո՞չ այնպէս ուխտեցեր, Լէ ո՞ր յերկուց որդուցն իմոց յառաջ առ իս հոսիչ՝ զիս թագաւոր որբիչ»— Ո՞չ ուխտեցեր Լազարիչոյնէլ յերկուց որդուցն քոց զայն, որ յաստի առ ինչ հասցէ— Ո՞չ ուխտեցեր թագաւորեցուցանել զաստի առ ինչ հասցէն յերկուց որդուցն քոց: (Ուղղակի յաւելելով նախադասութիւնը փոխադրելով անուղղակի յաւելելով): «Ասէ ցնա Զրուան. ի՞նչ որբին անուշահոտ և լուսաւոր է»— Ասէ ցնա Զրուան զիս որբին անուշահոտ և լուսաւոր Գորշ:

ԾԱՆ. Վերջին օրինակում երևում է հայցական հոլովով ենթակայի ծագման պայմանը. երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան սեռի խնդրի պաշտօնը վարելիս երբ կրճատում է՝ ոչ թէ ասացուածն է դրւում հայցական հոլովով, ինչպէս սպասելու էր, այլ ենթական. այսինքն փոխանակ ասելու «Զրուան ասէ զանուշահոտ և լուսաւոր Գորշ որդուց իւրոց»՝ ասում է. «Զրուան ասէ՝ զիս որբին անուշահոտ և լուսաւոր գորշ». Սակայն այս տեսակ կրճատումը չունաբանութիւն է, որից հարկաւոր է զգոյշ լինել, ինչպէս ասել ենք: (Տես § 40):

#### Գ. ՊԱՐԱԿԱՅԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ:

§ 203. Պարագայական երկրորդական նախադասութիւնները բացատրում են գլխաւոր նախադասութեան ասացուածքի

պարագաները: Սոքա Հինգ տեսակ են լինում — տեղի, ժամանակի, եղանակի, պատճառի և նպատակի պարագաներ, և սորա համաձայն պարագայական նախադասութիւններն ևս լինում են Հինգ տեսակ — տեղական, ժամանակական, եղանակական, պատճառական և նպատակական երկրորդական նախադասութիւններ:

§ 204. Տեղաւոր պարագայական նախադասութիւնը կապուում է գլխաւորին հետ՝ ուր, ուր ուրեք, յոր վայր, ուրի և նման մակբայներով, որոնց պատասխանում են գլխաւոր նախադասութեան մէջ՝ *անր, անրք, յայն վայր, անոր և նման մակբայները*, որոնք կամ ներգործութեամբ դրուած են լինում, կամ հասկացում են զօրութեամբ: Սր. «Ուր ժողովեսցին երկու կամ երեք յանուն իմ՝ *անր* եմ ես ի մէջ նոցա»: «Ուր գէշն իցէ՝ *անրք* ժողովեսցին արծուիք»: Սոցա մէջ երկրորդական նախադասութիւնները պատասխանում են *ո՛ւր* հարցումին. — *ո՛ւր* եմ ես — ուր ժողովեսցին երկու կամ երեք. *ո՛ւր* ժողովեսցին արծուիք — ուր գէշն իցէ: «Եկից և ես զկնի քո՝ յոր վայր և երթիցես». (փոխանակ ասելու՝ եկից և ես զկնի քո յայն վայր, ցոր վայր և երթիցես): «Յորեւէ հոսե արեգակն իցէ՝ յայն՝ լեւերէ սկսանի ի լուսնի լոյս ծնանել»:

§ 205. Ժամանակական պարագայական նախադասութիւնը կապուում է գլխաւորին հետ բազմաթիւ ժամանակական մակբայներով, ինչպէս են՝ *իբրև, յորժամ, յորում ժամու, մինչ, մինչ դեռ, այն ինչ, յորմէ հետէ, չեւ ես, մինչ չեւ, և այլն*. որոնց պատասխանում են գլխաւոր նախադասութեան մէջ՝ *յայնժամ, մինչև յայն վայր, ի նմին ժամու, ոհո, անդէն եւ անոր*: Սր. «Լուսին յորժամ կշիռ դէպ արեգական պատահիցէ՝ յայնժամ խաւարի արեգակն»: «Իբրև լուսն՝ զարմացան»: «Յորում ուուր ուտես ի պտղոյ ծառոյն՝ ի նմին ուուր մեռանիս»: «Մինչ դեռ՝ նա ընդ ժողովուրդսն խօսէր՝ *ահո* մայր նորա և եղբարք կալին արտաքոյ»: «Մի ճաշակեսցեն զմակ՝ *մինչև* տեսցեն զարքայութիւնն Աստուծոյ»: «Որմիզդն *մինչ չեւ* էր ծնեալ՝ թերակատար էր»:

§ 206. Եղանակական պարագայական նախադասութիւնը բացատրում է, թէ ի՞նչ էրպով, ի՞նչ բանի նման, ի՞նչ չափով է կատարում զլիաւոր նախադասութեան գործողութիւնը, և այս պարագաներն արտայայտում է երեք տեսակ, նշարագրութեամբ, համեմատութեամբ և բացարարութեամբ:

Նշարագրական պարագայական նախադասութիւնը բացատրում է զլիաւոր գործողութեան կատարուելու եղանակը՝ նորա մի երկրորդական գործողութեամբ, որ ընդհանրապէս արտայայտում է անցեալ դերբայով, և աշխարհաբար թարգմանում է «ծ և լով վերջաւորութեամբ դերբայներով: Օր. «Ի ծունը իջեալ առաջի նորա՝ կատակէին»: «Մեզ հարկ եղև ի սիրոյ բարեկամաց, ապա-ինեալ յԱստուծոյ շնորհսն՝ մխել ի խնդիր ճառիցս»: «Զթաղեալ մարմինս ընդ հողով՝ Երէշտեալ խոյստաւիտեալ արևու ցուցանեն»:

§ 207. Համեմատական պարագայական նախադասութիւնը բացատրում է զլիաւոր գործողութեան կատարուելու եղանակը, համեմատելով նրան մի ուրիշ գործողութեան հետ, որ նորա հետ որևէ նմանութիւն ունի: Օր. «Որպէ՛ս այլոց հաւատովք հաստատեաց զանդամալոյժն՝ նոյնպէ՛ս և այլոց սակաւուց տանջանօք աճէ յերկիւղ և ի խրատ զբազումս»: «Ամենայն արարածք զնորա բնութենէն կախեալ կան, որպէ՛ս ճառագայթք արեգական զանուէն կախեալ կան»: Այս օրինակներում գործողութիւնները միմեանց հետ համեմատւում են որոշութեան կողմից:

«Ոչ այնչափ միսն յանցուցանէ, որչափ զինին զեղծէ զրմպելիսն»<sup>1)</sup>: «Ելևէ դուք զիտէք պարզես բարիս տալորդուց ձերոց՝ որչափ ես առաւել հայրն ձեր երկնաւոր տացէ բարիս այնոցիկ, որ խնդրեն զնա»: «Լաւ է մարդոյ խոնարհութեամբ ծառայել անձին, քան անձին շուք եղեալ՝ և հաց հարստայց»: Այս օրինակներում էլ գործողութիւնները միմեանց հետ համեմատւում են քանակութեան կողմից:

§ 208. Բացարարական պարագայական նախադասութիւնը

<sup>1)</sup> Այսինքն՝ զրմպողան:

բացատրում է գլխաւոր նախադասութեան որևէ մասի ոյժը, չափը կամ աստիճանը, և կապւում է գլխաւորին Հետ՝ Բնչև, շէ (աշխարհաբար՝ որ) շողկապներով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ Համապատասխանում են այսպէս, այնչափ մակբայները: «Այսպէս՝ սիրեաց Աստուած զաշխարհ՝ Բնչև՝ զորդին իւր ետ»: Նոքա այնչափ ժմերտեալք (են)՝ Բնչև՝ զամենայն մարդկան աչս կամին ունել»: «Այնչափ Հակառակ են օրէնք արգարոյն՝ շնորհացն Յետուայ՝ շէ անդ երանութիւն մեծատանց տայ, և աստ երանութիւն աղքատաց»: (Ի՞նչ չափով Աստուած սիրեց աշխարհս.— այն չափով, որ մինչև անգամ իւր որդին տուեց: Ո՞ր աստիճան նոքա յանդգնել են.— մինչև այն աստիճան, որ ուզում են մարդոց աչքը փակել: Ո՞րչափ միմեանց Հակառակ են Արդարի օրէնքը և Յետուի շնորհքը.— այնչափ որ մէկը Հարուստներին է երանութիւն տալիս, իսկ միւսը աղքատներին):

§ 209. Պարտական պարագայական նախադասութիւնը բացատրում է գլխաւոր նախադասութեան գործողութեան պատճառը, և կապւում է գլխաւոր նախադասութեան Հետ այնպէս— շէ, յայն ասին— ասին շէ, իսկ այնպէս— շէ շողկապներով, որոնք յաճախ գորութեամբ են Հասկացւում: «Այնպէս, շէ յանարդութեանէն դարձոց ի դարդ՝ լիրաւի կոչի արարիչ»: Այստեղ երկրորդական նախադասութիւնը— անկարգութիւնից կարգի վերածեց՝ պատճառն է կազմում գլխաւոր նախադասութեան— նա լիրաւի կոչւում է արարիչ:— «Բայնչափ անմարմինք են Հրեշտակք և դևք՝ յայն ասին և ծնունդք ոչ գոն նոցա»: (Հրեշտակների անծնունդ լինելու պատճառն այն է, որ նոքա անմարմին են): «Այնպէս այնպէս տանջէ զնա Աստուած՝ շէ գիտէ նա զբարին և ոչ առնէ»:

§ 210. Նորոգական պարագայական նախադասութիւնը բացատրում է այն նպատակը, որի Համար կատարւում է գլխաւոր նախադասութեան գործողութիւնը: Երկրորդական նախադասութիւնը կապւում է գլխաւորին Հետ՝ շէ, որպէս շէ, իսկ այնպէս— շէ շողկապներով, և երկրորդական նախադասութեան սասցուածը դրւում է սահմանականի ապառնի ժամանակով, կամ



ստորադասականով: Սր. «Մոզքն նախ յաղեն և ապա սպանանեն զանասունսն, շէ յանգգայ ելանիցեն շունչքն ի մարմնոց անտի»: «Կեղծաւորքն սիրեն ի ժողովուրդս և յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս, «Դո՛ղէ» շէ երևեսցին մարդկան»: (Ի՞նչ նպատակով մոզքն յաղում և այնպէս են մորթում անասուններին—որպէս զի անասուններն անգգայ դրութեան մէջ շունչը փչեն: Ի՞նչ նպատակով կեղծաւորները հրապարակներում են աղօթք անում—որպէս զի մարդոց երևին): Վսն «Կարէ՛ ելանես ի խաջ՝ շէ նմանեսցիս մեռելոց»: (Խաջն ելնելու նպատակն այն է, որ մեռածի նմանի):

§ 211. Պարագայական երկրորդական նախադասութիւնները կարող են կրճատուել այլևայլ եղանակով:

Ս). Ժամանակական երկրորդական նախադասութիւնները կրճատուում են անցեալ դերբայով՝ եթէ նոցա նշանակած գործողութիւնը կատարուել է զլիսաւոր նախադասութեան գործողութիւնից առաջ, և ի կամ ընդ նախգրով անորոշ դերբայով՝ եթէ զլիսաւոր և երկրորդական նախադասութիւնների գործողութիւնները Համաժամանակ են կատարուում, կամ «Կեղծաւորքն յաջորդում միմեանց: Սր. «Տե՛ւեալ Յիսուսի զժողովուրդսն՝ ել ի լեռն» (փոխանակ՝ իբրև եպէս Յիսուս): Ստեղծեալ զնա և զամուսինն նորա և երբեք ի դրախտին՝ գային Հանապազ պատուիրէին նմա» (փոխանակ՝ յորժամ «ստեղծին և երբն ի դրախտին): «Եկեալ Հիւղեայն՝ տեսանէր, զի ոչ անսայր նմա Աղամ» (փոխանակ՝ իբրև եկն Հիւղն): Այս անցեալ դերբայը աշխարհաբար թարգմանուում է անորոշ դերբայի գործիական հոլովով—տեսնելով, ստեղծելով, դնելով, գալով և այլն:—«Ի Բասանէն վաղվաղակի չորացաւ» (փոխանակ՝ այն ինչ Բասան): «Ի Հարախօսէն նորա ի Հրէիցն՝ ոչ ինչ ետ պատասխանի» (փոխանակ, Դնչդեպս Հարախօսէն): «Ղնդ ծագել արեգական՝ օդոյն զխոնաւութիւն ջուրց առեալ զճառագայթիւք արևու արկանէ» (փոխանակ՝ այն ինչ ծագէ արեգակն): Այս անորոշ դերբայը աշխարհաբար թարգմանուում է իսկ վերջաւորութեամբ ներկայ դերբայով—բուսնելիս, չարախօսուելիս, ծագելիս, և այլն:

ԾԱՆ. Ժամանակական երկրորդական նախադասութիւնը անցեալ դերբայով կրճատուում է միայն այն ժամանակ՝ երբ նորա ենթական և գլխաւոր նախադասութեան ենթական միևնոյնն է. իսկ եթէ նոքա տարբեր ենթականեր ունին՝ կրճատել կարելի չէ: Օր. այս խօսքը— շէքը նստաւ անդ (Յիսիայ)՝ մատեան առ նա — նորա—չէ կարելի կրճատելով ասել. — անդ՝ մատեան աշակերտք:— Այս կանոնին դէմ խոտորումներ երբեմն պատահում են ընտիր մատենագիրների մէջ: Օր. Եզնիկ ունի անկանոն կերպով. «Տե՛ս նմա հիւսիսն յերկրէ՛ ստեղծ զնա» (Եզնիկի յայտնաբերում):

Բ). Եղանակական երկրորդական նախադասութիւնները կրճատուում են որպէ՛ս, իբրև, մինչև նախադրուութիւններով: Մինչև-ի մօտ երկրորդական նախադասութեան ղիմաւոր ասացուածը փոխուում է անորոշ դերբայի; իսկ միւսներին մօտ բոլորովին դուրս է ընկնում: Օր. «Որպէ՛ս ծաղիկ վայրի՛ այնպէս ծաղկի» (փոխանակ՝ որպէս ծաղիկ ծաղիկ վայրի՛ այնպէս ծաղկի մարդ): «Իբրև ցեց Հանդերձի և որդն փայտի՛ նոյնպէս սրբամտութիւն վնասակար է սրտի առն» (փոխանակ՝ իբրև Գարեգին է ցեց Հանդերձի, և որպէս Գարեգին է որդն փայտի՛ նոյնպէս...): «Որպէ՛ս ցօղ յամարայնի և անձրև ի Հունձս՝ նոյնպէս ոչ յարգոյ անզգամի պատիւ» (փոխանակ՝ որպէս ոչ է յարգոյ ցօղ յամարայնի և ոչ է յարգոյ անձրև ի Հունձս՝ նոյնպէս...): «Միւսն զառիւծու կորիւն սնուցեալ ածէ ի Համբոյր և ի քրծինս՝ մինչև որպէ՛զ զսնուցանելեան» (Հատն մանանխոյ լինի ծառ՝ մինչև քաղ թռչնոց երկնից և հանգիւլ յօտս նորա» (փոխանակ՝ այնպէ՛ս ածէ ի Համբոյր՝ մինչև որպէ՛զ զսնուցանելեան.— մինչև քաղ թռչունք և հանգիւլն յօտս նորա):

Գ). Պատճառական երկրորդական նախադասութիւնները կրճատուում են զան նախադրութեամբ, որի մօտ երկրորդական նախադասութեան ասացուածը ղրուում է անորոշ դերբայի սեռական Հոլովով, իբրև խնդիր նախադրութեան: Օր. «Ջահ և զերկիւղ մարդոյն՝ արկեալ է արարչին ի վերայ գազանացն, զան առաւել զնա որպէ՛ս էլ» (փոխանակ՝ շի առաւել պատուեաց զնա): «Յայտ է եթէ ի բարոյ արարչէ լեալ են (գա-

զանք), վասն միոյ իրիք օգտակարին գոհանելոյ ի նոսա»։ (փոխանակ՝ հոնի մի՛ ինչ օգտակար գտանի ի նոսա)։

Գ). Նպատակական երկրորդական նախադասութիւնները կրճատուում են անորոշ դերբայով, որ դրոււմ է զանազան հոլովներով, ինչպէս անորոշ հայցականով, տրականով, առ ի և վասն նախադրութեամբ սեռականով։ Օր. «Առաքեաց զորդի իւր՝ երկու փրկել զնոսա և առնուլ զնմանութիւն ծառայի»։ (փոխանակ՝ զի երկէնց և փրկէոյց զնոսա և առնէ զնմանութիւն ծառայի)։ «Մի՛ գունդս առ գունդս կազմեցցեն՝ հոնելոյ զհէնն յաշխարհէ»։ (փոխանակ՝ շէ հոնցէն)։ «Գազանք տուան զարհուրեցուցիչք՝ առ ի շհոսրոսաւոյ հողեղինին»։ (յի մի հոսրոսայի)։ «Զկիսոցն առաքինութիւն, վասն զայս ի բարուք նախաձ յորդորելոյ՝ անդատին յորովայնէ քարոզէ»։ (փոխանակ՝ զկիսոցն առաքինութիւն անդատին յորովայնէ քարոզէ, շէ զայս ի բարուք նախանձ յորդորելոյցէ)։

Ե). Տեղական երկրորդական նախադասութիւնները զրաբարոււմ սովորաբար չեն կրճատոււմ։

### ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԵՒ ՅԱՐԱԲԵՐԵԱԼ։

§ 212. Յարաբերական դերանունը, որով որոշիչ և լրացուցիչ երկրորդական նախադասութիւնները կապոււմ են դրախաւորին հետ՝ մի քանի իրան յատուկ գործածութիւններ ունի, որոնք հարկաւոր է գիտնալ։— Ինչպէս տեսանք՝ (§ 195) յարաբերականը թուով համաձայնոււմ է իւր յարաբերեալին հետ, իսկ հոլովով երկրորդական նախադասութեան ասացուածին կամ ուրիշ անդամին հետ։ Օր. «Մարդ կամաւ երթայ յուսումն այնպիսի երոյ, յորոյ և մեկնել կարող է»։ «Յիրաւի պատօժի մարդ, զի ոչ եկաց յոյն, շոր Աստուածն կամի»։ «Զծառոյ, որ ի սակաւ ինչ բարձրութեան են՝ ասեմք թէ երկնաբերձ են»։ (Առաջին օրինակոււմ յորոյ յարաբերականը դրուած է բացառական հոլովով՝ իբրև բնութեան խնդիր ֆիզիկալ բային։ Երկրորդ օրինակոււմ շոր

դրուած է հայցական հոլովով՝ իբրև սեռի խնդիր և ասացուածին: Երրորդ օրինակում որ դրուած է ուղղական հոլովով՝ իբրև ենթակայ և ասացուածին: Իսկ բոլոր օրինակներում էլ յարաբերականները թուով համաձայնել են իրանց յարաբերականներին հետ. իրաց—յորոց, զճառոց—որք, յայնմ—գոր):

§ 213. Սակայն երբ յարաբերականը գործ է ածուած ուղղական հոլովով նա ընդհանրապէս դրուում է եզակի թուով, թէպէտ և յարաբերեալն յոգնակի լինի: Օր. «Զեռանս, որ ի ջուրսն ի ներքս են՝ ի չորից հիւթոցն յօղեալ են»: «Նոյ», որ մօտ առ ծովուն կայցն՝ թուի թէ ի ծովէ ելանէ արեգակն»: Նոյնը պատահում է երբեմն՝ երբ յարաբերականը դրուած լինի հայցական հոլովով: Օր. «Զգործսն, զոր ես գործեմ»:

ԾԱՆ. Սակայն անսովոր չէ և յոգնակի յարաբերականն այսպիսի դէպքերում: Օր. «Արեգն, որ զցայգ յերկինս են»: «Արեգն, որ զմտղուկս քամէք և զուղտս կլանէք»: Ինչպէս երևում է՝ այսպիսի դէպքերում յարաբերականն եզակի կամ յոգնակի դնելը կախուած է եղել մատենագիրների ճաշակից և կամքից, նախնականն ու կանոնաւորն եղել է յոգնակին (§ 212), բաց սովորականը՝ եզակին:

§ 214. Երբ յարաբերեալ են լինում նա և այն<sup>1)</sup> դերանունները՝ շատ յաճախ զեղջուում են. և այս ժամանակ յարաբերականի տակ զօրութեամբ պէտք է հասկացուի զեղջուած յարաբերեալն ևս: Օր. «Հնձես՝ գոր ոչ սերմանեցեր». (փոխանակ՝ Հնձես զայն, զոր ոչ սերմանեցեր): «Զոր արդարն ասեն՝ չէր արդար». (փոխանակ՝ չէր արդար նա): «Մի ինչ տարցին ընդ միտ՝ որ անարգեցանն». (փոխանակ՝ մի ինչ տարցին ընդ միտ այն):

1) Վայելուչ հայկաբանութեան մէջ այն գործ է ածուում ընդհանրապէս այն ժամանակ, երբ որ յարաբերականը (այսինքն երկրորդական նախադասութիւնը) նորանից յետոյ է գալիս. իսկ նա գործ է ածուում՝ երբ յարաբերականը (երկրորդական նախադասութիւնը) դրուած է նորանից առաջ: Օր. «Զեմ ես արժանի պաշտաման, այն, որ զիս լուսաւոր պահէ»: «Երանի այնքի, որ սուրբ են սրտիւք»: «Յորն որ յերկիր լեալ է՝ ի նահէ և գազանքն արարեալ են»: «Որ չար ինչ է՝ նոր և ամենայն ինչ վնասակար է»: «Որ կամիցի առնուլ զշապիկս քո՝ թող է նա և զբաճկոն քո»:

հոգի, որ անարգեցանն): «Լուսաւորքն լուսատու լինին՝ որ Ի ներքոյ երկնից»։ (փոխանակ՝ լուսատու լինին այսպէս, որ են Ի ներքոյ երկնից):— Զեղջումը կարող է տեղի ունենալ՝ երբ յարաբերականն ու յարաբերեալը նոյնահոլով են, նոյնպէս և՛ երբ նոքա միմեանցից տարբեր են հոլովներով: Վերջին դէպքում կարող է պատահել ա) յարաբերեալն ուղղական, իսկ յարաբերականը ուրիշ հոլովով. բ) յարաբերականն ուղղական, իսկ յարաբերեալը ուրիշ հոլովով, և գ) թէ՛ յարաբերականն և թէ՛ յարաբերեալը թեք, բայց միմեանցից տարբեր հոլովներով:

§ 215. Երբ յարաբերականն ու յարաբերեալը նոյնահոլով են՝ յարաբերեալը գեղջուելիս՝ յարաբերականը որևէ փոփոխութիւն չէ կրում, այլ դրում է իւր բնական թուով և հոլովով, և նորա տակ դիւրաւ հասկացում է գեղջուած յարաբերեալը: Օր. «Որով կամիք՝ ընծայեցուցանէք զանձինս ձեր Ի հնազանդութիւն»։ (գորութեամբ հասկացում է՝ նա ընծայեցուցանէք): «Մատեան որ Գերկղրամեանն պահանջէին՝ առ Պետրոս»։ (Հասկացում է՝ մատեան առ Պետրոս այսպէս, որք.): «Զոր միոյն թողեալ է՝ միւսն առնու նովին հոգևով»։ (Հասկացում է՝ զայն միւսն առնու):

§ 216. Երբ յարաբերեալը ուղղական հոլովով է, իսկ յարաբերականը ուրիշ հոլովով՝ յարաբերեալը գեղջուելիս՝ յարաբերականն անփոփոխ պահպանում է իւր ձևը, որի տակ գորութեամբ հասկացում է գեղջուած յարաբերեալը: Օր. «Մի պատուօք ինքնակացութեան տգիտաց կարծիցին՝ որոյ արարածն Ի Մովսիսէ ոչ ճառեցաւ»։ (փոխանակ՝ կարծիցին այսպէս որոյ արարածն... Տգէտները չկարծեն, թէ ինքնագոյութեան պատիւ ունին նոքա, որոց ստեղծագործութիւնը Մովսէս չէ գրել): «Զոր շահպետ վայրաց կոչեն՝ ոչ մերթ մարդ երևէր և մերթ օձ»։ (փոխանակ՝ նա ոչ մերթ մարդ երևէր...): «Նա է Տէր աշխարհի, և ոչ՝ զորէ գուքն կարծեցէք»։ (փոխանակ՝ և ոչ այն, գորմէ...):

§ 217. Երբ յարաբերեալը թեք հոլովով է, իսկ յարաբե-

րականը ուղղական հոլովով՝ յարաբերեալը զեղջուելիս՝ յարաբերականը երկու կերպ կարող է գրուել. — կամ իւր բնական ձեւով, այնպէս որ ոչ մի հետք չէ մնում յարաբերեալի ինչ հոլովով գործածուելու մասին, կամ, խօսքի պարզութեան համար, յարաբերականն իւր հոլովը կփոխէ և կգրուի զեղջուած յարաբերեալի հոլովով: Այս երկու եղանակից աւելի գործածականն է առաջինը: Օր.

Յարաբերականը իւր բնական ձևով: «Երթալք և դուք յայգին և որ ինչ արժան է՝ առնուցուք». (փոխանակ՝ դ՞նք առնուցուք): «Լուսաւորքն արարան՝ լուսատու լինել որք ի ներքոյ երկնից». (փոխանակ՝ այնչի՛նչ, որք են ի ներքոյ երկնից): «Վայ որ ասէ զքաղցրն դառն». (փոխանակ՝ վայ այն, որ ասէ): «Որ կամիցի փոխ առնուլ ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս». (փոխանակ՝ մի դարձուցաներ զերեսս ի ն՛մանէ): Այս օրինակներում կարելի էր յարաբերականը զեղջուած յարաբերեալի հոլովով դնել և ասել. «որ ինչ արժան է. լուսատու լինել որք ի ներքոյ երկնից. վայ որք ասէն զքաղցրն դառն. յորք կամիցին փոխ առնուլ՝ մի դարձուցաներ զերեսս:

Յարաբերականը յարաբերեալի հոլովով գրուած: «Որք խնդրէ ի քէն՝ տուր. (փոխանակ՝ այն որ խնդրէ՝ տուր): «Որք մտանեն՝ չտալք թոյլ մտանել». (փոխանակ՝ այնչի՛նչ, որք մտանեն): Այս օրինակներում էլ կարելի էր յարաբերականը իւր բնական հոլովով դնել և ասել. «որ խնդրէ ի քէն՝ տուր. որ մտանեն՝ չտալք թոյլ:

§ 218. Երբ յարաբերականն ու յարաբերեալը միմեանցից տարբեր թեք հոլովներով են՝ յարաբերեալը զեղջուելիս՝ յարաբերականը նոյնպէս կարող է թէ՛ իւր բնական հոլովովը գրուել, այնպէս որ յարաբերեալի ինչ հոլովով լինելուն հետք չմնայ, և թէ՛ իւր հոլովը փոխել ու զեղջուած յարաբերեալի հոլովովը գրուել: Աերջին եղանակն աւելի սովորական է: Օր.

Յարաբերականն իւր հոլովով: «Վնաս ինչ ոչ գտի յառնս յայսմիկ՝ դուք գուք չարախօսէքդ». (փոխանակ՝ ոչ գտի յառնս

չայսմիկ վնաս ինչ յայնչսնէ, զորոց դուք չարախօսէքդ.— այս մարդուն մէջ ես չգտայ և ոչ մինը այն յանցանքներից, որոց մասին չարախօսում էք): «Լաւ է ոչ ուտել միս և ոչ՝ որով եղբայրն իմ գայթակղեսցի»։ (փոխանակ՝ և ոչ շոյն ամենայն, որով եղբայրն գայթակղեսցի):

Յարաբերականը յարաբերեալի հոլովով դրուած. «Սատանայ լիրաւի պահանջի ընդ որոյ յանդդնեցաւն պատիժս»։ (փոխանակ՝ պահանջի պատիժս ընդ այնոյնէ, յոր յանդդնեցաւն): «Որժանի որոյ գործեցաքն՝ առնումք զհատուցումն»։ (փոխանակ՝ արժանի այնոյնէ, շոր գործեցաքն): «Առնուլ զքեզ վկայ՝ որոյ տեսերդ և որոյ երևեցայց քեզ»։ (փոխանակ՝ առնուլ զքեզ վկայ այնոյնէ, շոր տեսերդ և այնոյնէ, յոր երևեցայց քեզ):

§ 219. Երբ երկրորդական նախադասութիւնն ընկած է գլխաւոր նախադասութեան անդամների մէջ՝ երբեմն պատահում է, որ խօսքի սկզբում գտնուած գոյական-յարաբերեալը իւր հոլովը փոխում է և ընդունում իրան անմիջապէս հետեւող յարաբերականի հոլովը. իսկ այն հոլովով, որով պէտք է դրուէր այդ յարաբերեալը՝ կրկնում են նա, այն դերանունները երկրորդական նախադասութիւնից անմիջապէս յետոյ: Սր. Մ. շախմատ, որ առանձինն ի յայտնի ինչ ժամանակի սպանող է՝ նովմէ՛ զմաղձս հնացեալս հնարին բժիշկք հատանել»։ (փոխանակ՝ յախմատ, որ սպանող է՝ զմաղձս հնարին հատանել): «Զգործսն, շոր ես գործեմ՝ նովն իսկ են որ վկայեն վասն իմ»։ (փոխանակ՝ գործսն իսկ, զոր ես գործեմ՝ վկայեն վասն իմ): «Զվէմն, շոր անարգեցին շինողքն՝ նա եղև զլուխ անկեան»։ (փոխանակ՝ վէն, զոր անարգեցին՝ եղև զլուխ անկեան):

§ 220. Երբեմն երկրորդական նախադասութիւնը որ յարաբերականով դրուում է գլխաւոր նախադասութիւնից առաջ, այնպէս որ յարաբերեալը, սովորական կանոնի հակառակ՝ դրուում է յարաբերականից յետոյ: Սր. «Որ բասիլիսկոսն կոչի ազնւոյնս՝ հայելով միայն սատակէ զմարդ և զանասուն»։ (փոխանակ՝ ազնւոյնս զհայելով, որ բասիլիսկոսն կոչի՝ հայելով սատա-

կէ): «Որ առաքեացն զիս մկրտել ջրով նա ասաց ցիս»։ «Զորմէ գրեաց Մովսէս յորէնսն՝ գտաք շնորհաւոր»։ Զոր ետուրն ցիս՝ ոչ կորուսի ի նորմէն»։

ԾԱՆ. Վերջին դիպուածում պատահում է, որ յարաբերականն ու յարաբերեալը դրուում են մէկը միւսի հորովով. այսպէս՝ «Ապստամբութիւնն ուսուցանես որոյ ի հեթանոսս «մեռնյն հրէայ» են»։ փոխանակ ասելու «Ապստամբութիւնն ուսուցանես «մեռնյն Հրէայ, որ ի հեթանոսս են»։ Այս ձևն աւելի պատահում է յունաբան մատենագիրների մօտ (Մովսէս Խորենացի), և ընտիր հայկաբանութիւնն չէ համարուում։

§ 221. Յաճախ պատահում է, որ յարաբերականի փոխանակ գործ է ածուում շէ, նոյնպէս և որ, ուստի, յորժամ մակերայնորը <sup>1)</sup> (տ. § 194)։ Օր. «Որդի այնպիսի ետ նմա, շէ գերկինս և գերկիր առնիցէ»։ «Եկին ի քաղաքն, որ զնշանան արարեալ էր»։ «Գարձայց ի տուն իմ, ուստի ելին»։ «Ի ժամանակի, յորժամ բորբոքեսցի բարկութիւնն նորա»։ (Փոխանակ՝ որ առնիցէ, յորժամ արարեալ էր, յորմէ ելի, յորժամ բորբոքեսցի)։

§ 222. Յարաբերեալն աւելի որոշ կերպով արտայայտելու համար՝ շատ անգամ յարաբերականից յետոյ դրուում է ցուցական կամ ստացական դերանունն յարաբերականի հոլովով. (Տես § 141)։ Օր. «Վանեփուկն թուփ ինչ է, որոյ սերմն նորոս դեղ է»։ «Զորոյ կալայ զաջոյ ձեռանէ նորոս»։ «Զբաժակն, շոր ետ ինձ հայր՝ ո՛չ ըմպիցեմ զնա»։ «Փայտ պտղաբեր, որոյ սերմն իւր ի նմին»։ Այս օրինակներում նորոս, զնա, իւր բառերը կարող էին և չլինել։

§ 223. Վերջապէս նկատելու է, որ յարաբերականը շատ անկանոն գործածութիւններ ունի, որոնք գրաբարի համաձայնութեան կանոններով չեն արդարանում, այլ կամ աշխարհաբարի ազդեցութիւնն են, կամ օտար լեզուների, կամ գրչագիր-

<sup>1)</sup> Որ, ուստի հոլովական ձևեր են անորոշ դերանուան. յորժամ բարդուած է որ և ժամ բառերից, իսկ շէ այստեղ անորոշ դերանունն է։ Տես Գրաբ. հոլ. § 73, ճան., § 74, և այս գրքում §§ 129, 134, Ուրեմն շատ բնական է որ յարաբերականի փոխարինուելը ուրիշ դերանուններով, որոնք նշանակութեամբ շատ նման են որին։



ների աղաւաղութիւն պէտք է համարուին: Այսպէս պատահում ենք. «Մանաւանդ որ քան զամենեսինն իմաստնագոյն համարին շՊշարհ»: (Պէտք էր՝ շրբ քան զամենեսինն իմաստնագոյն համարին զՊղատոն, կամ Պղատոն): «Որ ինչ Մովսիսի չէ ասացեալ՝ այլ մարգարէք լցին»: (Պէտք էր՝ զոր ինչ): «Զխնրդ պաշտիցեմք զերկիր, որ հանապազ բրեմք և ցանկ կոխեմք»: (Պէտք էր՝ շրբ): «Ասաց ինձ զամենայն, որ ինչ իմ գործեալ է»: (Պէտք էր՝ շրբ ինչ): «Վասն որչ յայրս և ի փապարս բնակեալ են սորբ հորսն մեր». (Պէտք էր՝ վասն սրբոց հարցն մերոց, որ բնակեալ են յայրս և ի փապարս. կամ զոնէ՛ վասն որոց յայրս և ի փապարս բնակեալ են սուրբ հարքն մեր): Եւ այլն:

§ 224. Վերոյիշեալ բոլոր դիպուածներում յարաբերական դերանունը գործածուել էր գոյականաբար, այսինքն դրուած էր գոյականի փոխանակ, և իբրև գոյական՝ եղել էր ենթակայ, սեռի և բնութեան խնդիր և յատկացուցիչ: Քայց որ յարաբերականը կարող է գործածուել և ածականաբար՝ գոյականի հետ, իբրև որոշիչ և հարցական բառ: Օր. «Յորմէ որբէ երկիր լեալ է՝ ի նմանէ և զաղանքն արարեալ են»: «Յորմէ որբու ըստես ի պտղոյ ծառոյն՝ ի նմին աւուր մեռանիս»: «Մարդ յոր հոշն և կամիցի՝ կարող է դառնալ»: Որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ» (Սշխարհաբար՝ որ որբէնց որ, որ օրբ որ, որ հոշն որ, ինչ չափով որ): «Ոչ զիտէք՝ յորմէ ժամու տէրն ձեր զայ»: «Ո՞ր շնորհ է ձեր»:— Ածականաբար գործածուած յարաբերականը իւր գոյականից առաջ է դրոււմ և նորա հետ համաձայնում է թուով և հոլովով:

### ՀԱՄԱԿՐՈՒԹԻՒՆ ԶՈՒԿՆԻՐՈՒԹԵԱՆ ԶԵՒՈՎ:

§ 225. Զուգադրութեան ձևով միմեանց հետ կապոււմ են հասարակօր նախադասութիւններ, որոնք քերականօրէն

մէկը միւսից անկախ են, այսինքն նոցանից ոչ մէկը միւսի քերականական մասը չէ կազմում. այլ նոցանից ամեն մէկն առանձին վերցրած՝ պարունակում է անկախ և ամփոփ իմաստ: Հաւասարազօր նախադասութիւնները միմեանց հետ ներքին և արտաքին կապակցութիւն ունին: Ներքին կապն է նոցա բովանդակութիւնը—նոցանից ամեն մէկը, և բոլորը միասին ծառայում են որևէ տրամաբանական իմաստ ամբողջացնելու կամ ապացուցանելու: Իսկ արտաքին կամ քերականական կապն են կազմում շաղկապները, որոնք շատ անգամ ներգործութեամբ չեն դրւում, այլ հասկացւում են գորութեամբ:

Որևէ առարկայի մասին դատողութիւն անելիս՝ մենք կամ ժխտում ենք մի բան այդ առարկայի վերաբերութեամբ, կամ հաստատում. այսպէս և երբ միևնոյն առարկայի մասին մի քանի մտքեր ենք յայտնում՝ սոքա կարող են լինել միմեանց համաձայն կամ անհամաձայն: Այս պատճառով հաւասարազօր նախադասութիւնների համադրութիւնը երկու գլխաւոր տեսակ ունի. համադրութիւն համադրութիւն նախադասութիւնների, որ կոչւում է բաղնիստի համադրութիւն, և համադրութիւն անհամադրութիւն: Առաջին տեսակը՝ մի միտք արծարծում է միայն մի կողմից, իսկ երկրորդ տեսակը երկու, միմեանց շատ թէ քիչ հակառակ կողմերից:

### ԲԱՂՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ:

§ 226. Բաղնիստական համադրութեամբ միանում են այնպիսի նախադասութիւններ, որոնք միմեանց համաձայն են և միևնոյն տեսակէտից արծարծում են միտքը: Այս տեսակ համադրութիւնը աւելի գործածական է՝ ա) բնութեան երևոյթների և բ) մարդկային գործունէութեան նկարագրութիւնների մէջ, երբ այդ երևոյթները միմեանց հետ կապակցութիւն ունին տեղի վերաբերութեամբ. գ) այնպիսի երևոյթների նկա-

բազումութեան մէջ, որոնք միմեանց հետ կապակցութիւն ունին ժամանակի վերաբերութեամբ. դ) նոյնպէս գործ է ածուում՝ երբ հարկաւոր է մի ընդհանուր միտք բացատրել, արծարծել մասնաւոր մտքերի միջոցով, որոնք համաձայն են ընդհանուր մտքին: Օր.

ա) «Զմիջոց հովտին մեծի լնու (Նրուանդ) մարդկութեամբ և պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիր. ինչ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց և հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբոսովն գայլ բոլորակութիւն ական. ինչ զբազմութիւն այգեստանոյ իբր զարտեանաց խիտ և գեղեցիկ ծիր, որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնաձև՝ արդարև գեղաւոր կուսից յօնից դարեւանդաց համեմատ. ինչ ի հարաւոյ հարթութիւն դաշտոց՝ ծնօտից պարզութեան գեղեցկութիւն. ինչ գետն բերանացեալ դարաւանդօք ափանցն՝ գերկթերթեան նշանակէ շրթունս»:

Խորենացին այս հատուածում նկարագրում է բնութիւնը, Նրուանդակերտ քաղաքի դիրքը, նմանեցնելով նրան մարդու երեսի: Հեղինակն սկսում է քաղաքի կենդրոնից, և հետզհետէ ընդարձակում է նկարագրի շրջանը—քաղաքի շուրջը՝ ծաղկոցներն ու բուրաստանները, սոցանից յետոյ գալիս են այգեստանները, աւելի հեռուն՝ հիւսիսային կողմից կիսաբոլորակ բարձրաւանդակը, իսկ հարաւային կողմից լայնատարած հարթ դաշտերը, և աւելի հեռուն՝ Նրասի գետը, որ երկճղում է այս դաշտերը: Եւ իւրաքանչիւր առարկան նա համեմատում է մարդկային երեսի մի մասին, որպէս զի կատարեալ դուրս գալ նմանութիւնը Նրուանդակերտի և երեսի մէջ. այսպէս քաղաքի կենդրոնը համեմատում է աչքի բբին հետ. ծաղկոցները՝ բբի շուրջն եղած բոլորակութեան, այգեստանները՝ արտեանունքների, հիւսիսային կիսաբոլորակ բարձրաւանդակը՝ յօնքերի, հարաւային լայնարձակ դաշտերը՝ ծնօտների, Նրասի գետը՝ բերանի: Այս համադրութիւնը մի ամբողջութիւն է կազմում—Նրուանդակերտի դիրքի նկարագրութիւնը, համեմատութեամբ

մարդկային երեսի հետ. իւրաքանչիւր նախադասութիւն սորա մէջ՝ կապուած է միւսներին հետ՝ պատկերն ամբողջացնելու համար, և իւրաքանչիւր նախադասութիւն միեւնոյն կողմից է արծարծում նկարագրելը—համեմատելով քաղաքի դիրքը մարդու երեսի հետ:—Այս տրամաբանական ներքին կապն արտաքուստ էլ պահպանուած է ինչ շաղկապով, որ միացնում է համադրութեան հաւասարազօր նախադասութիւնները:

§ 227. բ) «Ո՞րքա՞ զհետ ցուցն և այժեմանցն արշաւելով՝ զխիզախականն և զաղեղնայինն և եթ բարբառեսցին: և ո՞չքա՞ զհետ բուլից եղջերուացն և եղանց ձիարձակ եղեալ՝ զգօրծ կորովաձիգ արանցն <sup>1)</sup> ցուցանեն. և ի՞նչ սուսերօք իբրև զմեծամարտիկս՝ զսաստիկանդամ երամս վարազացն գլորեցուցեալ սպանանեն. և շո՞քա՞ ի մանր մանկանց նախարարաց որդւոցն՝ դաստիարակօք և ծառայիւք՝ զայլևայլ սեռս ի թռչնոցն որսացեալ բազայիւք՝ դարձեալ բերիցեն ի յաճումն ընթրեացն ուրախութեան»:

Այստեղ էլ Ղազար Փարպեցին մի ուրիշ նկարագրութիւն է անում—մարդկային գործունէութեան: Նկարագրութեան նիւթն է հայ նախարարների որսորդութիւնը հինգերորդ դարում: Որսորդութիւնը իբրև մի ամբողջ՝ կազմուած է մի քանի մասերից—ցիւռերի և այժեմաների որս—նետաղեղով, եղջերուների և եղնիկների որս—նիզակներով, վարազների որս—սրերով, թռչունների որս—բազէներով: Չորս հաւասարազօր նախադասութիւններ այստեղ իմաստով սերտ կապուած են միմեանց հետ, որովհետև բոլորը ծառայում են պատկերը ամբողջացնելու, և նոցա մէջ արտաքին կապը պահպանուած է և շաղկապով:

§ 228. գ) Յօրժամ ի Հայոց այրուձի ի դուռն երթայր՝ ի ձեռն պատուաւորի զօրագլխի ուրուք այր ընդ առաջ յղէր (թագաւորն Պարսից), և հարցանէր զողջոյն և զխաղաղութիւն Հայոց աշխարհին, և երկիցս և երիցս անգամ զնոյն առնէր,

<sup>1)</sup> Երևի պէտք է լինի՝ մատանցն:

և զհանդէս զնդին ինքնին տեսանէր թագաւորն, և առաջի մեծամեծացն գովութիւն մատուցանէր ամենեցուն, և լիշէր զնախնեացն վաստակս, և զառն առն քաջութիւն պատմէր նոցա»:

Այս համադրութեամբ Եղիշէն պատմում է ընդունելութեան այն ձևը, որով վարւում էին Պարսից թագաւորները՝ Հայաստանից զինուորական զնդի Պարսից արքունիքը հասնելիս: Վերը բերուած նկարագրութիւններէց այս պատմութիւնը տարբերում է նորանով, որ այնտեղ նկարագրութեան առարկաները (Երուանդակերտը և որսորդութիւնը) վերցուած են մի որոշ ժամանակում, բայց տարբեր դիրքերում (տեղերում): Իսկ այստեղ ընդհակառակն՝ միևնոյն տեղում, բայց տարբեր ժամանակներում: Այնտեղ գործողութիւնները համաժամանակ են. իսկ այստեղ նոքա միմեանց յաջորդում են ժամանակի կարգով, հետևողաբար (նախ և առաջ՝ թագաւորը մարդ է զրկում դիմաւորելու, յետոյ հարցնում եկողների ողջութիւնը, յետոյ նոցա զօրահանդէսն է նայում անձամբ, յետոյ գովում է նոցա և այլն. յայտնի է, որ այս գործողութիւնները միաժամանակ չեն կարող պատահել, այլ յաջորդաբար): Բայց ինչպէս այնտեղ՝ այնպէս և այստեղ բոլոր հաւասարազօր նախադասութիւնները միմեանց հետ միացած են ներքին կապով—ընդունելութեան պատկերի ամբողջութեամբ: Արտաքին կապը կազմում է այստեղ ևս և շաղկապը. բայց կարելի է այս դէպքում գործածել և ժամանակական մակբայներ—նախ, ապա, յետոյ, հուսկ ուրեմն և այլն:

Իսկ երբ գործողութիւնները հետևողաբար չեն յաջորդում միմեանց, այլ նոցանից իւրաքանչիւրը կարող է միևնորից առաջ կամ յետոյ պատահել, և երբ գործողութիւնները մի որոշ ժամանակի ընթացքում կարող են կրկնուել մի քանի անգամ՝ այս դէպքում արտաքին քերականական կապը լինում են՝ երբեք—երբեք (կամ երբեք), երբ—երբ մակբայները: Օր. «Որ ի համազգեսաց երիվարաց լծեալ են (կառք)՝ երբեք սալթաքին»,

էրբէն օձտեն և ի տագնապի զկառավարն և զանձինս կացուցանեն, և էրբէն խորտակումն իսկ կառացն գործեն»:

Եզնիկ այստեղ նկարագրում է մի կառքի լծուած Համացեղ ձիերի պակասութիւնները. այսպիսի ձիերն երբեմն սալթաքում են, երբեմն խրտնում են և վտանգի ենթարկում իրանք իրանց և կառապանին, երբեմն էլ կառքը ջարդում են: Հասկանալի է, որ այս գործողութիւնները մէկ-մէկի ետևից նոյն կարգով չեն կատարուում, ինչպէս, նմուշի Համար, դասաւորել է Հեղինակը. այլ կարող են մէկը միւսից առաջ կամ յետոյ կատարուել: Բացի սորանից՝ այդ գործողութիւնները կարող են կրկնուել մի քանի անգամ:

§ 229. դ). «Առաջնոյ չվնասակարութեան գաղանացն մարդոյ՝ այժմու Համբոյրս և ընտելութիւնս վկայեն. ղի ոմն զգալոյ կորիւն սնուցանէ, և իբր զշան կորիւնս առ ընտելութեան ընդ անձն անկանին. և միւսն զառիւծու կորիւն սնուցեալ՝ ածէ ի Համբոյր և ի քծինս... և այլ ոք զարջոյ թոժիւն սնուցեալ՝ կաքաւիչս ուսուցանէ... և այլոց զքարբս իգակերպս կալեալ՝ թովչութեամբք ընտելութիւն մարդկան ածեն»:

Այստեղ մի քանի Հաւասարագոր նախադասութիւններ կան. բայց տրամաբանօրէն մի գլխաւոր իմաստ կայ, որ պարունակուում է առաջին նախադասութեան մէջ—«առաջնոյ չվնասակարութեան գաղանացն մարդոյ՝ այժմու Համբոյրս և ընտելութիւնս վկայեն»: Յաջորդ նախադասութիւնները մասնաւոր մըտքեր են՝ այս ընդհանուր միտքը բացատրելու և ընդարձակելու Համար: Այս Համադրութեան մէջ էլ ներքին կապը կազմում է իմաստի միութիւնը, իսկ արտաքին կապը կազմում են ղի, և շաղկապները:

§ 230. Պատահում է, որ երկու Հաւասարագոր նախադասութիւններ, որոնք միևնոյն տեսակէտից բացատրում են նիւթը և ընդհանուր մտքով միմեանց Հետ Համաձայն են՝ Հակադրում են միմեանց այն նպատակով, որ երկրորդ նախադասութեան իմաստն աւելի սաստկանայ, և նա աւելի մեծ նը-

շանակութիւն ստանայ: Այսպիսի դիպուածում քերականական կապը լինում է ոչ Ֆոյն—այլ և շարկապը: Օր. «Աստուած ոչ Ֆոյն ձեռին չգննի, այլ և ոչ ընդ միտս ուրուք հարկանի, ոչ Ֆոյն ընդ մարմնականացս, այլ և ընդ անմարմին հրեշտակացն»:  
(Յղիշէ: Աստուած ոչ միայն ձեռքի համար անգննելի է, այլ և մտքի համար անհասանելի է, և ոչ միայն անհասանելի է մարմնաւորներէս մտքին համար, այլ և անմարմին հրեշտակների մտքին համար):

Այս համադրութեան ընդհանուր իմաստն այս է, թէ Աստուած անիմանալի է ամենքին. այս իմաստը բացատրում են նորա ամեն մի նախադասութիւնը: Բայց երկրորդ և չորրորդ նախադասութիւնները (այլ և ոչ ընդ միտս ուրուք հարկանի. այլ և ընդ միտս անմարմին հրեշտակացն) աւելի սաստկացնում են առաջին և երրորդ նախադասութեան իմաստը: (Բնական բան է, որ Աստուած ձեռքով չէ գննւում, բայց նշանաւոր է այն, որ Նա մտքին անգամ անմատչելի է. բնական է դարձեալ, որ Նա անհասանելի լինի մարդկային մտքին, բայց նշանաւորն այն է, որ Նա անհասանելի է նոյն իսկ անմարմին հրեշտակների մտքին): Եթէ հեղինակը չկամենար առանձին ուշադրութիւն դարձնել երկրորդ և չորրորդ նախադասութիւններին վերայ՝ նա կարող էր առանց հակադրութեան ասել. «Աստուած ձեռին չգննի և ընդ միտս ուրուք չհարկանի, ոչ ընդ մարմնաւորացս, և ոչ ընդ անմարմին հրեշտակաց»:

### ՊՍԵՃԱՌՈՒԹՅԱՆ ԿՅՈՒՄՈՒՐՈՒԹԻՒՆ:

§ 231. Բաղհիւսական համադրութեան մի տեսակն էլ կոչւում է *դաստիարակական* համադրութիւն, որի մէջ հաւասարազօր նախադասութիւնները միմեանց վերաբերում են՝ *ինչպէս դաստիարակական*, կամ *ինչպէս հեռուանիւր դաստիարակական*: Պատճառական նախադասութիւնը կարող է լինել երկրորդական նախադասութիւն, ինչպէս տեսանք (§ 209), բայց կարող է լի-

նել և Հաւասարագոր նախադասութիւն: Պատճառը կարող է լինել ա) ներգործող պարճաւ, որի զօրութեամբ մի բան կատարուում է, բ) շարժաւիլ պարճաւ, որի առիթով մի բան կատարուում է, և գ) վախճանաւիլ պատճառ, որի համար մի բան կատարուում է:

§ 232. Ա). «Քաւի բարերար էութիւն է Աստուած՝ ոչ կամեցաւ զազնուականութիւնն իւր ծածկել»: «Որովհետեւ կերար ի ծառոյ սնտի, յորմէ պատուիրեցի քեզ չուտել՝ անիծեալ լիցի երկիր ի գործս քո»:

«Պիւթագորաս ոչ հրամայէ անասունս զոհել դից. քաւի է հոգի աստուածեղէն ասէ յանասունսն»: «Քարկացաւ տէրն արարածոց, շէ թողին զնա և անսացին Հիւղեայն»:

Այս օրինակներում կապուած են ներգործող պատճառներն Հետեանքներին Հետ. (առաջին երկու օրինակում պատճառը դրուած է Հետեանքից առաջ, իսկ վերջին երկուսում՝ Հետեանքը դրուած է պատճառից առաջ): Քերականական կապն են այստեղ՝ քաւի, որովհետեւ, շէ շաղկապները, որոնց զօրութեամբ համապատասխանում են՝ ուստի, վասն այսորիկ, վասն որոյ շաղկապները:

§ 233. Բ). «Որովհետեւ մարդիկ աշխարհին զնա (զԶրուանն) առ աստուածս ունին՝ ես (Զրադաշտ մոգ) զերկնից իսկ և զերկրի և զամենայն արարածոց արարչութիւնն ի նմանէ կարծեցուցից»: «Քաւի այսու իմն մեծարոյ երեւին առաջնորդք քէշին՝ իւրեանց Հնազանդեցելոցն, և խեղդ ընդ անձն արկեալ ձգեն զնոսա ի խորխորատ՝ հարկ է տալ պատասխանի և ցուցանել, թէ ոչ ինչ աւելի քան զՄանի ասեն»:

Այս օրինակներում էլ կապուած են միմեանց Հետ շարժառիթ պատճառներն և Հետեանքները: Այստեղ էլ քերականական կապը նոյն շաղկապներն են՝ ինչ որ վերի օրինակներում:

ԾԱՆ. Ներգործող և շարժառիթ պատճառները միմեանցից զանազանելու համար առանձին ուշադրութիւն է հարկաւոր: Ներգործող պատճառը մի տեսակ գործիք է, որի միջոցաւ, որի զօրութեամբ կա-



տարւում է մի գործողութիւն. իսկ շարժառիթ պատճառը մի իրողութիւն է, որ չորդորում է, ստիպում է, առիթ է լինում մի գործողութիւն կատարուելու. Օր. եթէ ասենք. Գիւղացիք շատ ուրախ են, որովհետեւ հունձը այս տարի առատ էր. կամ թէ՛ Որովհետեւ հունձը այս տարի առատ էր՝ ուստի գիւղացիք շատ ուրախ են—այստեղ հնձի առատութիւնը ներգործող պատճառ է, իսկ գիւղացոց ուրախութիւնը՝ հետեւանք հնձի առատութեան. Գիւղացիք ուրախանում են հնձի առատութեան միջոցաւ, հնձի առատութեամբ. Իսկ եթէ ասենք. Գիւղացիք տնայնագործութիւնը երեսէ ձգեցին, որովհետեւ հունձը այս տարի առատ էր. կամ թէ՛ Որովհետեւ հունձը այս տարի առատ էր՝ ուստի գիւղացիք տնայնագործութիւնը երեսէ ձգեցին—այստեղ հնձի առատութիւնը կլինի արդէն շարժառիթ պատճառ, իսկ տնայնագործութիւնը երեսէ ձգելը՝ հետեւանք. հնձի առատութիւնը գիւղացիներին «իւ է լինում (չորդորում է, թելադրում է) տնայնագործութիւնը երեսէ ձգել. բայց ոչ թէ գիւղացիք տնայնագործութիւնը երեսէ ձգում են հնձի առատութեան միջոցաւ, կամ՝ հնձի առատութեամբ. Բայց որովհետեւ երկու օրինակներումն էլ «~~գործ~~» և հետեւանք կապուած են միմեանց հետ՝ կարելի է առանց բարակ տարբերութեան ասել. հնձի առատութեան «~~գործ~~» գիւղացիք շատ ուրախ են, և՛ հնձի առատութեան «~~գործ~~» գիւղացիք տնայնագործութիւնը երեսէ ձգեցին:

§ 234. Գ). «Աստուած պահեաց զստանայ և ոչ կորոյս ի միջոյ, յի մարդիկ յորժամ լաւութեանցն հմուտ լինիցին՝ չաղթեսցեն նմա»: «Եդ մահ ի վերայ բնութեանս մարդկան արարիչ բնութեանն, յի իւր բանն հաստատեսցի և չար խրատտուն պարտաւորեալ գտանիցի»:

Այս օրինակներում էլ կապուած են միմեանց հետ վախճանական (նպատակի) պատճառներն ու հետեւանքները: Պատճառական նախադասութիւնները դրուած են հետեւանքներից յետոյ և կապուած են նոցա հետ յի շաղկապով, որի փոխանակ կարող է դրուել և «~~որդէ~~» յի շաղկապը:

§ 235. Վերի երեք տեսակ պատճառական համադրութիւններին մէջ պատճառներն իրական էին, այսինքն նոքա կատարուել են, կատարւում են կամ կկատարուին. ուստի իրական էին և նոցա հետեւանքները: Բայց կարող է լինել և «~~որդէ~~»

Տանտիսն պատճառ, այսինքն այնպիսի, որ իրապէս չկայ, այլ կարող է կատարուել կամ չկատարուել, և նորա կատարուելուց կամ չկատարուելուց կախումն ունի և հետևանքը: Այսպիսի համադրութեան քերականական կապը կազմում են լէ, էլէ շաղկապները, որոնց զօրութեամբ կամ ներգործութեամբ համապատասխանում են «ոչ» և «ոչէ» շաղկապները: Օր.

«Թէ յապակի սպիտակ՝ ջուր արկեալ յարևու ունիցիս՝ լուսաւորութեան արևուն մտեալ ընդ սպիտակութիւն ապակւոյն՝ հուր ծնուցանէ»:

Արևը սպիտակ ապակու միջով անցնելով կրակ կծնի «յն ոչէր»-ը, եթէ մարդ սպիտակ ապակու մէջ ջուր ածելով արեւի տակ բռնէ. (իսկ եթէ այսպէս չանէ՝ կրակն էլ չի ծնի): Հետևանքը պայմանաւորուում է պատճառով:

«Ելէ ոչ ոք ծնցի ի ջրոյ և ի հողոյ՝ ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ»:

Ջրից և հողուց չծնելը՝ պայմանական պատճառ է, որի պայմանական հետևանքն է՝ Աստու արքայութիւնը չմտնելը: Եթէ մէկը ջրից և հողուց չծնի՝ չէ կարող մտնել Աստու արքայութիւնը. (իսկ եթէ ծնի՝ կարող է մտնել):

### ՆԵՐՀԱԿԱԿԱՆ ՀԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ:

§ 236. Ներհակական համադրութեամբ կապուում են միմեանց հետ այնպիսի նախադասութիւններ, որոնք որևէից բանով անհամաձայն են միմեանց, կամ նոյն իսկ հակառակ են: Ներհակական համադրութիւնը երեք տեսակ է լինում. ա) Հաստիսն, բ) Ժիտիսն, գ) Զիջողիսն:

§ 237. Ա). Հակասական համադրութիւնը կարող է լինել լիտիտար, երբ միմեանց հակասում են նախադասութիւնների թէ՛ ենթականերն և թէ՛ ասացուածները. կարող է լինել և Տանտիսն, երբ միմեանց հակասում են միայն ասացուածները: Արկատար հակասութեան միջոցով մենք ապացուցանում

ենք որևէ միտք՝ ի Հակառակէն դատողութիւն անելով: Իսկ մասնական Հակասութեան միջոցով մենք աւելի պարզ և օրոշ պատկերացնում ենք մի առարկայ, Համեմատելով նրան մի-ուրիշ առարկայի հետ, որ իւր որևէ յատկութեամբ կամ գործողութեամբ տարբերում է նորանից: Օր.

1) Լիակատար Հակասական: «Փախուցեալ է ամբարիշտն առանց ուրուք Հալածելոյ. ինչ արդարն իբրև զառեւծ յանձնապաստան է»:—Այստեղ միմեանց Հակադրուած են մէկ կողմից «մթորիշոն ու արդարը (ենթականները) և միւս կողմից՝ փոխելն և յանձնապաստան, համարչակ լինելը (ասացուածները): Ամբարիշտը այնքան անհանդիստ է խղճով, այնքան կասկածոտ և երկչոտ է, որ առանց մէկից Հալածուած լինելու փախչում է. նրան փախցնողը հէնց նորա ամբարշտութիւնն է. ուրեմն ամբարշտութեան հետևանքը փախուստ է: Իսկ եթէ մէկը ամբարշտի բոլորովին Հակառակ յատկութիւն ունենայ, եթէ արդար լինի: Արդարի խիղճն անդորր է, նա թշնամիներ չունի, այլ բարեկամներ, կասկած չունի, այլ վստահութիւն: Ուստի ինչպէս որ ամբարշտի խղճի խայթն ու կասկածոտութիւնը նրան փախուստ են պատճառում՝ այնպէս էլ արդարի խղճի անդորրութիւնն ու վստահութիւնը նորան Համարձակութիւն են պատճառում: Եթէ մենք ամբարշտի մասին ապացուցեցինք, թէ նա փախչում է՝ հէնց զբանով մենք ապացուցած կլինինք, թէ ուրեմն «մթորիշոն համարչակ—արդարը պէտք է փոխելուն հանդիման յատկութիւն ունենայ, այսինքն Համարձակ, յանձնապաստան լինի: Կամ ընդհակառակն, երբ մեզ յայտնի է, որ արդարն առիւծի պէս յանձնապաստան է՝ մենք կարող ենք մակարեւել, թէ արդարի Հակառակը—ամբարիշտը՝ յանձնապաստանութեան Հակառակ յատկութիւն պէտք է ունենայ—այն աստիճան երկչոտ լինի, որ փախչի առանց Հալածուելու:

«Որ ասէ զամբարիշտն թէ արդար է՝ անիծեալ ի ժողովրդոց լիցի և ատելի յազգաց. ինչ որ յանդիմանէն՝ նա լաւ երևեսցի և ի վերայ նորա եկեսցէ օրհնութիւն բարեաց»:

Ով որ ամբարիշտ մարդու Համար կասէ, թէ արդար է, այսինքն ո՛վ որ երկիւղից կամ անկնկալութիւնից դրդուած սուտ է խօսում կամ շողոքորթում է՝ նա ժողովրդից կանիճուի և ազգին ատելի կլինի: Ուրեմն՝ ամբարշտին զլուխ խոնարհեցնողը և շողոքորթողը ատելի և անիծապարտ է: Սորանից կարող ենք հետևցնել, թէ ուրեմն նա, որ ամբարշտի երեսովը կտայ նորա ամբարշտութիւնը, նրան կյանդիմանէ՝ սիրելի և օրհնուած կլինի ամենից:

Այս օրինակներից երևում է, որ եթէ մի երևոյթ բերում Հասցնում է մի որոշ հետևանքի՝ նորա Հակառակ երևոյթը կՀասցնէ Հակառակ հետևանքի. կամ ընդհանուր խօսքով՝ ինչպիսի որ պատճառն է՝ այնպէս կլինի և նորա հետևանքը:

2) Մասնական Հակասական: «Չոգան դարձեալ առ միմեանս աշակերտքն. Բայ Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին և լայր»: «Ղուսին, ասեն, յերեսուն առուր կատարէ զընթացսն, և արեգակն ի տարւոջ»:

Այս օրինակներում միմեանց Հակադրում են ոչ թէ ենթակաները, այլ ասացուածները: Աշակերտների միմեանց մօտ գնալը ոչ թէ ապացուցանում է Մարիամի կանգնել լաց լինելը, այլ ակելի որոշ և բացայայտ պատկերացնում է այն: Նոյպէս էլ արեգակի և լուսնի շրջանառութեան ժամանակի Հակադրութիւնը ակելի պարզ է որոշում այդ ժամանակամիջոցի տարբերութիւնը:

Հակասական Համադրութեան մէջ քերականական կապը կազմում են ի՛նչ, Բայ, այլ շողկապները: Բայց յաճախ ընտիր մատենագիրները յիշեալ շողկապների իմաստով գործ են ածում նաև և շողկապը, թէ լիակատար և թէ մասնական Հակադրութեան մէջ:

§ 238. Բ). Փխտական Համադրութեամբ կապում են միմեանց Հետ այնպիսի նախադասութիւններ, որոնցից մէկը Հերքում, ոչնչացնում է միւսը: Նախադասութիւններից մէկը պարունակում է որևէ ոչ-իրական (սխալ, անիրագործելի) իմաստ.

իսկ միւսը պարունակում է իրական (ուղիղ, իրագործելի) իմաստ, և այս վերջինս հերքում է առաջինի բովանդակութիւնը: Այս տեսակ հակադրութեան նպատակն է՝ ուղիղ իմաստն առաջ բերելով հերքել մի սխալ իմաստ, որի մասին կարող է տարակոյս լինել: Օր.

«Եթէ բնութեամբ չար ինչ էր օձ, կամ չարի իրիք արարած՝ ապա ոչ զգօնանայր երբեք ի զազանութենէ անտի իւրմէ: Եւ մանկի տեսանեմք ի հնարազիտութենէ թովչաց զգօնացեալ, և իբրև զչուան խաղալիկ է նոցա»:

Այստեղ համադրութեան երկրորդ մասը, որ սկսում է նախնի շողկապով՝ պարունակում է իրականութիւնը և ճշմարիտ է, և հակադրուելով նախընթաց իմաստին՝ հերքում է նրան:

«Են ոմանք, որ վիճին, թէ բնաւ իսկ սատանայ ոչ փորձէ զմարդ: Այլ յանդիմանին յԱռաքելոյ, որ ասէ, թէ բազում անգամ կամեցայ գալ առ ձեզ, եւ խափանեաց զիս սատանայ»:

Համադրութեան առաջին մասն, իբրև սխալ կարծիք՝ հերքում է երկրորդ մասով—այլ յանդիմանին և այլն: Երկրորդ մասն ևս կազմուած է նոյնպիսի ժխտական համադրութիւնից. «բազում անգամ կամեցայ գալ առ ձեզ» իմաստն հերքում է իրականութեամբ—«խափանեաց զիս սատանայ»:

Ժխտական համադրութեան մէջ քերականական կապը կազմում են բայ, այլ, եւ նախնի, ախայն, եւ շողկապները:

§ 239. Ժխտական համադրութեան մի տեսակն էլ կազմում է բառապարտական համադրութիւնը, որով միմեանց հետ կապուում են մի քանի առանձին ենթադրական իմաստներ, որոնցից եթէ մէկն Հաստատուի կամ իրագործուի՝ մնացածներն ինքն ըստ ինքեան կոչնչանան: Բաժանական համադրութեան մէջ քերականական կապը կազմում է համ շողկապը, մի քանի անգամ կրկնուած: Օր. «Եթէ Զրուանայ որդի էր Արհմն՝ նմին նման գոյր և նոյնպիսի, համ, թէ բարի էր՝ բարի, համ, թէ չար էր՝ չար»:

Արհմնը կամ բարի պիտի լինէր (եթէ հայրը բարի էր), կամ չար (եթէ հայրը չար էր): Եթէ բարի լինէր՝ չէր կարող այլ ևս չար լինել, և ընդհակառակն: Երկու նախադասութիւններից որ մէկը որ ընդունուի՝ միւսին կհերքէ:

«Ա՛հ մեռցուք, և աղիւ մեր ի ծառայութիւն Բէլայ կացցէ, ի՛հ գաջողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ՝ ցրուեսցի ամբոխն և մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք»:

Հայկ երկու կարելի դիպուած է ենթադրում Հայոց համար, կամ մեռնել կամ մեռցնել: Սոցանից որ մէկն էլ կատարուէր՝ միւսը պիտի ոչնչացնէր:

ԾԱՆ. Կ-ի շողկապը բացի բաժանական համադրութիւններ միմեանց հետ կապելուց՝ յաճախ կապում է նաև այնպիսի բառեր, որոնց մէջ հակադրութիւն չկայ, և որոնք մէկը միւսին չեն ոչնչացնում: Օր. «Զիհորդ պաշտիցեմք զարեգակն, ի՛հ զլուսին, ի՛հ գօր և ի՛հ զհուր»: Հասկանալի է, որ արեգակ պաշտելը չէ խանգարում լուսինը, օդը, կրակն էլ պաշտել, և ընդհակառակն, սոցանից մէկն ու մէկը չպաշտելուց չէ հետևում, թէ միւսները պէտք է պաշտել: Այսպիսի դէպքերը բաժանական համադրութիւն չեն կազմում:

§ 240. Գ). Զիջողական համադրութեամբ միմեանց հետ կապուում են այնպիսի հակադրական նախադասութիւններ, որոնցից մէկն արտայայտում է մի ընդհանուր և ուղիղ իմաստ, իսկ երկրորդն այնպիսի իմաստ, որ հակասում է առաջինին իբրև հետևանք. այսինքն՝ երկրորդ նախադասութիւնը պարունակում է այնպիսի հետևանք, որ հակառակ է առաջին նախադասութեան մէջ արտայայտուած իմաստին: Այս տեսակ համադրութեան մէջ քերականական կապը կազմում են՝ Բէ՛դէ՛հ — Բո՛յոյ ա՛հոյն շողկապները: Օր.

«Թէ՛դէ՛հ ոչ իցեմք բաւական ասել զամենայն չարիսն, որ անցին անդէն ի կարաւանին ընդ գունդն Հայոց, ա՛հոյն և ոչ լուել կամիմք, ծածկելով զվիշտս նեղութեանն»:

Այս համադրութեան առաջին, զիջողական մասում Եղիշէն արտայայտում է մի միտք, թէ ինքը չէ կարող պատմել այն բոլոր չարիքները, որ Հայոց գնդին պատահեցան Պարսից

բանակում: Այս մտքի տրամաբանական հետեւանքը պէտք է լինէր ուրեմն՝ լուել այդ մասին, քանի որ չէ կարող պատմել: Սակայն Համադրութեան երկրորդ մասը, գլխաւոր իմաստը, չէ կորցնում իւր նշանակութիւնը. չնայելով իւր չկարողանալուն՝ հեղինակն այնու ամենայնիւ չէ կամենում լուել այդ չարչարանքներն մասին:

«Քոյ «ուայն» Լեդէր և նոքա յոյժ գուարթութեամբ խընգային ըստ ներքին մարդոյն՝ արտաքին տեսիլն կարի ողորմ էր:»

Նախարարների հոգու ուրախութեան բնական հետեւանքը պէտք է լինէր՝ որ այդ ուրախութիւնն և գուարթութիւնը արտայայտուէր նոցա երեսի վերայ ևս. բայց սորա փոխանակ՝ նոցա արտաքին կերպարանքը շատ խղճալի էր: Այս Համադրութեան մէջ նկատելու է Քոյ «ուայն» Լեդէր և շաղկապների կուտակութիւնը միմեանց մօտ. Քոյ «ուայն» շաղկապը, որ պէտք է գրուէր Համադրութեան երկրորդ մասում (Լեդէր և նոքա... Քոյ «ուայն» արտաքին տեսիլն նոցա կարի ողորմ էր)՝ տեղափոխուել գրուել է զիջողական շաղկապի հետ, ինչպէս յաճախ սովորութիւն է մեր հին մատենագիրներին:

§ 241. Զիջողական Համադրութեան մի տեսակն էլ կազմում է բացառուցական Համադրութիւնը, որով միմեանց հետ կապում են այնպիսի նախադասութիւններ, որոնցից մէկը սահմանափակում է միւսի նշանակութիւնը, կամ հերքում է նրան մասամբ, և ոչ ամբողջապէս. այնպէս որ այս սահմանափակումից կամ հերքումից յետոյ էլ այն սահմանափակուած կամ հերքուած նախադասութիւնը իւր զօրութիւնը պահպանում է: Այսպիսի Համադրութեան մէջ՝ սահմանափակուած նախադասութիւնը պարունակում է ընդհանուր և ուղիղ իմաստ, իսկ սահմանափակողը՝ մասնաւոր, նոյնպէս ուղիղ իմաստ, որ սակայն հակառակ է ընդհանուր իմաստին՝ իբրև բացառութիւն: Քերականական կապն այս տեսակ Համադրութեան մէջ կազմում են Տոյն, Քոյն Տոյն, ոչ Տոյն, և է՛ք շաղկապները: Օր.

«Ոչ հրբեք տեսաք, թէ կովք էշս ծնան, և էշք եզինս,

և ոչ գայլք մաքիս, և ոչ մաքիք աղուէսս, և ոչ առիւծք ձիս, և ոչ ձիք օձս. Բայց Պայտն մի ինչ ծնունդ է, զոր մարդիկ Հնարեցան արտաքոյ կարգաց բնութեան՝ ծնուցանել ի ձիոց և լիւնոց ջորիս»:

Այս Համադրութեան առաջին մասում Եզնիկ յայտնում է այս ընդհանուր, ուղիղ միտքը, թէ կենդանիները չեն կարող իրանց աննման սերունդ ծնել. այլ նոքա ծնում են իրանց ցեղին և տեսակին Համեմատ, իրանց նման սերունդ: Սորանից յետոյ, Համադրութեան երկրորդ մասում բերում է մի մասնաւոր, նոյնպէս ուղիղ իմաստ, թէ ձին և էջը կարող են ունենալ այնպիսի սերունդ, որ իրանց նման չէ, (ոչ ձի է և ոչ էջ): Ուրեմն այս երկրորդ մասն Հակասութիւն է կազմում Հակադրութեան առաջին մասին, իբրև բացառութիւն. նա չէ Հերքում փռաջին մասում արտայայտուած իմաստը, այլ սահմանափակում է միայն:

## ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ:

### Ա) ՏՐՈՆՈՒԹԻՒՆ:

§ 242. Գրուած խօսքի ուղիղ և անսայթաք ընթերցումը դիւրացնելու Համար՝ զործ են ածուում այլևայլ նշաններ, որոնք նայելով իրանց վարած պաշտօնին՝ երկու մասի են բաժանուում — արհո-ւեան նշաններ և սոփան-ւեան նշաններ:

§ 243. Տրոնութեան (բաժանական) նշանների նպատակն է ցոյց տալ նախադասութիւնների և նախադասութեան անդամների մէջ եղած Հեռաւոր կամ մերձաւոր կապակցութիւնը: Տրոնութեան նշաններն են՝ վերջակէր ( : ), Ռջակէր ( . ), սորսակէր ( , ), Բո-ւ ( ' ). նոյնպէս և՛ Բաշակէր ( . . . ), 4իծ ( — ), չակերտ (« »), փակ-4իծ ( ) :

§ 244. Վերջակէտը զործ է ածուում այն ժամանակ, երբ



Հարկաւոր է ցոյց տալ, թէ նախագասութիւնը բոլորովին բա-  
ժանուած է յաջորդից: Օր.

«Քաց-կապոյտ երկնքի մէջ, զենիթում կանգնած է Հրե-  
զէն գունդը: Նորա անշեղ ճառագայթները կրակ ու բոց են  
թափում երկրի վրայ: Փողոցներում անցուղարձը դադարել է:  
Մարդիկ պարսպարուել են իրանց բնակարանների հով անկիւն-  
ներում» <sup>1)</sup>:

Երբ շարագրութեան մէջ բոլորովին վերջանում է մի ի-  
մաստ իւր բոլոր ամբողջացուցիչ մասերով՝ դրւում է վերջակէտ:  
Իսկ նոր սկսուող իմաստը (շարագրութեան յաջորդ մասը) ըս-  
կաւում է նոր տողից:

Օր. եթէ շարագրութեան նիւթ վերցնէինք ծառի նկա-  
րագրութիւնը, և այս նկարագրութիւնը բաժանէինք հետե-  
ւեալ մասերին—ծառը՝ կանաչելիս, ծառը՝ ծաղկելիս (գարուն),  
ծառը՝ պտուղներով ուռճացած (ամառ), ծառը՝ տերեւաթափ  
լինելիս (աշուն), ծառը՝ տերեւազուրկ (ձմեռ)—այս մասերից  
իւրաքանչիւրը պէտք է սկսէինք նոր տողով:

Նոր տողով սկսւում են նաև զրուցատրութիւնները մի քա-  
նի խօսակիցների մէջ:

§ 245. Միջակէտը գործ է ածւում՝

Ա). Վերջակէտի փոխանակ կարճ նախագասութիւնների  
մէջ. այնպէս որ այս երկու կէտերից մէկը կամ միւսը գործա-  
ծելը մնում է գրողի կամքին: Այսպէս վերը բերուած օրինա-  
կում առաջին և երրորդ վերջակէտները կարելի է փոխարինել  
միջակէտներով:

---

<sup>1)</sup> Նին ձեռագիրներում կէտագրութիւնը շատ անկանոն է: Նո-  
ցանից եղած տպագրութիւններին մէջ հրատարակողները կէտագրու-  
թիւնն արել են ամեն մէկն իւր հասկացողութեամբ, հետևելով որևէ  
եւրոպական լեզուի: Այս պատճառով մենք կէտագրութեան օրինակ-  
ները չբերինք մեր հին մատենագիրներից, այլ կազմեցինք մեզանից,  
աշխարհաբար լեզուով, որի մէջ աւելի ընդհանրացած է եւրոպական  
կէտագրութիւնը: Բայց գրաբարի մէջ էլ, քանի որ ուրիշ ճիշտ և որոշ  
կէտագրութիւն չկայ՝ կարելի է հետևել միևնոյն կանոններին:

Բ). Զուգադրական Համադրութիւնների մէջ՝ Բայ, Ին, սոխայն, որովհետեւ, այնու-ամենայնիւ շաղկապներից առաջ: Օր.

«Եզնիկ Կողբացին շատ թարգմանութիւններ է արել. Բայ նոքա լականէ-յանուանէ մեզ յայտնի չին»:

«Հայերը բոլոր ոլջով դիմադրեցին Յազկերտի Հալածանքներին. որովհետեւ քրիստոնէական կրօնը բարոյական քաջութիւն էր ազդում նոցա»:

«Թողովրդի փոքր մասը միայն կարողանում է ուսում և կրթութիւն ստանալ. Ինչ մեծամասնութիւնը շարունակում է դեռ խարխափել մտաւորական խաւարի մէջ»:

Գ). Միաւորեալ նախադասութիւնների մէջ <sup>1)</sup>, երբ կըրկնուած անդամները միմեանց Հետ կապակցուած չեն շաղկապներով և ունին իրանց մօտ երկրորդական նախադասութիւններ կամ ուրիշ մասեր, որոնք նոցանից բաժանուած են ստորակէտներով: Օր.

«Հասուն որդեքը, որոնց ոսկեգոյն Հասկերն սլէկոծւում էին թեթև զեփիւռից. բարեբեր որդեքը, որին նայելուց մարդ չէր կարող կշտանալ. գեղեցկադիր մարտնոյքը, որ շինուած էր այս պարտէզի մէջ. Ժամն, իւր Հովում արածող Հօտերով—բոլորը լափեյ որդեք— ամեհի Հեղեղը»:

«Թողովուրդը հեծում էր անտանելի լծի տակ, որ բռնաւորը դրել էր նորա վերայ. ահազին և բազմատեսակ Հարկերը վճարել չկարողանալով՝ գեղեք էր որդեքը. որդեք էր Հաւատափոխութեան, որպէս զի Հոգու գնով մարմնաւոր Հանգիստ ձեռք բերէ. լացով, արտասուքով Լողնում էր բնիկ աշխարհն ու գաղթում օտար երկիրներ»:

<sup>1)</sup> Միաւորեալ կոչւում են այն նախադասութիւնները, որոնք պարունակում են մի քանի նոցնանուն անդամներ, ինչպէս՝ ենթականեր, սեռի և բնութեան խնդիրներ (մի ասացուածի Հետ), ասացուածներ (մի ենթակայի Հետ): Օր. «Նոյ, կինը, որդեքը և որդոց կները տապանից դուրս եկան»: «Քրիստոս չարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ»:

Գ). Այն նախադասութիւնից առաջ, որ պարունակում է նախընթաց նախադասութեան պատճառը, հետեւանքը, ապացոյցը կամ բացատրութիւնը, և կապուած չէ նորա հետ շաղկապներով: Օր.

«Աստակ զրկուած էր կապեալ քահանաների զգացած հոգեկան մխիթարութիւնից. նա զգում էր, որ դաւաճանել է իւր հայրենիքին»:

«Ահա՛ն Մամիկոնեանի երկարամեայ աշխատանքը և ներդրութիւնները յաջողութեամբ պսակուեցան. Պարսիկները թոյլ տուին քրիստոնէութիւնը համարձակ դաւանել Հայաստանում»:

«Յոյրը ապշած լուեցին. այնքան մեծ էր այս լրի ազդեցութիւնը նոցա վերայ»:

Ե) Ուղղակի յաւելեալ նախադասութիւնից առաջ, եթէ նա շաղկապով միացած չէ գլխաւոր նախադասութեան հետ: Օր. «Մի մանկահասակ նախարար առաջ եկաւ և ասաց. «Թագաւոր, ինչո՞ւ մինչև այդտեղ միայն կարգալ տուիր մեր սուրբ զիրքը»:

«Հարուստը մտածում էր ինքն իրան. «շատ գանձ ունիմ ես. պէտք է այսուհետև ուտեմ, խմեմ և ուրախ լինիմ»:

§ 246. Մարտիկը գործ է ածուում

Ա) Կարճ, միատեսակ, այսինքն կամ գլխաւոր, կամ երկրորդական նախադասութիւնների մէջ, նոյնպէս և՛ միաւորեալ նախադասութեան կրկնուած ասացուածների մէջ, եթէ նոքա չունին իրանց մօտ երկրորդական նախադասութիւններ, կամ կապուած են միմեանց հետ քոյց, կամ շաղկապներով: Օր.

«Չմեռների սառնամանիքները հալեցան, դարունն եկաւ, ծիծեռնակները վերադարձան մեր աշխարհը, կենցաղասէր մարդիկ տեսան և ուրախացան»:

«Հայոց համար անգուզական բարերար է ս. Մեսրոպը, որ առաջին անգամ երկնեց սեփական ազգային զրբրի միտքը, որ իւր մեծ հանճարով ու տոկունութեամբ իրագործեց այդ միտքը, որ մեզ տուեց ժամասացութիւն հայերէն լեզուով, որի շնոր-

Հիւ այսօր մենք ունինք մեր լեզուն ու զրականութիւնը»:

«Փողովուրդը հեծում էր անտանելի լծի տակ, փոքր-փոքր էր հարկահաններից, գեղե էր փոքր-փոքր օտար աշխարհներ, փոքր գաղթում ինքնակամ, քայքայ հաւատը չէր ուրանում»: (Համեմատել § 245, Գ, երկրորդ օրինակի հետ):

ԾԱՆ. Երբ միաւորեալ նախադասութեան կրկնուած ասացուածները կապուած են միմեանց հետ և շարկապով ստորակէտ չէ դրուած նոցա մէջ. Օր.

«Ուսումն առաջ սկսուած էր այբբենով և վերջանում էր նարեկով»: «Հիւրերը շնորհակալութիւն յայտնեցին և ուրախ սրտով մեկնեցան»: Բայց երբ այսպիսի կրկնուած ասացուածներից վերջինը հետեանք է նախընթացին, կամ կատարուել է աւելի ուշ, և ոչ թէ անմիջապէս՝ այս դէպքում այդ ասացուածները միմեանցից բաժանուած են ստորակէտով, թէպէտ և միմեանց հետ կապուած լինին և շարկապով. Օր. «Հիւանդն երկու անգամ լողացաւ հանքային ջերմուկում, և առողջացաւ բոլորովին»: «Նոքա խոստացան իրանց անձը գոհել, և իրանց խոստումը կատարեցին»:

Բ). Ե- շարկապով կապուած նախադասութիւնները միմեանցից բաժանուած են ստորակէտով: Օր. «Ամպը որոտագին գոռաց, և տեղատարափ անձրևը մի ըովկում ողողեց երկիրը»: «Վարդը բացել է իւր թերթիկները, և նորա հոտն ու գոյնն զմայլեցնում են ամենին»: *իսկ նախորդ հասարակական կրթութիւնը*

Գ). Ստորակէտով բաժանուած են պարզ կամ միաւորեալ նախադասութեան կրկնուած անդամները, եթէ միմեանց հետ կապուած չեն և շարկապով, նոյնպէս և կրկնուած մակբայներն ու շարկապները: Օր. *այսպէս կրկնապիւն, բայց չի*

«Զորորդ օրն Աստուած ստեղծեց արեգակը, լուսինը և աստղերը»:

«Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան համար պատգամաւորներ գալիս են Ռոսաստրանից, Տաշիստրանից, Պարսաստրանից և ուրիշ հայաբնակ աշխարհներէ»:

«Եկողը մի քարեկոյճ, գեղեցիկ, շաւրնաբեմ երիտասարդ էր»:  
«Հունձը երբեք առատ է լինում, երբեք նուազ, երբեք լիացնում է գիւղացուն, երբեք աղքատութեան մէջ ձգում»:

«ՄաՀը չէ խնայում ո՛չ մեծին և ո՛չ փոքրին, ո՛չ հարուստին և ո՛չ աղքատին, ո՛չ զիտնականին և ո՛չ տղէտին»:

«Թաւալական արագատիպ մեքենան մէկ անդամից և թրջում է թուղթը, և կոկում, և տպում, և կտրում, և ծայում, և հաշիւ պահում»:

ԾԱՆ. 1. Եթէ նախադասութեան կրկնուած անդամները (բացի ասացուածներից) կապուած են միմեանց հետ և շողկապով ստորակէտով չեն բաժանուի. Օր. «Մոգերը պաշտում էին արեգակն և կրակը», «Եւջր բուսնում է Չինաստանում և Նիդկաստանում», «Եկողը բարեկամ և գեղեցիկ երիտասարդ էր»:

ԾԱՆ. 2. Եթէ և շողկապը կրկնուած է միայն երկու անգամ ստորակէտ չի դրուի. Օր. «Եւ դուք և մենք աշակերտինք ճշմարտութեան»: «Նա մեզ համար և հացը է և մայր»:

ԾԱՆ. 3. Կրկնուած ածականներն ստորակէտով չեն բաժանուում եթէ նախընթաց ածականը պատկանում է ոչ թէ գոյականին միայն, այլ գոյականին և միւս ածականին միանգամայն. Օր. «Կեղեցիկ գարնանային երեկոյ», (ոչ թէ՛ գեղեցիկ երեկոյ և գարնանային երեկոյ, այլ՝ գարնանային երեկոյ, որ գեղեցիկ է, գեղեցիկ՝ գարնանային երեկոյ), Նոյնպէս և՛ «մի անձանօթ մարդ», «երկու քարաշէն եկեղեցի», «սև մետաքսէ գգեստ», «առաջին տիեզերական ժողով», «աշխատասէր հաց գիւղացին»:

Դ) Միջարկութիւնները և ո՛ր, ո՛չ մակբայները, երբ արտայայտում են հեղինակի զգացմունքը, կամ դորժ են ածուած իբրև բացազանջութիւններ՝ նախադասութեան միւս անդամներից բաժանուում են ստորակէտով: Օր.

«Ա՛յ, աւելի լաւ է բարեկիրթ լինել, քան ուսեալ»:

«Ո՛չ, մենք չենք կամենում նմանել մեր հարուաններին»:

«Ի՛հ, կեանքը դատարկ բան է:

«Ծերունին, ո՛ւր, լողում էր իւր արիւնի մէջ»:

Ե) Կոչական անունները նախադասութեան միւս անդամներից բաժանուում են ստորակէտներով: Օր.

«Դէ՛հ, քաշեցէք, ո՛ր և էր, առաջ տարէք սրորը»:

«Խնդրում ենք քեզանից, ո՛վ լաւագուր, լսիր մեր ասելիքը»:

Զ) Երկրորդական նախադասութիւնները զլխաւորից բաժանուում են ստորակէտով: Օր.

«Չատ երեխաներ դեռ կան, որոնք կարգալ գրել չգիտեն»:  
«Երագումս տեսայ մի ծառ, որի ճիւղերը տարածուած էին բոլոր աշխարհիս վերայ»:

«Պանդուխտը տեսաւ վերջապէս իւր հայրենիքը, որն փոփոքան էր շատ սուրբեր, և մխիթարուեցաւ»:

«Մարդ պէտք է ուտէ այն, քիչ որ ախորժակը տանում է»:

«Ես գալիս եմ այնտեղից, որ դու գնում ես»:

«Հիւանդութեան վտանգը շատ ուշ հասկացան, երբ արդէն բանը բանից անցել էր»:

«Նա ոչ մի բառ չկարողացաւ արտասանել, որովհետեւ սաստիկ յուզուած էր»:

«Խարդախ մարդիկ երկդիմի հարցումներ են անում, որպէս շէ խօսակիցներին սխալեցնեն և որոգայթի մէջ ձգեն»:

ԾԱՆ. Գլխաւոր նախադասութեան անդամների մէջ ընկած, կամ նորանից առաջ դրուած երկրորդական նախադասութիւնների մասին տես վարը § 247, Ա, Բ.

Է) Ստորակէտով բաժանուած են գլխաւոր նախադասութիւնից՝ նաև կրճատուած երկրորդական պարագայական նախադասութիւնները, նոյնպէս և բացատրական խօսքերն, ածականներն ու բացայայտիչները, եթէ գործ են ածուած իբրև կրճատուած երկրորդական նախադասութիւն: Որ.

«Հիւանդութեան վտանգը շատ ուշ հասկացան, որպէն բանը բանից անցնելուց յետոյ»:

«Նա ոչ մի բառ չկարողացաւ արտասանել, սաստիկ յուզուած լինելով»:

«Խարդախ մարդիկ երկդիմի հարցումներ են անում, խօսակիցներին սխալեցնելու նպատակով»:

«Մայիսի 15-ն էր, գարնան մեծապա ծախանիչ»:

«Մեր նախնիքը յօժարութեամբ ընդունում էին հաւատի համար մահը, պատուաւորը և գեղեցիկ բոլոր հոգեկից»:

«Պապ և Աթանազիէս, սուրբ Յուսէփ որդիները, արժանաւոր ժառանգներ չեղան իրանց առաքիչի զարմին»:

ԾԱՆ. Որոշիչ և լրացուցիչ երկրորդական նախադասութիւնները

կրճատուելիս դառնում են՝ առաջինը որոշիչ գոյականի, երկրորդը՝ լր-  
րացուցիչ կամ ենթակայ ասացուածի. ուստի ստորակէտով չեն բաժան-  
ւում: Օր. Կարգ 4-ի 2-րդ բերաններ դեռ շատ կան մեզանում: Մարդ պէտք է ուտէ իւր սեռի-ն իւր-նը»:

§ 247. Յո-ւր, որ միայն Հայերէն կէտադուլթեան մէջ  
է գործածոււմ տրոհուլթեան և միևնոյն ժամանակ առողանու-  
լթեան նշան է: Իբրև տրոհուլթեան նշան՝ նա ստորակէտի ար-  
ժէք ունի, իսկ իբրև առողանուլթեան նշան՝ նա յատկապէս  
վործ է ածոււմ այնտեղ՝ ուր Հարկ է նախադասուլթեան կամ  
Համադրուլթեան մէջ բաժանել խօսքի բարձրացող մասը <sup>1)</sup> իջնող  
մասից:

Յուլթի գործածուլթեան գլխաւոր տեղերը սոքա են.

Ա) Լրացուցիչ և պարագայական երկրորդական նախա-  
դասուլթիւնները, որոնք զրուած են գլխաւոր նախադասուլթիւ-  
նից առաջ՝ նորանից բաժանոււմ են բուլթով: Օր.

«Ձեզանից ով որ ուզում է առաջինը լինել՝ պէտք է ձեր  
ծառան լինի»:

«Յունաւորներն ում որ Հաւանում էին՝ դերի էին տանում,  
իսկ ում որ չէին Հաւանում՝ կոտորում էին անխնայ»:

«Թէ խորենացու Պատմուլթիւնը բաղկացած է եղել միայն  
երեք գրքերից՝ կարելի է ապացուցանել շատ փաստերով»:

«Երբ թարգմանիչները Հայաստան վերադարձան՝ տեսան որ  
իրանց Հայրենիքը քարուքանդ է եղած»:

«Թարգմանիչները Հայաստան վերադառնալով տեսան ի-  
րանց Հայրենիքը քարուքանդ եղած»:

«Որովհետև նախաստեղծները չպահեցին Աստու կամ  
պատուիրանը՝ ուստի անէծքի դատապարտուեցան»:

«Որպէսզի Հասարակուլթիւնը կարողանայ վերահաս վտան-

---

<sup>1)</sup> Խօսելիս կամ կարգալիս՝ մեր ձայնը ելլէջներ է կազմում. Խօսքի իմաստին նայելով՝ ձայնը բարձրանում է հետզհետէ, հասնում է մի որոշ աստիճանի բարձրուլթեան, այնտեղ կոտրոււմ է և ցածա-  
նում. Պարբերուլթիւնների մէջ առաջին մասը կոչոււմ է բարձրացող  
մաս, իսկ երկրորդը՝ իջնող մաս:

զից ազատուել՝ պէտք է գործէ միաբանութեամբ»:

«Ինչպէս Հոգին մեծ է մարմնից՝ այնպէս էլ Հոգու տեսողութիւնը մեծ է մարմնի տեսողութիւնից»:

«Որչափ մարդ բարձրանայ՝ այնքան պէտք է իրան խոնարհ պահէ»:

«Եթէ կամենում ես մեծ լինել՝ անձդ և ստացուածքդ զոհիւր ընկերիդ բարօրութեան»:

Բ) Երկրորդական նախադասութիւնները, երբ ընկած են գլխաւոր նախադասութեան անդամներին մէջ՝ սկզբից բաժանուում են ստորակէտով, իսկ վերջից՝ բութով: Սր.

«Անին, որ առաջ շէն և փարթամ քաղաք էր՝ այժմ աւերակ և ամալի է»:

«Այն գիւղը, ուր դու գնում ես՝ իմ ծննդավայրս է»:

«Սրեգակը, ինչպէս մի Հսազանդ ծառայ՝ անխափան կատարում է Սրարչի պատուէրը»:

«Այն կարծիքը, թէ Բարձուման խարդախել է Եղիշէի Պատմութիւնը՝ ներկայումս հերքում է»:

Գ) Պարբերական խօսքի մէջ՝ պարբերութեան բարձրացող մասը իջնող մասից բաժանուում է բութով: Եթէ պարբերութիւնն երկար է՝ բութի հետ զործ է ածուում նաև գիծ: Սր.

«Եթէ ուզում ես, որ մարդիկ քեզ պատուեն, եթէ ուզում ես՝ անկախ լինել ուրիշի կամքից, եթէ ուզում ես անդորր լինել Հոգով և մարմնով՝ ճշտիւ կատարիւր պարտաւորութիւններդ, սակաւապէտ և աշխատասէր եղիր»:

«Եւրբ մարդիկ կհասկանան «սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո» պատուէրի նշանակութիւնն և նորա համաձայն կվարուին. երբ նոցա յարբերութեան մէջ բարձրագոյն օրէնքը կլինին արդարութիւնն և իրաւունքը, և ոչ ոյժն ու բռնութիւնը. երբ զեղիս մեծատունը կեանքը չի մաշէ շուայտութեամբ, իսկ չքաւորը չի տուայտի քաղցածութեամբ՝—այն ժամանակ մարդկութիւնը հասած կլինի ճշմարիտ քաղաքակրթութեան, այն



ժամանակ կհասնի կեանքի ոսկի դարը, այն ժամանակ աշխարհում կտիրէ երկնքի արքայութիւնը»:

Գ) Երբ նախադասութեան մէջ զեղջուած է մի բառ, մանաւանդ ասացուածը՝ զեղջուած բառի տեղում դրուում է բութ: Օր.

«Աստուած մեր յանցանքները կնրէ՝ եթէ մենք էլ ներենք մեր ընկերները յանցանքները». (փոխանակ՝ կնրէ այն դէպքում, եթէ...):

«Հասարակական գործերը բարեկարգ վիճակի մէջ կլինին՝ երբ նոցա ղեկավարները զարգացած և բարեխիղճ անձեր լինին». (փոխանակ՝ կլինին այն ժամանակ, երբ...):

«Մենք մեր պարտքերը կատարում ենք, իսկ նոքա՝ չեն կատարում» (փոխանակ՝ իսկ նոքա իրենց պարտքերը չեն կատարում):

«Սբէլը երկրագործ էր, իսկ Ապէտը՝ հովիւ. (փոխանակ՝ հովիւ էր):

«Ձիերին կապում են բերանից, շներին և արջերին՝ վզից, կապկններին՝ մէջքից, իսկ մարդին՝ ոտներից». (փոխանակ՝ կապում են):

Ե) Երբ խօսքի մէջ հակադրութիւն կա՝ հակադրուած բառերին աւելի ոյժ տալու համար նոցանից յետոյ դրուում է բութ: Օր.

«Աստուած՝ իւր Որդին զոհեց մարդոց համար. իսկ մարդիկ՝ չեն ուզում իրանց աշխատանքի մի մասն էլ զոհել Աստծու համար»:

«Անխելք գիւղացին՝ մեծ բախտաւորութիւն է համարում քաղաքացի դառնալ. իսկ խելացի քաղաքացին՝ ձգտում է դէպի գիւղական պարզ և անդորր կեանքը»:

Զ) Երբ նախադասութեան մէջ մի բառ ընկած է այնպիսի երկու բառի մէջ, որ երկուսին էլ կարող է վերաբերուել՝ երկիմաստութիւն չպատճառելու համար՝ այդ բառը բութով բաժանուում է իւր մօտ եղած այն բառից, որի հետ վերաբերութիւն պիտի չունենայ: Օր.

«Զօրավարն երբ այս լուրը լսեց՝ հրամայեց՝ իռնոյն ճանապարհ ընկնել»։ (Առանց բուժի կարող է հասկացուել երկու տեսակ — զօրավարը իռնոյն հրամայում է, կամ զօրավարը հրամայում է, որ իռնոյն ճանապարհ ընկնել)։

«Քրիստոս պատուիրում է՝ Տէր Աշնախներին ներող լինել»։ (կամ կէտադրութիւնը փոփոխելով «Քրիստոս պարտաւորում է Տէր Աշնախներին՝ ներող լինել»)։

ՄԱՆ. Այսպիսի երկիմաստ խօսքեր շատ են պատահում հին մատենագիրների մէջ։ Օր. «Մի լինիր չէոյ ուր ընկեր քում» (Առակք), «Զօրավարն Աշնախներին հարեալ եր» (Եղիշէ)։ «Այոց գարբա իգակերպս չուէալ՝ Աւլու-Աւաթիս չնտելութիւն մարդկան ածեն»։ «Ոչ ոք ունէր նշանալ ինչ յայտի՝ Բարեբար կոչելոյ զԱստուած» (Եզնիկ)։ Այսպիսի երկիմաստութիւններից հարկաւոր է խոյս տալ, և փոխանակ բուժի գործածութեան դիմելով՝ աւելի լաւ է բառերի դասաւորութիւնը փոփոխել, այն կերպով, որ երկիմաստութիւնն անհետանայ։ Օր. հրամայեց ճանապարհ ընկնել իսկոյն։ Ներող լինել մեր թշնամիներին։ Մի լինիր ընկերի քում վկայ սուտ։ Զոռոհիկս հարեալ էր գնդին թշնամեաց։ Ածեն թովչութեամբք չնտելութիւն մարդկան, կամ՝ չնտելութիւն մարդկան ածեն թովչութեամբք։ Ոչ ոք ունէր յայտնի ինչ նշանակ։

Է) Բուժով բաժանում են նախադասութեան միւս անդամներից դասական թուականները, որոնք գործ են ածուած մակբայի նշանակութեամբ։ Օր.

«Ահա այս եօթն գլուխներում նշանակեցի, առաջին՝ ժամանակները, երկրորդ՝ գործի սկզբնաւորութիւնը, երրորդ՝ հայոց միաբանութիւնը» և այլն։

«Մի գործ գլուխ բերելու համար երկու պայման է հարկաւոր. նախ՝ կամենալ կատարել, երկրորդ՝ կարողանալ կատարել»։

§ 248. Բարեբար գործ է ածուած երբ զրոյր խօսքը կիսատ է թողնում, կամ չկամենալով միտքը լրիւ արտայայտել, կամ սաստիկ զգածուած լինելով ու չկարողանալով խօսքը վերջացնել։ Օր։

«Նոցա վարմունքը... Բայց այս մասին լաւ է չխօսենք»։

ՆաՀատակը ծուճի չողեց և վիզը երկարացրեց... սրի շողալը տեսայ...

Ո՛հ, արտասուք ինձ խեղդում են. այլ չեմ կարող բան ասել... Ձէ, թշուառ չէ Իտալիան...

ԾԱՆ. Պէտք է զգուշանալ բազմակէտի աւելորդ գործածութիւնից՝ երբ խօսքի բովանդակութիւնը չէ արդարացնում այդ գործածութիւնը: Բազմակէտը անիմաստ խօսքին խորհրդաւորութիւն չի ընծայէ, ոչ էլ զգացմունքից գուրկ գրուածքին՝ զգացմունք:

§ 249. Գիծը գործ է ածուում՝

Ա) Երբ խօսքի ընթացքում գալիս է մի նոր, չսպասուած իմաստ, կամ յանկարծակի պատահած իրողութիւն: Նոյնպէս և՛ երբ խօսքի կանոնաւոր ընթացքն ընդհատուում է: Օր.

«Ով որ զգուշութեան համար չէ յայտնում իւր կարծիքը, որ հակառակ է տիրապետող կարծիքին՝ նրան ասում ենք— երկչոտ»:

«Պանդուխտը տեսաւ վերջապէս իւր հայրենիքը, որին փափագում էր երկար տարիներ, տեսաւ և— արտասուեց»:

«Գնաց, գնաց, և ուղիդ— փոսն ընկաւ»:

«Դւատացին ճանապարհին տեսաւ մի վիրաւորուած մարդ. նա— կարծում էք օգնեց. ո՛չ, երեսը դարձրեց, հեռացաւ»:

Բ) Ընդարձակ պարբերութիւնների մէջ՝ պարբերութեան առաջին, բարձրացող մասից յետոյ: Տես § 247, Գ, երկրորդ օրինակը:

Գ) Զրուցատրութեան մէջ, մէկի խօսքը միւսինից բաժանելու համար: Այս դէպքում զծի հետ դբում են տրոհութեան միւս նշաններն էլ, տեղին համաձայն: Օր.

— Փոքր ինչ հանգստանանք, յետոյ գործերս անենք:

— Ոչ, առաջ գործերս անենք՝ յետոյ հանգստանանք»:

«Ո՛վ պատմեց ձեզ այդ լուրը:— Կիրակոսեանը:— Միթէ նա այստեղ է:— Այո՛, երեկ երեկոյ եկաւ»:

Դ) Նախադասութեան հետ կապ չունեցող բացատրութիւնները, զրողի նկատողութիւնը իւր գրածի մասին՝ նախադասութեան միւս անդամներից բաժանուում են երկու գծով: Օր.

«Երբ Յազկերտ նախարարներին փակեց ամուր և անելա-

նելի արգելանոցում—լիբաւի ասացի ամուր և անելանելի, որովհետև փախչելու և թաղչելու տեղ չկայ—լւր զաղտնի դիտաւորութիւնն յայտնեց ամենին»:

«Ես էլ շատ անգամ—մեղքս ինչո՞ւ թաքցնեմ—նախանձել եմ ուրիշի յաջողութեան»:

«Վերահաս վտանգը տեսնելով՝ համը երեխան—գարմանալի՛ բան—լեզու ելաւ և աղաղակեց»:

§ 250. Չփէրբ գործ է ածուում ուղղակի յաւելեալ նախադասութիւնների սկիզբն ու վերջը: Չակերտով են գրուում դարձեալ մի գրքից կամ անձից առնուած խօսքերը, առածնեբը, նոյնպէս և մի յայտնի բառ կամ խօսք, որի վերայ ուշադրութիւն է դարձուած: Սր.

«Կապեալները միաբան պատասխանեցին. «Մենք ենք վախենում քո սպառնալիքներից. արն ինչ որ ուզում ես»:

«Նա գիտէր, որ լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք»:

«Առածն ասում է. «Աղքատին հաց տուող չի լինի, խորհուրդ տուող շատ կլինի»:

«Չկարողացայ ասել՝ ամէն. այս «ամէնը» կոկորդուս խրդուեց»:

ԾԱՆ. 1. Զրուցատրութեան մէջ, երբ գծեր են գործածուում (§ 249, գ) չակերտ դնել հարկաւոր չէ:

ԾԱՆ. 2. Երբ յաւելեալ նախադասութիւնը երկար է և նոր տողեր է պարունակում ամեն նոր տողի սկզբում կրկնուում է չակերտը:

ԾԱՆ. 3. Եթէ յաւելեալ նախադասութեան մէջ մտնում է մի նոր յաւելեալ նախադասութիւն՝ սորա ոչ միայն սկիզբն ու վերջը չակերտ է գրուում՝ այլ և ամեն մի տողի սկիզբը:

§ 151. Փոփոք գործ է ածուում նախադասութեան անդամներից որոշ կերպով բաժանելու համար միջանկեալ կամ բացատրական խօսքերը: Սր.

«Մենք արեւակից եղբայրներ ենք, քարոզում էր մեր բարեկամը. (նա գիտէր եղբայր դառնալ՝ երբ ուրիշ հնար չէր մնում). հաշտուինք, գործենք միաբան»:

«Ս. Մեսրոպի ժամանակակից մատենագիրները (Կորիւն,

խորենացի) ճշտիւ չեն նշանակում Հայոց գրերի դիւտի տարին»:

«Գիւհիտար բառը (որ սանսկրիտ լեզուով բառացի նշանակում է կթող) Հայերէն սղուել դարձել է դուստր, պատարէ բառը (այսինքն՝ պահող) Հայերէն դարձել է Հայր»:

### Բ. ԱՌՈԳԱՆՈՒԹԻՒՆ:

§ 252. Առողանութեան (արտասանութեան) նշանների նպատակն է՝ որոշել ձայնի սաստկութեան աստիճանը, որով բառերը պիտի արտասանուին խօսքի մէջ: Առողանութեան նշաններն Հայերէն լեզուում դրւում են այն բառին և այն վանկին վերայ, որ պէտք է արտասանուի Համաձայն նշանի ցուցման <sup>1)</sup>: Այս նշաններն են՝ ոլորակ (°), շեշտ ('), երկար (˘):

§ 253. Ուրուիւ, կամ Հարցական նշանը գործ է ածւում Հարցմունք պարունակող անկախ նախադասութիւնների մէջ: (Ուղղակի Հարցական նախադասութիւն): Օր.

«Ո՞վ կարող է պարծենալ, թէ ինքն ամենակատարեալ է»:

«Արդեօք ինչ պիտի լինի մեր վերջը»:

«Թագաւորներն իրանց որդիներինք են Հարկն առնում, թէ օտարներից»:

§ 254. Ընդդէմ գործ է ածւում

Ա) Անուղղակի Հարցական (այսինքն Հարցական երկրորդական) նախադասութեան մէջ՝ Հարցում պարունակող վանկին վերայ: Օր.

«Չգիտենք, թէ մեր վերջն ինչ պիտի լինի»:

«Յայտնի չէ, թէ ինչո՞ւ Համար նա եկել է մեր կողմերը»:

«Գիտեալ է ասել, թէ մարդ Հօրը շատ է սիրում, թէ մօրը»:

Բ) Կոչական բառերին վերայ: Օր.

<sup>1)</sup> Եւրոպական լեզուների մէջ առողանութեան նշանները դրւում են ոչ թէ նոյն իսկ առողանելի բառին վերայ, այլ նախադասութեան վերջը, որ այնչափ նպատակայարմար չէ:

«Տէր, լսեցի քո ձայնը»:—«Հարուստներ, եկաւ օգնութեան ժամանակը»:

«Ո՛վ Աստուած, փրկիր մեզ այս նեղութիւններէց»:

«Ա՛յ մարդ, ինչո՞ւ չես հանդարտում»:

ԾԱՆ. Այժմեան կենդանի լեզուով (երբեմն նաև գրաբարով) կոչական բառը իւր շեշտի տեղը յաճախ փոխում է, վերջի վանկից դէպի առաջ գնալով. Այսպէս ասում է Ա՛ստուած, եղբայր, Յովհաննէս, Կարնպետ: Այսպիսի բառերի վերայ շեշտ դնելիս՝ պէտք է հետևել կոչականի արտասանութեան և ոչ թէ ուղղականի շեշտին:

Գ) Նախադասութեան մէջ, երբ բառերի դասաւորութիւնից կամ խօսքի ընդհանուր իմաստից որոշ չէ երևում, թէ որ բառին վերայ է իմաստի շեշտը՝ հարկաւոր է ներգործութեամբ դնել այդ շեշտը, խօսքի մթութիւնից կամ երկիմաստութիւնից խոյս տալու համար: Օր.

«Ա՛յր խնդիրդ ես կկատարեմ». (բայց ոչ միւս խնդիրներդ).  
«Այդ խնդիրդ է՛» կկատարեմ.» (թէպէտ ուրիշները չեն կատարում).  
«Այդ խնդիրդ ես կհարկէ՛մ». (և ոչ թէ կմոռանամ):

«Աշակերտը պէտք է հետևի իւր ուսուցչի խրատներին»:  
(Նայելով իմաստին՝ պէտք է շեշտել մէկն ու մէկն այս բառերից—աշակերտը, պէտք է, հետևի, իւր, ուսուցչի, խրատներին. և նայելով, թէ սոցանից որը կշեշտուի՝ ըստ այնմ խօսքի իմաստն էլ կփոխուի):

Գ) Հրամայական, յորդորական և արգելական բառերի վերայ, նոյնպէս և, ընդհանրացած սովորութեամբ՝ այդ, ոչ բառերին վերայ: Օր.

«Գոչիր բոլոր շնչովդ, շողմ, հո՛ւր, տեղմ, անձրե՛ւ»:

«Հաւաքուի՛նք միասին, խորհրդակցի՛նք և միաբան ոյժով դիմադրե՛նք վտանգին»:

«Գործը գեւ չկատարած՝ մի՛ պարծենար»:

ԾԱՆ. Իսկ երբ հրամայական և յորդորական բառերի մօտ կան բառեր, որոնց վերայ է գտնւում իմաստի շեշտը՝ այս դէպքում հրամայականն ու յորդորականն այլ ևս շեշտ չեն առնում: Օր. «Աղբա-

տին հաց տուր», կամ «Այս հացը աղքատին տուր». «Միասին գործենք». «Մէկտեղ թափին մեր քրրտիւնքներ» ¹).

§ 255. Երէւրը կամ զարմացական նշանը գործ է ածուում այն բառերին վերայ, որոնք արտայայտում են զարմանք, ուրախութիւն, վիշտ, անէծք և ուրիշ հոգեկան զգացմունքներ, և առհասարակ բացազանչութիւնների մէջ: Օր.

«Քառասուն և հինգ աստիճան շնգ. դա կատարեալ դրժնիք է»:

«Մխիթարական լուր. երանի՛ յաճախ ստանայինք այդպիսի լուրեր:

«Մեր դաշտերն, աւանդ, խոպան են մնացել»:

«Փանտախտը վերադ. հօր անէծքները մինչև ոսկորներդ թափանցեն»:

«Ի՛հ, չարժէ խօսել այս մասին»:

«Վորա՛ւ ժողովողը, ծածկուեց նաւահանգիստը, լռեց յորդորիչ ձայնը»:

ԾԱՆ. Երբ բացազանչութիւնը ամբողջ նախադասութեան վերայ է, և ոչ մի բառի վերայ՝ երկարը կարելի է դնել նախադասութեան վերջը: Օր.

«Այսպիսի սարսափելի գիշեր իւր գորովագութ հօրը տանից վրանտել՝», «Եւ նա դեռ խօսում է առաքինութեան մասին»:

## Գ. ՏՈՂԱԿԱՐԶ:

§ 256. Երբ բառն ամբողջապէս չէ տեղաւորուում տողի վերջում՝ նորա մի մասը փոխադրուում է յաջորդ տողի սկիզբը: Այս փոխադրութիւնը կոչուում է *փոխադրութիւն*: Տողադարձի ժամանակ տողի վերջը, բառի կիսատ մասի տակ դրուում է *Ենթահատ*

¹) Այս 254 յօդուածում բացատրուած են միայն իմաստի շեշտի գործածութեան կանոնները. բառի շեշտի մասին տես Գրաբ. հոլ. §§ 8—13.

(-), որ բառի այդ մասը կապում է յաջորդ տողը փոխադրուած մասին հետ: Սր. բա-րի, ար-դար, փախ-չել:

§ 257. Կանոնաւոր տողադարձի մէջ ընդունուած է բառը բաժանել վանկերի ոչ թէ նոցա կազմութեան (ստուգարանութեան) հետեւելով, այլ նոցա արտասանութեան, ձայնաւորների և բաղաձայնների յաջորդութեան: Այս հիման վերայ տողադարձ լինում է հետեւեալ կերպով.

Ա) Ձայնաւորների մէջ եղած մի բաղաձայնը փոխադրուած է յաջորդ տողը: Այսպէս՝ կա-ռա-վա-րել, քա-ղաք, գե-ղե-ցիկ, պա-րա-գայ. (և ոչ թէ՝ կառ-ա-վար-ել, պար-ա-գայ, գեղ-եց-իկ):

Բ) Ձայնաւորների մէջ եղած երկու բաղաձայններից մէկը մնում է տողի վերջը, իսկ միւսը փոխադրուած է: Այսպէս՝ մար-դիկ, կան-չել, աղ-քատ, ազ-գի, լուս-նեակ, Աբ-գար:

Գ) Իսկ եթէ այս երկու բաղաձայններից վերջինը լինին բ, ւ, ն՝ երկուքն ևս կփոխադրուին: Այսպէս՝ մա-քրել, պա-տրաստ, ա-գռաւ, ա-կռայ, ատա-մնարոյժ, լողա-ցնել:

Դ) Ձայնաւորների մէջ եղած երեք բաղաձայններից երկուսը մնում են տողի վերջը, երրորդը փոխադրուած է: Այսպէս՝ հանգ-չել, սաստ-կութիւն, մարդ-կային, թարգ-մանել:

Ե) Իսկ եթէ այս երեք բաղաձայններից վերջինը լինին բ, շ, ն՝ վերջին երկու գիրը կփոխադրուին: Այսպէս՝ ըն-տրել, եր-կրորդ, ան-ձրև, աս-տղաբաշխ, Ան-գղիա, մար-մնաւոր, բեղ-մնաւորել, գար-գմանակ: Նոյնպէս, եթէ ա՛ն բաղադրական մասնիկից լետոյ գալիս են երկու բաղաձայն՝ երկուսն էլ փոխադրուած են նոր տողը: Այսպէս՝ ան-վթար, ան-խտիր:

Զ) Ծածուկ վանկը տողի վերջում պատահելիս՝ ներգործութեամբ դրուած է շ գիրը: Այսպէս՝ կըր-կին, խըն-դալ, ըս-կիզբ, ըզ-գալ, անվը-տանգ (կամ՝ ան-վտանգ):

Է) Երբ ծածուկ վանկը փոխադրուած է նոր տող՝ շ գիրը ներգործութեամբ դրուած է միայն այն ժամանակ՝ երբ բառը վերջանում է այդ ծածուկ վանկով: Այսպէս՝ Ան-ձըն, այ-ժըմ,



չաղա-գրտ: Բայց աւելորդ է տողի սկիզբը և դնել այն ծածուկ վանկում, որից յետոյ ուրիշ վանկ է գալիս: Այսպէս՝ սրբա-մտութիւն, եր-կնչել, տըր-տնջել:

Ը) Երկու ձայնաւոր միմեանց մօտ պատահելիս, եթէ առանձին վանկեր են կազմում՝ մէկը մնում է տողի վերջը, իսկ միւսը փոխադրում է: Այսպէս՝ Եղեկի-էլ, խօսէ-ին, տի-եզերք:

Թ) Երկբարբառները, եա, եայ, այ, իւ (իւր), ու, ուա, ուէ, միասին արտասանուելով՝ միմեանցից չեն բաժանուում:

Այսպէս՝ կեան-քի, գոր-ծեա, արծա-թեայ, այ-սօր, Հայ-երէն, գայ-ին, Հիւ-րասէր, իւ-ղալի, դա-րուն, ա-նուն, ա-նուան, ամա-ռուայ (կամ՝ ան-ուան, ամառ-ուայ), Հաշուէ-կը-շիւ, Հա-լուէ:


ԾԱՆ. 1. Իսկ երբ ոչ զուգադրութեան մէջ, զիրը բարդութեան երկրորդ բառի սկզբումն է գտնուում, ուրեմն և հնչում է ինչպէս բառի սկզբներում՝ այն դէպքում բաժանուում է -ից և փոխադրում է նոր տող: Այսպէս՝ գեղեցկա-չարդար, ամենա-չաջող, մտա-չոց:

ԾԱՆ. 2. Ուա, ուէ, ուի և այլն զուգադրութիւնները, որոնց մէջ ձայնը վի հնչիւն ունի՝ եթէ սկզբից ունին մի բաղաձայն գիր՝ տղադարձը կարելի է անել երկու կերպով. կամ բաղաձայնը անբաժան գրել երկբարբառի հետ, կամ նորանից բաժանել, իբրև բաղաձայն հնչիւն ունեցող ձայնից: Այսպէս կարելի է գրել Աս-տուած կամ Աստ-ուած, լե-զուանի կամ լեզ-ուանի, ըս-տուեր կամ ըստ-ուեր, հաւա-քուի կամ հաւաք-ուի:

Փ) Ի (ւ) գիրը, լինի նա երկու ձայնաւորի մէջ, կամ բաղաձայնի և ձայնաւորի մէջ (ինչպէս այժմ աշխարհաբարում գրում են մի քանի ձևեր)՝ բաղաձայն վի արտասանութիւն ունենալով՝ ենթարկուում է ընդհանուր կանոններին (§ 257, Ա, Բ, Գ) և փոխադրում է նոր տող: Այսպէս՝ թագա-ւոր, աւետարան, զաւ-լին, (խօս-ւում, գըր-ւում, բարդ-ւում):

ԾԱՆ. Ու- զուգադրութիւնն եթէ արտասանուում է ինչպէս ըստողադարձի ժամանակ գրում է այնպէս, ինչպէս և համաձայն նախընթաց կանոնին՝ բաժանուելց, ազնւ-ւութիւն, անլը-ւայ:

ՓԱ) Մի ձայնաւոր գիր տողի վերջը







A  $\frac{\pi}{50045}$